


## ԱՅՄԻՒ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԵԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ

ԱՐՏԱԿ ՂՈՒՅԱՆ



Աշխատությունը հրատարակվում է  
մեկենասությամբ  
**ՇԱՀԵՆ և ՄԱՐԹԱ ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆՆԵՐԻ**  
(Լոս-Անջելես, Կալիֆոռնիա, ԱՄՆ)

This book sponsored by  
**SHAHEN and MARTHA HAROUTUNIAN**  
(Los-Angeles, California, USA)

Книга издана при меценатстве  
**ШАГЕНА и МАРТЫ АРУТЮНЯНОВ**  
(Лос-Анжелес, Калифорния, США)

Նայկական ճարտարապետությունը ճանաչում է գրել առավելապես հոգևոր շենքերով՝ վանքերով, եկեղեցիներով: Աշխարհիկ շենքերի ուսումնասիրության ասպարեզում դեռևս չափ ու չափ բացեր կան. սկսած Արցախից մինչև Կիլիկիա ապարանքները փիրող իշխանակարգի հզորության վկայությունն են, միաժամանակ առօրյա կենցաղի, նաև գեղեցիկի հասկացողության արտացոլումը:

Պարոն Արթակ Ղուլյանի այս աշխատանքը առաջին ուսումնասիրությունն է, որպեղ ներկայացվում են Արցախի և Սյունիքի XV-XVIII դարերի մեղիքական բոլոր հայրնի ապարանքները, շնորհիվ որի գիտական շրջանակի մեջ է մտնում հայ ճարտարապետության՝ կարելի է ասել անհայտ մի բնագավառ:

Նայ մեղիքների պատմությունը մինչև այսօր պատմագիտական ամբողջությամբ չի ներկայացված: Պրն. Ղուլյանի կատարած պատմական քննությունը և բարձրորակ չափագրությունները մասամբ լրացնում են այդ բացը և գիտագործնական մեծ արժեք ունեն ապարանքների վերականգնման գործում:

Դր. Արմեն Նախնազարյան  
RAA հիմնադիր նախագահ

*Ներկայացված խորհրդի շնորհակալությունն է հայրնում RAA կազմակերպության Երևանյան գրասենյակի պատրաստանապատ Սամվել Կարապետյանին, գիրքը հրատարակության նախապատրաստելու գործում ցուցաբերած օգնության համար:*

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԾՆՈՂՆԵՐԻՍ՝  
ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԴՊՐՈՅԻ  
ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ԲԵՆԻԿ ԱՍԱՏՈՒՐԻ ՂՈՒՅԱՆԻՆ  
ԵՎ  
ԹԵՐԵԶԱ ԱՐԱԵՆԻ ԾԱՏՐՅԱՆԻՆ

ՅԵՂԻՆԱԿ



ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՏԱՆԱՍԻՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Արթուրյան Մեսրոպ Աջոյան (Նյու Յորք), պրոֆ. դր. Ռ. Հովհաննիսյան (Լոս Անջելես), պրոֆ. դր. Ա. Մուրադյան (Փարիզ), պրոֆ. դր. Ս. Տեր-Ներսեսյան (Փարիզ) [†], պրոֆ. դր. Յ. Հովհաննիսյան (Քաղաքացիական), պրոֆ. դր. Վ. Բարսեղյան (Նյու Յորք) [†], պրոֆ. դր. Ա. Օսրյան (Երևան) [†], պրոֆ. դր. Լ. Չեքի-յան (Վենետիկ), պրոֆ. դր. Մ. Հասրաթյան (Երևան), դր. Գ. Գևորգյան (Փարիզ)

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐԿԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ  
ԵՐԱՇԽԱԿՈՐՈՒԹՅԱՄԲ

RAA ԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՏԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՐԸ IV

ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ

# ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻԻ ՄԵԼԻԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ

ARTAK GHULYAN

CASTLES OF MELIKS OF ARTSAKH AND SIUNIK

АРТАК ГУЛЯН

ДВОРЦЫ МЕЛИКОВ АРЦАХА И СЮНИКА

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2001

ԳՏՀ 941(479.25)  
ԳՄԳ 63.3 (2Հ) 43  
Ղ-944

ՂՈՒԼՅԱՆ Ա.

Ղ-944 Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները.

Եր.: ՀՀ ԳԱԱ

«Գիտություն» հրատ., 2001 – 184 էջ+4 էջ գունավոր:

ԳՏՀ 941(479.25)

Գիրքը նվիրված է Հայաստանի արևելյան մարզերի՝ Արցախի և Սյունիքի XV-XVIII դարերի մելիքական պալատ-ամրոցներին՝ ապարանքներին: Ուշ միջնադարյան պալատական ճարտարապետության այս ինքնատիպ հուշարձանները ներկայացվում են դարաշրջանի պատմաքաղաքական միջավայրի հենքի վրա, արժեքավորվում է նրանց տեղն ու դերը հայ միջնադարյան ճարտարապետության պատմական հոլովություն:

Գրքի շարադրանքն ուղեկցվում է հարուստ պատկերագրական նյութերով՝ չափագրություններով, վերակազմություններով, համեմատական աղյուսակներով, լուսանկարներով:

Ղ 0505000000  
703(02)-2001

ԳՄԳ 63.3 (2Հ) 43

ISBN 5-8080-0469-1

© Արտակ Ղուլյան, 2001

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն (RAA)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ 6

ՆԱԽԱԲԱՆ 8

## ԳԼՈՒԽ ԱԲԱԶԻՆ - ՄԵԼԻԿԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ

ԱԿԱՆԱԲԵՐԴ	14
ԲՆՇԱԹԱՂ	17
ԽՆԾԱԿ	23
ԽՆՉՈՒԿ	26
ՏՈՂ	30
ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԲԵՐԴ	36
ԳՅՈՒԼԻՍՏԱՆ	43
ՀՈՒԲԿԱՎԱՆ	50
ՄԻՐԱԹԱՂ	63
ԲԱՆԱԲԱՏԵՂ	73
ԶՐԱԲԵՐԴ	82
ԳՅՈՒԼԱԹԱՂ	86
ԱՎԵՏԱՐԱՆՈՑ	89
ՇՈՒՇԻ	96
ԹՈՒԽՆԱԿԱԼ	106
ՏԵՂ	109

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ - ՀԱՄԵՐԱՏԱԿԱՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԴԻՐՔ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԵՏՈՒՄ	116
ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԱԲԱՆՉԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	118
ՀԱՄԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՐԱՆՔ	127
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՎԵՈՏ	130
ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԾԱՂՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	136
ՀԱՄԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԽՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ	146

ԵՉՐԱՓԱԿՈՒՄ 151

CASTLES OF MELIKS OF ARTSAKH AND SIUNIK 153  
ДВОРЦЫ МЕЛИКОВ АРЦАХА И СЮНИКА 165

## ՑԱՆԿԵՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	179
ԳԾԱԳՐԵՐ	182
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	183

## Մ ՈՒ Տ Ք

Նայ միջնադարյան ճարտարապետության նվաճումների պասկը կազմող և նրան համաշխարհային ճանաչում բերած եկեղեցական ճարտարապետության կողքին իր ուրույն փեղն ունի նաև աշխարհիկ ճարտարապետությունը, որի կարևորագույն բնագավառներից է պալատաշինությունը, կամ, որ նույնն է՝ իշխող վերնախավի բնակելի փերի՝ ապարանքների ճարտարապետությունը: Ուսումնասիրողները գլխավորապես անդրադարձել են վաղագույն շրջանից մինչև 14-րդ դարն ընդգրկող ժամանակահատվածում կառուցված հուշարձաններին, այն էլ՝ միայն Նայաստրանի կենտրոնական շրջաններում: Այնուհասիք է, որ նման ժամանակագրական ու փարածքային ընդգրկումը խիստ թերի է և կարիք ունի ընդլայնման ու հարստացման՝ ի հաշիվ Նայաստրանի այլ շրջանների և այլ դարերի հուշարձանների: Արցախում և Սյունիքում պահպանվել են այդ կարգի 15-18-րդ դարերի բազմաթիվ հուշարձաններ, որոնք համակողմանի մասնագիտական ուսումնասիրության չեն ենթարկվել, մեծ մասամբ չեն շրջանառվում գիտական գրականության մեջ, և ամբողջական պատկերացում չկա դրանց կառուցման ժամանակի ու ճարտարապետական առանձնահատկությունների մասին:

Աշխարհային նպատակն է լրացնել այս բացը՝ համադիր քննությամբ ներկայացնելով միջնադարյան Նայաստրանի Արցախ և Սյունիք նահանգների նախկին մելիքական նստավայրերում պահպանված 15-18-րդ դարերի պալատ-ամրոցները՝ մելիքական ապարանքները<sup>1</sup>: Նման

ընդգրկումը թելադրված է այն հանգամանքով, որ միայն այդ փարածքներում են մեզ հասել նմանօրինակ և նույն դարաշրջանին պատկանող հուշարձաններ, չնայած մելիքական իշխանակարգը մասամբ փարածված է եղել նաև Նայաստրանի այլ շրջաններում (Գեղարքունիք, Լոռի, Այրարատ):

Նորինվածքային ընդգրկումը պայմանավորված է մելիքական ապարանքների խիստ ինքնապիպ առանձնահատկություններով, չնայած մասնագիտական գրականության մեջ հայ միջնադարյան պալատական հուշարձանների շարքն են դասվում նաև հոգևոր դասի (կաթողիկոսական) բնակարանները: Առաջնորդական և կաթողիկոսական բնակարաններ կան նաև Արցախում և Սյունիքում, որոնք ժամանակակից են մելիքական փերին և վավերագրերում հաճախ նույնպես «ապարանք» են կոչվում: Դրանք ճարտարապետական ակնհայտ ընդհանրություններ ունեն մելիքական ապարանքների հետ, սակայն չունեն վերջիններիս հորինվածքային ինքնուրույնությունն ու ավարտուն ամբողջականությունը, քանզի ենթարկված են վանական համալիրների ընդհանուր կառուցապատմանը: Նաև բնութային փոքր-ինչ փարբեր ու շ միջնադարյան առաջնորդական և կաթողիկոսական ապարանքները վանական մյուս բնակարանների հետ մեկ այլ ուրույն բնագավառ են կազմում, ուստի չեն ընդգրկվել ուսումնասիրության մեջ: Այսպես հանգամանորեն չեն ներկայացվում նաև երկրամասի 13-14-րդ դարերի իշխանական ապարանքները, որոնք կառուցվել են միանգամայն այլ պատմական ու մշակութային միջավայրում և հորինվածքային ու գեղարվեստական մեկնաբանությամբ զգալիորեն փարբերվում են մելիքական ապարանքներից:

Ապարանքների վերաբերյալ պատմական փեղեկություններ են պահպանվել վիճակահանարձանագրություններում ու արխիվային փաստաթղթերում, առկա են բազմաթիվ նկարագրություններ ու հիշատակություններ՝ փեղագրական և պատմագիտական աշխատություններում:

<sup>1</sup> Իշխող վերնախավի բնակարանները Նայաստրանում փարբեր դարերում կոչվել են փարբեր անուններով, որոնք կրելով ժամանակաշրջանի լեզվաչափի կնիքը, պայմանավորված են եղել նաև այդօրինակ կառույցների հորինվածքով ու բնույթով: Սակայն իշխանական ապարանքները ունեցել են նաև ընդհանրական ու փարածված անուններ, որոնք ավանդված են գրավոր ու վիճագիր աղբյուրներում: Այսպես, վաղ միջնադարից գործածական են եղել «ապարանք»-ը, «պալատ»-ը, «բաճար»-ը, «արքունիք»-ը, «դոյակ»-ը: Զարգացած միջնադարում լայն փարածում է գրել «դարասպաս»-ը, որը կիրառական է եղել հարկապես իշխանական ապարանքների համար և զուգահեռաբար գոյակցել է «ապարանք»-ի և «պալատ»-ի կողքին: Ուշ միջնադարում գերիշխող է «ապարանք»-ը (պարսկերենից փոխառված «ամարաթ» բարբառային փարբերակով), որը նախորդներից առավել վկայված է բազմաբնույթ պատմական վավերագրերում: Ըստ այսմ նախընտրել ենք գլխավորապես գործածել «ապարանք» անվանումը, արդի հայերենում առավել փարածված «պալատ»-ին զուգահեռ: Նման. Նոր բառգիրք Նայ

կազման լեզուի, հր. Ա. Վենետիկի, 1836, Ն. Աճառյան, Նայերեն արմավական բառարան, հր. 1 Ե., 1971, հր. 4, Ե., 1979, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հր. 1, Ե., 1969, Ա. Մուրխայան, Նայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967, Միջին հայերենի բառարան, հր. Ա. Ե., 1987:

Ապարանքների մի փոքր մասը մտել է նաև մասնագիտական գրականության մեջ:

Արցախի հնագույն արքունական և իշխանական ապարանքների մասին ուշագրավ հիշատակություններ ունի Մովսես Կաղանկավազին, բազմաթիվ են Սրեփանոս Օրբելյանի վկայությունները Սյունիքի և Զաքարյանների շրջանի Նայաստանի այլ իշխանական ապարանքների մասին<sup>2</sup>:

Աղբյուրագիտական մեծ արժեք ունեն ապարանքների շինարարական արձանագրությունները և այլ տարաբնույթ վիճագրերը, որոնց ընձեռած տրվյալներով են հիմնականում թվագրվում հուշարձանները<sup>3</sup>, դրանց առնչվող այլևայլ հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ կան 17-18-րդ դարերի հայ-ռուսական քաղաքական և դիվանագիտական հարաբերությունների արխիվային փաստաթղթերում<sup>4</sup>:

Մելիքական ապարանքների ավերակների և մնացորդների նկարագրությունները առաջին անգամ տեղ են գտել Ս. Զալայանցի, Նայկունու (Եղիշե ավագ քահանա Գեղամյանց), Մ. Բարխուդարյանցի, Բաֆֆու, Ե. Լալայանի և Լեոյի<sup>5</sup> երկերում, ինչպես նաև ժամանակի ռուսական աղբյուրներում<sup>6</sup>, որոնց հաղորդած տեղեկությունները կարևոր են հարկապես ապարանքների այժմ կորսված հարվածների, դրանց բնույթի, նշանակության, հարդարանքի ու կահավորանքի վերականգնման տեսակետից:

Ապարանքներին սերտորեն առնչվող Արցախի և Սյունիքի հայ մելիքությունների պատմության հարցերին անդրադառնալիս հիմնվել ենք Մ. Բարխուդարյանցի, Բաֆֆու, Լեոյի, Բ. Ուլուբաբյանի, Մ. Ս. Նասրաթյանի, Աշ. Նովհաննիսյանի, Ա. Ռ. Նովհաննիսյանի, Պ. Նարությունյանի, Մ. Ներսիսյանի, Ա. Աբրահամյանի, Կ. Ղահրամանյանի և այլոց պատմագիտական աշխատությունների, ինչպես նաև հայ ժողովրդի

պատմության այս շրջանին վերաբերող այլ հրատարակումների վրա:<sup>7</sup>

Մելիքական ապարանքներից մի քանիսը առաջին անգամ մասնագիտական գրականության մեջ շրջանառել է Ն. Պապուխյանը, ներկայացնելով և կարևորելով դրանց տեղն ու դերը հայ ճարտարապետության պատմության մեջ, իսկ մեկին հանգամանալից հողված է նվիրել Մ. Սարգսյանը<sup>8</sup>: Նուշարձանների մի մասին համառոտաբար անդրադարձել են նաև Վ. Նարությունյանը,<sup>9</sup> Մ. Ս. Նասրաթյանը,<sup>10</sup> Շ. Մկրտչյանը<sup>11</sup>:

Աշխատության մեջ առաջին անգամ բազմաբնույթ փաստագրական նյութերով և համեմատական քննությամբ ներկայացվում է Արցախի և Սյունիքի ուշ միջնադարյան պալատական ճարտարապետության մոտ Երկու տասնյակ հուշարձան:

Պատմաաշխարհագրական միջավայրի հենքի վրա ցույց է տրվում դրանց ստեղծման գրեթե անընդմեջ ընթացքը, բացահայտվում են ճարտարապետական-հորինվածքային առանձնահատկությունները, դիտարկվում են ձևատեղծման ու ծագումնաբանական հնարավոր ուղիները, ցույց են տրվում ճարտարապետական գույնատեսքերն ու առնչությունները, առաջարկվում են նախնական հորինվածքաձևերի վերակազմությունները:

<sup>2</sup> Մ. Կաղանկավազի, Պատմություն Աղուանից աշխարհի, Ե., 1983, Սրբ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986:

<sup>3</sup> «Դիվան հայ վիճագրության», պրակ 2, Ե., 1960, պրակ 3, Ե., 1967, պրակ 5, Ե., 1982:

<sup>4</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, том II, часть I, Е., 1964, том II часть II, Е., 1967, Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, сборник документов, том III, Е., 1978, Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800 гг., сборник документов, том IV, Е., 1990.

<sup>5</sup> Մ. Զալայանց, Ճանապարհորդություն ի Մեծն Նայաստան, մասն Ա, Տիֆլիս, 1842, մասն Բ, Տիֆլիս, 1853, «Մեղու Նայաստանի», Թիֆլիս, 1885, N 67, N 68, N 70, N 74, Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, Բաֆֆի, Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում, Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ) հր. 9, Ե., 1987, Ե. Լալայան, «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ «ԱՀ»), գիրք 12, Թիֆլիս, 1905, գիրք 26, Թիֆլիս, 1917, նույնի՝ Երկեր, հր. 2, Արցախ, Ե., 1988, Լեո, ԵԺ, հր. 8, Ե., 1985:

<sup>6</sup> Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск XIII, Тифлис, 1892, Утверждение русского владычества на Кавказе, том I, Тифлис, 1901.

<sup>7</sup> Մ. Բարխուդարյանց, Պատմություն Աղուանից, հր. Ա, Վաղարշապատ, 1902, հր. Բ, Թիֆլիս, 1907, Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, ԵԺ, հր. 9, Ե., 1987, Լեո, Նայոց պատմություն, հր. 3, գիրք Ա, Ե., 1969, գիրք Բ, Ե., 1973, հր. 4, Ե., 1984, հր. 5, Ե., 1986, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Ե., 1975, նույնի՝ Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, Մ. Ս. Նասրաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Ե., 1985, Աշ. Նովհաննիսյան, Դրվագներ հայ ազգագրական մրթի պատմության, գիրք Ա, Ե., 1957, գիրք Բ, Ե., 1959, Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, Կ. Ղահրամանյան, Նյութային Արցախ, գիրք Ա, Ե., 1993, Ա. Ք. Իոաննիսյան, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVI-II столетия, Е., 1990, Ս. Արությունյան, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, Մ. Ներսիսյան, Из истории русско-армянских отношений, книга I, Е., 1956, «Նայ ժողովրդի պատմություն», հր. 3, Ե., 1976, հր. 4, Ե., 1972:

<sup>8</sup> Ն. Պապուխյան, Չայրվող ծածկերով բնակարանների դերը և տեղը Նայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ, «Նայ արվեստի նվիրված միջազգային երկրորդ սինպոզիում», գեկուցումների ժողովածու, հր. 2, Ե., 1978, էջ 330-332:

<sup>9</sup> Վ. Նարությունյան, Նայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 437-442, նույնի՝ Каменная летопись армянского народа, Е., 1985, с. 109-111:

<sup>10</sup> Մ. Ս. Նասրաթյան, Արցախի հուշարձանները, «Նայաստանի արդյունաբերություն, շինարարություն և ճարտարապետություն», 1990, 12, էջ 64-66, նույնի՝ Архитектура Армении XV — начала XIX века, научный доклад докторской диссертации, Е., 1993, с. 13-14:

<sup>11</sup> Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1985, Ս. Մկրտչյան, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Е., 1988:

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

**Պատմական ակնարկ:** Մեծ Հայքի Արցախի և Սյունիք նահանգները փարաձվում էին Հայկական լեռնաշխարհի արևելյան կողմում՝ Արաքսից հյուսիս, միմյանց սահմանակցելով հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող լեռներով: Երկու նահանգներն էլ բաժանված էին 12-ական գավառների, որոնց քանակը, սահմաններն ու անունները հեղափոխ դարերում հաճախ փոխվել են: Միջին դարերում, հարկապես 10-16-րդ դդ., Արցախը հայտնի էր նաև «Խաչեն» գավառի անունով, իսկ 15-րդ դարից սկսած, որպես «Հայոց Արևելից կողմանք» հայաշխարհի հավաքական անուն, գործածական է դառնում «Ղարաբաղ»-ը<sup>12</sup>: Սյունիք-Սիսականը ևս հաճախ հայտնի էր իր առանձին գավառների անունով. միջին դարերում՝ «Վայոց ձոր», «Բաղք» կամ «Կապան», ուշ շրջանում՝ «Ղափան», «Զանգեզուր»<sup>13</sup>:

Երկրամասի փրկանքը կարգված է մի քանի լեռնային արագահու գետերով (Թարթառ, Խաչենագետ, Կարկառ, Իշխանագետ՝ Արցախում, Արփա, Որոտան, Ողջի, Աղավնո՝ Սյունիքում) և դրանց վտակներով, որոնց հովիտներն ընդգրկող լեռնագանգվածներն էլ հաճախ սահման են դարձել այսօրվա ավարական կազմավորումների համար՝ ձևավորելով փոքր գավառներ ու գավառակներ: Լեռնաշխարհի բնական պարսպները, ամրոցների ու պաշտպանված բնակավայրերի հարմարավետ փրկանքը, ինչպես նաև աշխարհագրական մյուս պայմանները մեծապես նպաստել են այս նահանգներում քաղաքական, մշակութային ու շինարարական կյանքի գրեթե անընդմեջ ծավալմանը:

Արցախի և Սյունիքի քաղաքական պարտությունը հնագույն ժամանակներից ի վեր շաղկապված է եղել ընդհանրության բազմաթիվ գծերով: Հանրահայտ են նաև Արցախ-Սյունիքի (Ղարաբաղ-Զանգեզուրի) ազգագրական (բնակարան, կենցաղ, փարագ, սովորույթներ և այլն) և բար-

բառային ընդգծված ընդհանրությունները բնակչության բնիկ հարվածում<sup>14</sup>:

Որպես առանձին նահանգներ Արցախն ու Սյունիքը ձևավորվել են Արշակունիների Հայոց թագավորության կազմում, վերջինիս 387 թ. բաժանումից հետո ենթարկվել Պարսկաստանին, իսկ թագավորության 428 թ. անկումից հետո՝ 5-6-րդ դդ., մտել Պարսկաստանին ենթակա մարգարայությունների մեջ: 5-րդ դարի վերջում Արցախում սրբազան է Առանշահիկ Վաչագան Բարեպաշտի թագավորությունը՝ գոյարևելով մինչև 7-րդ դարի սկիզբը:

7-9-րդ դդ. Արցախը և Սյունիքը արաբական փիրապետության փակ էին՝ «Արմինիա» ոստիկանության կազմում:

9-րդ դարի առաջին կեսի հակաարաբական պայքարից հետո, դարավերջին սրբազան էին Առանշահիկների երկու փոքր թագավորությունները Արցախում (Խաչենում ու Դիզակում) և Սյունիների գավառական իշխանությունները՝ Սյունիքում, որոնք Բագրատունիների Հայոց թագավորության սրբազանից հետո՝ 885 թ. անցել են նրա գերագահության փակ:

Անիի թագավորությանն էին ենթակա 10-րդ դարի սկզբում Առանշահիկ փոխի ժառանգների Արցախում սրբազան Վերին Խաչենի ու Ներքին Խաչենի իշխանությունները և Փառիտոսի թագավորությունը, ինչպես նաև՝ 987 թ. հռչակված Բաղա-Կապանի թագավորությունը Սյունիքում:

11-12-րդ դդ. սելջուկ-թուրքերի փիրապետության շրջանում Արցախ-Խաչենի իշխանությունները պահպանել են իրենց նվազ գոյությունը, իսկ Սյունիքի թագավորությունը 1170 թ. վերացել է<sup>15</sup>:

Արցախի և Սյունիքի իշխանությունները նոր վերելք ապրեցին հարկապես 13-14-րդ դարերում՝ Զաքարյանների համահայկական իշխանա-

<sup>14</sup> Տե՛ս **Սյր. Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», 12, Ե., 1981, նույնի՝ Զանգեզուրի հայերը, Ե., 1981:

<sup>12</sup> Տե՛ս **Բ. Ուրուբաքյան**, Խաչենի իշխանությունը, էջ 30-49, նույնի՝ Արցախի պարսպությունը, էջ 9-23:

<sup>13</sup> Տե՛ս **Թ. Նակոբյան**, Հայաստանի պարսպական աշխարհագրություն, Ե., 1984, էջ 175-201, նույնի՝ Սյունիքի թագավորությունը, Ե., 1966:

<sup>15</sup> Արցախի և Սյունիքի նախամոնղոլական շրջանի պարսպության մասին փնտռելու «Հայ ժողովրդի պարսպություն», հր. 3, Ե., 1976, **Բ. Ուրուբաքյան**, Դավազներ Հայոց Արևելից կողմանց պարսպության, Ե., 1981, նույնի՝ Խաչենի իշխանությունը, էջ 50-123, նաև՝ Արցախի պարսպությունը, էջ 28-66, **Ն. Ուրուբաքյան**, Սյունիքը 9-10-րդ դարերում, Ե., 1958 և այլն:

պետության կազմում<sup>16</sup>: 12-րդ դ. վերջին և 13-րդ դ. սկզբին ողջ Նայասարանի հեպ միասին Արցախն ու Սյունիքը ևս ազարագրվեցին սելջուկ-թուրքերի փրակապետությունից: Ազարագրական մարտերի ղեկավար Զաքարե և Իվանն Զաքարյանների գլխավորությամբ սրեղծվեց մի բնդարձակ իշխանապետություն, որը գոյատևեց մինչև 14-րդ դ. կեսը՝ այդ ընթացքում գրավելով նաև մոնղոլական գերիշխանության փակ:

Զաքարյանների օրոք և նրանց հոգածությամբ Սյունիք-Վայոց ձորում սրեղծվեցին Օրբելյանների և Խաղբակյան-Պոռոջյանների իշխանությունները, վերահասարակվեցին Արցախ-Խաչենի իշխանների իրավունքները իրենց նախնայաց փրկություններում:

13-րդ դարի սկզբին Արցախի իշխանությունները երեքն էին. Վերին Խաչենում Վախրանցյանների իշխանությունը (Տաթևրբում) և Դուխյանների իշխանությունը (Ծարում), Ներքին Խաչենում՝ Նասան-Ջալալյանների իշխանությունը:

Արցախի և Սյունիքի 13-14-րդ դդ. քաղաքական ու մշակութային կյանքում մեծ վերելքի ու ձեռքբերումների հասած այս իշխանությունները թաթար-մոնղոլական փրակապետության փակ աստիճանաբար մասնատրվելով ու թուլանալով, 1387-ին ենթարկվեցին Լենկ Թեմուրի հորդանների ավերիչ ասպարակությանը:<sup>17</sup>

**Իշխանական ապարանքները 13-14-րդ դարերում:** 12-րդ դարի վերջից մինչև 14-րդ դարի առաջին կեսը հայ մշակույթի պայմանության մեջ հայտնի է որպես անընդհար բարգավաճման ու ծաղկման շրջան՝ վկայված բազմաթիվ ու բազմապիսի մեծարժեք կոթողներով:

Այս դարերում, եկեղեցաշինությանը զուգահեռ, հին ու նոր վանական համալիրներում աննախընթաց զարգանում է կիսաշխարհիկ կառույցների՝ գավիթների, գրասրահների և սեղանատների ճարտարապետությունը, նոր վերելքի են հասնում քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը, քաղաքացիական ճարտարապետության փարբեր բնագավառները<sup>18</sup>:

Ճարտարապետաշինարարական գործունեության ակնհայտ աշխարհիկ ուղղվածությամբ այս հենքի վրա է, որ 13-րդ դարի սկզբից նախադրյալներ են սրեղծվում իշխանական ապարանքների շինարարության ծավալման համար՝ վերակենդանացնելով ու շարունակելով նախորդ դարերի պալատաշինության ավանդույթները:

Պալատաշինության վերելքը 13-14-րդ դարերում պայմանավորված էր նաև իշխանությունների մասնատրվածությամբ և այն «ազնիվ մրցակցությամբ», որ, Գ. Նովսեփյանի դիպուկ բնորոշմամբ, «սկսվել էր իշխանական փոհների մեջ, գերազանցելու միմյանց շինարարական և հոգևոր կյանքի նպաստավորման գործում»: Այդ մրցակցության մեջ

ճարտարապետական մեծագործություններով հռչակված էին հապկապես ժամանակի նշանավոր, ազդեցիկ ու հզոր իշխանները, որոնք և, ի շարք բազմաթիվ եկեղեցիների, վանքերի, բերդերի և այլ շինությունների, կառուցել են նաև իրենց նապոցապալարները կամ՝ ապարանքները, միջնադարի խոսքով՝ «դարապասները»:

Այդպիսի «դարապասներ» էին Նասան-Ջալալ իշխանի ապարանքը Խոխանաբերդ բերդավանում (13-րդ դ. սկիզբ)<sup>19</sup>, Վախրանցյանների ապարանքը՝ Դաղիվանքում (12-13-րդ դդ.), Դուխյանների ապարանքը՝ Ծարում (13-րդ դ., վերակառուցված՝ 1658 թ.)<sup>20</sup>, Սմբատ Օրբելյանի ապարանքը՝ Եղեգիսում (13-րդ դ. կես) <sup>21</sup>, Պոռոջ Խաղբակյանի ապարանքը՝ Սրկղունքում (13-րդ դ. կես)<sup>22</sup>, Տարապիճ Օրբելյանի ապարանքները՝ Եղեգիսում (1274 թ.)<sup>23</sup> և Արփայում (13-րդ դ. վերջ)<sup>24</sup>, Զեսար Օրբելյանի ապարանքը՝ Նորսում (14-րդ դ. սկիզբ)<sup>25</sup>:

Մրանց թվին պետք է դասել նաև Տաթևրբի իշխանության եպիսկոպոսարանի՝ Դաղիվանքի առաջնորդական ապարանք-«փաճարը» (1211 թ.), որն ամբողջական վիճակում այսօր էլ կանգուն է<sup>26</sup>:

Նապոց-բնակավայրերում, առանձին կանգնած «դարապաս»-պալատներից բացի, իշխանական ապարանքներ են կառուցվել նաև ամրոցներում: Այդպիսիք էին Սմբատաբերդի, Երնջակ բերդի, Նանդաբերդի, Չարաբերդի և այլ ամրոցների միջնաբերդերի ապարանքները<sup>27</sup>:

**Մեկիությունները 15-18-րդ դարերում:** Որպես գավառական մանր իշխանություններ՝ մեկիություններն առաջացել ու գոյատևել են 15-18-րդ

<sup>16</sup> Մանրամասն փնհ Գ. Նովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռոջյանք հայոց պայմանության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, Բ. Ուլուքբաջյան, Խաչենի իշխանությունը, Գր. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Ե., 1981:

<sup>17</sup> Տե՛ս Գ. Կիրակոսյան, Նայասարը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Ե., 1997:

<sup>18</sup> Վ. Նարությունյան, Նայկական ճարտարապետության պայմանություն, էջ 252-350, Մ. Մ. Ասրաթյան, Очерк армянской архитектуры, М., 1985, с. 87-99, և այլն:

<sup>19</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 181, Մ. Նասրաթյան, Նայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Ե., 1992, էջ 88-89, Ա. Ղուկյան, Խաչենի իշխանական ապարանքը, «Լրաբեր հաս. գիտ.», 1984, 3:

<sup>20</sup> Այս երկու հուշարձանի թվագրումը և վերագրումը մերն է:

<sup>21</sup> Ե. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Ե., 1955, էջ 61, «Դիվան հայ վիճակագրության», 3, էջ 115, Գր. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 121:

<sup>22</sup> Ե. Լալայան, Վայոց ձոր, «ԱՆ», գիրք 12, Թիֆլիս, 1905, էջ 270, Գ. Նովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռոջյանք հայոց պայմանության մեջ, մասն Ա, էջ 37, 124-125, 133:

<sup>23</sup> Ե. Լալայան, Վայոց ձոր, «ԱՆ», գիրք 26, Թիֆլիս, 1917, էջ 67-69, Գ. Նովսեփյան, Տարապիճ Օրբելյանի և Մինա Խաթունի սերունդը, Անթիլիաս, 1947, էջ 2-4:

<sup>24</sup> Սրբ. Օրբելյան, Սյունիքի պայմանություն, էջ 342, Ն. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 18:

<sup>25</sup> Ե. Լալայան, Վայոց ձոր, «ԱՆ», գիրք 12, էջ 279, Գր. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 112, 154, Ա. Ղուկյան, Նորսի իշխանական ապարանքը, «Նայ արվեստի և մեկիական հանրապետական ութերորդ գիտական կոնֆերանս», գեկուցումների թեզեր, Ե., 1997:

<sup>26</sup> Մ. Մ. Նասրաթյան, նշվ. աշխ., էջ 55:

<sup>27</sup> 13-14-րդ դարերի հայ պալատաշինության հանրահայտ օրինակներ են Արագածոտնի Վաչուրյան իշխանների դղյակ-ապարանքը Անբերդում, Զաքարյանների ապարանքը Անիում («Պարոնի պալատ»): Ըստ Սրբ. Օրբելյանի՝ Զաքարյան իշխանները «դարապաս»-ապարանք են ունեցել նաև Լոռվա Ազարակ ավանում (փնհ Սրբ. Օրբելյան, Պալատային նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 379, 383-384): Նայտնի է նաև անեցի մեծահարուստ Սահմաղինի 1261-1276 թթ. կառուցած «դարապաս»-պալատը Մրենում (փնհ «Դիվան հայ վիճակագրության», 1, Ե., 1966, էջ VI, Վ. Նարությունյան, Անի քաղաքը, Ե., 1964, էջ 74):

դարերում, համայն երկրի քաղաքական անկման ու վայրկիվերումների դժվարին պայմաններում<sup>28</sup>:

«Մելիք»-ը արաբական բառ է և նշանակում է «իշխան», «պրեր», «պիրակալ»: Մելիքները ենթարկվում ու հարկ էին վճարում Պարսից շահին, սակայն ունեին գրեթե անասահմանափակ իրավունքներ իրենց գավառապիրությունում: «Մելիքների անձնավորության մեջ կենտրոնացած (եր) հայ ազգային իշխանությունը», նրանք պարտավոր էին լինել արդարադատ, շինարար, ունեին զորք պահելու իրավունք, գորահրամանատարները կոչվում էին բեկ, հարյուրապետ (յուզբաշի), սպարապետ<sup>29</sup>:

15-րդ դարում Արցախն ու Սյունիքը կարակոյունլու և ակ-կոյունլու թուրքմենների աղետալի փիրապետության փակ էին, որին պարբերաբար գումարվում էին թեմուրյանների արշավանքները և 16-րդ դարի սկզբում ծայր առած պարսկա-թուրքական պարերազմները: Այս ժամանակաշրջանում է ձևավորվել և իրավական ուժ ու կշիռ ձեռք բերել հայ մելիքության իշխանակարգը, որը նախ ճանաչվել է Պարսից գահակալ Ջահանշահի (1437-1467 թթ.) օրոք, ապա վավերացվել ու կանոնավոր ընթացք ստացել 1603թ.-ից Շահ-Աբբաս Ա-ի (1587-1629 թթ.) հրովարտակներով: Մելիքություններն առաջացել են նախկին իշխանությունների մասնափլուզման փիրությունում, հաճախ դրանց փեր իշխանապետների ժառանգների գլխավորությամբ<sup>30</sup>:

Այսպես. Ծար-Վերին խաչենում 15-րդ դ. կեսերին սկզբնավորվել են Սողքի և Ծարի մելիքությունները, որտեղ իշխում էին Դոփյաններից սերված Մելիք-Շահնագարյաններն ու նրանց փոհմակիցները, իսկ Ներքին խաչենի կենտրոնական մասում գոյացել է խաչենի Կասան-Ջալալյանների մելիքությունը: Ավելի ուշ, 17-րդ դ. սկզբին, Վերին խաչենի հյուսիս-արևելքում վերջնականապես ձևավորվել է Գյուլիստանի Մելիք-Բեգարյանների մելիքությունը, իսկ Ներքին խաչենի հյուսիսում՝ Ջրաբերդի Մելիք-Բարայեյանների մելիքությունը: Միաժամանակ Մելիք-Շահնագարյանների մի փոհմանդուղը փեղափոխվել ու հաստատվել է Վարանդայում, իսկ Դիզակում իրենց մելիքություններն են ստեղծել գավառի հին փերերի շառավիղ Մելիք-Եգանյանները:

<sup>28</sup> Մանրամասն փերն **Լեո**, Նայոց պարմություն, հր. 3, գիրք Բ, «Նայ ժողովրդի պարմություն», հր. 4:

<sup>29</sup> **Լեո**, նշվ. աշխ., էջ 18-19, **Ե. Լալայան**, Երկեր, հր. 2, էջ 241, փերն նաև՝ **Ֆ. Պողոսյան**, Խամսայի մելիքների իրավունքների և պարտականությունների մասին, «Բանբեր Նայաստանի արխիվների», 1966, 1:

<sup>30</sup> Նայ մելիքությունների ծագման հարցերը մինչև այժմ սպառիչ պայտասյան ջեն գրել. այս խնդրում առաջնորդվել ենք առկա հիմնական աղբյուրների և ուսումնասիրությունների ընձեռած փվայներով: Նմանք. **Մ. Բարխուդարեանց**, Պարմություն Աղուանից, հր. Բ, **Բաֆֆի**, Խամսայի մելիքությունները, Եժ, հր. 9, էջ 417-429, **Լեո**, Նայոց պարմություն, հր. 3, գիրք Բ, էջ 14-21, 253-261, **Ե. Լալայան**, Երկեր, հր. 2, էջ 11-12, 209-210, 256-259, 302-304, **Բ. Ուրուբաբյան**, խաչենի իշխանությունը, էջ 338-4231, նույնի Արցախի պարմությունը, էջ 129-134, **Մ. Ս. Նասրաթյան**, Պարմա-հնագիտական ուսումնասիրություններ, էջ 145-165:

15-րդ դ. վերջում-16-րդ դ. սկզբում Սյունիքի Խաղբակյան-Պոռշյանների ժառանգորդ Մելիք-Նայկազյանները հիմնել են Քաշաթաղի մելիքությունը, 17-րդ դարում ձևավորվել են Անգեղակոթի, Տաթևի, Բելխի (Նալիձորի) մելիքությունները:

Ընդհանուր գծերով ներկայացնենք Արցախի և Սյունիքի մելիքությունները 15-18-րդ դարերում:

**Գյուլիստանի մելիքությունը** (17-18-րդ դդ.) փարածվում էր Կուրակ և Թարթառ գետերի միջև: Նստոց-կենտրոններն էին Նոռեկավանը (Թալիշ) և Գյուլիստանը, ամրոցը՝ Գյուլիստան բերդը:

**Ջրաբերդի մելիքությունը** (17-18-րդ դդ.) ընդգրկում էր Թարթառ գետի միջին ավազանը (17-րդ դ. վերջից՝ նաև վերին ավազանը՝ Ծարի փարածքը): Նստոց կենտրոններն էին Քաղաքափեղ կամ Մայրաքաղաք բերդավանն ու Մոխրաթաղը, ամրոցը՝ Ջրաբերդը:

**Խոսչենի մելիքությունը** (15-18-րդ դդ.) ձգվում էր Խաչենագետի հովտից մինչև Բալուջա գետը: Նստոց-կենտրոնը Խոխանաբերդն էր (Թարխանաբերդ)՝ հարակից բերդավանով:

**Վարանդայի մելիքությունը** (17-18-րդ դդ.) փարածվում էր Կարկառի հովտից մինչև Քիրս-Դիզակափայտի լեռները: Նստոց-կենտրոնն էր Ավետարանոց բերդավանը:

**Դիզակի մելիքությունը** (17-18-րդ դդ.) ընդգրկում էր Դիզակափայտի լեռներից մինչև Արաքսն ընկած փարածքը: Նստոց-կենտրոնն էր Դոդ (Տոդ) ավանը:

**Ծարի մելիքությունը** (15-17-րդ դդ.) բռնում էր Թարթառի վերին ավազանը: Նստոց-կենտրոններն էին Ծար ավանն ու Ականաբերդը, ամրոցը՝ Նանդաբերդը: 17-րդ դարի վերջին մելիքությունը միաձուլվել է Ջրաբերդի և Սողքի հետ:

**Սողքի կամ Գեղարքունիքի մելիքությունը** (15-18-րդ դդ.) փարածվում էր Սևանա լճի հարավային և հարավ-արևելյան ափերին: Նստոց-կենտրոններն էին Մեծ Մագրա գյուղը և Սողք ավանը:

**Քաշաթաղի մելիքությունը** (15-18-րդ դդ.) ընդգրկում էր Աղավնո (Նագարու) գետի միջին և վերին ավազանը, նստոց-կենտրոններն էին Քաշաթաղը (Քշտաղ-Սուլթանքենդ) և Խոնաձախը (Խնաձախ):

**Տաթևի մելիքությունը** (17-18-րդ դդ.) բռնում էր Որոտանի ստորին հոսանքից մինչև Աղավնո գետն ընկած փարածքը: Նստոց-կենտրոններն էին Տաթևը, Խնձորեսկը, Տեղը (նաև՝ Կյորես-Գորիսը):

**Անգեղակոթի մելիքությունը** (17-18-րդ դդ.) փարածվում էր Որոտանի վերին ավազանում: Նստոց-կենտրոնն էր Անգեղակոթը, 18-րդ դարի վերջում՝ նաև Բունակոթը:

**Բելխի կամ Նալիձորի մելիքությունը** (17-18-րդ դդ.) ընկած էր Ողջի գետի հովտում: Նստոց-կենտրոնն էր Բելխ գյուղը, ամրոցը՝ Նալիձորի բերդը (Նալիձորի կուսանաց անապատ):

Մրանց շարքը կարելի է դասել նաև

**Ոսկանապարհի և Բարսումի փոքր մեկիբությունները** (17-18-րդ դդ.), որոնք փարածվում էին Մռավ լեռների հյուսիսային փեշերից մինչև Գանձակի դաշտաբերանը:

Վերջին դարերում Պարսից գահակալներն ու Կրեդական խաները փոհմիկ գավառապետ մեկիբների կողքին մեկիբական փիպոդուս և փոքր փիրույթներ (գավառակներ, գյուղեր) էին շնորհել նաև իրենց հավաքարին մարդկանց՝ երկիրը մասնատելու և ներքին երկպառակություններ սերմանելու նպատակով:

Սակայն երկրամասի լեռնագավառներում ամրացած այս մանր ավաքներերի շարքում կային նաև առավել ուժեղ ու ինքնիշխան կազմավորումներ, ինչպես, օրինակ, Խամսայի՝ Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մեկիբությունները Արցախում, Սյունիքի որոշ մեկիբություններ: Նենց այս մեկիբությունների գործուն մասնակցությամբ է սկզբնավորվել հայ ազգային-ազատագրական պայքարը 17-րդ դարի վերջին, ապա նոր թափ ստացել 18-րդ դարի առաջին երեսնամյակում՝ Պարսից փիրապետության և թուրքական արշավանքների դեմ ծավալված արցախյան սղնախների և Սյունյաց ապստամբության (1722-1730 թթ.) հերոսամարտերում, Ռուսաց արքունիքի հետ փարվող բանակցություններում:<sup>31</sup> 1727 թ. Թահմազ Բ շահը ճանաչել է Դավիթ-Բեկի իշխանությունը՝ Ղափախում, իսկ Նադիր Շահը (1732-1747 թթ.), հաշվի առնելով հայ մեկիբների հաղթական մասնակցությունը 1724-1735 թթ. հակաթուրքական կռիվներում, հրովարդակներով մեծ արտոնություններ է փվել նրանց, 1737 թ. հաստատել Արցախի հինգ (Խամսայի) մեկիբությունների դաշնակցային իշխանությունը՝ Դիզակի Մեկիբ-Եզանի գլխավորությամբ:<sup>32</sup>

1750-ական թթ., օգրվելով Արցախի մեկիբների ներքին երկպառակություններից և համագործակցելով Վարանդայի ինքնակոչ Մեկիբ-Շահնազար Բ-ի հետ, Փանահ անունով ոմն թուրքմեն ցեղապետի հաջողվում է նախ ամրանալ Արցախի Տիգրանակերտի հին քաղաքի փեղում (Շահբուլաղ), ապա հաստատվել նույն Վարանդա գավառի Շուշի բերդում: Այսպիսով, Արցախ-Ղարաբաղում հիմնվում է առաջին այլա-

ցեղ-այլահավաք իշխանությունը՝ Շուշի կամ Ղարաբաղի խանությունը, որը Փանահի որդի Իբրահիմ խանի օրոք (1762-1806 թթ.) իր փիրապետությունը փարածել էր նաև Սյունիքի որոշ գավառների վրա: Այս շրջանում՝ 18-րդ դարի երկրորդ կեսին, նոր թափ է առնում արցախյան մեկիբությունների ազգային-ազատագրական պայքարը, աշխույժ ընթացք են ստանում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները, որոնց արդյունքում, նախ՝ 1813 թ. Գյուլիստանի, ապա՝ 1828 թ. Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրերով Արցախը և Սյունիքը Արևելյան Հայաստանի այլ գավառների հետ միացվում են Ռուսական կայսրությանը:<sup>33</sup>

**Մեկիբական ապարանքների կառուցման նախադրյալները:** Ապարանքների շինարարության վերելքը սերտորեն կապված է 17-18-րդ դդ. լայնածավալ վերաշինական և կառուցողական աշխատանքների, ինչպես նաև պարսկական փիրապետության ողջ դարաշրջանին բնորոշ քաղաքական անկայունության ու անապահով վիճակի հետ, երբ մեծապես կարևորվում է համայն երկրի պաշտպանունակության խնդիրը: Պարսիկ խաների բռնություններին և թուրք ու թրքացեղ փարբեր հրոսակների ասպարակություններին մշտապես ենթակա մեկիբական փիրույթներում 15-16-րդ դդ. սկզբնավորվում, իսկ 17-18-րդ դդ. լայնահուն ընթացք են ստանում ամրաշինական նոր աշխատանքները բերդերում, բերդավաններում, վանական համալիրներում: Այս ընթացքում և այս պայմաններում է, որ սկսվում է ամրոցակերպ մեկիբական բնակարանների՝ ապարանքների զանգվածային շինարարությունը Արցախի և Սյունիքի գրեթե բոլոր մեկիբանիստ բնակավայրերում: Այս առումով հասկանալի է, որ դեռևս 15-16-րդ դարերում ճյուղավորվել-բազմացել էին նախկին իշխանական փոհմային փները, սփռվել ու ամրացել երկրամասի լեռնագավառներում: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր նստոց-կենտրոնը կամ կենտրոնները, յուրաքանչյուր կենտրոն իր ապարանքը կամ ապարանքները, որոնց թվում, փոհմիկ մեկիբների ապարանքների կողքին, իրենց փեղն ունեին նաև մեկիբական իրավունք ստացած գյուղատերերի և ազատագրական մարտերում աջքի ընկած սպարապետ-յուզբաշինների ապարանքները:

Ապարանքների կառուցման գործում էական նախադրյալներ էին նաև դրանց փերերի քաղաքական կշիռն ու փնտեսական կարողությունները, մասնակցությունը երկրի ազատագրական պայքարին ու մշակութային-շինարարական կյանքին: Նախկանշական է, որ իրենց մեկ կամ մի քանի ապարանքն ունեին հարկապետ մեկի-

<sup>31</sup> Մանրամասն փնտ նաև **Զ. Արզումանյան**, Սղնախների առաջացումը և ռազմաքաղաքական նշանակությունը, «Լրաբեր հաս. գիտ.», 1982, 9, էջ 77-86, նույնի՝ «Մեծ» և «Փոքր» սղնախների հարցի շուրջ, «Լրաբեր հաս. գիտ.», 1985, 4, էջ 85-92, **Ա. Այվազյան**, Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, «ՊԲՏ», 1990, 4, էջ 63-80:

<sup>32</sup> Տե՛ս «Նայ ժողովրդի պատմություն», հր. 4, էջ 134-189, **Լեո**, Նայոց պատմություն, հր. 3, գիրք Բ, էջ 29-210, հր. 5, գլուխ Գ, էջ 421-496, **Ա. Արբահամյան**, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, **Ն. Փափազյան**, Մեկիբ Եզանի ընդունարանի վիճակի արձանագրությունը, «Լրաբեր հաս. գիտ.», 1985, 5, էջ 75-78, **Բ. Ուլուբաբյան**, Արցախի պատմությունը, էջ 138-150, Армяно-русские отношения в первой трети XVIII века, том II (часть I и часть II), **П. Арутюнян**, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века:

<sup>33</sup> Տե՛ս «Նայ ժողովրդի պատմություն», հր. 4, էջ 190-246, **Լեո**, նշվ. աշխ., հր. 3, գիրք Բ, էջ 262-274, 296-301, 304-307, 342-377, 383-421, հր. 4, էջ 290-383, **Բ. Ուլուբաբյան**, նշվ. աշխ., էջ 150-179, **А. Р. Иоаннисян**, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Армяно-русские отношения в XVIII веке, том III, том IV.

քական ազդեցիկ փոհներն ու նրանց այն ներկայացուցիչները, որոնք մեծ համբավ էին ձեռք բերել իրենց քաջագործություններով ու հարստությամբ, հոգևոր-մշակութային ու եկեղեցաշինական ձեռնարկումներով, շրջահայաց քաղաքականությամբ ու ժողովրդասիրությամբ, Պարսից արքունիքում և դրկից մելիքություններում ու խանություններում ունեցած հեղինակությամբ:

Մեզ հասած ճարտարապետական հուշարձաններից բացի այս մասին են վկայում նաև փարաբնույթ պարսկական վավերագրերը, ժողովրդի հիշողության մեջ մինչև այժմ կենդանի ավանդազրույցներն ու պատմամբերը:

Պարսկական փեղեկությունների և առկա հուշարձանների հիման վրա մելիքական ապարանքների քանակական պարկերը հետևյալն է.

Ծարի և Սողքի Մելիք-Շահնագար Ա-ն ու նրա փոհմակիցները ապարանքներ ունեին Ականաբերդում (15-16-րդ դդ.) և Մեծ Մագրայում (16-17-րդ դդ.), Քաշաթաղի Մելիք-Նայկազ Ա-ը և նրա հաջորդները՝ Քաշաթաղ գյուղում (15-րդ դ.) և Խնածախում (16-րդ դ.), Դիզակի Մելիք-Եզանը՝ Տող ավանում (1737 թ.), Գյուլիսպանի փերերը՝ համանուն բերդում (17-18-րդ դդ.) և Նոռեկավանում (Մելիք-Թամրազինը՝ 1727 թ., Մելիք-Նովսեփինը՝ 18-րդ դ. երկրորդ կես), Գյուլիսպան գյուղի Աբրահամ Սպարապետի որդի Նակոբը՝ նույն գյուղում (1772 թ.), Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանները՝ համանուն ամրոցում (17-18-րդ դդ.) և

Քաղաքապետ բերդավանում (17-18-րդ դդ.), նույն փոհի Մելիք-Ադամը՝ Մոխրաթաղ գյուղում (1771 թ.), Մելիք-Ավարդյանները՝ Գյուլաթաղ գյուղում (1799 թ.), Վարանդայի Մելիք-Շահնագարյան Մելիք-Բադի Բ-ը, Մելիք-Նուսեն Ա-ը և Մելիք-Շահնագար Բ-ը՝ Ավեսարանոցում (18-րդ դ. սկիզբ, 1786 թ.), նույն փոհնը՝ Շուշիում (18-րդ դ.), նույն գավառում Մելիք-Դոլուխանյանները՝ Թուխնակալ գյուղում (18-րդ դ.) և Ավան Սպարապետը՝ Շուշիում (18-րդ դ. սկիզբ), Տաթևի մելիքությունում՝ Մելիք-Բարխուդարյանները՝ Տեղ գյուղում (1783 թ.) և Մելիք-Փարամազյանները՝ Խնձորեսկում (18-րդ դ.): Անուղղակի փվյալներով ապարանքներ ունեին նաև Մելիք-Սաֆրազյանները՝ Անգեղակոթում (17-18-րդ դդ.), նույն գավառի Մելիք-Թանգյանները՝ Բոնակոթում (18-րդ դ. երկրորդ կես), Նալիձորի Մելիք-Փարսաղանյանները՝ Կյորես-Գորիսում (18-րդ դ.), Տաթևի մելիքության փերերը՝ համանուն գյուղում (17-18-րդ դդ.), Մելիք-Շահնագարյանների մի ուրիշ ճյուղը՝ Ոսկանապարտում, Մելիք-Առսպանը՝ Բարսում գյուղում, Մելիք-Մովսեսը՝ Խաչակապում, Մելիք-Մնացականը՝ Գեպաշենում (չորսն էլ՝ 18-րդ դ.):

Այս հուշարձանների մեծ մասը չնայած ավերակ վիճակում են հասել մեր օրերը, այնուամենայնիվ հնարավորություն են փալիս ուսումնասիրության միջոցով ներկայացնելու մելիքական ապարանքների ճարտարապետությունը ու միջնադարում<sup>34</sup>:


<sup>34</sup> Տե՛ս՝ Ա. Ղուլյան, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքների հորինվածքային առանձնահատկությունները, «Նայկական ճարտարապետության պրոբլեմներ, Թ. Թորամանյանի 120-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան», զեկուցումների թեզեր, Ե., 1984, էջ 21-23, նույնի՝ Արցախի իշխանական ապարանքները, «Կուլտուր-ուսավորական աշխատանք», 1988, 3-4, էջ 51-62, նաև՝ Արցախ-Ղարաբաղի մելիքական ապարանքները, «Արծիվ», Անթիլիաս-Լիբանան, 1995, N 10, էջ 9-10:

ԳԼԻԿ ԱԽՉԻ



ՄԵԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԸ

## ԱԿԱՆԱԲԵՐԴ



Մելիքական ապարանքի ավերակները գտնվում են ԼՂՏ Մարտակերտի շրջանի Ականաբերդ (նախկինում՝ Ունուդու) գյուղի հյուսիսային կողմում՝ Բալի կոչվող լեռան ստորոտում սփռված Ականա բերդավանի պարսպափակ միջնաբերդի կենտրոնական մասում, թփուտներով պարված լանջի վրա<sup>35</sup>: Ապարանքի կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ<sup>36</sup> և այդ մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել միայն հնավայրի պարմության և հուշարձանի ուսումնասիրության հիման վրա:

Ականաբերդը (նաև՝ Ականա քաղաք, ավան, Ականակերտ), որպես Արցախի Մեծկվենք գավառի քաղաք, հիշվում է դեռևս վաղ միջնադարից<sup>37</sup>, սակայն առավելապես հայտնի է 13-15-րդ դդ. աղբյուրներից, որպես Վերին Խաչենի նշանավոր բերդավան: Գեղարդավանքի մի արձանագրության մեջ ասվում է, որ Ջաքարյան եղբայրները մի շարք բերդերի թվում սելջուկ-թուրքերից ազատագրել են նաև Ականան<sup>38</sup>, որն ըստ ուսումնասիրողների տեղի է ունեցել 1206 թ.<sup>39</sup>: Այս շրջանում Ականաբերդը Նաթերքի Վախտանյան իշխանների տիրույթում էր և հավանաբար նաև նրանց երկրորդ նստավայրը՝ ոչ հեռու գտնվող Նաթերքից հեկո: 1214 թ. Վախտանյան Բ-ի մահով փոխանցվողը սպառվել է և Ականան Նաթերք գավառի մի մասի հետ անցել է Իվանե

Ջաքարյանին ենթակա Ծարի տերերին<sup>40</sup>: 13-րդ դարի 40-ական թթ. Ականան հիշվում է այն բերդերի թվում, որոնք Ներքին Խաչենի Նասան-Ջալալ իշխանը եղ է ստացել Բաթու խանից և մինչ այդ խլված է եղել նրանից վրացիների ու թուրքերի կողմից<sup>41</sup>: Այս առթիվ ուշագրավ է Բ. Ուլուբաբյանի դիտողությունը. «Ականան պարկանում էր Վերին Խաչենի ճյուղին և այստեղ Նասան-Ջալալը պարզապես ներկայացված է որպես անբողջ Խաչենի գահերեց իշխան»<sup>42</sup>:

Այնուհետև Ականան կրկին նշվում է Ծարի Դոփյանների տիրույթում. ըստ 1289 թ. մի վիճակագրի՝ այն պարկանում էր Դոփյան Գրիգոր Բ իշխանին<sup>43</sup>, իսկ 1430 թ. մեկ այլ խաչքարի արձանագրության մեջ Դոփյան Շանշեի (Շահանշե) որդի Սայրին ներկայանում է իբրև Ականայի, Նաթերքի և այլ «տեղեացս տեր եւ պարոն»<sup>44</sup>: Ականաբերդի հետագա ճակատագիրը կապված է Դոփյան իշխանատոհմի ճյուղավորման և Ծար-Վերին Խաչենի միասնական իշխանության փոփոխման հետ: Բազմաթիվ պարակարծությունների տեղիք փված այս խնդրի վերջին ուսումնասիրողները համարում են, որ Դոփյան իշխանական տունը 15-րդ դարում բաժանվել է Շահանշենց (կամ Ուլուբեկանց), Աղբուղենց (կամ Այրինեցոնց) և Ջահանշենց միջև<sup>45</sup>, որոնք, իրենց հերթին, հաջորդ դարում մասնատվել ու ճյուղավորվել են, տեր մնալով սակայն երկրամասում նոր

<sup>35</sup> Ս. Ջալալեանց, հր. Բ, էջ 233, Մ. Բարխուարեանց, Արցախ, էջ 212, Մ. Յովհաննեսեան, Նայասպանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 450, «Դիվան հայ վիճակագրության», 5, էջ 130, Նայասպանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հր. 1, էջ 130: Նուշարձանը չափագրել ենք 1985 թ.:

<sup>36</sup> Ս. Ջալալեանց այն թյուրիմացաբար վերագրում է Ներքին Խաչենի 13-րդ դ. իշխան Նասան-Ջալալին: Տե՛ս Ս. Ջալալեանց, հր. Բ, էջ 233:

<sup>37</sup> Ղ. Ալիշան, Նայասպարում, էջ 187:

<sup>38</sup> Գ. Նովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռոշյանք, մասն Գ, էջ 1:

<sup>39</sup> Մ. Յովհաննեսեան, Նայասպանի բերդերը, էջ 451, հմմտ. Սպ. Օրբելյան, էջ 44:

<sup>40</sup> Գ. Նովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռոշյանք, մասն Ա, էջ 192, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 190, 215, 333:


<sup>41</sup> Կ. Գանձակեցի, էջ 359:

<sup>42</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 190-191:

<sup>43</sup> Մ. Բարխուարեանց, Արցախ, էջ 405:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 408:

<sup>45</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 334, Գ. Կիրակոսյան, Մարտնագիտական տեղեկություններ Դոփյանների մասին, էջ 222, նույնի՝ Նայասպանը Լանկ-Թամուրի արշավանքների շրջանում, էջ 208:



1. ԱԿԱՃԱԲԵՐԴԻ ԱՊՍԵՐՆԵՐ. Չափազանցություն-վերականգնություն

ձևավորվող մանր գավառապետական կազմավորումներում՝ մելիքություններում<sup>46</sup>:

Ներկայումս պարսկական իրադարձությունների այս ընթացքին, քրամաբանական է ենթադրել, որ վերջին շրջանում Ականաբերդը ևս, ինչպես Ճարը, Սողը, Մեծ Մագրան, դարձել է այդ քրամաբանության մեկի մելիքական աթոռանիստը և որպես այդպիսին մնացել մինչև 16-րդ դարի կեսերը, երբ ողջ երկրամասը գրեթե հիմնովին ավերվել ու ամայացել է պարսկա-թուրքական պատերազմների հետևանքով: Այս պարագայում է, որ հետագայում՝ հայ մելիքությունների բուռն վերելքի դարաշրջանում Ականաբերդը սակավադեպ է հիշվում<sup>47</sup>, չնայած գտնվում էր Ջրաբերդի հզոր մելիքության փրույթում<sup>48</sup>:

Այսպիսով, կարծում ենք բոլոր հիմքերը կան եզրակացնելու, որ Ականաբերդի ապարանքը 15-րդ դարում կամ 16-րդ դարի առաջին կեսում կառուցել են Դովյան իշխանական փնից սերված մելիքական քրամաբանության գործերը՝ որպես իրենց գավառափրույթի նստոց-կենտրոն:

Պարսպափակ ապարանքի ամբողջությունը հարակազմում արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն է (արտաքուստ՝ 13,0 x 24,0 մ), բաղկացած հյուսիսային կողմի չորս իրար կից ու միաշարք, կիսագերանափոր դահլիճից և դրանց հարավային ճակատի երկայնքով ձգվող նախասրահ-միջանցքից (ներքուստ՝ 3,6 x 22,4 մ): Միակ արտաքին մուտքը նախասրահի արևմտյան կողմից է, դահլիճներինը՝ ճակատային պատերի եզրամասերում: Դահլիճներից միջին երկուսը միաչափ են ու ավելի ընդարձակ (ներքուստ՝ 6,3 x 7,0 մ), մուտքերով կապված են միմյանց և արևմտյան դահլիճի հետ, իսկ եզրայինները համեմատաբար նեղ են ու ձգված (ներքուստ՝ 3,7 x 7,0 մ): Ապարանքի հարավային պատն ամրացված է երկու եզրային և երկու միջին՝ կիսագլանաձև, բրգանման, փոքր ու հոծ ելուստներով, որոնց միջև նկատելի են ճեղքաձև պարուսանների հետքեր: Պատերը շարված են կոպտապարշ ուրծաքարով (հաստությունը՝ 0,8 մ) և ներքուստ սվաղված են եղել կրաշաղախով: Դրանք մեծ մասամբ պահպանվել են 0,5-2,0 մ բարձրությամբ, հիմնովին ավերված է միայն հյուսիս-արևելյան հարվածը: Դահլիճների հյուսիսային պատերի կենտրոնական մասերում կան մեկական փոքր որմնա-

խորշեր, որոնց եզրաշարվածքից կարելի է կռահել, որ մուտքային բացվածքների այժմ բացակայող եզրամասերը ևս կոպտապարշ են եղել:

Ապարանքի դահլիճների ծածկերը չեն պահպանվել: Մակայն ավերակների հակիրճ նկարագրության մեջ Ս. Բարխուդարյանը նշում է, որ դրանք «թաղածածկ են, ...լուսավորությունն սրացվել է ծածկի կենտրոնից»<sup>49</sup>: Անվանի վիճակագրի այս կարևոր փորձությունը, անշուշտ, փաստական հիմք ունի և վկայում է, որ ապարանքն ունեցել է քարաշեն ծածկեր: Ասվածից պարզ է նաև, որ թաղակապ է եղել եզրային դահլիճների ծածկը (հավանաբար նաև՝ նախասրահը), իսկ կենտրոնական, քառակուսի հիմքով դահլիճներն ունեցել են երդիկով պասկվող քարակերտ, բրգաձև կամ գմբեթաձև ծածկ: Վերջիններիս հավանական լուծման մասին կարելի է դատել, ելնելով Արցախ-Սյունիքի ուշ միջնադարյան աշխարհիկ կառույցներում լայնորեն փորձված քարաշեն ծածկաձևերից, որոնք քառակուսի հիմքի դեպքում հիմնականում լուծված էին կամ քառանիստ-բրգաձև՝ գոցվող թաղի ձևով, կամ ունեին անկյունային փրոմպների վրա բարձրացող ութանիստ-բրգաձև և կիսագլանաձև գմբեթաձև փեսք<sup>50</sup>: Թե այս փորձերակներից որն է կիրառվել Ականաբերդի ապարանքում, դժվար է ասել: Կարևորն այն է, որ ապարանքի համաչափ ու կուռ հարակազմով թելադրված ողջ ծավալապարամական հորինվածքի արդյունքում ստեղծվել է պալատական կառույցի թեկուզև պարզ ու անպարզ, բայց և՛ չափազանց ուշագրավ մի փայ, որն իր սեղմ ու ամրոցակերպ ձևերում կրում է դարաշրջանի անհանգիստ ու փառանապալի քաղաքական իրավիճակի կնիքը:

Ականաբերդի ապարանքը 15-16-րդ դարերից մեզ հասած սակավաթիվ հուշարձաններից է, և դրանով իսկ ուշագրավ, իսկ որպես ուշ միջնադարյան մելիքական ապարանքների առաջնեկ ու նախափայ՝ այն չափազանց մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Իր անխաթար ու ամբողջական հարակազմային պահպանվածությամբ, քարակերտ-գմբեթավոր գլխարուն-դահլիճներով ու պաշտպանական կառույցին բնորոշ զծերով ապարանքը կարևոր փեղ ունի Արցախ-Սյունիքի միջնադարյան պալատաշինության պարմության մեջ:

<sup>46</sup> Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Դովյանք և Մելիք-Շահնագարյանք, Նյութեր հայ մելիքության մասին, գիրք Բ, Էջմիածին, 1914, Բ. Ուրուբայան, Խաչենի իշխանությունը, էջ 385-391, նույնի Արցախի պարմությունը, էջ 122,126:


<sup>47</sup> Եսայի Նասան-Ջալալեանց, Պարմութին համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 37-39:

<sup>48</sup> Ըստ Նյուսիսային Արցախի Գեղաշեն գյուղում պահպանված քաղաքաբարերի, «ՁԱՐԱԲԵՐԴՈՒ ԱԿԱՆԵՅԻ»-ները այսօրեղ են գաղթել սկսած 19-րդ դարի սկզբից (տես Ս. Կարապետյան, Գեղաշեն, Ե., 1992, էջ 4): Մեկ այլ վավերագրից հայտնի է Ազանա գյուղի բնակչության վերջնական գաղթը Գեղաշեն՝ 1845 թ. (տես ՆՆՊԿԿ, ֆ. 53, ց. 1, գործ 3833, թերթ 123-124):

<sup>49</sup> «Իվան հայ վիճակագրության», 5, էջ 130:

<sup>50</sup> Ն. Պապուխյան, Չայրվող ծածկերով բնակարանները, էջ 332:

## ՔԱՇԱԹԱՂ



Ապարանքի ավերակները գտնվում են ԼՂՏ Քաշաթաղի (Լաշինի) շրջանում, Աղավնո գետի Ծիծեռնավանից վրակի ձախ ափին, նախկինում Սուլթանբենդ կոչված գյուղակում<sup>51</sup>: Ապարանքի մասին որևէ պարամամարենագրական փնտրություն կամ վկայություն հայտնի չէ: Առաջին անգամ հակիրճ նկարագրությամբ հիշատակում է անվանի հայագետ Մորուս Նասրաթյանը և գավառի պարամության համառոտ քննությամբ եզրակացնում. «Նոչակավոր Ծիծեռնավանքից ոչ հեռու գտնվող Քաշաթաղ ավանի (հեքագայում՝ բրդաբնակ Սուլթանբենդ) մեջ պահպանված երկհարկանի քարաշեն դղյակ-ամարաթի կառուցումը անսարակույս պարկանում է Մելիք Նայկազ Առաջինին՝ 15-րդ դ. վերջերին»<sup>52</sup>:

Աղահեճքը կամ Քաշաթաղը (նաև՝ Քաշաթաղք, Քաշթաղ, Քշտաղ) միջնադարում Սյունյաց աշխարհի արևելյան ծայրագավառն էր և Աղավնո գետի հովիտով սահմանակցում էր Արցախ-Խաչենին<sup>53</sup>: 13-րդ դարում գավառի մի մասը կոչվել է նաև Խոժոռաբերդ, սակայն հեքագայում ընդհանրական է դարձել «Քշտաղի երկիրը»՝ որպես ողջ գավառի, ապա և՛ մելիքության անվանում<sup>54</sup>:

15-18-րդ դարերում Քաշաթաղի մելիքությունը բարգավաճ, զուտ հայաբնակ ու կիսանկախ

կազմավորում էր, նոր իշխանակարգի կարևոր օրրաններից մեկը՝ Քաշաթաղ և Խնամախ աթոռանիստ կենտրոններով, որտեղ իշխում էին Մելիք-Նայկազյանները<sup>55</sup>: Այս փոսմի հիմնադիրը՝ 15-17-րդ դդ. պարմական աղբյուրներից հայտնի պարոն կամ իշխան Նայկազը,<sup>56</sup> սերում էր Խաղբակյան-Պոռոջյան իշխանապոսմից և ապրել է մոտ 1450-1520 թթ.<sup>57</sup>: Քաշաթաղի ապարանքը վերագրվում է հենց այս Մելիք-Նայկազ Ա-ին և թվագրվում 15-րդ դ. վերջով՝ ելնելով այն հանգամանքից, որ արդեն 16-րդ դ. սկզբում Նայկազի որդի Նախնագարը գավառի աթոռանիստ փեղափոխել էր Քաշաթաղից ոչ հեռու գտնվող Խնամախ գյուղը և այնտեղ կառուցել նոր ապարանք<sup>58</sup>: Անշուշտ, սրանով Քաշաթաղ-մելիքանիստի դերը չի նվազել, և իր հարմարավետ աշխարհագրական դիրքի, ինչպես նաև Ծիծեռնավանքի հարևանության շնորհիվ հեքագայում էլ շարունակում էր մնալ գավառի նստոց-կենտրոններից մեկը: Տեղին է շեշտել, որ ապարանքի ավերակները անվիճելիորեն մատնանշում են մելիքանիստ Քաշաթաղ ավանի գտնվելու վայրը (ինչը ստուգապես հայտնի չէ այլուստ), քանզի Սյունիքի և Արցախի միջնադարյան իշխանանիստ և մելիքանիստ բնակավայրերին բնորոշ է առաջին հերթին ապարանքի առկայությունը: Ուստի անհիմն ու անհամոզիչ է վերջերս առաջ քաշված վարկածը, ըստ որի վիճարկելով Քաշաթաղ-Սուլթանբենդ նույնացումը և անփոփոխելով ապարանքի

<sup>51</sup> Նուշարձանը փեղում ուսումնասիրել ենք 1985 թ.: Տե՛ս Ա. Առուսյան, Քաշաթաղի իշխանական ապարանքը, «Նայ արվեստին նվիրված հանրապետական յոթերորդ գիտական կոնֆերանս», գեկուցումների թեզեր, Ե., 1995, նույնի՝ Քարե վկայագրեր, «Ազգայնամարտ», 1993, N 17, էջ 11:

<sup>52</sup> Մ. Ս. Նասրաթյան, Պարմա-հնագիտական ուսումնասիրություններ, Քաշաթաղ-Խնամախ, էջ 158:

<sup>53</sup> Սյր. Օրբելյան, Սյունիքի պարամություն, էջ 70-71, Ղ. Ալիշան, Միսական, էջ 266:


<sup>54</sup> Ա. Դարիժեցի, Գիրք պարամութեանց, Ե., 1990, էջ 63, 222, Աջ. Նովհաննիսյան, Դրվագներ, Գիրք Բ, էջ 312, А. Карагезян, К локализации гавара Кашатаг, «Լրաբեր հաս. գիտ.», 1987, 1, էջ 40-45:

<sup>55</sup> Լեո, Նայոց պարմություն, հր. 3, գիրք Բ, էջ 21, Մ. Ս. Նասրաթյան, Քաշաթաղ-Խնամախ, էջ 155-165:

<sup>56</sup> «Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշարակարաններ», մասն Բ, Ե., 1958, էջ 375, 400, Նայերեն ձեռագրերի հիշարակարաններ, ԺԷ դար, Ե., 1974, էջ 206-207, Գ. Նովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռոջյանք, մասն Ա, էջ 232, 236:

<sup>57</sup> Մ. Ս. Նասրաթյան, նշվ. աշխ., էջ 158, Գ. Նովսեփյան, նշվ. աշխ., էջ 274:

<sup>58</sup> Մ. Ս. Նասրաթյան, նշվ. աշխ., էջ 158:



2. ԶԱՇԱԹԱՐԻ ԱՊԱՐԱՆԵՐ. Հափազություն



Լ. ՔԱՇԱԹ-ԱՂ. Մելիք-Հակոբ Ա-ի ապարանքը բակի հր-արվ կողմից (1950-ական թթ. և 1985 թ.)

գոյությունը, փորձ է արվում շրջանի Ղարղըշլաղ գյուղի և Քաշաթաղ-Քշտաղ անունների կարծեց-յալ նմանության հիման վրա փնտրել Քաշաթաղ ավանի տեղագրության նոր վայր<sup>59</sup>: Մինչդեռ եկվորների կողմից գյուղի անվան Մուլթանքենդ հորջորջումն իսկ, որ թարգմանաբար նշանակում է թագավորագյուղ կամ իշխանագյուղ, ավելորդ անգամ վկայում է, որ հենց այստեղ է գտնվել գավառի աթոռանիստ կենտրոնը<sup>60</sup>: Կարծում ենք նաև, որ Ա. Ղարագյոզյանի վկայակոչած 17-րդ դ. ձեռագիր հիշատակարանի «... յաստուածաբնակ և յանառիկ դղեակս Քաշթաղ...» տեղեկությունը ևս<sup>61</sup> վերաբերում է ոչ թե մինչ օրս անհայտ բերդին, այլ Քաշաթաղ ավանի (թերևս՝ բերդավանի) յուրօրինակ միջնաբերդ մեղիքական դոյակին, այսինքն՝ ամրոցակերպ ապարանքին:

Վերջինս, իրոք, մի ամրոցակերպ համալիր է՝ առնված ուղղանկյուն հատակագծով շրջապարսպի մեջ (արտաքուստ՝ մոտ 29,0 x 36,0 մ) և կառուցված է ժայռոտ բլրալանջի հովտամերձ մասում արհեստականորեն սրբազան դարավանդի վրա<sup>62</sup>: Ապարանքը սկզբնապես բաղկացած է եղել թիկունքով լանջին հաված երեք իրար կից միաջափ դահլիճից (ներքուստ՝ մոտ 4,0 x 6,0 մ) և դրանց մուտքային ճակատը բռնող սյունագարդ կամարասրահից (ներքուստ՝ մոտ 4,0 x 14,0 մ), որոնք, ըստ Մորուս Հասարթյանի կարարած մի լուսանկարի, 1950-ական թթ. դեռևս մեծ մասամբ կանգուն էին<sup>63</sup>: Ծիսությունների այս խումբն այժմ լիովին ավերակ է ու մասամբ հողածածկ և, ըստ հարակից պատերի վրա երևացող հետքերի, ունեցել է փայտաշեն, հարթ ծածկ: Մրահի երկու եզրապատերին պահպանվել են կամարակրունկի քարերը, ինչպես նաև փայտաված տեղում մնացած միակտոր, քառանիստ սյունաբները:

Մեծ հեղափոխություն է ներկայացնում այս խմբի արևմտյան կողմում կցակառուցված երկհարկանի դահլիճը, որի գլխավոր՝ լայնական ճակատը կամարասրահի շարունակությունն է կազմում: Դահլիճը երկու հարկում էլ միաջափ է

(ներքուստ՝ մոտ 4,0 x 7,0 x 4,0 մ), ծածկված է կիսագլանաձև թաղով և ունի ճակտոնավոր, երկլանջ փանիք: Առաջին հարկի կամարակապ շքամուտքը և միակ պատուհանը բակի կողմից են, որոնց հանդիպակաց պատի կենտրոնում սաղավարագլուխ օջախ-բուխարին է՝ երկու կողմում համաչափ դասավորված պահարանախորշերով: Դահլիճի արևմտյան պատի երկայնքով արտաքուստ հաված քարե շքասանդուղքը փանում է երկորդ հարկ, որի բակահայաց ճակատը լուծված է եզրային որմնաեղուսպների վրա հենվող և ծածկաթաղի թռիչքն ընդգրկող կամարային բացվածքով: Վերջինս հեղափոխում փակվել է կենտրոնում լայն պատուհան ունեցող պատով: Կրկնահարկ այս դահլիճը 1985 թ. հիմնականում կանգուն էր. փլուզված էին հարավ-արևմտյան անկյունամասը և հավելված պատը, տեղահանված էին շքասանդուղքի ասփիճանաստվերը:

Բակն ընդգրկող պարսպից պահպանվել են արևելյան և հարավային հատվածները՝ մոտ 3 մ բարձրությամբ և դրանց անկյունամասում գտնվող սնամեջ-բոլորածև բուրգը՝ երեք հրակնաբով ու դեպի բակ բացված կամարակապ մուտքով: Նրակնաբներ կան նաև արևելյան պարսպապատի մեջ, որոնց շարքն ընդհատվում է վերջինիս՝ կամարասրահին կից փոքր-ինչ դուրս ընկած հատվածում: Պարսպի գրեթե ողջ արևելյան ճակատը՝ մինչև բուրգը, այժմ փակված է բնակելի փան պատով, սակայն հիշյալ հատվածում փան լուսամտի վերածված մուտքային բացվածքը, ինչպես նաև ավելի բարձր պահպանված պարսպամասը վկայում են, որ այստեղ ապարանքի արևելյան մուտքն է եղել՝ լուծված պարսպից առաջացող նախամուտքի ձևով, թերևս նաև՝ վերդարպասյա ծավալով:

Դարավանդաձև բակի հենապատ հանդիսացող հարավային պարսպապատի արևմտյան եզրին կից կա երկու նույնաչափ գեղանավոր գլխապուն (ներքուստ՝ մոտ 5,5 x 5,5 մ), որոնց «հազարաշեն» ծածկից պահպանվել են խաչաձև դասավորված երկու գույգ գեղանները: Մրանք, ըստ երևույթին, օժանդակ-տնտեսական նշանակություն են ունեցել: Նկատելի են նաև արևմտյան և հյուսիսային պարսպապատերի մնացորդները, որոնցով և պարփակվել է բակի այդ հատվածը: Ըստ ամենայնի, ապարանքի գլխավոր դարպասը եղել է հենց արևմտյան կողմից՝ գեղեզեցիկ դեպի Ծիծեռնավանք ձգվող հնօրյա ճանապարհի ուղղությամբ:

Ապարանքի՝ մոտ 1 մ հաստությամբ պատերը հիմնականում իրականացված են կոպրապաշ քարից. սրբաբաշ է միայն պատերի, բացվածքների, որմնախորշերի ու կամարների եզրաշարվածքը: Առանձնակի խնամքով աչքի է ընկնում հարկապես երեսբաց վերնասրահի մշակումը. ճակատի շարվածքը գրեթե ամբողջովին սրբաբաշ է շեշտված երկասփիճան, լայնաթռիչք կամարաղեղով, ծածկաթաղի հիմքն ընդգծված է ուղղանկյուն հատվածի նուրբ որմնագոտիով, արևմտյան պատի երկու լայն բացվածքներն ունեն մոտ 1,5 մ երկարությամբ միակտոր քարե

<sup>59</sup> **А. Карагезян**, К локализации гавара Кашатаг, с. 40-41. Ավելորդ չէ նշել, որ նախկինում քրդաբնակ գյուղի անվանման ԳЫШЛАГ արմատը (նշանակում է՝ ձմեռանոց, օրս, քեն Ադրբեջաներեն-հայերեն բառարան, Ե., 1987, էջ 187) փարաված է որպես առանձին գյուղանուն և հայտնի է Ադրբեջանի վեց այլ վայրերում (քեն Азерб. ССР, АДМ.-террит. деление, Баку, 1979, с. 176): Ավելին. այդ Գышлаг-ներից մեկը գտնվում էր նույն Լաջինի շրջանում (փարբեր է Гары Գышлаг-ից, քեն նույն տեղում, էջ 63):

<sup>60</sup> **Ա. Ղուլյան**, Քարե վկայագրեր, «Ազգամարտ», 1993, N 17, էջ 11, **Ս. Կարապետյան**, Նայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Ե., 1999, էջ 151-155:

<sup>61</sup> **А. Карагезян**, նշվ. աշխ., էջ 42:

<sup>62</sup> Նուշարձանը չի չափագրվել. մեզնից անկախ պարզառենքով տեղում հաջողվել է կարարել միայն հատակագծի սկզբի որմնաց ճափերի: Ներկայացված գծագրերը կարգաված են ապարանքի մանրամասն լուսանկարների և խնամախի նմանապիպ ապարանքի չափագրությունների բաղադրությամբ, ուստի բերվող ճափերը խիստ մոտավոր են:

<sup>63</sup> Լուսանկարը մեզ է փրամադրել անվանի հայագետի որդին՝ ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասարթյանը:

բարավորներ, փանիքը երեսապարված է հարթ ծածկասալերով:

Ապարանքի ծավալային հորինվածքում ու ճակատային համայնապարկերում շեշտված կրկնահարկ դահլիճի երեսքաց վերնասրահը մելիքական փան գլխավոր դահլիճն է՝ Մելիք-Նայկազ Ա-ի ամառային ընդունարան-գահասրահը, իսկ առաջին հարկը՝ մելիքի բուն բնակարանը:

Նուշարձանի ճարտարապետության մեջ ինքնատիպ է նաև սյունազարդ կամարասրահը:

Սյունաշարը դրված է եղել բակից փոքրինչ բարձր՝ սրահին կից դահլիճների հատակին հավասար հիմնապարի վրա, դրանով իսկ որոշակի թեթևություն ու հանդիսավորություն հաղորդելով ընդհանուր առմամբ գեղնամած հարկաբաժնի բակահայաց ճակատին: Կամարասրահը պարփակող պատերի մեջ թողնված պահարանախորշերը վկայում են, որ այն, որպես երեք կից դահլիճների խորն ու հովասուն պարզզամբ, ծառայել է մելիքական փան անդամների ամառային բնակության ու հանգստի համար: Իսկ երկհարկանի դահլիճի կողապարիս պահպանված հեքիքը հուշում է, որ սրահն ունեցել է գերանաշար հարթ ծածկ: 1992 թ. շրջանի ազատագրումից հետո պարզվեց, որ աղբբեջանցիները մասամբ պեղել ու նորոգել են ապարանքը, այդ թվում՝ կամարասրահը: Այդ աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են վերջինիս ուղղանկյուն հիմքով բարձր խարսխասալերը՝ միակտոր սյունաբների փեղադրման համար նախատեսված փորվածքով և սեղանաձև հարվածքով պարզ խոյակները: Աղբբեջանցի վերականգնողները իրենց հատուկ գեղձարարությամբ անպեսել են ոչ միայն բակում սփռված խոշորաչափ, միակտոր


սյունաբները՝ դրանց փեղում կառուցելով սրբափառ շարվածքով բառակող մույթեր, այլև՝ հայտնաբերված խարսխաներն ու խոյակները, որոնց փոխարեն դրել են երկաստիճան պարվանդաններ ու ծանրամած, խոյականման վերնամասեր: Նույն «ջանասիրությամբ» երեսքաց վերնասրահի կամարակապ ճակատը կրկին փակել են պատով, կառուցել հուշարձանին անհարիր պարսպամույթի դարպաս և այլն:

Նենապարսպով սպեղծված բարձրադիր դարավանդի վրա կառուցված ապարանքի հորինվածքում կարևորված են նաև պաշտպանական հարցերը. ամբողջ կառույցը գուրկ է արտաքին պարուհաններից, իսկ պահպանված բուրգի և դրան կից պարսպի հրակնապ-դիփանցքները ուղղված են հարավ և արևելք՝ գեղի եզերքով դեպի լեռնագավառի խորքը փանող հիմնական ճանապարհի կողմը:

Քաջաթաղի մելիքական ապարանքը 15-րդ դարից պահպանված եզակի պալատական կառույց է՝ սպեղծված դարաշրջանին բնորոշ պարզությամբ և զուսպ ու արտահայտիչ ճարտարապետական հորինվածքով: Իր յուրահատուկ լուծումներով Մելիք-Նայկազի ապարանքը ուշ միջնադարյան նմանօրինակ հուշարձանների շարքում նոր փիպի առաջնեկն է ու դրանցից ամենաամբողջականը: Արցախի և Սյունիքի սահմանակից փարածքում գտնվող ապարանքը, միաժամանակ, արժեքավորվում է որպես կապողակ՝ այդ երկրամասերի իշխանական ու մելիքական ապարանքների կազմավորման և զարգացման ժամանակագրական ու փիպարանական ընթացքում:



## ԽՆԱԾԱԽ



Ապարանքի ավերակները գտնվում են Տյունիքի մարզի Խնածախ գյուղում, ձորամիջյան ճանապարհի եզրին՝ երեք կողմից առնված բնակելի կառուցապարման մեջ: Ապարանքը պարմամարենագրական աղբյուրներում չի հիշվում: Մերօրյա ուսումնասիրողներից Ն. Պապուխյանը, վկայակոչելով Խնածախ գյուղի 17-րդ դարի հուշարձանները, ապարանքը ևս համարում է 17-րդ դարի կառույց և վերագրում Մելիք-Նայկազ Բին<sup>64</sup>: Այս տեսակետին է նաև Վ. Նարությունյանը<sup>65</sup>: Նուշարձանի կառուցման հանգամանքներին առավել հիմնավոր անդրադարձել է Մորուս Նասրաթյանը: Քաջաթաղ-Խնածախի պարմությանը նվիրված քննական ակնարկում հիշատակելով Քաջաթաղ ավանում 15-րդ դարի վերջերին կառուցված Մելիք-Նայկազ Ա-ի ապարանքը՝ նա մասնավորապես գրում է. «16-րդ դարի սկզբից գավառի վարչական կենտրոնը Քաջաթաղ ավանից փոխադրվում է 10-12 կմ դեպի հարավ ... Խոնածախ գյուղը: Փոխադրվողը լինում է Մելիք Նայկազի (Ա-ի - Ա. Ղ.) որդին՝ Նախնագարը: Սա (ունեցել է) գուցե նույն վարպետների ձեռքով կառուցված, դարձյալ հարակից շենքով (ապարանք) Խոնածախ-Խնածախում, (որը) պահպանվել և հասել է մեզ»<sup>66</sup>:

Խնածախը (նաև՝ Խոնածախ, Խանածախ) հնում Սյունիքի Նաբանդ գավառի գյուղերից էր<sup>67</sup>, սակայն ուշ միջնադարում անցել է սահմանակից Քաջաթաղին և իր համեմատաբար ապահով աշ-

խարհագրական դիրքի շնորհիվ դարձել է մելիքության երկրորդ աթոռանիստը: Ապարանքից բացի Խնածախ-մելիքանիստի մասին կարևոր վկայություններ են նաև այսպեղ գտնված Մելիք-Նայկազյան փոհմի մի քանի երևելի ներկայացուցիչների փապանաքարերը, ինչպես նաև նրանց օրոք կանգնեցված արձանագիր խաչքարերը<sup>68</sup>: Սրանցից աչքի է ընկել հարկապես Մելիք-Նախնագարի գեղաքանդակ փապանաքարը՝ դրված յոթասպիճան պարվանդանի վրա: Ըստ 1551 թ. փապանագրի՝ Նախնագարը «ՄԵԾ ԻԾԽԱՆ ԷՐ Ի ՄԷԶ ԹԱԳԱԻՈՐԱՅ»<sup>69</sup>, հանգամանք, որը միանգամայն հավանական է դարձնում ապարանքի կառուցման վերագրումը նրան և թվագրումը 16-րդ դարի առաջին կեսով:

Ապարանքը հետագայում ժառանգել է Մելիք-Նախնագարի մեծահամբավ ու երկարակյաց որդին՝ պարմական աղբյուրներից հայտնի «Մելիք Նայկազն ի Քշարադս երկրեն՝ ի Խանածախ գեղջե»<sup>70</sup>: Մելիք-Նայկազ Բ-ը (1551-1623 թթ.), 17-րդ դարի սկզբում գործուն մասնակցություն ունենալով Օսմանյան Թուրքիայի դեմ Պարսից բանակի մղած պայքերագմում, վայելում էր Շահ-Աբբաս Ա-ի բարյացակամությունը, և, ըստ ավանդության, ի վկայություն հավապարմության ու քաջության, նրանից սրացել էր «Ծեր առյուծ» («Գոջա ասլան») մրերմիկ մականունը<sup>71</sup>: Մելիք-Նայկազ Բ-ը հայտնի է եղել նաև շինարարական ու մշակու-

<sup>64</sup> Ն. Պապուխյան, Սիսիանի, Գորիսի ու Ղափանի ժողովրդական ճարտարապետության կառուցվածքները, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1963, 11, էջ 58-59, նույնի Չայրոզ ծածկերով բնակարանները, էջ 333, նույնի՝ Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 71-73:

<sup>65</sup> Վ. Նարությունյան, Նայկական ճարտարապետության պարմություն, էջ 437:

<sup>66</sup> Մ. Ս. Նասրաթյան, «Քաջաթաղ-Խնածախ», էջ 158, 162:


<sup>67</sup> Մր. Օրբելյան, էջ 400, Ղ. Ալիշան, Սիսական, էջ 255, 264:

<sup>68</sup> Մ. Ս. Նասրաթյան, նշվ. աշխ., էջ 162-165:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 162, Մր. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, էջ 216: Վերջինս փապանաքարը թյուրիմացաբար վերագրում է Մելիք-Նայկազին:

<sup>70</sup> Ա. Գալիթեցի, Գիրք պարմութեանց, էջ 63, «Նայերեն ձեռագրերի հիշարարականներ», ԺԷ դար, հր. Ա., էջ 206:

<sup>71</sup> Մ. Ս. Նասրաթյան, նշվ. աշխ., էջ 157, 163:



4. ԽՆԱԾԱԽԻ ՄՊԱՐԱՆԸ. Հափազրույթուն

թանապասը գործունեությամբ<sup>72</sup>, համարվել է ժամանակի մեծահարուստ ու ազդեցիկ մեկը<sup>73</sup>, և այս պարագայում է, որ Խնածախի ապարանքի կառուցումը ավանդաբար կապվել է նրա անվան հետ: Սակայն նշենք, որ այս դեպքում ևս մեկիքական փան շինարարության ժամանակը պետք է փնտրել 16-րդ դարի կեսերին՝ Հայկազի իշխանության առաջին փանամյակներին, քանզի հայրնի է նաև, որ դարավերջին՝ թուրքական փորապետության շրջանում նա հեռացել է Պարսկաստան, ապա շահական բանակի օգնությամբ ազատագրել հայրենի փրոյթները<sup>74</sup>:

Ապարանքի երբեմնի համակառույցից պահպանվել է երկու ամբողջական շինություն՝ երկհարկանի դահլիճը և դրա երեսամասից 7 մ - հեռու գտնվող գլխավորը՝ երկուսն էլ գլխավոր ճակարկներով ուղղված դեպի հարավ-արևելք<sup>75</sup>: Երկհարկանի դահլիճը դրված է հենապատով ամրացված ձորեզրից մոտ 6 մ եր, ունի կիսագանձան թաղով ծածկված կրկնահարկ հորինվածք և առնված է ճակատնավոր երկանջ փանիքի փակ: Դարավանդայանջի մեջ խորացող առաջին հարկը հապակագծում ուղղանկյուն է (ներքուստ՝ 3,9 x 6,2 x 3,9 մ), երկայնական պատերում համաչափ դասավորված երեքական կամարակապ որմնախորշերով, որոնցից հյուսիս-արևելյան շարքի մեջտեղինը օջախ-բուխարին է: Ծակարային պատի ձախ եզրում կամարակապ շքամուտքն է, իսկ կենտրոնում՝ միակ պատուհանը: Երկրորդ հարկը նույնպես հիմքում ուղղանկյուն է (ներքուստ՝ 3,9 x 6,6 x 3,65 մ), մուտքը հարավ-արևմտյան պատի վերջնամասից բացվում է դեպի փոքր-ինչ բարձրադիր երեսաբակը, իսկ ճակարկը լուծված է եզրային որմնաեղևների վրա հենվող և ծածկաթաղի թռիչքն ընդգրկող կամարային բացվածքով (վերջինս հետագայում փակվել է երկու պատուհան ունեցող պատով):

Կրկնահարկ դահլիճի երկրորդ հարկից մի փոքր ցածր ընկած դարավանդան երեսաբակի խորքում կառուցված գլխավորն ավելի ընդարձակ մի դահլիճ է (ներքուստ՝ 6,0 x 7,0 մ) և ունի անկյունամերձ չորս փայտե սյուների վրա բարձրացող երդիկավոր «հազարաշեն» գերանածածկ: Երեք պատերում (բացի հարավ-արևմտյանից) կան մեկական առանցքային դիրքով պահարանախորշեր, որոնցից ճակարակապինը հետագայում վեր է ածվել պատուհանի: Գլխարան ճակարկը, ի փարբերություն փայտածածկ ներքին հորինվածքի, լուծված է երկհարկանի դահլիճի ճարտարապետությանը հարազատ շքամուտքով

ու երկու կամարակապ որմնախորշերով: Վերջիններիս առկայությունը, ինչպես նաև գլխարանը երկու կողմից կից կառույցների հետքերը վկայում են երբեմնի կամարասրահի գոյության մասին<sup>76</sup>: Ավանդի վկայությունն է նաև ապարանքի ճարտարապետական մրահագան բացահայտ ընդհանրությունը Քաշաթաղի և Խնածախի մեկիքական փաների համակառույցների հետ, որոնց հապակնշական կառուցամասերից մեկը սյունագարդ կամարասրահն է:

Ապարանքի նախնական համակառույցը, անկասկած, եղել է պարսպապատ և ունեցել է այլ շինություններ, սակայն գտնվելով գյուղի կենտրոնական ու բանուկ մասում, դրանք կամ հիմնովին բանդվել են, կամ մնացել շրջակա կառուցապարման փակ: Այնպես է միայն, որ համակառույցի հարավ-արևելյան կողմը եզրափակված է եղել ձորակի շուրթով մինչև այժմ պահպանված բարձր հենապարսպով: Ուշագրավ է, որ այսպիսով ապահովվել է և՛ ճակարակողմի պաշտպանվածությունը, և՛ փեսանեխությունը հեռվից:

Ապարանքի պատերն ունեն 1,2 մ հաստություն և կառուցված են հիմնականում կոպարաշ քարից. սրբարաշ է միայն պատերի, բացվածքների, որմնախորշերի ու կամարների եզրաշարվածքը, ինչպես նաև երեսբաց վերնասրահի ամբողջ ճակարկը: Մեծ խնամքով են իրականացված կրկնահարկ դահլիճի շքամուտքը, որմնախորշերը, վերնասրահի երկաստիճան, լայնաթիչք կամարը: Երկու հարկն էլ ներքուստ սվաղված են կրաշաղախով, վերնասրահի թաղի հիմքը ընդգծված է նուրբ որմնագործով:

Այսպես ևս, ինչպես Քաշաթաղում, կրկնահարկ դահլիճն ապարանքի գլխավոր կառույցն է, որի առաջին հարկը եղել է մեկիքի բնակարանը, իսկ երեսբաց վերնասրահը՝ ամառային ընդունարան-գահասրահը: Այս առումով ուշագրավ է, որ ըստ Ն. Պապուխյանի, մինչև այսօր էլ «երկհարկանի շենքը փեղի բնակիչները կոչում են «բալախան», որը պարսկերեն վերնատուն է նշանակում»<sup>77</sup>:

Խնածախի մեկիքական ապարանքը 16-րդ դարից մեզ հասած պալատական ճարտարապետության հազվագյուտ հուշարձան է՝ դարաշրջանին հարուկ հարակ հորինվածքով ու անպարմայն կարագրով և Քաշաթաղի ապարանքի հետ ներկայացնում է ուրույն փայ ուշ միջնադարյան մեկիքական ապարանքների ձևապետղման շղթայում:

<sup>72</sup> «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 193, 196, Աշ. Տովհաննիսյան, Դրվագներ, գիրք Բ, էջ 252:

<sup>73</sup> Լեո, Հայոց պատմություն, հր. 3, գիրք Բ, էջ 21, նույնի Խոջայական կապիտալ, էջ 159:

<sup>74</sup> Մ. Ս. Տասրաթյան, նշվ. աշխ., էջ 165:

<sup>75</sup> Չավագրությունը՝ ըստ Ն. Պապուխյանի:

<sup>76</sup> Ն. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 73:

<sup>77</sup> Նույն փեղում, էջ 71, նույնի՝ Միսիանի, Գորիսի ու Ղափանի շրջանների ժող. ճարտարապետության կառուցվածքները, էջ 58:


## ԽՆՉՈՐԵՍԿ

Ապարանքը գրնվել է Տին Խնձորեսկ գյուղում (այժմյան ՏՏ Սյունիքի մարզի համանուն գյուղի մոտ)՝ ժայռոտ լեռնալանջին սփռված բնակելի կառուցապարման մեջ: Նուշարձանի ավերակները, որոնք համեմաբար ամբողջական պահպանվել են մինչև 1930-ական թթ., առաջին անգամ հակիրճ նկարագրությամբ և դարպասի 1836 թ. արձանագրության ու ընդհանուր տեսքի լուսանկարով ներկայացրել է Սյր. Լիսիցյանը<sup>78</sup>: Ներագայում՝ գյուղի տեղափոխման ժամանակ համակառույցի հիմնական մասը քանդել ու քարերն օգտագործել են, իսկ կանգուն մնացած դարպասն ու դրան կից շինությունները պահպանվել են մինչև 60-ական թթ.<sup>79</sup>: Դարպասի ճակատաբարն ունեցել է ոլորագարդ, ուղղանկյուն շրջանակի մեջ առնված 1836 թ. եռաբող արձանագրություն («Ի ՎԱԵԼՈՒՄՆ ՄԵԼԻՔ ՔԱՍՈՒ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՓԱՐԱՄԱԶԻՆ, ԹՎԻՆ ՌՄՁԵ ԻՆ»)՝<sup>80</sup>, որը վերոհիշյալ ուսումնասիրողները վերագրում են ապարանքի վերակառուցմանը՝ վկայակոչելով դրա կազմում առկա հնավանդ կառուցամասերը: Մելիք-Փարամազի և նրա նախորդների մասին որևէ այլ տեղեկություն մեզ հայտնի չէ, սակայն պարզ է, որ ապարանքը հնում ևս պարկանել է այդ մելիքական տոհմին և կառուցվել է ամենաուշը 18-րդ դարում:

<sup>78</sup> Սյր. Լիսիցյան, Չանգեգուրի հայերը, էջ 65-66, 98, 107, 113, փախարակ 35, 36:

<sup>79</sup> Ն. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 70-71:

<sup>80</sup> Վերձանությունը՝ ըստ լուսանկարի: Նախկորեն ընթերցվող արձանագրությունը Սյր. Լիսիցյանը և Ս. Բարխուդարյանը հրատարակել են փոքր անճշտություններով. երկուսն էլ չեն նկատել «ՓԱՐԱՄԱԶԻՆ»-ի «Մ»-ին կցագրված «Ա»-ի մասնիկը և անունը կարդացել են «ՓԱՐԱՄԱԶԻՆ», բաց են թողել վերջին «ԻՆ»-ը, իսկ Սյր. Լիսիցյանը՝ նաև «ՔԱՍՈՒ»-ն: Նմանք. Սյր. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 66 և փախարակ 36, «Դիվան հայ վիմագրության», 2, էջ 63:



Խնձորեսկն այս շրջանում խիտ կառուցապարված ու խոշոր ավան էր՝ իր նշանավոր «քրապակներով»՝ ժայռափոր-քարաշեն բնակարաններով ու զարգացած արհեստագործությամբ<sup>81</sup>: 17-18-րդ դարերում Խնձորեսկը Տաթևի մելիքության ամրացված բնակավայրերից էր, 1720-30-ական թթ.՝ Դավիթ-Բեկի գլխավորած ազգային-ազատագրական մարտերի հենակետերից<sup>82</sup>: Սակայն Խնձորեսկը մելիքական լիիրավ իշխանությամբ գավառի նստոց-կենտրոն չէր, ոչ էլ Մելիք-Փարամազյանները՝ գավառապետ-մելիքներ: Սրանք, հավանաբար, Պարսից շահերից մելիքի տիրույթ ստացած գյուղապետ-կավաճապետներ էին, որպիսիք շատ կային Արևելյան Նասասարանում, այդ թվում՝ Սյունիք-Չանգեգուրում<sup>83</sup>: Այնուամենայնիվ, Խնձորեսկի մելիքական ապարանքը, դարելով առկա նյութերից, ոչնչով չի զիջել ժամանակի առավել հզոր ու հանրահայտ մելիքների ապարանքներին և նույնպես նշանակալից է եղել իր չափերով ու ձևերով:


Մելիքական տան ավերակների կցկտոր նկարագրությունները համադրելով պահպանված լուսանկարների հետ՝ կարելի է որոշակի պարկերացում կազմել Մելիք-Փարամազի նախորդների օրոք դրա ունեցած նախնական հորինվածքների մասին:

Այսպես. քարերը առիթներով անդրադառնալով համակառույցի ավերակներին, Սյր. Լիսից

<sup>81</sup> Ա. Կրեպազի, Պարսություն, Ե., 1973, էջ 150-151, 263-264, Մ. Յովհաննեսյան, Նայասարանի բերդերը, էջ 398-399:

<sup>82</sup> Լեո, Նայոց պարսություն, հր. 3, գիրք Բ, էջ 208, «Նայ ժողովրդի պարսություն», հր. 4, էջ 167: Այսպես է եղերական մահով գոհվել ու թաղվել այդ մարտերի հերոս Մխիթար Սպարապետը:

<sup>83</sup> Լեո, Խոջայական կապիտալ, էջ 152-154: Արցախ-Սյունիքի ազատաբեկ մելիքությունները մասնաբերելու և դրանցում իրենց հավաքարհմ մարդկանց մելիք կարգելու քաղաքականությունը կիրառել են հարկապես Շահ-Աբբասը և Նադիր Շահը, ինչպես նաև Շուշվա խաները:



5. ԽՆՃՈՒՄԵՆԻ ԱՊԱՐԱՆՔ. Վերակազմություն

յանը վկայում է, որ դրա հին մասում եղել են երկամասերով ժայռի մեջ խորացող երեք քարաշեն գլխաքարներ՝ թաղակապ նախամուտքով, երկհարկանի, ընդարձակ, երկար ու թաղակապ սրահ-ընդունարան՝ փոքրիկ լուսամուտներով ու գեղեցիկ ձևավորված բուխարիով, թաղակապ դահլիճից ու սյունազարդ կամարասրահից բաղկացած ախոռ, որոնք կառուցված էին լավ փաշած քարից, բավականին ճոխ ու խնամքով<sup>84</sup>։

Ապարանքի ավերակների ընդհանուր փերի լուսանկարի ուշադիր դիտարկումով մասամբ ուրվագծվում է այս կառուցամասերի իրական պատկերը<sup>85</sup>։ Մասնավորապես հստակորեն երևում է ձգված ուղղանկյուն հարակազմով, երկհարկանի, թաղակապ ու երկանջ փանիքով ծածկված ընդունարանի երկրորդ երեսբայ վերնահարկը, սրահ առաջին հարկի ճակարի աջակողմյան շարունակությունը կազմող քառասյուն կամարասրահը՝ լանջի մեջ խորացող երկամասի շինությամբ և սրանց կից դահլիճի կիսավեր պատը՝ պահունակավոր կամարադեղի մնացորդով ու գույգ որմնախորշերի մեջ առնված կամարակապ բուխարիով։ Այնպես է նաև, որ 1836 թ. վերակառուցման ժամանակ կրկնահարկ դահլիճի և կամարասրահի միջնապատի ուղղությամբ ավելացվել է նոր պատ՝ լայն կամարամուտքով ու բակը ծածկող թաղով (վերջինս՝ ըստ Ն. Պա-

պուխյանի), երկրորդ հարկում վերնասրահի աջ կողմից կցվել է մի փոքր սենյակ՝ փայտաշեն պարզամբներով և այլն<sup>86</sup>։ Ն. Պապուխյանը համարում է նաև, որ «համակառուցի հիմնական շենքերը ընկած են եղել ավելի խորքում, ախոռին կից»<sup>87</sup>։ Պետք է կարծել, որ այսպիսի խոսքը Սպ. Լիսիցյանի հիշատակած թաղակապ նախամուտքով երեք քարաշեն-ժայռափոր գլխաքարերի մասին է, որոնց մասին այլ փայլեր չունենք։

Ապարանքի լուսանկարում ուշագրավ է հարկապես քառասյուն կամարասրահը։ Սրահի հարակը փոքր-ինչ բարձր է բակից, քառանիստ, միակտոր սյունաբներն ունեն պարզ հիմնասալ և սեղանաձև հարվածքի խոյակներ։ (Ի դեպ, վերջիններիս ձևերը, ինչպես նաև սյունաբների նուրբ եզրափաշվածքը ակնհայտորեն կրում են փայտե նախօրինակների ազդեցությունը)։ Կիսաշրջանաձև, սրբափաշ կամարները դրված են խոյակների ճակարային եզրով, ընդ որում սրահի աջ եզրի փոքր-ինչ լայն կամարաթռիչքով շեշտված է կից դահլիճի հանդիպակաց մուտքը<sup>88</sup>, իսկ կամարների բարձր ճակարը վկայում է, որ սրահի ծածկը թաղակապ է եղել։

<sup>86</sup> Նույն փերում, փայտապակ 36:

<sup>87</sup> Ն. Պապուխյան, Մյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 70:

<sup>88</sup> Ն. Պապուխյանը սա բացատրում է դեպի ախոռ կենդանիների հանգիստ ելումուրը ապահովելու անհրաժեշտությամբ: Տե՛ս նույն փերում, էջ 71:

<sup>84</sup> Սպ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 65-66, 98, 107, 113:

<sup>85</sup> Նույն փերում, փայտապակ 35:



*II. ԽՆՉՈՐԵՄԿ. Մելիք-Փարսանազյանների ապարանքը հյր-արվ-ից՝ հեղուկազու կցակառույցներով  
(ըստ Սյր. Լիսիցյանի)*

Դժվար չէ արեսնել նաև, որ ապարանքի նախնական հորինվածքում առանցքային դեր է ունեցել կրկնահարկ դահլիճ-կամարասրահի համադրվածքը, որն, ինչ խոսք, ժառանգված է Քաշաթաղի (և որոշ չափով՝ նաև Խնածախի) ապարանքից: Այս առումով պետք է նշել, որ, ինչպես երևում է, 1836 թ. վերակառուցման ժամանակ երկհարկանի դահլիճի առաջին՝ բուխարիով ու պահարանախորշերով ձևավորված բնակելի հարկն ու մեխիքական ընդունարան-վերնասրահը պահպանել են իրենց նախկին նշանակությունը, իսկ կամարասրահն ու կից դահլիճը վեր են ածվել ախոռի: Այս պարզառով է, որ սրահին կցված կառույցներով առանձնացվել ու փակվել է սյունազարդ ճակատը: Իսկ սա բացառություն է այն հանրահայտ իրողությամբ, որ 19-րդ դարում քա-

ղաքապիպ կամ բազմաբաժին-երկհարկանի բնակելի համակառույցների մեջ ընդգրկված հնավանդ գլխաքերերը, դահլիճները, սրահներն ու այլ սենյակները, որպես կանոն, երկրորդական նշանակություն էին ստանում և օգտագործվում էին օժանդակ-արևմտասկան նպատակներով:

Այսպիսով, առկա նյութերը հնարավորություն են տալիս պարզելու, որ Խնճորեսկի մեխիքական ապարանքն իր նախաստեղծ՝ 18-րդ դարի հապակագծային ու ծավալապարածական լուծումներով հիմնականում ունեցել է նախորդ դարերում ընդհանրացած ճարտարապետական ձևեր և նմանօրինակ հուշարձանների հետ ներկայացրել է ուշ միջնադարյան պալատաշինության մեջ կազմավորված այդ խիստ յուրահատուկ փ-





# ՏՈՒ

Ապարանքը գտնվում է ԼՂՏ Նաղրուքի շրջանի Տող գյուղի կենտրոնական մասում, բնակելի խիտ կառուցապարման մեջ: Ապարանքի նախնական հորինվածքի մեջ մտնող շինություններից պահպանվել են գլխավոր մուտքի դարպասը, երկու թաղածածկ սենյակ և երկհարկանի ընդունարանը, ինչպես նաև դրանց կից այլ սենյակների ու պարսպապատերի որոշ հատվածներ<sup>89</sup>, որոնք այժմ գտնվում են գյուղամիջյան ճանապարհի երկու կողմում և մասնակի վերակառուցումներով ընդգրկված են 19-րդ դարից մինչև մեր դարի սկզբները ձևավորված հարթածածկ բնակելի համակառույցների մեջ<sup>90</sup>:

Ըստ ընդունարանի երկրորդ հարկի շքամուտքի ամբողջ ճակատով մեկ փորագրված ընդարձակ շինարարական արձանագրության՝ ապարանքը 1737 թ. կառուցել է Դիզակի մելիքության հիմնադիր Մելիք-Եզանը<sup>91</sup>:

18-րդ դ. սկզբում Տող ավանում հիմնավորված Ղուկաս վարդապետի որդի Մելիք-Եզանը (բուն անունը Ավան, 1716-1744 թթ.) դարի առաջին կեսի հայ քաղաքական կյանքի ամենասակնառու գործիչներից էր: Նա եռանդուն մաս-

նակցություն է ունեցել Օսմանյան Թուրքիայի դեմ արցախյան սղնախների մղած ազատագրական մարտերին, որպես Դիզակի սղնախի ղեկավար, միաժամանակ գործուն դեր խաղացել հայռուսական դիվանագիտական հարաբերություններում<sup>92</sup>: 1736 թվականին «Տուգախու մելիք Էկենն» Աբրահամ Կրեդացի կաթողիկոսի հետ Մուղանի դաշտում մասնակցել է Նաղիր Շահի թագադրությանը<sup>94</sup>, ապա, ինչպես մանրամասնորեն պատմում է հիշյալ արձանագրությունը, հաջորդ փարում 1737 թ. վերջինիս կողմից «խան և բեկլարբեկ», այսինքն՝ իշխանաց իշխան հաստատվել հայոց 6 գավառների Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա<sup>95</sup>: Արցախի հինգ սղնախների կամ մելիքությունների համառ պայքարով ստեղծված և «Մահալ-ե խամսե» կամ առավելապես «Խամսայի մելիքություններ» անունով հայրնի այս ինքնավար իշխանության գլխավոր կենտրոնը Տող ավանն էր<sup>96</sup>, որպեսզի էլ այս առիթով կառուցվել է ապարանքը, որպես միավորված նահանգի գահերեց Մելիք-Եզանի (Մելիք-Ավան-խան) նստոց-պալատ:

Նշենք նաև, որ ընդունարանի (ըստ բնագրի՝ «թանապա») կառուցմանը վերաբերող հիշյալ արձանագրության թվականը ապարանքի ողջ շինության ավարտին ենթ վերագրում էլնելով այսպես պահպանված երկու այլ թվակիր վիմագրերի առկայությունից<sup>97</sup>: Դրանցից մեկը փորագրված է ապարանքի դարպասի դիմացի 19-րդ դարի պարզամեծավոր շինության ճակատամասում

<sup>89</sup> Շարադրանքը կազմված է ըստ ճարտարապետ Մանվել Սարգսյանի մեզ փրամադրած և հրատարակած նյութերի (տես Մ. Սարգսյան, Մելիքական բնակելի համակառույց Տող ավանում, «ՊԲՏ», 1987, 3, էջ 132-140): Օգտվել ենք նաև Ն. Պապուկյանի չափագրություններից:

<sup>90</sup> Մինչև այժմ ամբողջովին կանգուն և Մելիք-Եզանյանների հետնորդներին պարկանող այս բնակարանների ընկույթները դուրս է մեր խնդրի շրջանակներից: Մանրամասն տես Մ. Սարգսյանի հիշյալ հոդվածը:

<sup>91</sup> Ն. Փափազյան, Մելիք Եզանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «Լրաբեր հաս. գիր.», 1985, 5, էջ 75-78: Նանգամանալից ու համոզիչ քննությամբ հեղինակն այսպես ցույց է տալիս, որ արձանագրության թվականը ոչ թե ՌճԺԶ-1667 է, այլ՝ ՌճԶԶ-1737: Նմտ. Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 76, «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 180-181: Ի դեպ, սխալ առաջինը նկատվել է Պ. Նարությունյանը (Պ. Արտյոնյան, Освободительное движение армянского народа, с. 62):

<sup>92</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 75, նույնի՝ Պապուկյան Աղունից, հր. Բ, էջ 37-38:



<sup>93</sup> Բաֆֆի, Եժ, հր. 9, էջ 440-445, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 92, 250, 269, П. Арутюнян, ук. соч., с. 62: «Նայ ժողովրդի պատմություն», հր. 4, էջ 181, Բ. Ուլտաբեյան, Արցախի պատմությունը, էջ 149:

<sup>94</sup> Աբրահամ Կրեդացի, Պատմություն, էջ 80:



<sup>95</sup> Ն. Փափազյան, նշվ. աշխ., էջ 77: Նեղինակն այսպես Քոչիզը նույնացնում է Քաշաթաղի հետ:

<sup>96</sup> «Նայ ժողովրդի պատմություն», հր. 4, էջ 186, Ն. Փափազյան, նշվ. աշխ., էջ 78:


<sup>97</sup> Մ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 137:



6. ՏՈՂԻ ԵՊԱՐԱՆՔ. Հափազություն-վերականգնություն



7. ՏՈՂԻ ԱՊԱՐԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԱԲԱՆ. Հսիսագրություն-վերականգնություն



8. ՏՈՂԻ ԱՊԱՐԱՆՔ. Վերակազմություն

ագուցված քարի վրա, նույն ՌՃՁՁ (1737) թվականին և պարկանել է Մելիք-Եզանի որդու «բարուն Արամի»<sup>98</sup> այժմ չպահպանված հարկաբաժնին: Ըստ Մ. Սարգսյանի՝ դարպասի աջ կողմում գտնվող մյուս եղծված արձանագրության մեջ ընթերցվում է ՌՃՁ (1731) թվականը: Պետք է ենթադրել, որ կամ այստեղ նշված է ապարանքի շինարարության սկիզբը, կամ բացակայում է թվականի «Չ» միավորը, որով այն փարեկից կդառնա նախորդ արձանագրություններին:

Ապարանքից մեզ հասած ամբողջական կառուցամասերը՝ դարպասը, երկու սենյակը և ընդունարանը, ինչպես նաև դրանց կից պարերի մնացորդները ցույց են տալիս, որ այն սկզբնապես ընդարձակ ու պարսպապար համակառույց է եղել, հարակազմում հյուսիս-հարավ ուղղությամբ ձգված փարածքի պարագծային կառուցապարմամբ<sup>99</sup>:

Դարպասը գտնվում է ապարանքի արևելյան ճակարի աջ կողմում՝ պարսպապարի բեկման փեղում և ունի պարսպից դեպի բակ առաջացող խորը, թաղակապ եզրամույթով սրեղծված ծավալաձև: Արտաքին ճակարում մուտքային բացվածքը ընդգծված է երկու կողմի որմնաելուստներով, որոնք պսակվում են հորիզոնական բարավորն ընդգրկող երկաստիճան կամարով: Ճակարն աչքի է ընկնում նաև խնամքով իրականացված սրբապաշտ շարվածքով. բակահայաց ճա-

կարում մաքրապաշտ է միայն եզրաշարվածքը: Դարպասի ծավալն այժմ բողարկված է կցակառույցներով և վրան ավելացված հարկով, սակայն դրսից հարակորեն նկատվում են մուտքի որմնաելուստներից դեպի երկու կողմ ձգվող պարսպի մնացորդները: Ընդ որում, դրանցից հարավայինը ընդհարված է գյուղամիջյան ճանապարհով, իսկ հյուսիսայինը միանում է այս ուղղությամբ ձգված ուշ շրջանի ընդարձակ դահլիճի երկայնական պարին: Այս դահլիճից հարավ՝ ապարանքի հյուսիսային կողմի միջնամասում ամբողջովին կանգուն են երկու իրար կից ու միաչափ սենյակներ (ներքուստ՝ 4,05 x 5,25 մ), որոնք հարակազմում ուղղանկյուն են, թաղածածկ և մեկական ձախ եզրային մուտք ու դեպի ներս լայնացող փոքր պարուհան ունեն բակի կողմից: Մուտքերի հանդիպակաց պարերում բուխարիներ են երկու կողմի պահարանախորշերով, որպիսիք կան նաև մյուս պարերում, թաղերի կենտրոնների ուղղանկյուն երդիկները փակված են սենյակների վրա հեղազայում ավելացված հարկով: Ամբողջովին կոպտապաշտ քարից կառուցված սենյակների միայն շքամուտքերն են սրբապաշտ և ունեն միանման ու պարզ կամարակապ կառուցվածք:

Սենյակների արտաքին երկայնական ճակարներում պահպանված պարերի հետքերն ու պահարանախորշերը վկայում են, որ այստեղ եղել են այլ բաժանմունքներ ևս: Այսինքն, սենյակների շարքը շարունակվել է դեպի արևելք և արևմուտք՝ մինչև պարսպապարերը, ընդ որում,

<sup>98</sup> Ըստ փապանագրի՝ «պարոն Մելիք Արամ» (1744-1745 թթ.), փես Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 75-76:

<sup>99</sup> Վանք. Մ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 134, գծ. 1:



III. ՏՈՂ. Մեղր-Էջանի ապարանքի դարպասը և զույգ դահլիճների բակառայաց ճակարկը

արևմտյան կողմում՝ միջանկյալ թաղակապ-երես-բաց նախամուկոբով: Տեղին է շեշտել, որ բակահայաց ճակատով ու պարսպակից սենյակաշարի նման լուծումը լայնորեն փարածված էր Արցախի և Մյունիքի ուշ միջնադարյան քարաշեն բնակելի համակառույցներում՝ մեխիբական ապարանքներում ու վանքապարկան բնակարաններում և թելադրված էր փարածքի լավագույնս օգտագործման ու պաշտպանական նկատառումներով:

Ապարանքի ամենաուշագրավ կառույցը՝ Մելիք-Եզանի ընդունարանը գտնվում է այս սենյակների դիմաց, բակի հակառակ՝ հարավային կողմում: Ընդունարանը թեթևակի շեղված քառանկյուն հարակազմով և թաղակապ ծածկով դահլիճ է (ներքուստ՝ 3,65 x 7,15 մ), երկայնական պարերի շարունակությամբ կազմված նույնպես թաղածածկ նախասրահով: Այսպեղից բացվող դահլիճի կամարակապ շքամուկոբը պարի կենտրոնական մասում է և երկու կողմի փոքրիկ պարուհանների հետ գրադեցնում է գրեթե ողջ ճակատը: Սրբարաշ քարերով շարված շքամուկոբի միակտոր ճակատաքարն ու կամարապակի որմերի երեսները՝ երեք շարքի բարձրությամբ, ծածկված են Մելիք-Եզանի «թանապա»-ընդունարանի վերոհիշյալ շինարարական արձանագրությամբ: Մուկոբի դիմացի պատում օջախ-բուխարին է եզրապարերին հավան երկու պահարանախորշով, իսկ արևելյան պատում կա ևս երկու փոքր, դեպի ներս լայնացող պարուհան: Ծածկի թաղն ուժեղացված է մեկ թաղակիր կամարով, որը հենվում է երկայնական պարերի կենտրոններում գտնվող որմնապուրների վրա:

Նախասրահն ի սկզբանե ունեցել է ծածկաթաղը եզերող միաթռիցք, կամարակապ ճակատ (պահպանվել է նաև կամարի պահուսակի սրամարավոր քարերից մեկը), որն այժմ մնացել է հեթազայում հավելված երկկամար բացվածքի հետևում:

Ընդունարանի դահլիճը կառուցված է ցածրանիստ թաղով ծածկված գեպուհարկի վրա, որը մուկոբ ունի նախասրահի փակով թեթևությամբ իջնող նեղ, թաղակապ միջանցքից և լուսավորվում է արևելյան կողմի երկու վերձիգ պարուհաններով<sup>100</sup>:

Ամբողջ շինությունը իրականացված է կոպրապաշ քարից և ներսից սվաղված է կրաշաղախով (սրբարաշ շարվածքով ընդգծված են միայն որմնապուրներն ու թաղակիր կամարը): Ընդունարանի վրա հետազայում ավելացվել է նոր հարկ, փայտաշեն պարզամբներով ծածկվել են ճակատները: Մրա հետևանքով հարթեցվել է երկլանջ փանիքը, փակվել են թաղի երդիկն ու բուխարու ծխանցքը:

Ուշագրավ է, որ ընդունարանի թիկնապարի եզերում պահպանված շարունակվող պարի հետքերը մարնանշում են համակառույցի շրջապարսպի հարավային կողմի ուղղությունը, որով որոշակիանում է ապարանքի երեք կողմերի (բացի արևմտյանից) պարսպապարերի նախնական հարակազմը:

Ըստ Մ. Սարգսյանի՝ դարպասից դեպի հարավ ձգվող պարսպին կից նույնպես եղել են բակահայաց սենյակներ, որոնցից առանձին հարվածներ այժմ էլ նկատելի են այսպեղ հետա-

զայում կառուցված երկու ընդարձակ բնակելի քնների առաջին հարկերում<sup>101</sup>: Նիսբ ընդունելով Մելիք-Եզանի որդի Արամի 1737 թ. վերոհիշյալ արձանագրությունը՝ Մ. Սարգսյանը համարում է նաև, որ դարպասի դիմաց գտնվող շինության ստորին հարկը ևս ապարանքի սկզբնական հորինվածքի մասն է կազմել<sup>102</sup>: Սակայն ուշադիր դիտարկումը ցույց է տալիս, որ այս բնակելի շենքը էսպես փարբերվում է ապարանքի նախնական կառուցամասերից և ավելի ուշ շրջանի է: Ինչ վերաբերում է կառույցի ճակատամասում գտնվող 1737 թ. արձանագրությանը, ապա պետք է ենթադրել, որ այն պարկանել է այժմ չպահպանված այլ շինությունների և 19-րդ դարում ապարանքի արմարական վերակառուցման ժամանակ ազուցվել է նույն տեղում կառուցված փան պարի մեջ:

Այս առումով ուշագրավ է շինության քնդադիրքը. այն գտնվում է դարպասի ուղիղ դիմաց և երևումառավ խորանում է լանջի թեթևության մեջ: Ամենայն հավանականությամբ, ինչպես բնորոշ էր խոշոր մեխիբական ապարանքներին, այսպեղ ևս եղել են լանջին հարող մի քանի թաղակապ սենյակներ (թերևս նաև՝ քարաշեն գլխապուր և կամարաքարահներ), որոնք էլ կազմել են համակառույցի արևմտյան թևը: Նման կառուցամասերի գոյությունը ենթադրելի է նաև այն պարճառով, որ ապարանքի պարփակ փարածքի չափերի համեմատ՝ պահպանված շինությունները չափազանց քիչ են, մանավանդ որ, ինչպես վկայում է «պարոն Արամի» արձանագրությունը, մեխիբական ընդունարանի անդամներն ունեցել են իրենց առանձին հարկաբաժինը: Բացի այս, անձնական հարսությունը հռչակված Մելիք-Եզանը<sup>103</sup> (ինչի մասին անուղղակի ակնարկներ կան նաև ընդունարանի արձանագրության մեջ), անշուշտ, ունեցել է իր կարողություններին ու ճանաչմանն ավելի պարշաճ ապարանք, քան այն, ինչ հասել է մեզ:

Տողի մեխիբական ապարանքը ստույգ թվագրված ամենավաղ կառույցներից է Արցախի նամաօրինակ հուշարձանների շարքում և իր երբեմնի պարփակ հորինվածքով ակնհայտորեն նաև պաշտպանական բնույթ է ունեցել՝ որպես երկրամասի հարավային ծայրագավառ Դիզակի ռազմական հենակետերից մեկը: Մեծ արժեք ունի հարկապես ընդունարանը, որն ինքնապիպ է ոչ միայն իր բազմաբովանդակ շինարարական արձանագրությամբ և դրա մեջ շինության բնույթի («թանապա»-ընդունարան) իրապարկությամբ, այլև հորինվածքով: Քաջաթաղի և Խնածախի ընդունարանների հետ ունեցած որոշ ընդհանրությամբ հանդերձ՝ Մելիք-Եզանի ընդունարանը նաև խիստ յուրահատուկ է և ներկայացնում է այդ ուշագրավ կառուցամասի նոր փուլաբանական փարբերակը: Ապարանքի դարպասը ևս եզակի է իր պահպանվածությամբ և ընդունարանի հետ կարևոր դեր ունի մեխիբական ապարանքների ընդհանրական կերպարի վերհանման գործում:

<sup>101</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>102</sup> Նույն տեղում, էջ 137:

<sup>103</sup> Լեո, Խոջայական կապիկով, էջ 159, նույնի՝ Նայոց պարություն, հր. 3, գիրք Բ, էջ 254-255, Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с.211:


<sup>100</sup> Մ. Սարգսյանը կարծում է, որ «շինությունը ծառայել է որպես բանփայտուց» (?): Տե՛ս նույն տեղում, էջ135:

## ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԲԵՐՂ

Գյուլիստանի բերդը գտնվում է ԼՂՏ Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղից մոտ 2 կմ արևմուտք, Ինջա գետակի աջ ափին, Մռավ լեռանը հանդիպակաց հսկայական սեպածն քարաժայռից կազմված բլրի վրա<sup>104</sup>: Արևմուտքից՝ Մռավի անտառոտ փեշերից հոսող գետակը երեք կողմից շրջանցում է բլուրը՝ նրան թերակղզու ձև տալով և միայն հարավային կողմի համեմատաբար մաքուր լանջով է կապվում ստորոտի հետ, որպետից և ամրոցի հիմնական մուտքն է: Բերդը կառուցված է ժայռաբարձունքի լեզվակաձև հարթության վրա (երկարությունը 240 մ է, ամենալայն մասը՝ 30 մ), բրգավոր շրջապարիսպը դրված է քարաքարե եզերող գրեթե ուղղանկյուն ժայռերի անկանոն պարագծով, հարավային կողմը ամրացված է կրկնապարսպով: Գտնափորթադակապ գաղափարներն հյուսիս-արևմտյան կողմում է՝ քողարկված անտառախիտ լանջով:

Միջնաբերդ-ապարանքը տեղավորված է ամրոցի արևմտյան կողմում, ժայռազանգվածի անկյան եզրին գոյացած բարձրադիր ու նեղլիկ դարավանդի վրա, իսկ երկրորդ փոքր ապարանքը կառուցված է բերդի հարավային լանջի ստորոտում, դեպի մուտք տանող ճանապարհի մոտ: Այսպես բերդի շուրջը սփռված երբեմնի բերդավանից պահպանվել են բազմաթիվ այլ շինությունների մնացորդներ, այդ թվում եկեղեցու, ջրաղացի, բաղնիքի և կամրջի ավերակները<sup>105</sup>:

Բերդի, նաև ապարանքների կառուցման վերաբերյալ պարունական ստույգ տեղեկություն հայտնի չէ: Անցյալ դարավերջի ուսումնասիրողներից սկսած, ժողովրդական ավանդագրույցների հիման վրա տարածված է այն տեսակետը, իբր՝ Գյուլիստանի մելիքության մյուս կենտրոն-



նում հռեկավանում հիմնավորված Մելիք-Բեգլար Ա-ը հզորանալով տիրել է նաև գավառի հին իշխող Աբրահամ յուզբաշուն պարկանող Գյուլիստան բերդին և նորոգելով, դարձրել իր նստավայրը<sup>106</sup>: Սակայն նորահայտ պարունական աղբյուրները ցույց են տալիս, որ այսպես ժամանակագրական շփոթություն կա. 17-րդ դարի կեսերին գործած Մելիք-Բեգլար Ա-ի և նրան հաջորդած մելիքների իշխանությունը մինչև 18-րդ դարի կեսը անմիջականորեն չի տարածվել Գյուլիստան գյուղի և նրա շրջակայքի վրա, իսկ այսպետի հին իշխողների շառավիղ Աբրահամ յուզբաշին ապրել ու գործել է Մելիք-Բեգլար Ա-ից ավելի քան կես դար հետո<sup>107</sup>:

1720-30-ական թթ. հայ-ռուսական հարաբերությունների նամակ-փաստաթղթերում, որպես Գյուլիստան գավառի, գյուղի և բերդի (բնագրում՝ նաև «սղնախ») տեր քանիցս հանդես են գալիս եղբայրներ Եսայի, Աբրահամ և Սարգիս յուզբաշինները<sup>108</sup>: Այս փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզված է, որ Գյուլիստան բերդը 18-րդ դարի առաջին երեսնամյակում Արցախի ազգային-ազատագրական պայքարի ընթացքում սրեղծված հինգ ռազմական կազմա-

<sup>104</sup> Ըստ վարչական բաժանման՝ Ինջա գետակի աջ ափը մտնում է ԼՂՏ Մարտակերտի շրջանի մեջ:

<sup>105</sup> Բերդը և շրջակա շինությունները չափագրել ենք 1983 թ.:

<sup>106</sup> Րաֆֆի, ԵԺ, հր. 9, 419, 422, Մ. Բարխուդարեանց, Պարունություն Աղուանից, հր. Բ, էջ 49-50, նույնի՝ Արցախ, էջ 256-257, Ե. Լալայան, «Գանձակի գավառ», Երևան, հր. 2, էջ 210, 253: Գավառի պարունության անբավարար ուսումնասիրվածության պայմաններում այս վարկածը նույնությամբ կրկնվել է նաև հետագայում: Տե՛ս Լեո, Հայոց պարունություն, հր. 3, գիրք Բ, էջ 259, Մ. Յովհաննեսեան, Հայաստանի բերդերը, էջ 457-460:

<sup>107</sup> Այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Ղահրամանյան, Նյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 16-20:

<sup>108</sup> Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 25, 27, 29, 41, 60, 63, 72, 77, 84, 92, 187-188, 235, 250-251, 282, 285-286, 289, 321, Армяно-русские отношения, т. III, с. 20, 23-24, 33, 41.



վորումներից մեկի՝ Չարաբերդ-Գյուլիսպան սղնախի կարևոր հենակետերից մեկն էր<sup>109</sup>։ Ժամանակին մեծ համբավ ու հեղինակություն են ունեցել հափալպես այսպեղ ամրացած Եսայի յուզբաշին և Աբրահամ Սպարապետը, որոնք կարողացել են համառ դիմադրությամբ ու ճկուն քաղաքականությամբ երկրամասը գերծ պահել կովկասյան լեռնականների և թուրքական բանակի ասպարակություններից՝ միաժամանակ եռանդուն մասնակցություն ունենալով Արցախն ազատագրելու խնդրով Ռուսաց արքունիքի հետ փարվող նամակագրական բանակցություններում<sup>110</sup>։

Ամենայն հավանականությամբ, հենց այս շրջանում էլ՝ 18-րդ դարի առաջին փասնամյակներին հիմնովին վերակառուցվել են բերդի՝ մեզ հասած պարիսպներն ու շինությունները, այդ թվում՝ միջնաբերդի ապարանքը։ Անշուշտ, բերդի չափազանց նպաստավոր դիրքն ու պայմանները պաշտպանական նպատակներով օգտագործվել են նաև նախորդ դարերում և, դարելով ավերակների շերտագրական դիտարկումից, մասնավորապես միջնաբերդ-ապարանքը վերակառուցվել է առնվազն 17-րդ դարից պահպանված հիմքի վրա։

Մղնախական պայքարի անկումից և Աբրահամ Սպարապետի մահից հետո<sup>111</sup>, 18-րդ դարի կեսերին բերդն անցել է գավառի մյուս նշավոր իշխանապոռնի ներկայացուցիչ Մելիք-Նովսեփին, որի հիմնական նստավայրը Հռոնկավանի ապարանքն էր։ Այս մելիքին պետք է վերագրել բերդի սպորտի փոքր ապարանքի կառուցումը, հավանաբար նաև՝ միջնաբերդի ապարանքի վերանորոգումը<sup>112</sup>։ Մելիք-Նովսեփի և

նրա որդիների՝ Մելիք-Բեգլարի և Մելիք-Աբովի օրոք ևս բերդը երկրամասի հզորագույն ամրոցներից մեկն էր և անառիկ է մնացել դարավերջին գրեթե ողջ Արցախին փիրած Շուշվա խաների ուրնձգությունների դեմ<sup>113</sup>։ Բերդը միաժամանակ շարունակում էր մնալ հայ-ռուսական դիվանագիտական նամակագրության օջախներից մեկը<sup>114</sup>, և պատահական չէ, որ այսպեղ է կնքվել 1813 թ. հոկտեմբերի 12-ի ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը։

**Միջնաբերդ-ապարանքի** ընդհանուր հարակաձևը թելադրված է փեղանքը պարփակող ժայռերի եզրագծով և արևելքից արևմուտք ձգված կողմերով սեղանի փեսք ունի։ Հիմքում ուղղանկյուն սենյակները երկայնական պարսպապատերին կից երկու շարք են կազմում, որոնց միջև սպեղծված միջանցքի մուտքը արևելքից է։ Միջանցքի հյուսիսային կողմի սենյակներից երկուսը (4,6 x 7,1 մ և 4,6 x 5,6 մ) լայն պատուհաններ ունեն արտաքին պատում, իսկ դրանցից արևելյանը՝ նաև օջախ-բուխարի՝ գույզ պահարանախորշերով։ Այս շարքի մյուս երկու սենյակի (3,9 x 5,6 մ և 3,9 x 3,3 մ) ներքին պատերից միայն հեքեր են մնացել, իսկ արտաքին պատի մեջ բացված է յոթ պատուհան-հրակնափ։

Միջանցքի հարավային շարքը բաղկացած է իրար հետ մուտքերով կապված երեք սենյակից, որոնցից արևելյանը (4,5 x 7,0 մ) մուտք ունի նաև միջանցքից։ Այս սենյակն առանձնանում է մյուսներից կանոնավոր դասավորված պահարանախորշերով և խոշոր օջախ-բուխարիով, իսկ մուտքի դիմաց ունի փոքր պատուհան։ Այսպեղ՝ հարավային ճակարի ծածկի սահմանում պահպանված չորս գերանաբները վկայում են բարձակային պատշգամբի, հեփաբար՝ նաև երկրորդ հարկի երբեմնի գոյության մասին։ Ուշագրավ է նաև միջին սենյակը (4,5 x 4,8 մ), որի հարակը մի փոքր բարձր է կողքիններից և ունի երդիկակիր զոցվող թաղով ծածկված թաքսոց-գեփնահարկ։ Վերջինս այժմ մասամբ լցված է ծածկի փլվածքով ու հողով և հավանաբար սպորտֆուսկա գաղարնուղի է ունեցել։ Այս շարքի մյուս սենյակում ևս (3,8 x 7,0 մ) կան պահարանախորշեր և, ըստ ամենայնի, այդպեղ եղել է նաև բուխարի։

Երկշարք սենյակների և միջանցքի արևմտյան կողմում առաջացած անկանոն հարակաձևով փոքր հրապարակը եզերված է ժայռազանգվածի շուրթով դրված խուլ պարսպով, իսկ հյուսիս-արևմտյան անկյունամասը ամրացված է բարձր, բոլորաձև, սնամեջ և հրակնապներով հագեցված բուրգով։

Շինությունների այս խմբի ներքին պատերը պահպանվել են 1-2 մ բարձրությամբ, իսկ շրջապարսպի երկայնական հարվածների բարձ-

<sup>109</sup> Տե՛ս նաև **Զ. Արզումանյան**, Սղնախների առաջացումը և նշանակությունը, էջ 77-79, նույնի «Մեծ» և «Փոքր» սղնախների հարցի շուրջ, էջ 85-92։

<sup>110</sup> Армяно-русские отношения, т. II, ч. I, под ред. **Аш. Иоаннисяна**, Историческое введение, с. XXXIX, XLIII-XLIV, LXII, XCV-XCVI, **П. Арутюнян**, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, с. 224-226, 228, «Նայ ժողովրդի պայքարություն», հր. 4, էջ 160-161։ Աբրահամը միակն է իր ժամանակակից յուզբաշի-գորապետներից, որ Դավիթ-Բեկի գինակից Մխիթար-բեկի պես նաև սպարապետ է կոչվել։ Նայքնի է նաև թուրքական սուլթանի ֆիրմանը՝ անհնազանդ «գյավուր Աբրահամին» պարծելու մասին։ Մանրամասն տե՛ս **Ա. Աբրահամյան**, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից։




<sup>111</sup> Աբրահամ Սպարապետի մահվան փարին հայտնի չէ։ Փաստաթղթերում նրա անվան վերջին հիշարակությունը 1733 թ.-ից է, իսկ փապանաբարը գրնվելիս է եղել Գյուլիսպանի Ամենափրկիչ վանքում (տե՛ս **Բաֆֆի**, ԵԺ, հր. 9, էջ 269) և 1990 թ. քառափված վիճակում հայտնաբերվել է Գյուլիսպան գյուղում։ Ունի հեփալակ արձանագրությունը. ԱՅՍ Է ՆԱՆԳԻՍՏ ԳԵՈՐԶԻ ՈՐԴԻ ԱՊՐԱՆԱՍ ՈՒԶՊԱՆԻՆ, ՈՐ ՓՈՒՆԵՑԱՄ ԱՌ ԱՅ ԹՎ Ռ... (թվականի հաջորդ փառերը չեն պահպանվել չորրորդ բեկորի վրա)։

<sup>112</sup> Ըստ Մ. Բարխուդարյանցի «...փակված կանգուն մնում է Մելիք-Յովսեփի ապարանն, որ հիմնուած է բերդի հարաւային կողմում, մուտքի աջ ու ձախ անկիւններում»։ (Տե՛ս «Արցախ», էջ 256)։ Նշված փեղում պահպանված շինությունները



ըր դժվարանում ենք ապարանք համարել, մանավանդ որ դրանցից մի փոքր արևմուտք միջնաբերդ-ապարանքն է։

<sup>113</sup> **Բաֆֆի**, ԵԺ, հր. 9, էջ 446 և հրգ., **Ա. Ք. Իոաննիսյան**. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия.

<sup>114</sup> Նույն փեղում, с. 185, 225-226, Армяно-русские отношения, т. IV, с. 232-234, 238, 328, 383, 496.



10. ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԲԵՐԴԻ ԱՊԱՐԱՆՔ. Չափագրություն-վերակազմություն



IV. ԳՅՈՒԼԵՍՏՅՆԻ ԲԵՐԳ. Մեյիքական սանրոցը հս-արլ-ից՝ Մռավ լեռան հեղ, արև-ից և արլ-ից



*Վ. ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԲԵՐԴ. Միջնաբերդի ապարանքի ընդհանուր տեսքը և կրկնահարկ դստիվճը*

րությունը դրսից 5-6 մ է: Ըստ պահպանված հետքերի՝ սենյակներն ունեցել են հարթ գերանաձածկ, իսկ միջանցքը բաց է եղել:

Ապարանքի բաղկացուցիչ մաս են կազմում այս պարփակ համակառույցի մուտքի աջ կողմում կցված գլխավորը և դրա հանդեպ, հարավային ժայռեգրին մեկուսի կանգնած երկհարկանի շենքը: Վերջինս բաղկացած է հիմքում ուղղանկյուն (4,1 x 10,1 մ) կրկնահարկ դահլիճից և ողջ կառուցապարման մեջ իր ակնհայտ շեշտվածությամբ, ըստ ամենայնի, մելիքական փան գլխավոր հարկաբաժինն է եղել: Ի փարբերություն մյուս սենյակների, այսպեղ առաջնահերթ կարևորություն է փրված բնակարանի հարմարավետությանն ու գեղեցկությանը. երկայնական պատերում թողնված են դեպի ձորահովիտներն ու Մռավ լեռն ուղղված լայն պատուհաններ, պատերը հագեցած են կանոնավոր դասավորված կամարակապ պահարանախորշերով և օջախբուխարիներով: Շենքի պատերը հիմնականում կանգուն են մինչև 6,5 մ բարձրությամբ, փլված է միայն երկրորդ հարկի երկայնական պատերի արևմտյան կեսը: Չեն պահպանվել նաև փայտաշեն մասերը՝ միջհարկային ծածկերը, երկրորդ հարկի ասփիճաններն ու բարձակային պատշգամբը, ինչպես նաև փանիքը, որն ըստ լայնական պատերի ճակտոնների՝ եղել է երկլանջ:

Գլխավորը ուղղանկյուն հիմքով կառույց է (6,1 x 6,6 մ) և մոտ գտնվելով կից պարսպաբուրգի միջով բացվող բերդի մուտքերից մեկին, ինչպես նաև միջանցքի և կրկնահարկ դահլիճի մուտքերին, հավանաբար եղել է պահակատուն կամ ախոռ: Կառույցի քառակուսուն մոտ հարավաձևն ու պահպանված խուլ պատերը հուշում են, որ ծածկն ունեցել է վերնալույս-երդիկով բրգաձև-գերանակապ կառուցվածք:

Գլխավորան մոտ բերդապարսպի բեկման փեղը ամրացված է սնամեջ բուրգով, որը եզրափակելով միջնաբերդի կառուցապարմը հյուսիս-արևելքից՝ միաժամանակ իր կրկնակի կամարամուտքով ապարանքի ամենահարմար ու ապահով կապն է դրսի հետ:

Ապարանքի պատերը շարված են կոպրապաշ բարից և ունեն 1,0, 1,2 և 1,4 մ հասություն, արքաքին պատերի ստորին մասերում պահպանվել են ավելի վաղ շրջանի կանոնավոր քարաշարվածքի հատվածներ: Պատերի, խորշերի ու բացվածքների եզրամասերում կիրառվել է նաև սրբաքաշը, որից մնացորդներ են պահպանվել կրկնահարկ շենքում:


Միջնաբերդ-ապարանքի ճարտարապետական նկարագրում պարզագույն միջոցներով համադրված ու լուծված են ամրացված մելիքական բնակարանին հատուկ գործառնական խնդիրները փեղանքի սուղ պայմաններում, որով և արժևորվում է դարաշրջանի պալատաշինության համապատկերում: Միջնաբերդ-ապարանքը մեզ հասած այս կարգի սակավաթիվ հուշարձաններից ամենամբողջականն ու անխաթարն է և որոշակի պարկերացում է փախս մելիքական ապարանքների հորինվածքային ու փիպաբանական փարբերակներից մեկի մասին:

**Փոքր ապարանքը** ուղղանկյուն հարավազծով քառաբուրգ-պարսպափակ կառույց է (արտաբուրգ՝ 18,4 x 23,0 մ), բաղկացած բակից և արևելակողմից դրա ողջ լայնքը բռնող երեք հավասարաթիցք բաժանմունքից: Շինությունից պահպանվել է միայն բրգավոր շրջապարիսպը, սակայն առկա հետքերից պարզորոշ երևում է, որ բաժանմունքներից եզրային երկուսը թաղակապ սենյակներ են եղել (4,6 x 6,8 մ), իսկ մեջքերինը՝ կամարակապ-երեսբաց ճակատով թաղաձածկ նախասրբահ: 1,2 մ հասությամբ պատերը կառուցված են կոպրապաշ շարվածքով և պահպանվել են 1-2 մ բարձրությամբ: Սենյակները գուրկ են ձմեռային բնակության համար անհրաժեշտ ավանդական բուխարիներից, չկան նաև պահարանախորշեր: Կարելի է ենթադրել, որ գեպափի հարմարավետ հարթության վրա, բերդի դյուրամատչելի ստորոտում և բաղնիքի հարևանությամբ կառուցված այս փոքր ապարանքը ծառայել է ամառային հանգստի ու ժամանակավոր բնակության համար:



## ԳՅՈՒԽՍԱՆ

Ապարանքը գրնվում է ԼՂՏ Շահումյանի շրջանի Գյուլիսարան գյուղի կենտրոնական մասում, գյուղամիջյան ճանապարհների հրապարակաձև խաչմերուկի մոտ՝ շրջապարված բնակելի տներով<sup>115</sup>: Գյուլիսարան գյուղը հայ մելիքությունների շրջանում համանուն գավառի կենտրոնն էր և առավելապես հայտնի է 17-18-րդ դարերի ազգային-ազատագրական պայքարում ունեցած նշանակալի դերով: Սակայն երկրամասի նվիրական ուխտապետիների և վաղ միջնադարից հայտնի վանքերի՝ Նոռեկավանքի ու Ջրվշիկ-Եղիշե առաքյալի վանքի մերձակայքում գրնվող գյուղի պատմությունը կապված է շատ ավելի վաղ անցյալի իրողությունների հետ: Ուսումնասիրողները գյուղը նույնացնում են Վաչագան Բարեպաշտի օրոք նշանավոր Աղուէ ամրոցի ու գավառի<sup>116</sup>, ոմանք՝ այդ ժամանակաշրջանի Գյուլիսարան արքայանիստ բնակավայրի հետ<sup>117</sup>: Իսկ 1466 թ. գյուլիսարանի գրիչ Նակոբը մի ձեռագիր «Մաշտոցի» հիշատակարանում մեզ է թողել գյուղի հնագույն անունը, «որ է Վարդուղ»<sup>118</sup>: Նախընթաց դարերում գյուղի գոյատևման մասին են վկայում նաև ապարանքի շուրջը տարածված կենտրոնական թաղում հայտնաբերված 13-15-րդ դարերի արձանագիր խաչքարերն ու բեկորները: Ապարանքի կառուցման մասին շինարարական արձանագրություն կա գլխապանը արևմուտքից



կից դահլիճի շքամուտքի ճակատակալ քարի վրա.

«ՇՆՈՐՏԻՒՆ ԱՅ ՇԻՆԵՅԱԲ ԱՊԱՐԱՆՍ Ի ԹՎԻՆ Ռ ԵՒ Մ(Ի)Ա(1772) ԵՍ ՅԱԿՈՐՈՍ ԾԱՌԱՅ ԱՅ ԻՇԽՕՂ ԳԵՂՈՅՍ ՈՐԴԻ ԱԲՐԱՎԱՄ ԸՄՊԱՐԱՊԵՏԻՆ»:

Ուշագրավ է, որ արձանագրության թվականի տասնավորն արտահայտող գլխապանի տեղում փորագրված ուղղաձիգ գծիկը տարրերը ցուցնող տեղիք է տվել թվականը վերջանվել է «ՌՄԱ» (1752)<sup>119</sup>, կամ «ՌՄԼԱ» (1782)<sup>120</sup>: Սակայն արձանագրության լուսանկարում և չափագրված գրչագրում պարզորոշ երևում է, որ չնայած կցագրերով ու նեղլիկ տառաձևերով խիտ փորագրված վիմագրին, տասնավոր տառի ուղղաձիգ մասնիկից հետո թողնված է ընդարձակ տառարանք մինչև միավորի «Ա»-ն: Ուստի, առավել հավանական է, որ այսպեղ փորագրողը բաց է թողել ոչ թե տասնավոր «Լ»-ի, այլ՝ «Ի»-ի հորիզոնական մասնիկը: Ապարանքի կառուցման այսպիսով ստացված «ՌՄԻԱ» (1772) թվականը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ կառուցողը՝ ««Աբրահամ Սպարապետի որդի Յակոբոսը», հիշվում է դրանից երկու տարի անց՝ 1774 թ. մի փաստաթղթում, որպես «Աբրահամ իւզբաշու որդի Յակովբջան իւզբաշի»<sup>121</sup>:

<sup>115</sup> Նկարագրությունը՝ ըստ մինչև 1992 թ. վիճակի, չափագրությունը՝ 1980 թ. (1992 թ. հունիսին աղբբեջանցի թուրքերը բռնագավթել են գյուղը, բնակչությանը տեղահանել, ապա թալանել ու հրկիզել տները, այդ թվում՝ ապարանքը):

<sup>116</sup> Ս. Երեմյան, Նայասարանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 34:

<sup>117</sup> Ըստ Բաֆֆու՝ այդ կարծիքին էր Մարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցն իր անտիպ «Պատմության աշխարհին Աղուանից» և «Ծագումն Ղարաբաղու մելիքների» աշխատություններում: (Տե՛ս Բաֆֆի, Եժ, հր. 9, էջ 613-615):



<sup>118</sup> «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 246:

<sup>119</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 241, Կ. Ղահրամանյան, Նյութեր Գյուլիսարանի մելիքության պատմության վերաբերյալ, «Լրաբեր հաս. գիտ.», 1979, 12, էջ 116, նույնի՝ Նյութապան Արցախ, գիրք Ա, էջ 70:


<sup>120</sup> Ե. Լալայան, «Գանձակի գավառ», Երկեր, հր. 2, էջ 304, «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 248 (արձանագրությունն առնված է Լալայանից): Այսպես ենք վերջանել նաև մեր նախորդ հրատարակումներում: (Տե՛ս Ա. Ղուլյան, Արցախի պալատական ճարտարապետության երկու հուշարձան, «Լրաբեր հաս. գիտ.», 1982, 10, էջ 68-70):

<sup>121</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 241-242: Մի առուձախ վերաբերող այս ապահովագիր-փաստաթուղթը 19-րդ դ. վերջերին հեղինակը տեսել է ապարանքում բնակվող Աբրահամ Սպարապետի հետպագա ժառանգների մոտ:






12. ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԱՊԱՐԱՆ. Վերակազմություն



VI. ԳՅՈՒՆԻՍՏԻՆ. Գյուղը հին զերեզմանոցից և ապարանքը հր-արմ-ից



VII. ԳՅՈՒԼԻՍՏԱՆ. Աբրահամ Սպարապետի որդի Հակոբի տպարանի գլխապրունը  
և Աբրահամ Սպարապետի փապանաքարը

Արժանահիշատակ է, որ ապարանքը կառուցումից ի վեր երբեք չի լքվել. մինչև 1992 թ. այնտեղ և դրան հետագայում ավելացված սենյակներում ապրում էին Աբրահամ Սպարապետի փոհմի շառավիղ Մելիքանների ընտանիքները:

Իսկ Աբրահամ Սպարապետը և իր Եսայի ու Մարգիս յուզբաշի-եղբայրները, ինչպես Կեսանք նախորդ ապարանքի առնչությամբ, գավառի հին իշխողների ժառանգորդն էին և իրենց հերոսական կենսագրության էջն են թողել 18-րդ - դարի առաջին երեսնամյակի հայ ազգային-ազատագրական պայքարի պարունության մեջ որպես խիզախ ու շրջահայաց ռազմաքաղաքական գործիչներ<sup>122</sup>: Նախկանշական է, որ, ըստ ապարանքի շինարարական արձանագրության, դարավերջին 1772 թ. գյուղում իշխում էր Աբրահամ Սպարապետի որդի Նակոբը, չնայած հիշյալ 1774 թ. վկայագրից է նաև հայտնի, որ ապարանքը կառուցող «Յակովբջան իւզբաշու» օրերում գավառի փրերը «Տիրեկավանի քաջամարտիկ Մելիք-Յոսեփին» էր<sup>123</sup>: Ավաճից հետևում է, որ դարակգրին հակաթուրքական թեժ կրիվների շրջանում, Աբրահամ Սպարապետի և նրա զինակից եղբայրների նստոց-ապարանքը, իրոք, եղել է Գյուլիստան բերդում, իսկ դարի կեսերից, բերդը Մելիք-Նովսեփին անցնելուց հետո, Աբրահամի հետնորդների նստավայրը դարձել է նույնանուն գյուղը, որտեղ և կառուցվել է նոր ապարանքը:

Մեղմ թեքությամբ հարավահայաց լանջի վրա կառուցված ապարանքը, չնայած հետագա վերակառուցումներին ու հավելումներին, հիմնականում պահպանել է նախնական հարակաձևը և բաղկացած է գլխատնից ու դրա երկարության չափով երկու կողքից կից մեկական սենյակներից, որոնցից յուրաքանչյուրն ունի երկայնական պատերի շարունակությամբ կազմված առանձին նախասրահ-պարզամբ: Ընդ որում, դրանք մեկ ուղղանկյուն հիմքով ամբողջություն են կազմում (արտաքուստ՝ 19,7 x 13,2 մ) և երեսապարով հպված են լանջին, իսկ ճակատամասի հարակից փոքր-ինչ բարձր է բակից:

Գլխատունը հարակազմում քառակուսի ընդարձակ դահլիճ է (ներքուստ՝ 7,15 x 7,15 x 6,2 մ), քարաշեն զոցվող թաղերով կազմված երդիկավոր զմբեթաձածկով: Մուտքը նախասրահից է՝ ճակատապատի ձախ եզրում և ունի բարավորաքարն ընդգրկող արտաքուստ երկաղեղ, իսկ ներքուստ կիսաշրջանաձև կամարավար: Գլխատան պատերում թողնված փասր մեծ ու փոքր պահարանախորշերը և դեպի կից սենյակներ երկու կողային մուտքերը երկայնական ուղղությամբ դասավորված են համաչափ ու կանոնավոր, իսկ լայնական կողմերում՝ ազատ փեղադրությամբ, և փարբեր բարձրություններ ու կամարավարներ ունեն (երկաղեղ, կիսաշրջանաձև, հարթաղեղ), ինչը մեծ աշխուժություն է հաղորդում ողջ ներքին փարածքին: Գմբեթաթաղի հիմքի «թարեք»-դարակ-որմնագոյին մասքելիությամբ

յան համար դրված է ծածկի անցման սահմանից բավականին ներքև, որի պարճառով այն ընդհատվում է մուտքի և խորշերից մի քանիսի բարձր կամարաղեղներով՝ միաժամանակ իր ցածր դիրքով ընդգծելով թե՛ զմբեթաձածկի բարձրությունը, թե՛ որմնախորշերի անընդհատ շարքը պարերում: Ըստ փանտերների վկայության՝ որմնագոյուն ամրացված են եղել մեքաղական կոփածո-ձևավոր ջահակալներ, գլխատան հյուսիս-արևմտյան անկյունում գրնվող աղբյուրջրավազանը փակվել է 80-ական թթ.: այդ մասում ծածկի փլուզման պարճառով, իսկ ծխից սևացած պատերն ու առաստաղը վկայում են երբեմնի օջախի գոյության մասին:

Գլխատունը կից սենյակների հետ կապող նեղ ու ցածրիկ մուտքերը հետագայում կիսով չափ փակվել են և օգտագործվել որպես պահարանախորշեր: Սենյակները միանման թաղակապ շինություններ են (արևմտյանը ներքուստ՝ 3,8 x 6,4 մ, արևելյանը՝ 4,25 x 7,05 մ)՝ իրենց լայնության չափով կազմված թաղակապ-երեսբաց նախասրահներով, որտեղից և մեկական մուտք ունեն, իսկ արևելյանը ունի նաև նեղ պատուհան դրանից վեր: Սրանք լուծված են դարին բնորոշ պարզ, կամարակապ շքամուտքերի ձևով, արևմտյանի բարավորին շինարարական արձանագրությունն է:

Սենյակների երեսապատի կենտրոնում օջախ-բուխարիներն են. արևմտյանում դրանից վեր փեղաղրված լամպաքար («մբաքար»)՝ ճրագակալով, իսկ արևելյանում՝ զույգ կամարախորշերով: Արտաքին երկայնական պատերում ևս պահարանախորշեր են եղել, որոնցից միայն մեկն է մնացել. մյուսները հետագայում լայնացվել ու վեր են ածվել մուտքերի և պատուհանների:

Այս վերակառուցման ժամանակ (1919 թ.)<sup>124</sup>, պայմանավորված նահապետական ընտանիքի փրոհմամբ, լայն բացվածքներ ունեցող պատերով փակվել ու սենյակների են վերածվել կամարակապ-երեսբաց նախասրահները, դրանց ողջ ճակատի երկայնքով, խուլ կիսահարկի վրա ավելացվել է փայտաշեն սյուններով պարզամբ, քանդվել է ապարանքի շրջապարիսպը:

Այնուամենայնիվ ապարանքի նախնական ճակատային լուծումը լիովին պատկերացնելի է. արևմտյան սենյակի նախասրահում պահպանվել է թաղաձածկի պահունակավոր ու երկշար ճակատակամարի սյուրին մասը, իսկ փայտաշեն պարզամբի ասփճաններում օգտագործված են գլխատան նախասրահի քառակող, փաշված անկյուններով սյան և դրա փրամափափոր վերնասայի բեկորները: Վերջիններս վկայում են, որ գլխատան նախասրահը եղել է սյունազարդ ու կամարակապ և, ըստ հետքերի, ունեցել է հարթ ծածկ, իսկ սենյակների նախասրահներն իրենց թաղաձածկը եզերող կամարներով բացվել են դեպի բակ:

Բակը, դարելով պահպանված պարսպապատերի մնացորդներից և փեղանքի պայմաններից, փարածվել է շինությունների հարավային և արևմտյան կողմերում, իսկ արևելքից սահմանափակվել է այդ կողմում առկա երկայնական եզ-

<sup>122</sup> Армяно-русские отношения, т. II, ч. I, Историческое введение, т. II, ч. II, Ա. Աբրահամյան, Մի էջ հայ-ռուսական հարաբերությունների պարունությունից, Կ. Ահիսանյան, Նյուսիսային Արցախ, գիրք Ա:

<sup>123</sup> Աբրահամ Սպարապետի փոհմի 19-րդ դ. ներկայացուցիչների փապանաքարերը գրնվում են ապարանքից մի փոքր դեպի արևելք կառուցված 17-րդ դ. եկեղեցու հարավային կողմում, իսկ Մելիք-Նովսեփի սերունդ Մելիք-Բեգվարյանների նույն դարի մելիքներինը՝ հյուսիսային կողմում:

<sup>124</sup> Թվականը փորագրված է փայտաշեն սյունաշարի հիմնագրանի վրա՝ ասփճանների մոտ:

րապատի շարունակությամբ կազմված պարսպով:


Ապարանքի բոլոր բացվածքների, որմնախորշերի ու կամարների եզրաշարվածքը իրականացված է սրբապաշ, իսկ 1,1մ հաստությամբ պատերն ու թաղերը կոպրապաշ որձաքարից: Ընդ որում, դրանք հեփագայում մասամբ սվաղվել են ծղոտախառն կավաշաղախով և սպիտակեցվել կրաջրով:

Չնայած համեստ չափերին, Գյուլիստանի ապարանքն իր հազվագյուտ շինարարական ար-

ձանագրությամբ և դրա մեջ շինության բնույթի վերաբերյալ հիշարակությամբ («ապարանք»), հսրակ ու կոռ հափակագծային կառուցվածքով և բավականին ամբողջական պահպանվածությամբ յուրովի տեղ ունի ուշ միջնադարյան մեղիքական ապարանքների շարքում և քարակերտ գլխապան հորինվածքային առանցքի շուրջն սրեղծված իր անպաճույճ ճարտարապետությամբ ներկայացնում է այդօրինակ հուշարձանների հասուն ու ավարտուն հորինվածքային փափափարբերակներից մեկը:



## ՀՈՒԵԿԱԿԱՆ



Երկու ապարանքի ավերակները գտնվում են ԼՂՏ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղից 5-6 մ արևմուտք, հանդիպակաց բլրալանջերի վրա, որոնցից հարավայինի բարձրադիր մասում նշանավոր Հոռեկա կամ Գլխո վանքն է: Երբեմնի մեղիքանիստ բնակավայրի կենտրոնական մասում միմյանցից մոտ 30 մ հեռավորությամբ կառուցված ապարանքների արանքով ճանապարհը հարթավայրային Թալիշից լեռնային անտառների միջով քանոն է դեպի մելիքության մյուս նստավայր Գյուլիստան գյուղն ու ամրոցը, այսպեղ՝ Հոռեկավանում է խաչմերուկվում նաև Գանձակից Արցախի խորքերը քանոն հին ճանապարհը:

Հոռեկավանը դեռևս վաղ միջնադարից հայրնի Ուռեկան կամ Հոռեկան ավանն է<sup>125</sup>, որտեղ գտնվող Արցախի հնագույն եկեղեցիներից մեկի՝ Գլխո վանքի<sup>126</sup> տեղում 13-րդ դարում կառուցվել է նոր եկեղեցի՝ կից գավթով և բնակավայրի անունով հայրնի դարձել որպես Հոռեկա վանք<sup>127</sup>: 17-րդ դարի սկզբից Հոռեկ գյուղը նոր վերելք է ապրել՝ դառնալով նորակազմ Գյուլիստանի կամ Թալիշի մելիքության նստոց-կենտրոններից մեկը<sup>128</sup>: Այս և հաջորդ դարերում գյուղը հայրնի էր առավելապես Թալիշ անունով, որից և իր անունն է ստացել ոչ հեռու գտնվող այժմյան գյուղը: Հին Թալիշի կամ Հոռեկավանի քարածքում վանքից և ապարանքներից զարպահանվել են նաև բնակավայրի հին ու նոր գերեզմանոցները, որտեղ առանձին ու ընդարձակ

խումբ են կազմում գավառի 18-19-րդ դարերի Մելիք-Բեգլարյան մելիքական տոհմի անդամների և նրանց նախորդների գեղաքանդակ ու արձանագիր փայտանաքարերը<sup>129</sup>: Հնավայրի ողջ քարածքն այժմ պապված է ծառախիտ անտառով, պահպանված շինություններն ու փայտանաքարերը մասամբ հողածածկ են:

**Առաջին ապարանքը** կառուցված է վանքի դիմաց, արևելահայաց բլրալանջի ստորին դարավանդահարթակի վրա՝ երկնապարսպով հաված լանջին: Ապարանքի շինարարական արձանագրությունը փորագրված է եղել հյուսիսային եզրի պարսպակից սենյակի մուտքի ճակատակալ քարի վրա և պահպանվել է մինչև մեր դարի սկզբները: Արձանագրությունը շար հակիրճ է.

«ՅԻՇԱՏԱԿ Է ՈՂԱՆ ԲԱՐՈՒՆ ՏԵՐԻՆ ՄԵ-ԼԻՔ ԹԱՄՐԱԶ Թ. ՌՃՏԶ» (1727)<sup>130</sup>: Այլ խոսքով՝ 1727 թ. կառուցած ապարանքը Մելիք-Թամրազը ընծայում-նվիրում-հիշարակ է թողնում պարոն-տեր Օհանին: Ինչ վերաբերում է Մելիք-Թամրազի և պարոն-տեր Օհանի ինքնությանը, ապա պապ-

<sup>125</sup> Մ. Կաղանկարուացի, էջ 11-12, 327:

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 208, 212, 218, 234, 237:

<sup>127</sup> «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 102: Ապարանքներն ու վանքը չափագրել ենք 1980 թ., իսկ 1983 թ.՝ Ռ. Աբգարյանի հետ:

<sup>128</sup> Բաֆֆի, ԵԺ, հր. 9, էջ 421, Ե. Լալայան, «Գանձակի գավառ», Երկեր, հր. 2, էջ 210, Լեո. Հայոց պատմություն, հր. 3, գիրք Բ, էջ 258-259, Բ. Ուրբարյան, Արցախի պատմությունը, էջ 133:

<sup>129</sup> Ապարանքների թվագրման և առասարակ գավառի մելիքության պատմության համար շար արժեքավոր այս փայտանաքարերը մինչև այժմ անբողջվին ու պարզաձև ձևով չեն վերծանվել ու հրապարակվել: Նմանք. Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 254, Կ. Ղահրամանյան, Հյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 66-67:

<sup>130</sup> Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 271, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 252: Բաֆֆին արձանագրությունը բերում է աշխարհաբար փառադարձությամբ, սակայն վերծանությունը ավելի համոզիչ է, քան Ե. Լալայանինը, որը «բարուն»-ը կարդացել է «բարուն», իսկ «տերին»-ը «մերեն», թվականը՝ «ՌՃԾ» (1701): Արձանագրությունն առաջին անգամ հրատարակվել է Թիֆլիսի «Մշակ» թերթում, 1890 թ. «Շ» ստորագրությամբ («Յիշարակ է Ռհան Բարուն մերեն Մելիք Թամրազ ՌՃԾ»): Տե՛ս «Մշակ», 1890, N 78, էջ 2: Հայ վիմագրության «Դիվանում» տեղ է գրել միայն Ե. Լալայանի վերծանությունը (տե՛ս պրակ 5, էջ 101), ընդ որում այսպեղ արձանագրությունը թյուրիմացաբար վերագրվում է Հոռեկավանի մյուս ապարանքին:



մական աղբյուրները ավելի քան պերճախոս են:

Այսպես. Մելիք-Թամրազը Գյուլիստանում իշխել է 18-րդ դարի առաջին կեսին. ամենավաղ հիշարարությունն այդ մասին 1716 թ.-ից է, ամենավերջինը՝ 1750 թ.-ից<sup>131</sup>: Իսկ 1723-26 թվականների բազմաթիվ փաստաթղթերում Մելիք-Թամրազը (բնագրում՝ նաև «Թամրազ ուզբաշի»), որպես Գյուլիստանի մելիք և արցախյան սղնախների հայ զինվորության նշանավոր հրամանատար, հանդես է գալիս ազգային-ազատագրական պայքարի ամենատրեյի դեմքերի՝ Եսայի կաթողիկոսի, Մելիք-Եզանի, Աբրահամ Սպարապետի, Ավան յուզբաշու և այլոց հետ<sup>132</sup>:

Ուշագրավ է, որ նույն փաստաթղթերում այս անունների շարքում հաճախ է նշվում նաև «Տեր Ոհան» (բնագրում՝ նաև «Տեր Ոհանես, Տեր Օվանես») անունը<sup>133</sup>, որը, կարծում ենք, գյուլիստանցի մելիքների և յուզբաշի-գորապետների անունների կողքին հիշվող «Յոհան ուզբաշին» է<sup>134</sup> կամ «պարոն փերը»<sup>135</sup>, նույն ինքը՝ «առաջնորդ Յոհան պարոնփերը» (1721 թ.)<sup>136</sup> կամ «պարոնփեր Ոհանը»: Իսկ վերջինս, ըստ ամենայնի, Նոռեկա վանքի առաջնորդն էր և ինչպես դարաշրջանի շարք այլ հոգևոր գործիչներ՝ նաև ազգային-ազատագրական պայքարի ոգեշունչ մասնակիցն ու նրա զինուժի «յուզբաշի»-հարյուրապետներից մեկը: Սրանով պետք է բացատրել ապարանքի շինարարական արձանագրության բովանդակությունը. 1727 թ. Գյուլիստանի նշանավոր մելիքը ամրոցակերպ ապարանք է կառուցում հնամենի ու նվիրական Նոռեկա վանքի հարևանությամբ և ընծայում նույն սրբավայրի վանահորն ու իր զինակցին՝ որպես երկրամասին սպառնացող վերահաս վրանգին դիմագրավելու ամրոց ու հենակետ: Իսկ վրանգն առավել քան մեծ էր 1724 թ. կնքված ռուս-թուրքական պայմանագրից հետո, որով ճանաչվում էր Թուրքիայի իշխանությունը Արևելյան Նայաստանի, այդ թվում՝ նաև Արցախի նկատմամբ<sup>137</sup>: Այս առումով հարկանշական է, որ «չորս ամրաշէն բուրգերով դղեակի (այսինքն՝ ապարանքի - Ա. Ղ.) մեջ փեղումն կա

մի նուիրական ուխտապետի»<sup>138</sup>, որը ևս պահպանվել է մինչև օրս և որի առկայությունը մելիքական ապարանքի կազմում եզակի երևույթ է համանման հուշարձանների մեջ:

Ապարանքի ավերակները վկայում են, որ այն հապակագծում ուղղանկյուն կազմող պարիսպներով և դրանց անկյունները սնամեջ-բլուրաձև բուրգերով ամրացված համակառույց է եղել՝ պարսպապատերին հաված և դեպի ներքին բակ բացվող սենյակներով: Ինչպես և նախորդ ուսումնասիրողների ժամանակ, այժմ ևս պահպանվել է ապարանքի արևմտյան կեսը (արտաքուստ՝ 22,1 x 37,8 մ)՝ այդ կողմի պարիսպներով ու երկու բուրգով, ինչպես նաև հյուսիսարևմտյան անկյունամասի շինությամբ<sup>139</sup>: Վերջինս բաղկացած է լայնական պատով պարսպակից երեք միաջափ ու թաղածածկ բաժանմունքներից (ներքուստ՝ 3,6 x 6,2 մ), որոնցից մեջտեղինը երեսբայ նախասրահ է, իսկ եզրայինները՝ այսպետից բացվող մուտքերով սենյակներ: Սրանք երևապարում օջախ-բուխարի ունեն գույգ կամարակապ պահարանախորշերով, իսկ բակահայաց ճակատում՝ մեկական դեպի ներս լայնացող նեղիկ պատուհան: Ընդ որում, նախասրահի աջակողմյան սենյակը (որի մուտքի բարավորին եղել է շինարարական արձանագրությունը) հարակից փոքր-ինչ բարձր ու փոքրիկ բացվածքով կապված է նաև անկյունային բուրգի հետ, որն, իր հերթին, երկու հրակնապ-դիպանցքով ուղղված է դեպի հյուսիս-արևելք՝ հարթավայրից բնակավայր բերող ճանապարհի կողմը: Ի դեպ, բուրգը, ըստ երևույթին, հերազա փարիների վերակառուցման կամ հավելման արդյունք է, քանի որ դրա և սենյակի պատերը կառուցվածքային կապ չունեն:

Նախասրահն ու սենյակները ապարանքի կառուցապարման հիմնական մասն են կազմել (ինչի մասին է վկայում նաև շինարարական արձանագրության առկայությունն այսպետ) և պահպանվել են համեմատաբար ամբողջական փեսքով: Ինչպես մեկ դար առաջ, փլված են նախասրահի և դրա ձախակողմյան սենյակի ճակատամասն ու թաղածածկի մի մասը, իսկ մուտքերի և որմնախորշերի եզրաշարվածքի կանոնավոր քարերը քանդվել ու օգտագործվել են մեր օրերում:

Ապարանքից պահպանված մյուս բուրգը և պարսպանասերը հիմնականում հողածածկ են և նշմարվում են հարվածաբար, իսկ հյուսիսային կողմում այն մոտ 1 մ բարձրությամբ կանգուն է մինչև պարսպամուտքի եզրը:

Ուշագրավ է, որ ավերակներում այլ շինությունների հետքեր չեն նկատվում, բացի Մ. Բարխուդարյանցի հիշարարված և բակի գրեթե կենտրոնում գտնվող փոքրիկ ու թաղակապ կիսագեղնավոր սենյակից, որն այժմ էլ ուխտա-

<sup>131</sup> Տե՛ս «Մշակ», 1890, N 78, էջ 2, Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 227-228, նույնի՝ Պապանոսին Աղուանից, հր. Բ, էջ 50, Լեո, նշվ. աշխ., էջ 276, փեն նաև **Мирза Джамал Джеваншир**, История Карабаха, Баку, 1959, с.121:

<sup>132</sup> Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 45, 68, 72, 92, 111, 250-251, Լեո, նշվ. աշխ., էջ 150, 169, Ա. Աբրահամյան, Մի էջ հայ-ռուսական հարաբերությունների պայմանությունից, էջ 105-106, 152, 198, 216-218, 220, 256 «Նայ ժողովրդի պայմանություն», հր. 4, էջ 181:

<sup>133</sup> Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 212, 252-253:

<sup>134</sup> Նույն փեղում, էջ 258, Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 235, 250-251, Լեո, նշվ. աշխ., էջ 169: Այս շրջանի վավերագրերում գրեթե անակապ է մեկ այլ «Ոհան ուզբաշու» անունը, ինչը փարսաված երևույթ է այլ անունների դեպքում ևս:



<sup>135</sup> Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 217:

<sup>136</sup> Армяно-русские отношения, т. II, ч. I, с. 385, Մ. Բարխուդարյանցը «պարոն փերը» բացատրում է որպես «իշխանագն քահանայ», (փեն Արցախ, էջ 219, Պապանոսին Աղուանից, հր. Բ, էջ 27, ծան. 1), նույն կարծիքին է Պ. Նարությունյանը (փեն Ս. Արտյոնյան, Освободительное движение армянского народа, с. 48, 51):

<sup>137</sup> Մանրամասն փեն Կ. Ահրամանյան, Նյութիսային Արցախ, գիրք Ա, էջ 30 և հարգ.:

<sup>138</sup> Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 230:

<sup>139</sup> Տե՛ս «Մշակ», 1890, N 78, էջ 2, Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 230, Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 271, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 252:



14. ՀՈՒԵԿԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՊԱՐԱՆՔ. Հափազություն-վերակազմություն

տեղի է: Նավանարար այս սենյակը և սրան կից կառույցները (մեզ չհասած) նկարի ունի Բաֆֆին, երբ գրում է «ախոռապան, սպորտերկրյա ներքնապաների և զանազան ծածկոցների» մասին:

Ապարանքի արևելյան՝ չպահպանված թևը, որն, անկասկած, բրգավոր պարիսպներով եզրափակել է բակը, գրնվելով դարավանդահարթակի ամենասպորին մասում, ամենայն հավանականությամբ կառուցապարված չի եղել, ինչպես դրա համար ավելի նպաստավոր մյուս կողմերը: Ուստի և առավել համոզվածությամբ կարելի է պնդել, որ ապարանքը հիմնականում պաշտպանական նշանակություն է ունեցել՝ որպես ամրացված հենակետ որ գորակայան-սղնախի հսկելով մելիքության արևելյան՝ քափաստամերձ սահմանները, միաժամանակ վրանգի պահերին ապահով ապաստան դառնալով գյուղի և շրջակայքի բնակչության համար:

Սրանով պետք է բացատրել նաև, որ շինությունը գուրկ է որևէ հարդարանքից և 1,05-1,2 մ հաստությամբ պատերում նույնիսկ բացվածքների ու խորշերի եզրաշարվածքը կոպտաբաշխ է ի քարքերություն համանման հուշարձանների մեծ մասի: Պետք է նշել սակայն, որ դարաշրջանի քաղաքական իրադրության հետ մեկտեղ այս հարցում պակաս կարևոր չի եղել նաև ապարանքապեր մելիքի փնտրեական կարողությունն ու հզորությունը, ինչի լավագույն ապացույց-վկաներից մեկը այսպեղ գրնվող մյուս մելիքական ապարանքն է:

**Երկրորդ ապարանքը** կառուցված է առաջինի դիմաց՝ Նոռեկավանքի բլրի հյուսիսահայաց լանջի ստորին մասում, երևումատվ հաված լանջին: Ապարանքի կառուցման սրույց թվականը հայտնի չէ: Ուսումնասիրողներն այն ավանդաբար վերագրում են Գյուլիստանի Մելիք-Բեգլարյաններին և առնչում 18-րդ դարի սկզբի իրադարձությունների, ըստ այդմ նաև հիշյալ Մելիք-Թամրազի անվան հետ<sup>140</sup>: Ընդամին երբեմն շփոթվել-նույնացվել են երկու հուշարձանները, իսկ առաջինի շինարարական արձանագրությունը վերագրվել է երկրորդին<sup>141</sup>: Եվ սա՛ այն պարճառով, որ վերջինս իր չափերով, ճարտարապետական ձևերով ու պահպանվածությամբ առավել ակնառու է, իսկ նախորդից հայտնի են թվակիր արձանագրությունն ու դարասկզբի պարմական անցուդարձերում գործող Մելիք-Թամրազի անունը:

Ուստի ապարանքի թվագրումը նոր մեկնակետի ու հիմնավորման կարիք ունի՝ ըստ երկրամասի պարմության վավերական ընթացքի և հարևան մելիքություններում նմանապիպ խոշոր ապարանքների կառուցման ժամանակագրական պարկերի<sup>142</sup>:

Այս տեսակետից դիտարկելով խնդիրը՝ դժվար չէ տեսնել, որ մելիքական ապարանքների շինարարության ամենաբուն շրջանը 18-րդ դարի երկրորդ կեսն է՝ Շուշվա խաների ահագնացող ուրնճությունների և արցախյան մելիքությունների համառ զոյապայքարի նոր շրջանը: Նշելով, որ հենց այս ժամանակահատվածում են կառուցվել Սոխրաթաղի (1771 թ.), Գյուլիստանի (1772 թ.), Ավերարանոցի (1786 թ.), Գյուլաթաղի (1799 թ.) և Տեղի (1783 թ.) ապարանքները<sup>143</sup>, հիշենք նաև, որ այս ընթացքում Թալիշ-Գյուլիստան «երկրում» իշխում էր Մելիք-Նովսեփը՝ նույն ինքը՝ «բաջամարտիկ Մելիք-Յոսեփը»<sup>144</sup> և «Ղարաբաղի հերոսներից մեկը»<sup>145</sup>, ռուս մեծ զորավար Ա. Սուվորովին և Ռուսաց արքունիքում հայտնի, «նշանավոր Մելիք-Ուսուփը՝ Մելիք-Աղամի համերաշխ գինակիցը»<sup>146</sup>, մի խոսքով՝ Արցախի ամենահզոր ու ազդեցիկ ռազմաքաղաքական գործիչներից մեկը 18-րդ դարի երկրորդ կեսում<sup>147</sup>: Եվ բնական է ենթադրել, որ Մելիք-Նովսեփը ևս իր ժամանակի մյուս նշանավոր մելիքների օրինակով կառուցել-ունեցել է իր համբավին ու կարողությանը պարաճող այնպիսի ապարանք, որպիսին կարող էր լինել նրա հիմնական նստավայր Նոռեկավանում պահպանված այս ապարանքը:

Ըստ այսմ, խնդրո առարկա հուշարձանի կառուցման ժամանակը պետք է փնտրել Մելիք-Նովսեփի իշխանության փարիներին (մոտ 1750-1780 թթ.)<sup>148</sup>: Այս ժամանակահատվածի առաջին քասնամյակը համընկնում է Շուշի բերդում Փանահ խանի հաստատման, Վարանդայի Մելիք-Շահնազարի օգնությամբ Խամսայի մելիքությունների պառակման և այդ ընթացքում մշտապես հալածանքների ու պատերազմների դժվարին փարիների հետ, ուստի ապարանքի կառուցման ամենահավանական ժամանակը պետք է համարել 1767-1780 թվականները, երբ Գանձակի խանությունում անցկացրած կարճապես փարագրությունից հետո Մելիք-Նովսեփն ու Ջրաբերդի Մելիք-Աղամն իրենց հպարակների հետ 1767 թ. վերադառնում են հայրենի փիրույթ-

<sup>140</sup> Պուլյան, Արցախի պալատական ճարտարապետության երկու հուշարձան, էջ 65-68):

<sup>143</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 95, 215, 218, «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 94-95, 152, նույնի՝ պրակ 2, էջ 70:

<sup>144</sup> Մ. Բարխուդարեանց, նշվ. աշխ., էջ 242:

<sup>145</sup> А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Е., 1989, с. 174.

<sup>146</sup> Армяно-русские отношения, т. IV, с. 155, М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, с. 256, 263, 51, 113.

<sup>147</sup> «Նայ ժողովրդի պարմություն», հր. 4, էջ 221:

<sup>148</sup> Մելիք-Արթուրի Մելիք-Նովսեփը հաջորդել է վերոհիշյալ Մելիք-Թամրազին, 1750-ական թթ. (տես Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 425, Լեո, նշվ. աշխ., էջ 259, Мирза Джамал, История Карабаха, с. 121): Մելիքի մահվան փարին Մ. Բարխուդարյանցն ու Բաֆֆին համարում են 1775 թ., սակայն հավասարի աղբյուրները նշում են 1780 թ.-ը: (Նման. Մ. Բարխուդարեանց, Պարմություն Աղուանից, հր. Բ, էջ 115, Բաֆֆի, ԵԺ, հր. 9, էջ 469-470, և «Դիվան հայոց պարմություն», գիրք Ա, Պուլյան Կարնեցի, Ե., 1984, էջ 174-175, Армяно-русские отношения, т. IV, с. 155, Կ. Ղահրամանյան, Նյուսիսային Արցախ, գիրք Ա, էջ 46):

<sup>140</sup> Մ. Բարխուդարեանց, Պարմություն Աղուանից, հր. Բ, էջ 50, Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 272, 423-425, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 213, Լեո, նշվ. աշխ., էջ 259:

<sup>141</sup> «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 101:

<sup>142</sup> Մենք ևս մեր նախորդ հրապարակումներում ապարանքը թվագրել ենք 18-րդ դարի 20-ական թվականներով (Տես Ա.

ները<sup>149</sup> և ամրանալով իրենց փոհմական նստավայրերում, նվիրվում ավերված երկրի բարեշինությանն ու շարունակում անհաշիվ պայքարը Շուշվա նոր բռնակալ Իբրահիմ խանի դեմ, ինչպես նաև եռանդուն մասնակցությունը Արցախի ազատագրության խնդրով Ռուսաց արքունիքի հետ փարվող բանակցություններին: Պարսիական չէ, որ հենց այս փարիներին է կառուցվել մասնավորապես Մելիք-Աղամի նմանակերպողակաձև ապարանքը Մոխրաթաղում (1771 թ.):

Իսկ Մելիք-Նովսեփի ապարանքը, ինչպես հիացմունքով նկարել են ուսումնասիրողները (Մ. Բարխուդարյանց, Բաֆֆի, Ե. Լալայան) և ինչպես այսօր էլ կարելի է փեսնել, իրոք մի ամրոցակերպ համակառույց է իշխանական դոյակ, որն առաջին հերթին ապահով պարսպարան էր վրանգի պահերին՝ մելիքական ընտանիքի և մելիքավանի բնակչության համար:

Ապարանքի ուղղանկյուն-պարսպապարամբողջությունն ունի թույլ արտահայտված արևելք-արևմուտք ձգվածություն (արտաքուստ 32,0 x 40,5 մ)<sup>150</sup> և բաղկացած է ողջ հարավային-լանջակից կողմը զբաղեցնող սենյակների հիմնական խմբից ու երկայնական ներքին բակի (12,0 x 38,5 մ) հյուսիսային կողմի միաշար, պարսպակից սենյակներից: Լանջի թեքության պարճառով սենյակների հարավային խումբը փոքր-ինչ բարձր է հյուսիսայինից, որոնց միջև արևմտյան պարսպապարի միջին մասում ասպարանքի դարպասն է, նույն պարսպի հյուսիսային եզրում բոլորաձև սնամեջ բուրգը, իսկ արևելյան կողմի պարիսպը՝ երկրորդ դարպասով ու բուրգով, չի պահպանվել:

Տամակառույցի հարավային թևը բաղկացած է մի շարքով դասավորված չորս դահլիճից,<sup>151</sup> բակի կողմից դրանց ճակարի երկարությամբ ձգված սրահից և սրահի ու սենյակների լայնությունը բռնող, կրկնակի շարքով կառուցված չորս այլ սենյակից: Դահլիճներից միջին երկուսը միաշարի ու միանման՝ քառակուսի հարակազմով (ներքուստ՝ 7,0 x 7,0 մ) գլխարներ են, որոնք մուտքերով կապված են սրահի, եզրային դահլիճների և միմյանց հետ: Գլխարները ծածկված են եղել կիսագնդաձև, քարակերպ, երդիկավոր գմբեթաթաղերով. գմբեթարակ քառակուսուց 2,7 մ բացվածքով անկյունային սրբանների միջոցով անցում է կատարված ութանկյան, ապա, պարի հաստության հաշվին, շրջանագծային գմբեթահիմքին, որի հետևանքով բուն գմբեթաթաղի կանոնավոր քարաշարքերը սկսվում են սրբանների կամարից մի փոքր վեր: Չույզ երդի-

կավոր գմբեթները կանգուն են եղել մինչև մեր դարի սկզբները<sup>152</sup>, պահպանվել են սրբանի 2-5 քարաշարքերը: Գլխարների ներքին հորինվածքում աչքի են ընկնում երկայնական պարերի խորը, լայնաթիչք կամարախորշերը, որոնք մուտքերի ու սրբանների կամարների հետ աշխուժություն են հաղորդում ընդհանուր առմամբ խուլ պարերին, միաժամանակ, իրենց ռիթմիկ կանոնավորությամբ ընդարձակության ու հանդիսավորության պարբանք ստեղծում:

Գլխարներին երկու կողմից կից թաղածակ դահլիճները ևս միաշարի և միանման են (ներքուստ՝ 4,4 x 7,0 մ). մեկական առանցքային մուտք ու դրանից վեր նեղ պարուհան ունեն սրահից, որոնց հանդիպակաց լայնական պարերի կենտրոնում օջախ-բուխարիներն են՝ երկու կողմի կամարակապ պահարանախորշերով, որպիսիք ռիթմիկ շարքով կան և երկայնական պարերում: Դահլիճները հիմնականում կանգուն են: Մասամբ փլվել են ճակարապարերը և արևմտյանի ծածկը:

Գլխարների ու դահլիճների նախամուտք-կամարասրահն ունեցել է քառակուսի հիմքով (0,95 x 0,95 մ) յոթ մույթերի վրա հենվող թաղածակ՝ միջանկյալ թաղակիր կամարով: Կամարասրահը ևս մեր դարասկզբին ամբողջովին կանգուն է եղել<sup>153</sup>, իսկ այժմ պահպանվել են մույթերի, թաղի և կամարների մնացորդներն ու դրանց փապաված զանգվածները: Սրահի երկայնական պարի երկու կամարակապ խորշն ու արևմտյան կողմի բուխարին վկայում են, որ այն բակի կողմից հանդիսավոր ու կամարագարդ նախամուտք լինելուց բացի նաև հյուսիսահայաց ու հովասուն պարզամբ է եղել ամառային բնակության համար:

Արևելյան կողմի սենյակները կամարասրահի հետ կապվում են մի թաղածակ դահլիճի միջոցով (ներքուստ՝ 5,0 x 7,0 մ), որը երկու պարուհան ունի բակահայաց ճակարում և լայնաթիչք կամարով խոշոր բուխարի՝ դրանց միջև: Այստեղից մուտք է բացվում դեպի մի փոքր ու թաղածակ սենյակ՝ նույնպես բուխարիով ու զույգ խորշերով, իսկ վերջինս մուտքերով կապված է արևմտյան կողմից կից փոքրիկ ու մութ սենյակի և հյուսիսից կից մեկ այլ հիմքում քառակուսի (ներքուստ՝ 4,6 x 4,6 մ) սենյակի հետ, որը ողջ ճակարապարը բռնող երկու լայն պարուհան ու մուտք ունի բակի կողմից: Այստեղ հարակից գզախորեն ցածր է մյուսներից և, ըստ պահպանված կանոնավոր քարաշարքերի, ծածկվել է քառանիստ, երդիկավոր գոցված թաղերով: Այս պարճառով նախորդ սենյակի հետ ընդհանուր պարի վերին մասում մուտքից վեր առաջացել է լայն զանգված, որի հաշվին այդ մասում, սենյակի ողջ լայնքով ներկառուցվել է թաղածակ գաղտնարան:


<sup>149</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 304-306, **А. Р. Иоаннисян**, Иосиф Эмин, с. 177, его же, Россия и армянское освободительное движение, с. 16-17:

<sup>150</sup> Չափագրությունը և նկարագրությունը՝ ըստ 1980 թ. վիճակի: Ապարանքի չափագրությունները հրատարակել է նաև Ն. Պատուխյանը (փեն նրա Չայրվող ծածկերով բնակարանները, պարկ. 104, **Սպ. Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը, նկ.6):


<sup>151</sup> «Մշակի» հիշյալ անանուն թղթակիցը պարպ է անվանում միայն այս չորս սենյակը, (փեն «Մշակ», 1890, N 78, էջ 2):

<sup>152</sup> **Մ. Բարխուդարյանց**, Արցախ, էջ 230, **Բաֆֆի**, նշվ. աշխ., էջ 270, **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 252:



<sup>153</sup> Նույն փեղում:



15. ՀՈՌԵԿԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ. ԱՊՐԻՐՆՔ. Չափագրություն



16. ՀՈՒՆԵԿԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՊԱՐԱՆՔ. Չափագրություն



17. ՀՈՒԵԿԱՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՊԱՐԱՆՔ. Վերակազմություն

Ինչպես երևում է, գլխաբներն ու դրանց եզրային դահլիճները մեկիքական փան հիմնական բնակելի մասն են կազմել և կամարասրահով կապվել են խոշոր բուխարիով խոհանոցի և մյուս օժանդակ սենյակների հետ:

Ապարանքի հյուսիսային թևում, ի փարբերություն հարավայինի, սենյակները միաշարք են, դեպի բակ են ուղղված երկայնական ճակարի լայն բացվածքներով և համեմատաբար վաղ են պահպանվել: Սենյակաշարը բաղկացած է կենտրոնական երեսբաց սրահից (5,6 x 7,9 մ) և դրան լայնական կողմերով կից երկու դահլիճից (ներքուսփ՝ 4,45 x 6,0մ և 4,45 x 5,4 մ), որոնք, ըստ պահպանված հետքերի, նույնպես թաղածածկ են եղել: Սրանք երկուական լայն պատուհաններ ունեն բակի կողմից, եզրային պատերում բուխարիներ են՝ կամարակապ խորշերով, իսկ մուտքերը եղել են երեսբաց սրահից՝ այժմ չպահպանված պատերում: Չեն պահպանվել նաև սրահի ծածկի և ճակարամասում դրա հենարանների մնացորդները: Ուստի կարելի է ենթադրել միայն, որ այն կամ ունեցել է կից դահլիճների թաղերի շարունակությունը կազմող ծածկ՝ բակահայաց կողմում հենվելով կամարակապ մույթերի վրա, կամ եղել է հարթածածկ՝ ճակարային փայտե սյուներով: Ուշագրավ է, որ սրահի ու դահլիճների բակահայաց կողմնորոշումը շեշտված է ոչ միայն դրանց դիրքով ու համաչափ դասավորված ճակարային բացվածքներով, այլև ողջ երեսայապը զբաղեցնող կամարակապ խորշերի անընդմեջ շարքով: Ընդ որում, սրահի մասում դրանք չորսն են և միաչափ, իսկ դահլիճներում երեքական են՝ մուտքերի կողմից առաջինի ընդգրծված խոշորությամբ: Նախկանշական է նաև, որ սենյակաշարը կառուցված է բնակելի մասի կամարասրահի դիմաց և եզրային-լայնական պատերով՝ որպես առանձին շինություն, առանձնացված է արտաքին պարիսպներից. արևմտյան կողմում բուրգի հետ կապվող նեղիկ միջանցքով, իսկ արևելքից՝ կառուցապարաման բացակայությամբ և այդ ուղղությամբ բացված երկու փոքր պատուհաններով:

Ըստ այս ակնհայտ է, որ այս շինությունը մեկիքական ապարանքի հանդիսավոր մասն է կազմել և ունեցել է դրա գործառնական առանձնահատկությամբ թելադրված դեր ու բնույթ:

Բաֆֆին հիշյալ երեսբաց սրահի առիթով գրում է. «...այս փեսակ սրահներ ունենում են իշխանները, որոնք պարսից սովորության համեմատ, այնպեղ նստելով, դափավարություն են անում: Ժողովուրդը բակում, բաց օդի մեջ կանգնած է լինում. իշխանը սրահում նստած լսում է նրանց խոսքը և վճիռներ է փայլի»<sup>154</sup>: Իսկ Ե. Լալայանն ու Լեոն հենց Գյուլիստան-Հոռեկավանի մեկիքների մասին խոսելիս վկայում ու հաստատում են, որ «դափավարության իրավունքը պարկանում էր մեկիքին... դափը փեսակում էր մե-

կիքի փան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում»<sup>155</sup>:

Ավելացնենք, որ երեսբաց սրահն իր դահլիճներով ու կից ընդարձակ բակով այս նպատակին ծառայելուց զատ, անշուշտ օգտագործվել է նաև հանդիսավոր ընդունելությունների, փոխախմբությունների և ծիսակատարությունների ժամանակ:

Տեղին է նշել, որ ըստ Բաֆֆու նույն նկարագրության՝ «սրահի երկու կողմերի գեղեցիկ սենյակները երկու հարկանի են եղել: Վերին հարկը քանդված է»: Նայարնի չէ, թե ինչի վրա է հիմնված այս վկայությունը, քանզի շինության ավերակներում չի պահպանվել այդ մասին վկայող որևէ մնացորդ: Թերևս նման ենթադրության կարող է փոփոխ փայ միայն կից պարսպաբուրգի պարի միջով դեպի փանիք փանող աստիճանների գոյությունը, սակայն՝ ընդամենը. քանի որ փանիք բարձրանալու անհրաժեշտությունը ամբողջակերպ համակառույցներում բխում էր առաջին հերթին պաշտպանական նկատառումներից:

Պաշտպանական խնդիրները, ինչպես երևում է նաև ապարանքի նկարագրությունից, առաջնահերթ նշանակություն են ունեցել մեկիքական փան համակառույցի հորինվածքում ու շինելակերպում. այն առնված է ուղղանկյուն պարագծով բրգավոր շրջապարսպի մեջ<sup>156</sup>, սենյակները խմբավորված են դրանց կից՝ ներքին բակի շուրջը և գուրկ են արտաքին բացվածքներից, 1,2 մ հաստությամբ պատերն ու թաղակապ ծածկերը մի ամրակուռ ամբողջություն են կազմում, իսկ անկյունային բուրգերը «հսկում են» մեկիքական մտնող ճանապարհները:

Ապարանքի պատերը կառուցված են սպիտակ որձաքարի կոպտաբաշ շարվածքով, իսկ գմբեթների ու թաղերի վերին մասերում շարվածքը մաքրաբաշ է՝ կանոնավոր շարքերով և ծակոպկեն քարից: Այսպիսին է նաև փրոմպների կամարների և մի քանի խորշերի եզրաշարվածքը, հավանաբար նույն քարից են եղել նաև սյունահարսի կամարները: Մակայն պահպանված մուտքերի, պատուհանների և որմնախորշերի կամարներն ու անկյունամասերը հիմնականում շարված են թրծած աղյուսով (ճակարում՝ 10 x 25 սմ), իսկ երեսբաց սրահով շինության ներսում աղյուսից է պատերի ողջ մակերեսը՝ մինչև կամարախորշերի վերին եզրը: Այդ փեսակերից մեծ հեղափոխություն են ներկայացնում գլխաբների փրոմպները, որոնց ներքին կորագծային մակերեսները ևս շարված են աղյուսով՝ հիմքի անկյունագծի նկատմամբ շեղակի վեր ձգվող շարքերով:

<sup>155</sup> Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 245-246, փեն նաև էջ 241, 247, Լեո, Խոջայական կապիտալ, էջ 166, փեն նաև նույնի՝ Նայտ պատմություն, հր. 3, գիրք Բ, էջ 19: Վմբ. Ն. Պողոսյան, Խամայի մեկիքների իրավունքների և պարսկանությունների մասին, «Բանբեր Նայաստանի արխիվների», 1966, 1:

<sup>156</sup> Ըստ Բաֆֆու բուրգեր են եղել բոլոր չորս անկյուններում:

<sup>154</sup> Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 271:



*VIII. ՀՈՌԵԿԱԿԱՆ. Մեղիք-Հովսեփի ապարանքի հր և հս թևերի բակաստայաց ճակատների դրվագներ*



*IX. ՀՈՌԵԿԱՎԱՆ. Մեկիթ-Հովսեփի ապարանքը բակի հս-արմ կողմից և գլխապաներից մեկը*


Ընդհանրացնելով պետք է ասել, որ Մելիք-Նովսեփի ապարանքի հապրակագծային ու ծավալապարածական լուծումները կանոնիկ հապրակություն ու հղկվածություն ունեն, իսկ զույգ քարակերպ գլխաքների հորինվածքային առանցքի շուրջը կազմավորված համակառույցում բնակելի, օժանդակ ու հանդիսավոր մասերի պարսպափակ համադրվածքը եզակի է իր ամբողջական մրահղացմամբ և նախնական վիճակի պահպանվածությամբ: Նուշարձանն առանձնահատուկ է նաև որմնախորշերի առապությամբ և խիստ համաչափ ու ռիթմիկ դասավորությամբ, բակահայաց ճակատների զուսպ հանդիսավորությամբ, գլխաքների երդիկակիր-փրոմպավոր գմբեթների ինքնապիպ հորինվածքով:

Ըստ այսմ, ապարանքը Արցախի և Սյունիքի մելիքական բնակարանների հորինվածքային-փիպաբանական, ճարտարապետական-կերպարային և շինարարական-կառուցվածքային առանձնահատկությունների վերհանման գործում բացառիկ դեր ունի և նմանապիպ հուշարձանների շարքի բարձրարժեք օրինակներից է:

Նոռեկավանի ապարանքները, միաժամանակ, դոյակակերպ մելիքական փան բնորոշ օրինակներ են և իրենց շեշտված պաշտպանական բնույթով կրում են դարաշրջանի անհանգիստ ու փազնապալից քաղաքական իրադրության կնիքը, իսկ Նոռեկավանքից ու իրարից ոչ հեռու կառուցված զույգ ապարանքների առկայությունը բնութագրական է նաև ամրացված մելիքանիստ բնակավայրի կառուցապարման առանձնահատկությունների փեսակերպից:



# ՄՈՒՆԹԱՆ



Ապարանքի ավերակները գտնվում են ԼՂՏ Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղից 3-4 կմ արևմուտք, լեռնային գեղակի ձախ ափի անփառապար ձորալանջին սփռված Տին Մոխրաթաղ գյուղատեղիի արևմտյան կողմում: Տնավայրի արևելյան եզրի բլրահարթակի վրա կանգուն է Ինն-մաս վանքի 19-րդ դարի եկեղեցին, որից մի փոքր հարավ-արևելք պահպանվել են ուշ միջնադարյան եկեղեցու հիմնամնացորդները, իսկ դրանց միջև ու հյուսիս-արևելյան կողմում բնակավայրի գերեզմանոցն է՝ բազմաթիվ արձանագիր փապանաքարերով: Վանքի և ապարանքի միջև նկատելի են ավերակ ու հողածածկ բնակելի շինությունների հետքերը, իսկ գեղակի ձորում՝ Կուսապար գյուղ փանող ճանապարհին, պահպանվել են միաթռիչք կամրջի խելերը<sup>157</sup>:

Մոխրաթաղ հին գյուղը Ջրաբերդի մելիքության կենտրոններից էր և Մելիք-Իսրայելյանների նապոցներից մեկը՝ հինավուրց Ջրաբերդ ամրոցի և Քաղաքարեղ կամ Մայրաքաղաք բերդավանի հետ միաժամանակ, և, որպես այդպիսին, առաջին անգամ հիշվում է 1724 թ. աղբյուրներում<sup>158</sup>: Մելիքանիսպ բնակավայրի ամենախո-

սուն պարմական վկան, ինչ խոսք, մելիքական ապարանքն է՝ կառուցված մեղմ թեքությամբ արևելահայաց անփառալանջի ձորամերձ հարթության վրա: Ապարանքի ավերակները անցյալ դարավերջին նկարագրել են Նայկունին, Մ. Բարխուդարյանը, Բաֆֆին, Լեոն և այլոք<sup>159</sup>: Մ. Բարխուդարյանը և Նայկունին նաև վերծանել ու հրապարակել են արձանագրությունները, որոնցից մեկը՝ շինարարականը, գտնվելիս է եղել «արևելյան կողմից հաշուելով չորրորդ սենեակի»՝ այսինքն գլխափարս մուրքի բարավորին<sup>160</sup>:

«ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՄԵՆԱԶՕՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿ Է ՅՈՅԺ ՏԱԲՆԱԴԻ ՇԻՆԵԱԼ ԶՏՈՒՆՍ ԻՍԿ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՄ ԻՆՁ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՕՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՆՈԳՈՅՆ ՆԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԷԼԻՔ ԻՍՐԱՅԵԼԻ ՈՐԴԻ ԵՍ ՄԷԼԻՔ ՅԱՂԱՄՍ ՇԻՆԵՅԻ ԶԳԵՂԵՅԻԿ ԿԱՄԱՐՕՔ ԵՒ ԳԵՂԵՅԿԱՆԿԱՐ ՏՈՒՆՍ ԵՒ ՍԱՐԱՅԻՍ ԲԱԶՍԱՆԱՃԱՐ ԶՈՐԴԵԱԿՆ ԻՍ ՄԷՃԼՈՒՄԻՆ...Ծ ԱՍՏՈՒ ԾՈՅ ԱՍՏՈՒԹԱՅՆՈՎ ԲԱՐԵԱՒ ՎԱ-


<sup>157</sup> Ապարանքը և հնավայրի մյուս հուշարձանները չափագրել ենք 1983 թ., Ռ. Արցախյանի հետ:

<sup>158</sup> Մ. Բարխուդարյանը, Արցախ, էջ 43, նույնի՝ Պարմություն Աղուանից, հր. Բ, էջ 52, Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 113: Մելիք-Իսրայելյաններին և Մոխրաթաղի բնակչությանը անցյալի ուսումնասիրողները եկվոր են համարում (17-րդ դարում) Սյունիքի Քաղաթաղ գավառի Խանաձախ և այլ գյուղերից (տե՛ս Մ. Բարխուդարյանի «Պարմության» նշված փեղը, Բաֆֆի, ԵՃ, հր. 9, էջ 425-426, Լեո, Նայոց պարմություն, հր. 3, գիրք Բ, էջ 257), իսկ Բ. Ուլուբաբյանը Ջրաբերդի, Գյուլխարանի, Խաչենի և Վարանդայի մելիքներին փեղաբնիկ է համարում՝ սերված «Արցախի փեր հինավուրց Առանշահիկ

նախարարության փարբեր ճյուղերից» (տե՛ս նրա «Արցախի պարմությունը», էջ 133):

<sup>159</sup> «Մեղու Նայասարանի», 1885, N 70, էջ 2, Մ. Բարխուդարյանը, Արցախ, էջ 217-218: Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 282, Լեո, Իմ հիշարակարանը, ԵՃ, հր. 8, էջ 108-109, նույնի՝ հր. 3, գիրք Բ, էջ 26-27, տե՛ս նաև՝ Մ. Զալալեանը, Ճանապարհորդություն ի Մեծն Նայասարան, մաս Ա, էջ 180, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, (այսուհետև՝ «СМОМПК») вып. XIII, Тифлис, 1892, с. 49:

<sup>160</sup> Մ. Բարխուդարյանը արձանագրության սրույգ փեղը չի նշում, սակայն բանի որ այժմ կանգուն գլխափարս միայն մուրքն է ավերված, ուստի այն իր ընդարձակ ծավալով հավանաբար փորագրված է եղել ոչ միայն բարավորաբարին, այլև մուրքերի սրբաբաշ որմերին՝ ինչպես Տողի ապարանքի ընդունարանում:



ՄՈՒՆԻԱԹ-ԱՂ. Ապարանքի ընդհանուր տեսքը և հատակագիծը ըստ Գորշկովի (1901 թ.)

ՅԵԼԵՍՅԷ ՆԱՆԴԵՐՁ ՄԵՕՔ. ՌՄԻ. » (1771)<sup>161</sup>:

Ինչպես տեսնում ենք, ապարանքը կառուցել է Մելիք-Աղամը՝ աղբյուրներում հաճախ նաև Մելիք-Նաթան անունով հիշվող Ջրաբերդ գավառի մեծանուն տերը, որը, ժամանակակցի վկայությամբ, Արցախի մելիքներից «... էր առաջինն, այր խոհեմ, քաջ ի պատերազմի և ինքնագույն իշխան»<sup>162</sup>: Մելիք-Իսրայելի որդի Մելիք-Աղամը դարասկզբին հայրնի Մելիք-Եսայու և Շուշվա Փանահ խանից դավադրաբար սպանված Մելիք-Ալահողույի Սուլթանի (1728-1756 թթ.)<sup>163</sup> կրտսեր եղբայրն էր, Արցախի միասնականության, ինքնիշխանության և ազատագրության պայքարի առաջամարտիկը 18-րդ դարի երկրորդ կեսին (1756-1783 թթ.)<sup>164</sup>, Գյուլիստանի Մելիք-Նովսեփի դաշնակիցը իր բոլոր ձեռնարկումներում<sup>165</sup>: Նապեղանական է, որ, ինչպես վկայում է նաև արձանագրությունը, ապարանքը կառուցվել է խիստ փազնապալի ժամանակներում («բազում ժամանակ է յոյժ փաքնապի շինեալ գրունս»), այն փարիներին, երբ Մելիք-Աղամը հիշյալ Մելիք-Նովսեփի հետ 1767 թ. հայրենի փիրոյթներն է վերադառնում Գանձակի մոտերքում անցկացրած կարճապես փարագրությունից հետո<sup>166</sup> և, առերես հաշտվելով Շուշվա Իբրահիմ խանի հետ, շարունակում եռանդուն մասնակցությունը Արցախի ազատագրության գործի կազմակերպմանը: 1771 թ. կառուցված դղյակաձև ապարանքը այդ անընդմեջ պայքարի նոր հենակետ-ամրոցներից մեկն էր և, միաժամանակ, Շուշվա խաների սադրանքներից մասնաբաժնի ու «յոյժ փաքնապի» ժամանակներ ապրող երկրամասի բնակչության ապահով պարսպարաններից՝ գավառի մյուս պաշտպանական կետերի՝ Ջրաբերդի, Քաղաքափեղ բերդավանի և վանք-ամրոցների հետ մեկտեղ:

Այս առումով հետաքրքիր է, որ, ըստ ռուսական ռազմական աղբյուրների, 1805 թ. ամռանը ապարանք-ամրոցը պարսպարել է Պարսից մեծաթիվ բանակից հետապնդվող զնդապետ Կարյազինի զորաջոկապին: Իսկ այսպետից զե-

կուցագիրը իշխան Յիցիանովին՝ «Այժմ ես միանգամայն անվրանգ եմ հարձակումներից», վկայում է, որ «քարաշեն դղյակի» պարսպներն ու մյուս շինությունները այդ ժամանակ դեռևս ամբողջական էին ու կանգուն:<sup>167</sup>

Մելիք-Աղամի ապարանքում մինչև անցյալ դարի կեսերը բնակվում էին մելիքական փոհմի ժառանգները<sup>168</sup>, իսկ 1890-ական թթ. այն լքված կիսավեր էր<sup>169</sup>, չնայած, ըստ մի եզակի չափագրության և փեղահանույթի, 1901 թ. համակառույցը դեռևս մեծ մասամբ կանգուն էր<sup>170</sup>: Այժմ, թեկուզև խիստ ավերված, պահպանել է իր նախնական հորինվածքի ամբողջականությունը և մեզ հասած նմանօրինակ հուշարձաններից ամենախոշորն է<sup>171</sup>: Նյուսիսից հարավ ձգված համակառույցը (արտաքուստ միջին չափերը՝ 36,0 x 51,0 մ) շրջապարված է պարիսպներով, որոնք չորս անկյուններում կիսագլանային բրգաձև ելուստներ ունեն, իսկ հասարակագծում անկանոն շեղանկյուն են կազմում՝ երկայնական երկբեկյալ կողմերով: Ընդ որում, արևելյան պարսպապարի մուտքից հյուսիս նույն դարում կցվել է մի երկարավուն, եռամաս շինություն, որն իր ծավալով մի փոքր դուրս է շեշտված սկզբնական, բրգավոր հորինվածքից: Ապարանքի գլխավոր մուտքը հյուսիսային ճակարի ձախ եզրում է և դեպի բակ է բացվում բուրգին կից թաղածածկ սենյակի միջով: Նայկունու բնորոշմամբ այս «գեղեցիկ կամարակապ մեծ դուռը»<sup>172</sup> հստակ երևում է Գորշկովի փեղահանույթի հետ պարկերված ապարանքի հեռանկարային տեսքում և ունի դարաշրջանի շքամուտքերին բնորոշ լուծում՝ մուտքային բացվածքի եզրաեկուսպներին հենված կիսաշրջանաձև բարավորաքարն ընդգրկող միաս-

<sup>161</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 218, հմմտ. «Դիվան հայ վիճագրության», 5, էջ 94: Երկրորդ արձանագրությունը գլխապարս արևմտյան կողմի սենյակի վրա է եղել՝ դարձյալ ընդարձակ, սակայն փոքր-ինչ եղծված ու անհասկանալի, թվականը անորոշ «Ռ...» (տես նույն փեղում): Շինարարական արձանագրության՝ Նայկունու վերձանությունը սխալաշար է, թվականը՝ նույնը. «ՌՄԻ»: Վերջինս բերում է նաև մեկ այլ արձանագրություն. «Կարողությունս ևս ևս (Մարտի) ես Ներսեսի որդի և Պեպրոս իգրաշի վերակացու լեալ աշտարակիս» (տես «Մեղու Նայսապանի», 1885, N 70, էջ 2):

<sup>162</sup> Մ. Բարխուդարեանց, Պարմություն Աղուանից, հր. Բ, էջ 103, Լեռ, հր. 3, գիրք Բ, էջ 313:

<sup>163</sup> Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 442, 457:

<sup>164</sup> «Դիվան հայոց պարմության», գիրք Ա, Ղուկաս Կարնեցի, էջ 376-377, Լեռ, հր. 3, գիրք Բ, էջ 343, հմմտ. Армяно-русские отношения, т. IV, с.222-227, 230-231, 248: Մ. Բարխուդարեանցը, անձանոթ լինելով այս աղբյուրներին, Մելիք-Աղամի իշխանության փարիները դնում է 1760-1781 թթ. միջև (տես նրա «Պարմության» էջ 101, 116-117):

<sup>165</sup> «Նայ ժողովրդի պարմություն», հր.4, էջ 221:

<sup>166</sup> Լեռ, նշվ. աշխ., էջ 306, Ա. Ք. Иоаннисян, Иосиф Эмин, с. 177:

<sup>167</sup> 1805 թ. ռուս-պարսկական պատերազմի փարեզիրը հարողում է, որ Ասկերանի մերձակայքում գնդապետ Կարյազինի զորաջոկապը քաջաբար դիմադրելով Պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի 30 հազարանոց բանակին, կուսապարզի Մելիք-Վանու առաջնորդությամբ նախ ամրացել է «Շահրուպաղի դղյակում», ապա փեղանքին քաջամանոթ հայ մելիքի օգնությամբ գիշերային ռազմերթով նահանջել ու կորուստներից հետո, մոտ 350 հոգով մնացած ջոկապով պաշտպանվել «Մոխրաթաղի քարաշեն դղյակում»: (Մանրամասն տես Утверждение русского владычества на Кавказе, т. 1, под ред. генерал-майора Потто, Тифлис, 1901, с. 208-216.):


<sup>168</sup> Լեռ, «Իմ հիշարկարանը», էջ 109:

<sup>169</sup> «СМОМПК», вып. XIII, с. 49.


<sup>170</sup> Տեղահանույթը և չափագրությունը կարարել է ռուսական բանակի պահեստային գունդարկի պորուչիկ Գորշկովը, որը 1901 թ. գործուղվել է ճշտելու Կարյազինի լեգենդար զորաջոկապի 1805 թ. ռազմերթի հետ կապված վայրերը: (Տես Утверждение русского владычества на Кавказе, с. 202, 214):

<sup>171</sup> Ապարանքի չափագրությունները հրատարակել է նաև Ն. Պապուխյանը (տես նրա Չայրվող ծածկերով բնակարանները, պարկ. 103, Սրբ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, նկ. 9):



<sup>172</sup> «Մեղու Նայսապանի», 1885, N 70, էջ 2:



18. ՄՈՒՆՈՒԹԱԿՆԻ ԱՊԱՐԱՆՔ. Չափագրություն



19. ՄՈՆԻՐԱԳՐԱՂԻ ԽՊԱՐԱՆԵԼ. Չափագրություն



20. ՄՈՆԻՐԱԹԱՂԻ ԱՊԱՐԱՆՔ. Վերակազմություն

փիճան որմնակամարով: Բացի այս և երկրորդ՝ հարավային փոքր մուտքից, Գորշկովի պարկերում խիստ մտրավոր հարակազմում ցույց է տրված նաև մեկ այլ մուտք՝ հարավային կողմի նեղիկ միջանցքի դիմաց: Այս հարավում պարիսպն իրոք ընդհարվում է, սակայն, ըստ ամենայնի՝ հեղազա ավերման հետևանքով:

Նամակառույցի նախնական հորինվածքի սենյակները դասավորված են ներքին բակի (միջին չափը՝ 16,0 x 41,0 մ) արևմտյան՝ երկայնական և հարավային՝ լայնական կողմերը զբաղեցնող երկու շարքով, որոնք անջատված են նեղիկ միջանցքով և միմյանց նկատմամբ ուղիղ անկյուն են կազմում: Արևմտյան շարքի սենյակները երանամասով խորանում են լանջի մեջ և խմբավորված են երեք նախասարահների շուրջը: Սրանցից եզրայինները միաչափ են (ճակատային բացվածքը՝ 5,4 մ) և միմյանց են կապում երեքական փարբեր չափերի ուղղանկյուն հարակազմով թաղածածկ սենյակներ, իսկ կենտրոնականը զբաղեցնում է քառակուսի հարակազմով (6,9 x 6,9 մ) գլխաքան ողջ ճակարը և դրա ձախ կողմում ունի կից մեկ թաղածածկ սենյակ ևս:

Նախնական է, որ, չնայած փեղանքի պայմաններով թելադրված սենյակների փարբեր չափերին, այս շարքի հարակազմային հորինվածքը ենթարկված է որոշակի կանոնավորության: Այսպես, երեք նախասարահներն էլ ճակատային գծի նկատմամբ հավասար խորություն ունեն, սրանցից հյուսիսայինին կից երեք սենյակի երանապարերը մի գծով են ավարտվում, իսկ գլխաքան հարավակողմի երեք սենյակինը՝ դրանից մի փոքր առաջ, ընդ որում վերջինս համընկնում է նաև գլխաքան լայնական առանցքի հետ: Ուշագրավ է նաև, որ պարսպապարն այսպեղ համապետված չէ սենյակների երանապարի հետ, այլ 2,5-5 մ հետ է դրված և սկսվում է դրանց փանիքի մակարդակից:

Սենյակների այս շարքի և ամբողջ համակառույցի հորինվածքային գլխավոր շեշտը գլխաքանն է՝ դրված բակահայաց ճակատի առանցքով: Գլխաքանն ապարանքի կազմում գրեթե անխաթար պահպանված սակավաթիվ դահլիճներից է և ծածկված է երդիկակիր ութանիստ քրզածև գոցվող թաղով, որին անցումը կարգված է քառակուսի հիմքի չորս անկյունը 2,7 մ կամարաթիջքով պասկող փրոմպների միջոցով: Մուտքի հանդիպակաց պատում փրոմպների միջև գրավող որմնախորշը լայն է ու կամարակապ, իսկ կողպապարերի մեկական փոքր խորշերը հարթածածկ են:

Այսպեղ իրենց չափերով աչքի են ընկնում նաև գլխաքան երկու կողմի դահլիճները, որոնք, միաժամանակ, համեմատաբար լավ են պահպանվել: Սրանցից հարավայինը (ներքուստ՝ 4,0 x

6,5 մ) ունի օջախ-բուխարի՝ գույգ կամարախորշերով, իսկ հյուսիսայինն ուշագրավ է երանապարում գրավող խորշածև մասով (ներքուստ՝ 4,0 x (7,5+ 0,8) մ): Այս շարքի մյուս սենյակներից պահպանվել են միայն ծածկի մնացորդներն ու պարբերը, այն էլ՝ մասամբ հողածածկ: Այնուամենայնիվ որոշակի է, որ դրանք մուտքեր են ունեցել նախասարահներից և մեկական դեպի ներս լայնացող փոքր պարուհան՝ բակահայաց ճակատում: Եզրային նախասարահները, ինչպես վկայում են փեղում պահպանված սրբաբաշ քարաբեկորները, ամենայն հավանականությամբ ունեցել են մույթավոր-կամարակապ ճակատներ և նույնպես թաղածածկ են եղել: Սակայն թե՛ մույթերի և թե՛ կամարների չափերի ու քանակի մասին կարելի է պարկերացում կազմել միայն ենթադրաբար՝ համանման հուշարձանների բաղդափայտությամբ: Այս առումով ուշագրավ է Նայկունու այն վկայությունը, որ 1885 թ. «Սրահի սիւներից մի քանիսը քանդած (էին)»<sup>173</sup>: Մինչդեռ, ինչպես երևում է 1892 թ. նկարագրությունից<sup>174</sup> և Գորշկովի 1907 թ. կազմած հարակազմից, գլխաքան երկայուն-եռակամար սրահը՝ «հսկայական, մեկ ամբողջական քարից փաշված սյուներով», այդ ժամանակ դեռևս կանգուն էր: Ուստի պետք է ենթադրել, որ Նայկունու վկայությունը ոչ թե գլխաքան, այլ եզրային երկու սրահների մասին է, որոնց ճակատային լուծումը անորոշ է նաև 1901 թ. հարակազմում: Իսկ գլխաքան նախասրահի մասին Լեոն ևս նշում է. «Դահլիճի (գլխաքան-Ա.Ղ.) առջև կա մի փոքրիկ, սյունազարդ և գեղեցիկ սրահ»<sup>175</sup>, այսինքն՝ գրեթե բառացիորեն այն, ինչ հայտնի է 1901 թ. հարակազմից և ինչ 1771 թ. արձանագրել է ապարանքը կառուցողը. «Ես Մելիք Յաղամս շինեցի զգեղեցիկ կամարօք փունս...»: Մեկ այլ առիթով Լեոն գրում է. «Առանձնապես խնամքով շինված է մելիքի ընդունարանը, որ ունի և սյունազարդ գավիթ»<sup>176</sup>: Այսպիսով ակնհայտ է, որ գլխաքանն ունեցել է եռակամար, սյունազարդ նախասրահ՝ միակտոր քարե սյուներով: Իսկ վերջիններս հավանաբար ուղղանկյուն հարվածք ունեին՝ եզրանկյունների փաշվածքով, որի պարճառով Գորշկովի կազմած սխեմափիկ հարակազմում պայմանականորեն ցույց են տրվել բոլորածև:


Ապարանքի հարավային թևի շինությունները կառուցված են հենապարսպով սրեղծված դարավանդային պարի բակի լայնական կողմում, որոնց երանապարին շեղությամբ հպվում է արտաքին պարսպապարը, իսկ ճակատային գծով դրանք համապետված են հիշյալ նախասարահ-

<sup>173</sup> «Մեղու Նայսարանի», 1885, N 70, էջ 2:

<sup>174</sup> «СМОМПК», ВЫП. XIII, с. 49.

<sup>175</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 109:

<sup>176</sup> Լեո, Նայսյոց պարմություն, հր. 3, գիրք Բ, էջ 27:



*Մ. ՄՈՒՆՐԱԾ-ԲՆ. Մելիք-Եղանի ապարանքի եր-արտ հարվածի բակտերայաց ճակատը,  
գլխադռան քրմայններից մեկը և երդիկը*



ներից հարավայինի եզրապարհի ուղղության հետ: Սենյակների այս խումբը բաղկացած է երկու մասից. նեղիկ ու կամարակապ ճակատով կենտրոնական նախասրահին երկու կողմից կից միաջամի ու միանման դահլիճներից (ներքուստ՝ 3,1 x 6,2 մ) և դրանց երկարության չափով արևելքից հաված պարսպակից, կրկնահարկ ու թաղածածկ դահլիճից (ներքուստ՝ 3,8 x 6,8 մ): Նախասրահն ու կից դահլիճները նույնպես թաղածածկ են և աչքի են ընկնում համաչափ դասավորված բուխարիների և կամարախորշերի կառուցման խնամքով ու պահ-պանվածությամբ. մասամբ ավերված են միայն դահլիճների ճակատապատերը, որոնք ևս, նախորդների պես, մեկական առանցքային նեղ պատուհան ունեն բակի կողմից<sup>177</sup>:

Երկհարկանի դահլիճի առաջին հարկի հարկը 4,5 մ-ով ցածր, իսկ երկրորդինը 4 մ-ով բարձր է բակից, սակայն շինության մեծ մասի ավերվածության պարճառով հայտնի չէ, թե դրանք ինչպես են կապվել բակի հետ: Այսպեղ ուշագրավ է երկրորդ հարկը, որը, ինչպես վկայում են պահպանված մնացորդները, թաղածածկը եզերող կամարային ճակատով երեսբայ վերնասրահ է եղել: Վերջինս իր հորինվածքով և ընդհանուր առմամբ ցածրանիստ մյուս սենյակների համեմատությամբ ուղղաձիգ շեշտվածությամբ ակնհայտորեն հիշեցնում է Քաշաթաղի և Խնածախի ապարանքների երեսբայ վերնասրահները<sup>178</sup>, իսկ խուլ գեղանահարկի առկայությամբ առավելապես աղերսվում է Տողի ապարանքի ընդունարանի հետ:

Ապարանքի հորինվածքում հեղափոխության է նաև գլխարկավոր շարքի դիմաց գրավող շինությունը, որը բաղկացած է բակի նկարմամբ երկայնական կողմով դրված կենտրոնական երեսբայ սրահից և երկու միանրման եզրային դահլիճներից (ներքուստ՝ 5,2 x 6,5 մ): Ընդ որում, դահլիճներից հյուսիսայինի լայնական եզրապարհի և կից բուրգի, ինչպես նաև թաղածածկի մնացորդների և կից պարսպակապարհի միջև կառուցվածքային կապի բացակայությունը վկայում է, որ այս շինությունը ապարանքին է կցվել հեղափոխում: Սակայն ճարտարապետական բնութագրով այն չի փարբերվում համակառույցի մյուս մասերից և, պետք է կարծել, որ կառուցվել է դրանցից փոքր-ինչ ուշ, կամ անմիջապես հետո: Ամեն պարագայում կառուցվել է նախքան շինարարական արձանագրության փո-

րագրումը, քանզի «շինեցի զգեղեցիկ կամարոք քունս և սարայիս» կարևոր վկայության մեջ «քան» (ապարանքի բնակելի մասի) կողքին ակնհայտորեն առանձնացված-շեշտված է նաև «սարայի» (սրահի կամ սրահավոր շենքի) կառուցումը: Այս հանգամանքը պայմանավորված էր նաև ապարանքի կազմում վերջինիս կարևոր ու յուրահատուկ գործառնական դերով և արտահայտվել է ինքնուրույն ու ավարտուն հորինվածքային ծավալաձևի մեջ:

Այսպեղ ևս, ինչպես Նոռեկավանի երկրորդ ապարանքում, դահլիճների պատերը պահպանվել են թաղածածկի մնացորդներով, իսկ երեսբայ սրահում դրանց բացակայության պարճառով դարձյալ պետք է ենթադրել, որ այն կամ նույնպես թաղածածկ է եղել՝ սյունազարդ-կամարակապ ճակատով, կամ ունեցել է հարթ ծածկ՝ փայտե սյուներով: Ի դեպ, վերոհիշյալ 1901 թ. մոտավոր հապակագծի այս մասում նույնպես ցույց է փրված երկ- սյուն-եռակամար սրահ՝ գլանաձև սյուներով, սակայն ապարանքի ընդհանուր հապակաձևի պարկերման խիստ աղճատվածությունը թույլ չի փախի անվերապահորեն դա ընդունել:

Սրահի և հյուսիսային դահլիճի զանգվածեղ միջնապարուն ներկառուցված են դեպի քանիք քանող աստիճաններ, սակայն պահպանված եզրապարտերի հիմնամնացորդները դժվար է երկրորդ հարկի գոյության վկայություն համարել, քանզի դրանք կարող էին կապված լինել պաշտպանական և այլ նպատակներով քանիքի օգտագործման հետ, մանավանդ որ քեղանքի թեքության պարճառով արտաքին պարը արդեն 7 մ - բարձրություն ունի: Այսպեղ դահլիճները երկուական նեղ պատուհան ունեն դրսից (ինչը հագվաղեպ երևույթ է նմանափայ հուշարձաններում), պատուհանների հանդեպ՝ կամարակապ խորշեր, իսկ լայնական եզրապարտերում՝ միայն բուխարիներ:

Պետք է նշել նաև, որ այս շինությունն իր հորինվածքով ու գլխարկավոր-բնակելի մասի նկարմամբ ունեցած քեղաղիքով հար և նման է Նոռեկավանի երկրորդ ապարանքի հյուսիսային կողմի սենյակաշարին և նույնպես ծառայել է հասարակական կյանքին առնչվող արարողությունների՝ դարավարությունների, հանդիսությունների և ընդունելությունների համար, չնայած կար նաև վերոհիշյալ կրկնահարկ դահլիճի երեսբայ վերնասրահ-ընդունարանը:

Ապարանքի ընդհանուր կառուցապարման մեջ սենյակների գործառնական առանձնահարկություններից է նաև այն, որ դրանք խմբավորված են չորս նախասրահների շուրջը՝ կազմելով պարկից, բաց մուտքերով անջատ բնակելի հարկաբաժիններ և, ըստ ամենայնի, հարկացվել են բազմանդամ մեղիքական ընտանիքի յուրաքանչյուր ժառանգին:

Մյուս կողմից հարկանշական է, որ բնակելի մասում բուխարիներ ունեն ոչ բոլոր սենյակները. կամ դրանք օժանդակ-քնքեասական բնույթ են ունեցել, կամ նախարեսված չեն եղել ձմեռա-

<sup>177</sup> Ոմանք այս հարվածը ձիանոց-ախոռ են համարում, վկայաբերելով խորշ-մուտքները, սակայն այդպիսիք (որմնախորշեր) կան նաև մյուս դահլիճներում («Մեղու Նայասպանի», 1885, N 70, էջ 2, [СМОМПК"», В. III, с. 49):

<sup>178</sup> Այսպեղ քեղին է վերհիշել ուսումնասիրողների այն վարկածը, ըստ որի Մեղիք-Բարայեյանները և Մոխրաթաղի ու Մեծ Շենի բնակչությունը եկվոր են համարվում Քաշաթաղի Խնածախ և Մաղավուզ գյուղերից: Ի դեպ, Ջրաբերդ գավառի Մեծ Շեն և Մաղավուզ գյուղերի մոտ է գրավում մեղիքության մյուս նախավայր Քաղաքապեղ կամ Մայրաքաղաք բերդավանը:

յին բնակության համար: Այս առումով ուշագրավ է փրկագրի վկայության վրա հիմնված Մ. Բարխուդարյանցի կարծիքը, ըստ որի այսօրվա Մելիք-Աղամի ամառանոց-ապարանքն է եղել, իսկ Քաղաքաբերդ-Մայրաքաղաքում՝ ձմեռանոց-ապարանքը<sup>179</sup>:

Նամեմարաբար մաքցելի ձորահովտում կառուցված մելիքական փան ընդարձակ համակառույցի հորինվածքը խստորեն ենթարկված է պաշտպանական բնույթի խնդիրների լուծմանը. ապարանքը շրջապատված է բարձր ու խուլ պարիսպներով, արտաքին մուտքերը փոքր են ու դժվարանց (հյուսիսայինը՝ պահակապնով, արևել-յանը՝ կից աշտարակաձև շենքով), սենյակների փանիքները հիմնականում հարթ են և պաշտպանական գործողությունների համար հարմար, արևմտյան լանջամերձ ու առավել մաքցելի հարվածում այդ նպատակով թողնված է փանիքների մակարդակով մինչև պարսպապակը ձգվող հարթակ, սենյակները դեպի բակ բացվող նվազագույն մեկական նեղիկ պարուհան ունեն, սենյակաշարքերի եզրերում միջանցք ու ազապ փարածք է թողնված փանիք բարձրանալու և պարիսպներին մոտենալու համար:

Ապարանքի պատերը մեծ մասամբ 1 մ - հասարկություն ունեն և կառուցված են սպիտակ որձաքարի կոպրապաշ շարվածքով, ծածկաթաղերում քարերը ձեղքված-մանրացված են: Սրբապաշ քարով են շարված փրոմպների, մուտքային կամարների, խորշերի և բուխարիների եզրամասերը, ինչպես նաև պատերի անկյունները: Ըստ պահպանված բեկորների՝ սրբապաշ են եղել նաև նախաքարահների պյունակամարները, իսկ սենյակների պատերին մնացած կրաշաղախով սվա-

ղի հարվածները վկայում են, որ դրանց մի մասը ներքուստ սվաղված է եղել: Այս մասին ևս արժեքավոր վկայություն ունի ապարանքի շինարարական արձանագրությունը, որի «շինեցի գեղեցիկ կամարոք և գեղեցկանկար փունս և սարայիս» փրկագրության մեջ եթե «գեղեցկանկարը» հասարակապես «նկարագարդն» է, կամ «որմնանկարվածը», ապա անորոշ է, թե ինչն է որմնանկարագարդ եղել՝ «գեղեցիկ կամարոք փո՛ւնը», թե՛ «սարայ»-սրահը: Ամեն դեպքում այս փրկագրությունը ապարանքը կառուցողի արձանագրած ու մեզ հասած եզակի վկայություն է՝ նմանարիպ հուշարձանների ներքին հարդարանքի մասին պարկերացում կազմելու հարցում:

Մոխրաթաղի մելիքական ապարանքն իր նախնական հորինվածքի համեմատաբար ամբողջական պահպանվածությամբ, բազմաբնույթ սենյակների ընդարձակ կազմով ու հարակազմային համադրվածքով, գլխապան անխաթար փրոմպավոր գմբեթով, 1771 թ. բովանդակակից շինարարական արձանագրությամբ ու ներհարուկ այլ կողմերով ուշ միջնադարյան պալատական ճարտարապետության բարձրարժեք հուշարձան է և լույս է սփռում բնագավառի ուսումնասիրության շար խնդիրների վրա: Միաժամանակ, «յոժ փագնապի բագում ժամանակ»-ներից ամենապահպանապահներից և Արցախի հայաշխարհի համար ամենաճակարագրականներից մեկի՝ 18-րդ դարի երկրորդ կեսի ռազմաքաղաքական իրավիճակի դրոշմը կրող պաշտպանական կառույցի բնորոշ օրինակ է և լավագույնս է ներկայացնում դարի ճարտարապետությանը հարուկ պալատ-ամրոցի հորինվածքային փիպը:

<sup>179</sup> Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 224, ծան. 1, նույնի՝ Պապնություն Աղուանից, հր. Բ, էջ 53: Դժվար է այս հարցում միանշանակորեն համաձայնել Մակար Եպիսկոպոսի հեղ, քանզի Մոխրաթաղն ու Քաղաքաբերդը գրեթե նույն բնակլիմայական պայմաններում են: Ավելին՝ Թաթառի հովտի զովասուն անտառայանների սփռված Քաղաքաբերդը փոքր-ինչ ավելի բարձրադիր է ու լեռնամերձ, ապարանքն էլ կառուցված է սարալանջին: Իսկ համեմատաբար ցածրադիր Մոխրաթաղի ձորահովտում ձմեռն ավելի մեղմ է և ավելի մաքցելի է ճանապարհների փետակերպից: Բացի այս, նաև պաշտպանական կառույց լինելով, երկու ապարանքն էլ, անշուշտ, իրենց նպատակին են ծառայել՝ ելնելով ոչ թե փարվա եղանակներից, այլ՝ փվյալ պահի ռազմաքաղաքական իրավիճակից:

## ՔԱՆԱԿՆԵՂ



Ապարանքի ավերակները գտնվում են ԼՂՏ Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղից մոտ 2 կմ ար-մուտք, Թարթառ գետի աջ ափի բարձրադիր անտառալանջերին սփռված Քաղաքաբերդ կամ Մայրաքաղաք անունով հայտնի միջնադարյան բերդավանի կենտրոնական մասում<sup>180</sup>:

Բերդավանի փարածքը հյուսիսից ու հարավից սահմանափակված է ձորերով և կազմված է խիստ կրքրված, արևմտահայաց, անտառածածկ ժայռալանջերից, զբաղեցնում է մոտ 54 հա փարածություն: Կառուցապատման մեջ իրենց ակնառու դիրքով աչքի են ընկնում կենտրոնական մասի ժայռազանգվածի լանջին կառուցված ապարանքը և դրա հյուսիս-արևմտյան ու հարավ-արևմտյան կողմերի հանդիպակաց դարավանդեզրերին գտնվող երկու փոքր ամրությունները, որոնք և կազմել են բերդավանի հիմնական պաշտպանական կետերը: Ուշագրավ են նաև վերջիններիս ուղղությամբ փարածքի ծայրամասերում մեկուսի կանգնած երկհարկանի աշտարակաձև կառույցները, ապարանքի ստորոտի ձորափին պահպանված բաղնիքի ավերակներն ու սրանոցի մնացորդները, ինչպես նաև ամբողջովին կանգուն քարակերտ գլխապուռնը և բազմաթիվ այլ շինությունների պատերն ու հիմնամնացորդները<sup>181</sup>: Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ բերդավանն ունեցել է պարիսպներով ամրացված երկու մուտք՝ արևելքից և արևմուտքից:

<sup>180</sup> Մ. Ջալալեանց, Ճանապարհորդությունից ի Մեծն Նայաստան, մասն Ա, էջ 177, Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 222-224, Բաֆֆի, Եժ, հր. 8, էջ 281, 426, Լեո, «Իմ հիշարկարանք», Եժ, հր. 8, էջ 117, նույնի՝ Նայոց պարսություն, հր. 3, գիրք Բ, էջ 26-27: Բերդավանի հուշարձանները 1983 թ. չափագրել և առանձին հողվածով ներկայացրել ենք Ռ. Աբգարյանի հետ (տե՛ս Ա. Դուլյան, Ռ. Աբգարյան, Արցախի Քաղաքաբերդ բերդավանը, «ՊԲՆ», 1988, 1, էջ 147-162):

<sup>181</sup> 19-րդ դարի վերջերին այստեղ 4-5 հարյուր ավերակ քարերի հեպտեր կային (տե՛ս «Մեղու Նայաստանի», 1885, N 67):

Նաավայրը Արցախի հնագույն ամրացված բնակավայրերից է, և կարծիք կա, որ «Մայրաքաղաք անունով հիշվում է վաղ միջնադարից, 7-րդ դարում այստեղ են նստել Աղվանքի կաթողիկոսները»<sup>182</sup>: Այս տեղեկության սկզբնաղբյուրը թեև չի նշվում, սակայն հայտնի է, որ Աղվանք-Արցախի կաթողիկոսության ամառանոցը եղել է Բերդակուր ամրոցը<sup>183</sup> և որպես այդպիսին մնացել 7-րդ դարից մինչև 9-րդ դարը<sup>184</sup>: Մյուս կողմից ուսումնասիրողները Բերդակուրը նույնացնում են 12-րդ դարի իրադարձությունների առնչությամբ հիշվող Կաթողիկոսի քար կամ Կաթողիկոսասար<sup>185</sup> բերդի հետ<sup>186</sup>, իսկ տեղական ավանդազրույցը՝ Քաղաքաբերդ-Մայրաքաղաքի հետ<sup>187</sup>:

Միջին դարերում բերդավանի գոյարևման մասին են վկայում հնավայրի արևելյան եզրաբարձունքին գտնված զերեգմանոցի մարտուռի 1260 թ. արձանագրությունը, 1250 թ. խաչքարը և

<sup>182</sup> Տե՛ս Բ. Ուլուբաբյանի բերդավանի մասին ծանոթագրությունը՝ Լեոյի «Իմ հիշարկարանի» վերջին հրատարակության մեջ (հր. 8, էջ 541, ծան. 27):


<sup>183</sup> Մ. Կաղանկարուցի, Պարսություն Աղուանից աշխարհի, էջ 297, 345, Կ. Գանձակեցի, Պարսություն հայոց, էջ 198:

<sup>184</sup> Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, էջ 371:

<sup>185</sup> Մ. Գոշ, Կաթողիկոսը եւ ղեպ Աղուանից աշխարհին ի մեջ ԺԲ դարու, Ղ. Ալիջան, Նայաստան, էջ 386ա, Մ. Կաղանկարուցի, Ցաւելուած Բ, էջ 353:

<sup>186</sup> Բ. Ուլուբաբյան, նշվ աշխ., էջ 116: Այս կարծիքին է և Վ. Առաքելյանը (տե՛ս Մ. Կաղանկարուցի, Պարսություն Աղվանից աշխարհի, Ե, 1969, էջ 289, ծան. 245):

<sup>187</sup> Ըստ Մեծ Շեն գյուղի դպրոցի ուսուցիչ, բանահավաք Բ. Մովսիսյանի գրառած ավանդազրույցներից մեկի: 19-րդ դարում գրառված մեկ այլ ավանդազրույցի համաձայն «այս ամրոցը կառուցվել է հայոց Վաչագան թագավորի կողմից և ծառայել է որպես ամառային նստավայր» (տե՛ս "СМОТРИ", вып. XIII, с. 50):



21. ՔԱՂԱՔԱՏԵՂ ԲԵՐԴԱՎԱՆ. Զախագրություն

1551 թ. փապանաքարերը<sup>188</sup>: Նավանաքար հենց այս դարերում է բնակավայրը իշխանանիսպ դարձել և կոչվել «մայրաքաղաք» (ինչպես «Եղեգիս մայրաքաղաքը» Մյունիքի Վայոց ձոր գավառում)<sup>189</sup>, սակայն, քանի որ գտնվում է գավառի հնագույն կենտրոն Չարաբերդ-Ջրաբերդ ամրոցից մոտ 1,5 կմ արևելք, իսկ վերջինիս անունը աղբյուրներում գործածվում էր և՛ գավառ, և՛ կենտրոն, և՛ ամրոց իմաստներով<sup>190</sup>, կարելի է ենթադրել, որ Չարաբերդ-Ջրաբերդ անունը հնուց ի վեր, մասնավորապես միջին դարերում և հետո, ներառում էր ամրոց-բերդավան ամբողջությունը:

Ըստ այսմ, ընդհանրանում-ուրվագծվում է բերդավանի պատմության ու անվանավորության ընթացքի պատկերը. վաղ միջնադարում կոչվել է «Բերդակուր», ապա, կաթողիկոսական ամառանոց դառնալու պատճառով, «Կաթողիկոսաքար» (քար-բերդ), իսկ միջնադարում հայտնի է դարձել «Չարաբերդ մայրաքաղաք» կամ պարզապես «Մայրաքաղաք» անուններով: Նեպագայում Ջրաբերդ ամրոցի հետ չջիղթելու նպատակով անունից առանձնացված «Մայրաքաղաքը» վերածնվել ու սրացել է վաղեմի փառքը կորցրած ու ավերակված բերդավանի վիճակին բնորոշ «Քաղաքապեղ» ձևը, որը հիշատակված է միայն 18-րդ դարի երկու փաստաթղթում, որպես «Քաղաքայ փեղի բերթ» (1724 թ.)<sup>191</sup> և «Քաղաքապեղ գյուղ» (1783 թ.)<sup>192</sup>:

Բերդավանի վերոհիշյալ ուսումնասիրողները միաձայն ապարանքի կառուցումը (ավելի ստույգ՝ վերաշինությունը) կապում են Ջրաբերդի նշանավոր Մելիք-Աղամի անվան հետ, իսկ Քաղաքապեղ-Մայրաքաղաքը համարում նրա աթոռանիսպ բնակավայրերից մեկը: Սակայն հնավայրում պահպանված հուշարձանների համեմատական դիտարկումը ցույց է տալիս, որ միջնադարյան շերտի վրա մելիքության շրջանում վերականգնված բնակավայրը բավականին ընդարձակ ու բարեշեն է եղել և կառուցապատվել է սասիճանաբար՝ սկսած 17-րդ դարից: Նաշվի առնելով, որ այս և հաջորդ դարում, մինչև Մոխրաթաղի ապարանքի կառուցումը (1771 թ.), Քաղա-

քապեղը մելիքության միակ նստոց-բնակավայրն էր՝ հիմնական կենտրոն Ջրաբերդ ամրոցի հարևանությամբ, պետք է ենթադրել, որ այսպեղ գտնվող ապարանքը ևս կառուցվել է ավելի վաղ, քան Մելիք-Աղամի աթոռակալության շրջանն է, այսինքն՝ նախքան 18-րդ դարի երկրորդ կեսը<sup>193</sup>: Մյուս կողմից, ինչպես փեսանք նախորդ հուշարձանների առնչությամբ, Մելիք-Աղամի իշխանության սկզբնապարհները (1750-60-ական թթ.) անցել են Շուշվա Փանահ խանի դեմ մղած անհաջող պայքարում և նորընձա մելիքի համար հագիվ թե նպաստավոր լինեին դժվարին փեղանքում նման խոշորածավալ, մեծածախս ու ժամանակապար կառույց իրականացնելու առումով: Իսկ այս փարիներին հաջորդած փարագրությունից և վերադարձից (1767 թ.) հետո Մելիք-Աղամը ձեռնարկել և 1771 թ. ավարտել է Մոխրաթաղի ապարանքի կառուցումը, ուստի, չնայած իր համբավին ու հարսպությանը, դարձյալ ի գործ չէր միաժամանակ մեկ այլ ապարանքի շինարարություն իրականացնել Քաղաքապեղում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապարանքը, ինչպես նկատվել են Մ. Բարխուդարյանցն ու Բաֆֆին<sup>194</sup>, կառուցվել է հնի ավերակների վրա և բաղկացած է սկզբնական՝ քարաշեն ծածկերով մասից և դրան կցված փայտածածկ սենյակներից: Ընդ որում, համակառույցի հարավ-արևմտյան անկյան թաղածածկ-խորշավոր դահլիճը՝ իր ձորահայաց երեք լայն պատուհաններով, խիստ հարազատ է հանդիպակաց հեռավոր լեռնալանջին կառուցված Երիցմանկանց վանքի կաթողիկոսական վեհարանի դահլիճի ձևերին (17-րդ դ.), իսկ ապարանքի հարթածածկ սենյակները ակնհայտորեն հիշեցնում են Ջրաբերդ և Գյուլիսպան ամրոցների միջնաբերդի ապարանքների սենյակները (17-18-րդ դ. սկիզբ) և բոլորովին նման չեն դարավերջին բնորոշ գլխափունավոր, քարաշեն ծածկերով ապարանքների դահլիճներին:

Այսպիսով, ըստ ամենայնի, 1724 թ. հիշված «Քաղաքայ փեղի բերթը»<sup>195</sup> Քաղաքապեղի բերդածև-ամրոցակերպ ապարանքն է և 17-րդ - դարի մելիքական փուն-դոյակի մնացորդների վրա վերակառուցվել-լրացվել է 18-րդ դարի 20-ական թվականներին՝ տղնախական ազապամար-

<sup>188</sup> «Մեղու Նայասպանի», 1885, N68, էջ 1, Մ. Զավախանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 177, Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 222, «Դիվան հայ վիճագրության», 5, էջ 85-96: Մապուրի 1260 թ. արձանագրության մեջ հիշված «Վահրամ շահ» անունը ոմանց առիթ է փվել ապարանքի կառուցումը վերագրելու պարսկական ինքնությունն անհայտ այս իշխանին (Տե՛ս Նայկունի, Մաղավուզ, «Մեղու Նայասպանի», 1885, N 67, Բաֆֆի, ԵՃ, հր. 9, էջ 426):

<sup>189</sup> Դ. Ալիշան, Սիսական, էջ 146:

<sup>190</sup> Մ. Կաղանկարուացի, էջ 157, 354, Կ. Գանձակեցի, էջ 359, Մ. Գոշ, էջ 387 և այլն (ուշ շրջանի աղբյուրներն ու վավերագրերը բազմաթիվ են):


<sup>191</sup> Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 87, П. Арутюнян, Освободительное движение армянского народа, с. 208.

<sup>192</sup> Армяно-русские отношения, т. IV, с. 250.


<sup>193</sup> Մեր նախորդ հրապարակումներում ապարանքը թվագրել ենք 1767-1783 թվականների միջակայքով: Ապարանքը Մելիք-Աղամին վերագրելու պարճառը, թերևս, նրա կարգում և մինչև այժմ էլ փեղաբնիկների հիշողության մեջ ավանդաբար անմոռաց մնացած հայրենանվեր մեծագործություններն են, որոնք և առիթ են փվել գավառում պահպանված, դարաշրջանի կարևոր պարսկական հուշարձանները նրա անվան հետ կապելուն, մասնավոր՝ որ, բնականաբար, ապարանքը հեղազայում ծառայել է նաև նրան:

<sup>194</sup> Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 224, Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 426:



<sup>195</sup> Армяно-русские отношения, т. II, ч. II, с.87.



22. ՔԱՂԱՔԱՆՏԵՂԻ ԱՊԱՐԱՆԻ ԶԱԲԱԳՐՈՒՄԱՆ



23. ՔԱՂԱՔԱՏԵՆԻ ԱՊԱՐԱՆԸ. Չափագրություն



24. ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԱԴԱՐԱՆՔ. Վերակազմություն

տերի վերոհիշյալ հերոսներ Մելիք-Եզանի, Արախան Սպարապետի, Մելիք-Թամրազի և այլոց ժամանակակից ու ոչ պակաս նշանավոր զինակից «Չարապետու երկրի» Մելիք-Եսայու (աղբյուրներում նաև՝ «Եսայի ուզբաշի») օրոք (մահ. 1728 թ.)<sup>196</sup>, որպես ազգային անկախության պայքարում համախոհ Ջրաբերդ-Գյուլիստան միացյալ զավառի ու պաշտպանական համակարգի կարևոր ռազմավարական հենակետ՝ կապված այդ պայքարի մյուս օջախների՝ Ջրաբերդի, Գյուլիստան բերդի, Երիցմանկանց ու Եղիշե առաքյալի վանք-ամրոցների, Հոռեկավանի ապարանք-ամրոցի և այլ աղնախ-ամրությունների հետ:

Իսկ դարակեսից հետո ապարանքը Մելիք-Ադամի նապոց-դոյակներից մեկն էր: Նախկանշական է, որ 1783 թ. հուլիսի 5-ին, նրա մահվան առթիվ այսպետև հավաքված հայ մելիքներն ու հոգևորականները Ռուսաց արքունիքին ուղղված հերթական նամակն են գրել, ծրարելով նաև հանգուցյալ մելիքի վերջին պարգամը. «Մի թողեք, որ այս վայրերի տեր հայ ժողովուրդը հույսը կորցնի...»<sup>197</sup>:

Ապարանքը կառուցված է ժայռոտ լանջերով ձորակի լայնքով դրված ու կիսակլոր բուրգեր ունեցող բարձր (4-8 մ) հենապարնեշով սրեղծված արհեստական դարավանդի վրա, (հարակազմում արաքուսպ՝ 23,3 x 36,5 մ), ինչի շնորհիվ շրջակայքի նկատմամբ իշխող դիրք ունի և պաշտպանված է բոլոր կողմերից. համենապարբար մաքսի հյուսիս-արևելյան ուղղությամբ աննկատ է մնում մոտ 10 մ հեռավորությամբ կառուցված պարսպի շնորհիվ, իսկ բերդավանի գրեթե բոլոր կետերից տեսանելի է միայն ձորահայաց բարձր ճակարկը:

Նամակառույցի հիմնական հորինվածքը սրեղծված է 18-րդ դարին վերագրվող փաստ գրեթե միատեսակ սենյակներով ու դրանցով կազմված ներքին բակով (9,0 x 17,0 մ): Սենյակներից արևելյան չորսը միաշափ են (ներքուսպ՝ 4,0 x 7,0 մ), հաված լանջին և ազատ լայնական ճակարկներում մեկական մուտք ու լայն պատուհան ունեն բակից (հյուսիսայինի պատուհանը նեղլիկ է ու բացվում է դեպի դուրս): Ներսում, բարձրության կեսի չափով, ծածկի մնացորդներ և հող է լցվել, իսկ պատերը պահպանվել են մինչև ծածկին անցնող սահմանը և ունեն հարթածածկ որմնախորշեր, եզրային երկու սենյակները՝ նաև բուխարիներ: Այս սենյակների դիմաց, արևմտյան դարավանդեզրին կան երկայնական պատերով բակ ուղղված ևս չորս միաշառք սենյակներ, որոնցից պահպանվել է միայն բակահայաց ընդհանուր պատը՝ մուտքերով, որմնախորշեր-

րով ու լայնական պատերի մնացորդներով, իսկ ձորահայաց ճակարամասը փլվել է դարավանդի բրգավոր հենապարնեշի հետ: Մրանցից միջին երկուսը մի չափի են (4,05 x 5,1 մ), եզրայինները՝ մի (4,05 x 7,05 մ), որոնք նույնպես զույգ խորշերով բուխարիներ ունեն լայնական եզրապատերում: Վերջիններիս կարճ կողմով կից երկու՝ դարձյալ միաշափ սենյակներով (3,9 x 5,5 մ) ընդհանրաճում է ներքին բակը, որի հարավային և հյուսիսային կողմերում առաջացած միջանցքածն նախամուտքերը ավարվում են ապարանքի արտաքին դարպասներով: Պահպանվել են այս նախամուտքերի երկրորդ հարկի կամ վերդարպասյա աշտարակների պատերի ստորին մասերը, ընդ որում, դրանցից հյուսիսայինը լայն պատուհան ունի կամարակապ դարպասից վեր, իսկ հարավայինում նկատելի են որմնախորշերի հետքեր:

Նախամուտքերն ու բոլոր սենյակները եղել են փայտածածկ. գերանների հենախորշերը դեռևս մնում են նախամուտքերի երկայնական, իսկ սենյակների՝ լայնական պատերում: Ուշագրավ է, որ սենյակների առասպաղը ներքուստ շեշտելու և լանջավոր փանիքներ ստանալու նպատակով ծածկվել են ոչ թե ավելի հեշտ իրականացվող լայնական գերաններով, այլ՝ երկայնական, որոնք երկուսն են եղել ու տեղադրվել են գուգահեռ պատերից փոքր-ինչ բարձր:

Հորինվածքային միասնականությամբ հանդերձ, համակառույցի այս հարվածում նախամուտքերի արևմտակողմյան երկու և ձորահայաց չորս սենյակները ներքին հարդարանքով ավելի վայելուչ են ու հանդիսավոր, քան լանջամերձ չորսը. պատերը հագեցած են համաչափ դասավորված ու լայն որմնախորշերով և, ըստ ամենայնի, նաև լայն պատուհաններ են ունեցել ձորահայաց ճակարի ողջ երկայնքով: Նաշվի առնելով գերանաշեն ծածկերի կիրառությունն այսպետև, ինչպես նաև դրանց ակնհայտ հարազատությունը գեղջկական բնակարանների հետ, կարելի է ենթադրել, որ վերդարպասյա աշտարակները բակից ունեցել են փայտաշեն սանդուղքներ, իսկ դարավանդեզրի սենյակները՝ բարձակային, գերանակապ ու սյունազարդ պատշգամբ՝ ձորահայաց ճակարում:

Ապարանքի 17-րդ դարի նախնական հորինվածքից մնացած շինությունների խումբը ներկայացվածի շարունակությունն է կազմում հարավից և հարակազմային անկանոնությամբ ու շինվածքային անհամապատասխանությամբ առանձնանում է<sup>198</sup>: Այս խումբը բաղկացած է կրկնախորք նախասենյակից և դրան կից երկու փոքր, քառակուսի հիմքով ու նույնաչափ գեպնահարկով խցերից (2,1 x 2,1 մ), գրեթե քառակուսի հարակազմով երկու սենյակից (5,8 x 6,2 մ և 5,0 x 6,0 մ) և խորշածն բաժանմունքով դահլիճից

<sup>196</sup> Մ. Բարխուդարեանց, նշվ. աշխ., էջ 430, 442, Լեռ, հր. 3, գիրք Բ, էջ 169, Армяно-русские отношения, т. II, ч. I, с. 383, 385, т. II, ч. II, Историческое введение, с. LXI, с. 63, 187-188, 251, և: (Այս Եսայուն չափք է շփոթել ոչ նույն աղբյուրներում հաճախակի հիշվող գյուլիստանցի Եսայի յուզբաշու հետ, որը Արախան Սպարապետի եղբայրն էր, ոչ էլ Գիզակի Մելիք-Եզանյան Մելիք-Եսայու հետ, որն ապրել ու գործել է ավելի ուշ):

<sup>197</sup> Բ. Ուլուբաբյան, Ոսկե շղթա, էջ, 304:

<sup>198</sup> Այս շրջանին պետք է վերագրել նաև ապարանքի արևելյան մուտքի դիմաց պահպանված ձիանոց-ախոռի երկար շենքը (4,1 x 23,9 մ)՝ փաստով կամարակապ խորշ-մուտքներով, կից խցով և հարակից սենյակով:



*XI. ՔԱՂԱՔԱՏԵՂ. Մելիք-Իսրայելյանների ապարանքի արմ ճակատը և հս դարպասը՝ բակից*

(3,7 x 7,45 մ): Մրանք մուտքերով կապված են բակի արևելյան անկյունամասից մինչև արտաքին մուտքը ձգվող միջանցքին և պարփակված են ժայռազանգվածի եզրագծին հարմարեցված խուլ պարսպապատերով: Դարելով նախասենյակի զոցվող թաղերի մնացորդներից՝ այն ևս հիմքում քառակուսի է եղել, իսկ նույնափայ ծածկը պահպանված գույգ խցերի գեպնահարկի ժայռափոր գաղափրուղու կամարակապ մուտքը բացվում է ձորակի հատակի մոտ, բուրգերից մեկի կողքով: Մյուս երկու սենյակները, որոնք ըստ պահպանված խուլ պատերի հավանաբար երդիկավոր ծածկեր են ունեցել, հիշեցնում են մելիքական ապարանքների գույգ գլխապները, սակայն չունեն դրանց վայելչությունն ու կառուցման խնամքը:

Այսպեղ առավել ուշագրավը դարավանդեզրի հարավային բուրգին կից խորշաձև բաժանմունքով թաղածածկ դահլիճն է՝ ճակարկապարի երեք լայն (1 մ) պապուհաններով, որոնցից երկուսի դիմաց նույնաչափ կամարակապ խորշեր կան, իսկ երրորդի՝ եզրայինի դիմաց դահլիճի մուտքն է: Պահպանվել են խորշաձև մասի թաղի մնացորդները և պապուհանների միջնապատերը՝ մինչև կամարավարպների հիմքը, իսկ երկայնական պարի վերնամասի առաջացող զանգվածեղությունը հուշում է, որ բուն դահլիճի ծածկը ևս թաղակապ է եղել:

Նարկանշական է, որ ձորահայաց սենյակաշարից պահպանվել է միայն այս դահլիճի ճակարկապար: Եվ սա՝ այն պարճառով, որ 17-րդ դարին պարկանող դահլիճի ստորին հենապարը մյուսներից ցածր է և 18-րդ դարում վերակառուցվելիս հավելված երկրորդ հենապարսպի շնորհիվ առավել կայունություն է սպացել:

Տին ու նոր կառուցամասերի դիտարկումից պարզվում է նաև, որ հնավանդ ապարանքից մնացած շինություններին 18-րդ դարի սկզբում ավելացված ներփակ բակով գերանածածկ սենյակները համակառույցի բնակելի մասն են կազմել, իսկ մելիքական ընդունարան-դահլիճը մնացել է հինը՝ խորշաձև մատով (գահախորշով) թաղածածկ դահլիճը, հանդիսավոր՝ լայն ու կամարավարպ բացվածքներով ուղղված դեպի բերդավան ու Թարթառի գեղապետիլ ձորը, դեպի այդ


ձորի հեռավոր անսրառալանջերին բազմաձև Երիցմանկանց վանքը:

Ժայռոտ ու դժվարամաքցելի ձորալանջին կառուցված ապարանքի ճարտարապետության մեջ պաշտպանական խնդիրները առաջնահերթ կարևորություն են սպացել: Նամենապարբար ոչ մեծ ներքին փարածքի ողջ պարագծով կառուցված սենյակները լրացուցիչ ամրություն են հաղորդում բարձր պարսպապատերին, իսկ վերդարպայա աշտարակ-պահակապներով բակի հետ կապված պարսպակից փանիքները նախապեսված են պաշտպանական գործողություններ վարելու համար: Ապարանքի ընդգծված ամրոցակերպությունը և, հարկապես, բերդերին բնորոշ քողարկված գեպնուղու առկայությունը վկայում են, որ այն իրոք «Քաղաքապետի բերդն» է, այլ խոսքով՝ բերդավանի միջնաբերդ-դղյակը:

Ապարանքը յուրահատուկ է նաև իր կառուցելակերպով: Մեծ թեքությամբ լանջին բրգավոր հենապարնեշի և դրանով սպեղծված դարավանդի կայունությունն ապահովելու համար ձորեզրի սենյակների լայնական պատերը շարունակվում են դարավանդի ողջ խորությամբ, իսկ որմնահեցի դեր կատարող բուրգերն ու պարնեշը դեպի ներս թեքություն ունեն: Ապարանքի պատերը դրված են ժայռային հիմքի վրա և շարված են անկանոն ու մանր փեղակալան որձաքարից, առաջ կրաշաղախի կիրառությամբ: Տին մասի պատերի հասությունը 0,9 մ է, իսկ մյուսներինը՝ 0,8 մ: Բակի պարագծով, որմնախորշերի ու մուտքերի վերին եզրի բարձրությամբ պատերում կան փայտե գոպիներ (փայտե բարավորահեծաններ են ունեցել նոր մասի որմնախորշերը):

Քաղաքապետի դղյակ-ապարանքն իր երկու շինարարական շերտերով, յուրահատուկ հարակազմային ու ծավալապարածական հորինվածքներով և կառուցելակերպով դարաշրջանին խիստ բնորոշ պալապական ու ամրաշինական կառույցների համադրությամբ սպեղծված ու մեզ հասած եզակի հուշարձան է, և, էապես փարբերվելով ամբողջովին քարաշեն մելիքական փոսերից, կարևոր դեր ունի ուշ միջնադարյան նույնաբնույթ համակառույցների ուսումնասիրության գործում:

## ՋՐԱԲԵՐՊ



Ամրոցը գրնվում է ԼՂՏ Մարտակերպի շրջանում, Թարթառ գետի և նրա Թրդի վրակի ձախ ափին, գառիթափ լանջերով հսկայածավալ ժայռազանգվածի վրա՝ շրջապարված անբառու լեռնակույտերով: Նյուսիսից հարավ ձգված ամրոցի փարածքը գետերի շրջանցումից առաջացած թերակղզու փեսք ունի և պաշտպանված է ինչպես դրանց ջրառար ու արագահոս պարունեշով, այնպես էլ՝ գետեզերքից գրեթե ուղղաձիգ բարձրացող ժայռերով:

Գրնվելով համանուն գավառի անբառախիս խորքերում և ունենալով խիստ նպաստավոր բնական պայմաններ՝ ամրոցը վաղ միջնադարից ի վեր կառուցապարվել ու դարձել է Արցախ-Խաչեն-Ղարաբաղի անառիկ ու նշանակալի պաշտպանական հենակետերից մեկը: Պարսկական աղբյուրներում և այլազան երկերում ամրոցը հիշվում է Չարաբերդ, Ճառաբերդ, Չրաբերդ, Ջերմուկի բերդ և Ջրաբերդ անուններով<sup>199</sup>, իսկ մելիքության շրջանի վկայագրերում՝ առավելապես հայտնի է հնագույն ու նախնական Չարաբերդ (նաև՝ Չարապերթ, Ջարապերթ, Ջարիպերթ) անվանաձևով<sup>200</sup>, ինչը գործածվում էր նաև որպես գավառանուն և մելիքության անվանում:

Այսպեղ էր գրնվում 18-րդ դարի սկզբներին մեծ համբավ ձեռք բերած արցախյան ամենագորեղ սղնախներից մեկի՝ Չարաբերդ-Ջրաբերդի գլխավոր ռազմավարական հենակետը, ո-

րը հեղազայում էլ շարունակում էր մնալ գավառի նշանավոր մելիքների հիմնական ամրոցը<sup>201</sup>:

Անառիկ ու ծառապար փեղանքի պարճառով ամրոցի ավերակները երբևէ չեն նկարագրվել, սակայն իր պաշտպանական կառույցների պահպանվածությամբ ամրոցը բացառիկ արժեք է և կարիք ունի հանգամանալից ուսումնասիրության<sup>202</sup> (ինչը դուրս է մեր ներկա խնդրի սահմաններից):

Ամրոցը պարփակված է երբեմն մինչև ձորն իջնող բրգավոր պարիսպներով, որոնց անկանոն հարակաձևը կրկնում է փարածքը եզերող ժայռերի ուրվագիծը: Բացի պարիսպներից ու բազմաթիվ այլ շինությունների ավերակներից, պահպանվել են նաև գետն իջնող թաղածածկ գետնուղիներն ու հարավ-արևմտյան գետամերձ ստորոտին հարող կամարակապ դարպասը:


Միջնաբերդ-սպարանքը կառուցված է ամրոցի հյուսիսային վերջավորության ամենաբարձր ժայռազանգվածի վրա և իր խիստ անկանոն հարակաձևով նույնպես հարմարեցված է փեղանքի սուղ պայմաններին: Այսպեղ չնայած նկարվում են հնավանդ կառուցամասեր, այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ սպարանքը ամրոցի երկարափս պարսպության վերջին՝ 17-18-րդ դարերի մելիքության շրջանի արդյունք է: Ջրաբերդն այս դարերում համանուն մելիքության գլխավոր նստոց-կենտրոնն էր, դարաշրջանում ծավալված հայ ազգային-ազատագրական պայքարի ամենակարևոր օջախներից մեկը: Ինչպես փեսանք, այն Քաղաքափեղի բերդավանի հեղ մի ամբողջություն էր և, ըստ ամենայնի, նախքան այսփեղի սպարանքի կառուցումը, մե-

<sup>199</sup> Մ. Կաղանկարացի, էջ 157, 354, Կ. Գանձակեցի, էջ 359, Մ. Գոշ, էջ 387բ, փեն նաև Մ. Ջալալեանց, նշվ. աշխ., մասն Բ, էջ 226, Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 239, Բաֆֆի, հր. 9, էջ 418, Լեո, հր. 8, էջ 117, 121, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 120, Մ. Յովհաննեսեան, Նայասարանի բերդերը, էջ 441, "СМОМПК", вып. XIII, с. 51:

<sup>200</sup> Տեն «Նայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարում» հիշյալ հարորաշարի փաստաթղթերը:

<sup>201</sup> Վկայությունները բազմաթիվ են Լեոյի, Աջ. Նովհաննիսյանի, Պ. Նարությունյանի, Ա. Գ. Արրահամյանի, Բ. Ա. Ուլուբաբյանի հիշյալ աշխատություններում: Տեն նաև Զ. Արզումանյան, «Մեծ» և «Փոքր» սղնախների հարցի շուրջ, էջ 91:

<sup>202</sup> Ամրոցը չափագրել են Բ. Արզարյանի հեղ, 1985 թ.:



25. ՋՐԱԲԵՐԴԻ ԱՊԱՐԱՆ. Հափազություն

լիքության կազմավորման ու զորացման շրջանում սկսած 17-րդ դարի սկզբից, գավառի մելիքները իրենց առաջին նստավայրն են դարձրել Ջրաբերդ ամրոցը՝ նրա բարձունքին պահպանված հնավանդ ավերակները վերակառուցելով և վերածելով ամրացված բնակարանի՝ կենցաղի պարզագույն հարմարություններով և սենյակների նվազագույն կազմով:


Ապարանքը բաղկացած է հյուսիսից հարավ ձգված միջանցքաձև անցումի արևելյան և արևմտյան կողմերում կառուցված պարսպակից սենյակաշարքերից, որոնցից արևելյանի հարակիր փոքր-ինչ բարձր է արևմտյանից: Միջանցքաձև անցումը հյուսիսից և հարավից սահմանափակված է ժայռակույրերով և միայն հարավակողմի ժայռարանքով է միանում ամրոցի մյուս մասերին:

Արևմտյան սենյակաշարում երկայնական պատերով կից երեք սենյակներ են, որոնցից երկուսը գրեթե միաջափ են (ներքուստ՝ 3,25 x 4,5 մ), խորքի պատում ունեն պահարանախորշեր ու բուխարիներ և մեկական մուրք՝ միջանցքից, իսկ համեմատաբար մեծ երրորդ սենյակի (ներքուստ՝ 3,65 x 5,2 մ) մուրքի դիմաց խոշորաչափ բուխարին է, պարեգրին՝ Թրդի գեպի հովտին ու հեռվում երևացող Երիցմանկանց վանքին նայող միակ պատուհանը: Մրանց հարավ-արևմտյան անկյունից սկսվող կրկնապարհալը բուխարիավոր բուրգով և հանդիպակաց ժայռով կազմում է

ապարանքի մուրքը, իսկ արտաքին պարհալը դեպի հարավ շարունակվում ու կորագծով միանում է հաջորդ ժայռին՝ առաջացնելով դժվարանցանելի, նեղ ու ոլորուն կրկնամուրք-միջանցք:

Արևելյան շարքում սենյակները արտաքին պարհակներին են հպվում երկայնական կողմով, շարքի միջին մասում առաջացնելով խիստ անկանոն հարակազմով բաժանմունքներ, որոնց նախնական ձևն ու նշանակությունը վաղ պահպանվածության պատճառով դժվար է որոշել: Մրանց հարավային կողմում բուխարու և խորշերի պահպանված մնացորդներով ու ձորահայաց նեղլիկ պատուհանով մի երկարավուն սենյակ է (ներքուստ՝ 3,3 x 7,35 մ), իսկ հյուսիսային շարունակությունը բաղկացած է միջանկյալ երեսբաց սրահով կապված երկու գրեթե միաջափ սենյակներից (հարավայինը՝ 3,0 x 4,45 մ, հյուսիսայինը՝ 2,9 x 4,55 մ), որոնց բակահայաց ճակատից 1,5-2,0 մ հեռավորությամբ ձգվում է հարվածաբար հենապատերով ամրացված ժայռազանգվածը: Այս շարքի հարավային եզրում, ժայռակից պարսպի բրգաձև ելուստից քիչ հեռու պահպանվել է խորշաձև մասով ու դեպի դուրս ուղղված երկու պատուհանով մի փոքրիկ սենյակ, որի հարակիր մյուսներից բարձր է և պարհակների որոշ հարվածների հետ հավանաբար ավելի վաղ ծագում ունի:

Սենյակների պատերը պահպանվել են մինչև 2 մ բարձրությամբ և որոշ տեղերում ունեն




*XII. ԶՐԱԲԵՐԴ. Մեխք-Իսրայելյանների ամրոցի դարպասը և հր-արմ հայրվածը*

50-60 սմ, իսկ հիմնականում՝ 80-90 սմ հասարակություն. արտաքին պարիսպներն ավելի հասար են՝ 1,2 մ: Ըստ պահպանված հետքերի՝ սենյակների ծածկը փայտաշեն է եղել՝ հարթ, հողածածկ փանիքով:

Ապարանքն իր անկանոն հարակազմով ու անպաճույճ նկարագրով հանդերձ, Գյուլիստանի

միջնաբերդ-ապարանքի հետ ներկայացնում է ամրացված մեխիբական փան մի ուշագրավ փիպ և այդ փիպի սակավաթիվների մեջ արժեքավորվում է իր պահպանվածությամբ և դարաշրջանին բնորոշ պարզագույն հորինվածքաձևերով:





## ԻՅՈՒԼԱԹԱՆ

Ապարանքի մնացորդները գտնվում են ԼՂՏ Մարտակերպի շրջանի Գյուլաթաղ գյուղում, ժայռոտ ու լեռկ լանջերով բլրի գագաթին և հատվածաբար պահպանվել են մեր դարի կեսերին կառուցված դպրոցական շենքի պատերի մեջ<sup>203</sup>: Անցյալ դարավերջին ավերակները ավելի բարվոք վիճակում փեսել ու նկարագրել են Բաֆֆին և Մ. Բարխուդարյանցը, վերջինս արագրել է նաև ապարանքի շինարարական արձանագրությունը, որը գտնվել է «դրան հիսսիսային սեմի վերայ»:

«ԱՅՍ Է ՄԵԼԻՔ ԱՌՈՒՇԱՆ ԹՎ ՌՄԽԸ» (1799)<sup>204</sup>:

Նույն հեղինակները ապարանքը վերագրում են Գյուլաթաղի Մելիք-Ալահվերդուն, չնայած մեկ այլ առիթով Մ. Բարխուդարյանցը վկայում է նաև, որ ապարանքը կառուցող Մելիք-Առուշանը գյուլաթաղցի Ալահվերդի յուզբաշու որդին էր, իսկ սա՝ Ջրաբերդի դրածո մելիքը և գավառի փոհմական իշխող Մելիք-Մեծումի (Մելիք-Աղամի որդին և հաջորդը) յուզբաշի-հարյուրապետը՝ վերջինիս բացակայության ժամանակ մելիք նշանակված Շուշվա Իբրահիմ խանի կողմից<sup>205</sup>:

Ամեն պարագայում, այնքան աննշան է եղել այս մելիքների դերը Արցախ-Ղարաբաղի վերջին շրջանի պատմության մեջ, որ պահպանված բազմաթիվ փաստաթղթերում գեթ մի վկայություն չկա նրանց մասին: Անբարեհամբավ այս

անուններից մնացած միակ հիշարակը նրանց ապարանք-ամրոցի հիմնամնացորդներն են՝ չպահպանված արձանագրությամբ:

Իսկ ապարանքը, ինչպես վկայում են պահպանված մասերն ու չպահպանված մասերի հիշյալ նկարագրությունները, բրգավոր պարիսպներով շրջափակված ոչ մեծ կառույց է եղել՝ երկշար-պարսպակից սենյակներով: Կառուցված է բլրագագաթի դարավանդաձև հարթության վրա, որի եզրերով էլ դրված են հարակազմում արևելքից-արևմուտք ձգված ուղղանկյուն կազմող (արպաբուսպ՝ 19,15 x 28,15 մ) պարսպապատերը: Սրանց 1-2 մ բարձրությամբ հատվածները պահպանվել են նույն պարագծով ավելացված դպրոցի շենքի պատերի ստորին մասերում, իսկ վերակառուցումից զերծ մնացած անկյունների շեշտված ու բոլորաձև-սնամեջ բուրգերից համեմատաբար ամբողջական վիճակում (մինչև 3 մ - բարձրությամբ) մեզ են հասել հարավային կողմի երկուսը, որոնցից արևմտյանը՝ ներքին բոլորաձևությունը ծածկող կիսավեր գմբեթաթաղով: Նյուսիսային կողմում բուրգերի հիմնաքարերն են մնացել, իսկ պարսպի արևմտյան կեսը քանդվել է՝ դպրոցի համար մուտք բացելու նպատակով: Նենց այսպեղ՝ միակ մապչելի կողմում է եղել ապարանքի դարպասը, քանզի մյուս կողմերում պահպանված պարսպապատերը խուլ են:

Ապարանքի ներքին հորինվածքից հեքքեր չեն պահպանվել: Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ այն բաղկացած է եղել հինգ սենյակից, որոնցից իր այցելության ժամանակ երկուսը կանգուն են եղել, երեքը՝ կիսավեր<sup>206</sup>: Իսկ Բաֆֆու վկայությամբ՝ ողջ մնացած մի քանի թաղածածկ (իր խոսքով՝ «կամարակերպ») սենյակներում անցյալ դա-

<sup>203</sup> Նուշարձանը չափագրել ենք 1984 թ.:

<sup>204</sup> Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 215 (փեն նաև՝ «Դիվան հայ վիճագրության», 5, էջ 95), Բաֆֆի, ԵԺ, հր. 9, էջ 283-284:

<sup>205</sup> Մ. Բարխուդարյանց, Պարմություն Աղուանից, հր. Բ, էջ 120 (Այս Մելիք-Ալահվերդուն չպետք է շփոթել ոչ իսաչեն գավառի Նասան-Ջալալյան նշանավոր փոհմի Մելիք-Ալահվերդու հետ, ոչ էլ՝ նույն իսաչենի Խնձրիսպան գյուղում Իբրահիմ խանի մյուս դրածո Մելիք-Միրզախանյան Մելիք-Ալահվերդու հետ):



<sup>206</sup> Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 215:

րավերջին բնակվում էին Մելիք-Ալահվերդյան փոհմի ներկայացուցիչները<sup>207</sup>:

Այս փեղեկությունները համադրելով հուշարձանի առկա հափսկածների հետ և ելնելով մելիքական ապարանքների հորինվածքային ընդհանրություններից՝ կարելի է ենթադրել, որ այսփեղ ևս սենյակները հաված են եղել պարսպապատերին և երկու շարքով (մեկում երկու, մյուսում երեք սենյակով) ընդգրկել են ներքին բակը: Ընդ որում, ապարանքի հափսկածների համաչափությունից ակնհայտ է, որ 2-3 սենյակները կարող էին զբաղեցնել միայն բակի արևելյան և արևմտյան կարճ պարըսպակողմերը, այն էլ միջանկյալ նախասրահի կամ երեսբաց սրահի առկայությամբ, մանավանդ որ, ինչպես փեսանք, նախորդ բոլոր ապարանքներում սենյակների մուտքերը բացառապես այդպիսի սրահներից են: Անկասկած, այս սենյակները ընդհանուր առմամբ չեն փարբերվել ժամանակակից մյուս ապարանքների նման շինություններից և պատերում ունեցել են պահարանախորշեր ու բովխարիներ, իսկ պատուհանները եղել են բակահայաց ճակատում:


Չնայած վար պահպանվածությանը՝ նկատելի է, որ այս ապարանքը ևս շեշտված պաշտպանական բնույթ է ունեցել. պատերը 1,2 մ հաստություն ունեն, իսկ փեղանքի մարչելիության պարճառով, ողջ կառույցի չափերի համեմատ բուրգերը խոշոր են ու ընդգծված (արտաքին փրամագիծը՝ 4,8 մ): (Պատահական չէ, որ ապարանքը առավելապես հայտնի է որպես Մելիք-Ալահվերդյանների ամրոց): Նարկանշական է նաև, որ գյուղամիջի բարձունքին կառուցված ապարանքն իր ընդհանուր ծավալով ազատ է կանգնած ամրոցների միջնաբերդ-ապարանքների նման, ինչի հետևանքով պարսպակից սենյակաշարքերից և ոչ մեկը լանջամերձ-կիսագեղնափոր չի եղել՝ ինչպես նույն շրջանի գրեթե բոլոր մելիքական փան համակառույցներում է:

Գյուլաթաղի ապարանքը 18-րդ դարի վերջի ճարտարապետական մրաճողությամբ սրել-



26. ԳՅՈՒԼԱԹԱՂԻ ԱՊԱՐԱՆՔ.  
Չափագրություն-վերակազմություն

ծված ևս մեկ մելիքական բնակարան-ամրոցի օրինակ է, և իր խիստ խաթարված վիճակով հանդերձ, լրացնում-հարստացնում է այդ բնագավառի պատմությունը:




<sup>207</sup> Բաֆֆի, նշվ աշխ., էջ 283-284:



*XIII. ԳՅՈՒԼԱԹՄՂ. Մելիք-Ալավերդյանների ապարանքը հր-արմ-ից  
ԱՎԵՏԱՐԱՆՈՅ. Մելիք-Շահնազարյանների բերդավանի դարպասները վանքի և ապարանքների մոտ*

## ԱՎԵՏԱՐԱՆՈՑ



Վարանդա զավառի մելիքանիսպ Ավեարանոց բերդավանի կանգուն ու կիսավեր շինությունները գտնվում են ԼՂՏ Ասկերանի շրջանի համանուն գյուղում: Այսպեղ, հարավ-արևմտյան կողմում, գյուղեզրի ժայռաբարձունքին Կուսանաց անապատ անունով հայտնի ուշ միջնադարյան վանք-ամրոցն է, որի հյուսիս-արևելյան անկյունաքուրզից կամարակապ դարպասներով սկսվող կիսավեր բերդապարիսպը ձգվում է լանջն ի վեր, դեպի բլրասարի հյուսիսային գագաթը, իսկ սրանցից արևելք, գյուղի կենտրոնական մասում կանգուն է Մք. Ասրվածածին եկեղեցին: Անապատի ու եկեղեցու միջև ժամանակին երեք մելիքական ապա-րանքներից բաղկացած պալատական համալիր է եղել, որոնցից միայն մեկն է հասրվածաբար մեզ հասել և գտնվում է բերդապարսպի դարպասներից մի փոքր արևելք՝ դարավանդի վրա<sup>208</sup>:

Ավեարանոց (վերջին շրջանում՝ նաև Չանախչի) գյուղը Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է, որի անունը ավանդաբար կապվում է երկրամասում քրիստոնեության փարածման և վաղ միջնադարյան Աղվանք-Արցախի թագավորների անվան հետ<sup>209</sup>: Սակայն գյուղը առավելապես հայտնի է 17-18-րդ դարերի իր անհամեմատ հարուստ պատմությամբ ու ճարտարապետական հուշարձաններով:

1603 թ. Շահ-Աբբաս Ա-ի հրովարտվող Վարանդայի նոր մելիքության հիմնադիր է դարձել Ծար-Վերին Խաչենի Դուխյան իշխանապոհի ճյուղերից մեկի՝ Սողբի Մելիք-Շահնագար Ա-ի

եղբայր Միրզա-բեկը, որին ժառանգաբար հաջորդած Բադր-խանը, Մելիք-Բադի Ա-ը, Մելիք-Շահնագար Ա-ը, Մելիք-Բադի Բ-ը և սրա եղբայր Մելիք-Նուսեյն Ա-ը աչքի են ընկել հայրենապաշտպան ու մշակութանապատ գործունեությամբ<sup>210</sup> և, բազմաթիվ ու փարաբնույթ շինությունների հետ մեկտեղ, կառուցել նաև իրենց բնակարան-ապարանքները բերդավանում<sup>211</sup>:

18-րդ դարի կեսերին, 1747 թ. Նադիր Շահի սպանությունից հետո առաջացած անիշխանության ու քաղաքական անկայունության պայմաններում, Մելիք-Նուսեյն Ա-ի կրտսեր որդի Շահնագարը, սպանելով Նադիրի կողմից մելիք հաստատված և 1736 թ. հորը հաջորդած եղբորը՝ Մելիք-Նովսեփին, ապօրինաբար փրանում է Վարանդայի մելիքական աթոռին (Մելիք-Շահնագար Բ, մոտ 1747-1792 թթ.): Երկրամասի հայիշխանության համար աննախադեպ այս ոճրագործությամբ Խամսայի մելիքների միաբանությունը խախտած ինքնակոչ մելիքի դեմ պարթաբաշակ են դուրս գալիս Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի և Դիզակի մելիքները, սակայն Մելիք-Շահնագարը նախ 1750 թ. պարսպում ու անառիկ բերդավանի է վերածում Ավեարանոցը<sup>212</sup>, ապա՝ դաշնակցելով Արցախ-Ղարաբաղի մերձակա փափարակներում հայտնված թափառական ցեղապետ Փանահի հետ, նրան փրամադրում Վարանդայի հնագույն ու անառիկ Քարագուլի-Շոշի

<sup>208</sup> Հուշարձանի չափագրությունը և նկարագրությունը՝ ըստ 1982 թ. վիճակի:

<sup>209</sup> «Տարագ» 1893, N 7, էջ 109, Ս. Զալալեանց, նշվ. աշխ., մասն Բ, էջ 248, Մ. Բարխուդարեանց, Պարմոթիս Ադուանից, հր. Ա, էջ 193, նույնի՝ Արցախ, էջ 98, Բ. Ուրուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 140, 151-152 և այլն:

<sup>210</sup> Ս. Զալալեանց, նշվ. աշխ., էջ 247, Լեռ. Հայոց պատմություն, հր. 3, գիրք Բ, էջ 260, Բ. Ուրուբաբյան Արցախի պատմությունը, էջ 150-151:

<sup>211</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 94, 96-97, Ե. Լալայան, «Վարանդա», Երկեր հր. 2, էջ 30, 37, «Դիվան հայ վիճագրության», 5, էջ 147-152:

<sup>212</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 96, «Դիվան հայ վիճագրության», 5, էջ 151:

բերողը, որը և վերակառուցվում-լրացվում է 1752-1754 թ.<sup>213</sup>:

Մելիք-Շահնազար Բ-ը իր ազգադավ գործունեության վախճանից ու մահից վեց տարի առաջ՝ 1786 թ. Ավետարանոցում նաև «ամարաթ»-ապարանք է կառուցել ու ընծայել ապօրինի-թրքածին որդուն՝ «Մէյին-բեկին» (Նուսեյն-բեկ), այդ մասին թողնելով շինարարական արձանագրություն:

Նախքան մասամբ պահպանված այս հուշարձանին անդրադառնալը՝ րեսնենք, թե ըստ ականապեսների՝ ինչպիսին են եղել վերոհիշյալ երկուսը:

**Առաջին ապարանքը**, ուսումնասիրողների հավասարմամբ, գտնվել է գյուղի հարավային կողմում, Կուսանաց անապատի մոտ և կիսավեր վիճակում պահպանվել է մինչև մեր դարի սկզբները: Մ. Բարխուդարյանցն այն համարում է «Մելիք-Բաղու ապարանն» և ավելացնում, որ «գեղնայարկում կայ երեք արցախական, քարուկիր փուն, որք մնում են ցարդ նույնութեամբ»<sup>214</sup>: Ե. Լալայանը ևս հավասարում է «Մելիք-Բաղու ապարանքը բաղկացած է եղել մի քանի դարադամներից (գլխավորներից - Ա.Ղ.), ամբողջովին քարից շինված, (որոնք) դեռևս կանգուն են, և նրանց մեջ բնակվողներ կան»<sup>215</sup>: Փոքր-ինչ ավելի պերճախոս է Սյր. Լիսիցյանը: Նա գրում է. «Ավետարանոցի ամենահին «պալատները» 17-րդ դարից են և պարկանում են մելիք Բաղիին: Պահպանվել են միայն երկու դարադամներ և հստակ երևում են ևս երեքի մնացորդները ընդհանուր թվից՝ ըստ ավանդության՝ երեսունից, որոնք մի շարքով ձգված են եղել հարավից դեպի հյուսիս ուղղությամբ»<sup>216</sup>:

Ուշագրավ է, որ ինչպես երևում է նախորդ հեղինակների բերած անուղղակի այլ տեղեկություններից, նրանք ևս ապարանքի կառուցումը 17-րդ դարին են վերագրում: Այսպես. Մ. Բարխուդարյանցի այն վկայությունը, թե «Մելիք-Բաղի Ա-ը ... հիմնարկում է Աւետարանոց բերողը և ... իր ապարանը հասարակում բերդումն»<sup>217</sup>, վերաբերում է 17-րդ դարին, իսկ Ե. Լալայանի համոզումը, թե «Մելիք-Բաղու ապարանքի մոտ գտնվում է Մելիք-Բաղու ՌՃ (1651) թվին շինած Ս. Աստվածածին եկեղեցին»<sup>218</sup>, դարձյալ նույնն է վկայում, ինչու, ի դեպ, ավելի վաղ համոզված էր Բաֆֆին<sup>219</sup>:

Այսպիսով, ուսումնասիրողները ապարանքը վերագրում են Մելիք-Բաղի Ա-ին և, ըստ այդմ, համարում 17-րդ դարի սկզբի կամ կեսերի կառույց, այն կապելով այդ շրջանում Ավետարանոցում ծավալված եկեղեցաշինական և ամրաշինական բուռն աշխատանքների հետ, սակայն որևէ փաստարկով չեն հիմնավորում իրենց տեսակետը, այլ, ինչպես շատ ուրիշ դեպքերում, հիմնվում են ավանդաբար փոխանցված տեղեկությունների վրա: Իսկ այդ տեղեկությունների առանցքն այսպեղ «Մելիք-Բաղի» անունն է, որը սակայն եզակի չէ Վարանդայի մելիքական փոհում: Նույնանուն այս մելիքներից շատ ավելի մեծ ճանաչում ու համբավ է ունեցել 18-րդ դարի սկզբի փոթորկալից իրադարձությունների կարևոր (ու նաև հակասական) մասնակից-դեմքերից մեկը՝ Մելիք-Բաղի Բ-ը, որի անունը «Բաղի», «Բաղեր» կամ «Բաղրը» բարբառային ձևերով բազմիցս հիշվում է 1724-1726 թթ. պաշտոնական թղթերում՝ այլ նշանավոր գործիչների կողքին<sup>220</sup>:

Այս փարիները, ինչպես հայտնի է, Արցախի և Սյունիքի լեռնային ամրություններում, բերդերում, վանք-ամրոցներում, մելիքանիստ բերդավաններում ու դրանց ապարանք-դղակներում կամ, դարի խոսքով, սղնախներում ծավալված հակաթուրքական ազատամարտերի և ազգային անկախության պայքարի եռուն շրջանն են կազմում և վկայված են հիշյալ բնույթի բազմաթիվ հուշարձաններով: Նայտնի է նաև, որ այդ մարտերում հռչակված սղնախներից մեկն էլ «Վարանդայի սղնախն էր՝ Ավետարանոց կենտրոնով»<sup>221</sup>, իսկ սղնախական զինուժի հրամանատարը, ըստ 1724 թ. մի գեկուցագրի՝ «Մելիք Բաղերը»<sup>222</sup>:

Այսպիսով, ասվածը համադրելով դարաշրջանի ապարանաշինության ընդհանուր պատկերի հետ, առավել հավանական ենք համարում հուշարձանի կառուցման վերագրումը այս մելիքին և, ըստ այդմ, թվագրումը 18-րդ դարի առաջին քառորդով:

Դառնալով ապարանքի շինությունների վերոհիշյալ նկարագրություններին՝ պետք է նշել, որ և՛ Մ. Բարխուդարյանցի «երեք արցախական քարուկիր փունը», և՛ Ե. Լալայանի «ամբողջովին քարից շինված մի քանի դարադամները», և՛ Սյր. Լիսիցյանի «մի շարքով պահպանված երկու դա-

<sup>213</sup> Մանրամասն տես Բաֆֆի, Եժ, հր. 9, էջ 451-454, Լեո, հր. 3, գիրք Բ, էջ 263-267, Բ. Ուլուբարյան, Արցախի պատմությունը, էջ 150-153, «Նայ ժողովրդի պատմություն», հր. 4, էջ 194:

<sup>214</sup> Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 96-97:

<sup>215</sup> Ե. Լալայան, «Վարանդա», էջ 30:

<sup>216</sup> Ս. Լիսիցյան, К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), "Известия кавказского историко-археологического института", т. III, Тифлис, 1925, с. 105.

<sup>217</sup> Մ. Բարխուդարյանց, Պատմություն Արուսից, հր. Բ, էջ 43:

<sup>218</sup> Ե. Լալայան, «Վարանդա», էջ 30:

<sup>219</sup> Բաֆֆի, Եժ, հր. 9, էջ 428:

<sup>220</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Историческое введение, с. XCIV и с. 60, 72, 92, 187, 234, 236, 249-251, 291.

<sup>221</sup> П. Артюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, с. 228.

<sup>222</sup> Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 63. «Շոշում» (Շուշի բերդում) գրված այս փաստաթուղթը տեղեկացնում է. «Մելիք Բաղերը փոքր մարտով բերթ ունի»: Վերջինս, հավանաբար, Ավետարանոցի բերդը չէ, որովհետև այն, ըստ վիճակի, կառուցվել է Մելիք-Շահնազար Բ-ի օրոք, 1750 թ. («Անունս Մելիք Շահնազարին... թուին ՌՃՂԹ էր, որ դալաս շինեցի...»: Տես «Արցախ», էջ 96, «Դիվան», 5, էջ 151), այլ՝ ամրոցի վերածված Կուսանաց անապատը, մասնավոր, որ Արցախի և Սյունիքի հանրահայտ մասնափյալ հուշարձանները հենց այս ժամանակաշրջանին են բնորոշ:

րադամներն ու ևս երեքի մնացորդները» միանշանակորեն վկայում են երբեմնի համակառույցի կազմում առնվազն երկու կամ երեք քարակերպ գլխապների մասին: Որ խոսքը մեզ ծանոթ հորինվածքով գլխապներին է վերաբերում, հասարակում է Սյր. Լիսիցյանը՝ Ավետարանոցի այս և մյուս միևնույն այժմ պահպանված գլխապների օրինակով ներկայացնելով դրանց ընդհանուր բնութագիրը: Նա գրում է. «Բոլոր պահպանված մեղիքական դարադամները (հապակագծում) կրկնում են քառակուսու կանոնավոր ձևը և հաղորդակցվում ցածր դռներով: Յուրաքանչյուր դարադամ նույնպիսի դռնով էլք ունի դեպի բակ: Ներքուստ, պարերում սովորական խորշեր են, որոնցից մեկը լայն խողովակով դուրս է գալիս փանիք: Առաստաղը ներկայացնում է քառակուսի (կազմող) պարերի վրա բարձրացող և վերևում երդիկանցքով ավարտվող խաչաձև (իմա՝ գոցվող -Ա.Ղ.) թաղ. ոչ մի այլուս ոչ Ավետարանոցում, ոչ էլ ուրիշ տեղերում քարե դարադամներում չկա: Թաղը շինված է անկանոն և համեմատաբար ոչ մեծ ձեղքված քարերից, ամուր կրաշաղախով»<sup>223</sup>: Ներդիմակը ծանոթագրում է նաև. «Մելիք Բաղիի գլխավոր դարադամի դռան քարը (բարավորաքարը-Ա.Ղ.) հանել ու շարել են նոր դպրոցական շենքի պարի մեջ և սվաղել»:

Թվում է՝ Ղարաբաղ-Ջանգեզուրի ազգազրույթյանն ու գեղջկական բնակարանին քաջածանոթ Սյր. Լիսիցյանի այս տեղեկությունները կասկած չեն թողնում, որ նա հուշարձանի ավերակներում իրոք տեսել է «պահպանված երկու և հստակ երևացող մնացորդներով ևս երեք», այսինքն՝ հինգ «մի շարքով ձգված» դարադամ-գլխապուն: Սակայն, քանի որ «ևս երեքը ընդհանուր թվից երեսունից» են, իսկ այս «երեսունը», իր իսկ համոզմամբ՝ ավանդույթի երևակայական ուժով սպեղծված ակնհայտ չափազանցություն է<sup>224</sup>, ուստի դժվարանում ենք հասարակագրել, որ գլխապների թիվը պահպանված երկուսից ավելին է եղել: Ինչ վերաբերում է մյուս երեքին, ապա դրանք, ամենայն հավանականությամբ, գույգ գլխապներին երկու կողմից կից պարզ, թաղածածակ դահլիճներ են եղել (որպիսիք կան բոլոր մեզ հայրնի մելիքական քրեներում), մանավանդ որ դրանք, որպես կանոն, երկարությամբ հավասար են գլխապներին և առանց չափագրության դժվար է թեկուզև «հստակ երևացող մնացորդներով» անսխալ պարկերացնել, թե ինչպիսին են եղել իրականում:

Ամեն պարագայում ակնհայտ է, որ Մելիք-Բաղի Բ-ի ապարանքը քարակերպ գլխապներից ու դահլիճներից բաղկացած համակառույց է եղել և եթե փարբերվել է նմանօրինակ մյուսներից, ապա չափազանցության տեղիք փված գլխապներ-

րի քա-նակով կամ սենյակների ընդարձակ կազմով:

Նաշվի առնելով դիտարկված նախորդ հուշարձաններում նկատելի հորինվածքային օրինաչափությունները՝ կարող ենք ասել նաև, որ այստեղ ևս մելիքական փան համակառույցը պարսպապար է եղել, իսկ շինությունները ներքին բակի կողմից ունեցել են կամարակապ ու թաղածածկ նախասրահներ<sup>225</sup>:

**Երկրորդ ապարանքը** նույնպես չի պահպանվել, և հայրնի է, որ այն հիմնավեր էր դեռևս անցյալ դարավերջին: Ըստ հիշարկությունների՝ ապարանքը պարկանել է Մելիք-Նուսեյն Ա-ին և գրնվել գյուղի «արևմտյան կողմում, բերդապարսպի լեռնային մասում»<sup>226</sup>, «ժայռի անմիջապես ափին»<sup>227</sup>: Այսքանն է միայն հայրնի հուշարձանի մասին, նաև այն, որ Մելիք-Նուսեյն Ա-ը հաջորդել է Մելիք-Բաղի Բ-ին և, ըստ պերճախոս փապանագրի, իր սխրալից կենսագրությունն ավարտել 1736 թվականին<sup>228</sup>:

Ուրեմն այս ապարանքը ևս կառուցվել է 18-րդ դարի առաջին փասնամյակներին՝ նախորդից հետո և հավանաբար նրա հետ մի պալատական համալիր է կազմել:

Նուշարձանի հիշյալ տեղի մոտ, գյուղի արևմտյան-լեռնամերձ մասում բերդավանի պարիսպների ավերվածությունը հուշում է նաև, որ «ժայռի անմիջապես ափին» գրնվող ապարանքը կառուցված է եղել հենապարսպով ստեղծված դարավանդի վրա և հիմնովին քանդվել է վերջիններիս փլուզման հետևանքով:

**Երրորդ ապարանքը** միակն է Ավետարանոցում, որ մեզ է հասել կիսավեր վիճակում և կառուցված է արևելահայաց բլրալանջի ընդարձակ դարավանդահարթակի վրա՝ խորքի պարով հաված լանջին: Այժմ չափազանց շինարարական արձանագրությունը հայտնում է.

«ԱՅՍ ԱՄԱՐԱԹՍ ՄԵԼԻՔ ՇԱՆԱԶԱՐԻ ՈՐԴԻ ՍԵՅԻՆ ԲԵԿԻՆ ՈՐ Է ԱՅՍ ՇԻՆՈՒԹԻՒՄ ՈՐ ՇԻՆԵԼ ՏՈՒՄՇ ՇԵՆՔՆ Է. Թ ՌՄԼԵ» (1786)<sup>229</sup>:

Այսինքն այս «ամարաթ»-ապարանքը պարկանում է Մելիք-Շահնազար Բ-ի որդի Նուսեյն-բեկին և նրա կառուցած-«շինել փվածն է» 1786 թվականին: Ուշագրավ է, որ չնայած ապարանքը կառուցվել է անբարեհիշատակ Մելիք-Շահնազար Բ-ի օրոք (1747-1792 թթ.), սակայն շեշտված է նրա պարկանելությունը վերջինիս ապօրինի-թրքածին որդուն՝ Մեյի-բեկին (Մելիք-Նուսեյն Բ), որի քույրը կնության էր փրված Շուշվա Իբրահիմ խանին և որը վերջինիս կողմից ա-

<sup>223</sup> С. Лисициан, "Карабахский карадам", с. 105-106.

<sup>224</sup> Այստեղ, անշուշտ, դեր են խաղացել Մելիք-Շահնազարյանների իրական բացառիկ հարստության ու հնարավորությունների մասին ավանդաբար ձևավորված և մինչև այժմ էլ տեղացիների մեջ պահպանված պարկերացումները:


<sup>225</sup> Ամենաբնորոշը Նոռեկավանի և Մոխրաթաղի ապարանքներն են:

<sup>226</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 97:

<sup>227</sup> Ե. Լալայան, «Վարանդա», էջ 30:

<sup>228</sup> Լեո, հր. 3, գիրք Բ, էջ 260, «Դիվան», 5, էջ 149: Մելիք-Նուսեյն Ա-ի, նրա կնոջ Աննայի և դստեր Գայանեի անունների հետ է կապված Ավետարանոցում 1733 թ. ապաստանած թուրքական զորաջոկարի գիշերային հանկարծահաս կոտորածի նշանավոր դեպքը:

<sup>229</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 95, «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 152:



27. ԱՎԵՏԱՐԱՆՈՅԻ ԵՐՐՈՐԴ ԱՊԱՐԱՆՔ. Հափազրույթուն

նօրինաբար Վարանդայի մելիք կարգվեց հոր մահից հետո, մելիքական այնքան օրինական ժառանգորդ, միահորածին ավագ եղբոր՝ Մելիք-Ջուվշուդի փոխարեն<sup>230</sup>: Տեղին է նշել, որ Մելիք-Ջուվշուդը այնուամենայնիվ իր ձեռքն է վերցրել գավառի իշխանությունը (1792-1812 թթ.)<sup>231</sup> և իր հայրենանվեր գործունեությանը վերականգնել Մելիք-Շահնագարյան փոհմի վաղեմի բարի համբավը<sup>232</sup>: Ինչպես վկայում է 1792 թվականին՝ Մելիք-Շահնագարի մահից մի քանի օր առաջ Ամարասի Իսրայել կաթողիկոսի կազմած չափագանց հեղափոխության մի գրությունը, հոր թրքաբարո կենցաղից ու ազգակործան գործերից վիրավորված ու դառնացած Մելիք-Ջուվշուդը արժանապարտվորեն հրաժարվել է «խամսում ու աշխարքում» ճանաչված այդ «մին մարդ»-ուց ընդունել գավառի իշխանությունն ու անբավ հարսությունը, այդ թվում «իմարաթ»-«ամարաթ»- ապարանքները, ասելով. «ես էնչափ ունեմ, որ ինձ հերիք է»<sup>233</sup>: Իսկ նրա ժառանգական ունեցվածքը հայրնի է մեկ այլ փաստաթղթից, որը կայքի ու գույքի մի պարկառուցու ցուցակ է և ավարտվում է ապարանքների թվարկությամբ. «Քարաշեն փներ. Շուշիում՝ երկու հար, Ավետարանոց գյուղում՝ երեք հար»<sup>234</sup>:

Ինչպես կարծում է Լեոն և վկայում հիշյալ Իսրայել կաթողիկոսը, Մելիք-Շահնագարի կայքից իրենց բաժինն են ունեցել նաև նրա մյուս որդիները (Նուսեյնը, Ջհանգիրը և Ջհանբախշը), սակայն ակներև է, որ այլուստ արդեն հայրնի և այստեղ նշված Ավետարանոցի երեք ապարանքները ի վերջո անցել են Մելիք-Ջուվշուդին, չնայած դրանցից մեկի շքամուտքին վաղօրոք էր շեշտված արձանագրվել. «Մեյին բեկին է այս ամարաթ», քանզի նրա «շինել փուած շենքն է»:

Ավետարանոցի այս երեք ապարանքները հեղափոխիչ ճակատագիր են ունեցել նաև հեղափոխում և չնայած գրնվել են բարեշեն գյուղում, հանգամանքների բերումով 1826 թվականին ավերվել են Մելիք-Շահնագարին այնքան հովանավորած պարսիկների ձեռքով<sup>235</sup>:

<sup>230</sup> Բաֆֆի, ԵԺ, հր. 9, էջ 499, 502, 504:

<sup>231</sup> Մելիք-Նուսեյն Բ-ը մահացել կամ սպանվել է 1801 թ., Մելիք-Ջուվշուդը՝ 1812 թ.: (Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 150-151):

<sup>232</sup> Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 502-505, Լեո, նշվ. աշխ., էջ 377:

<sup>233</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 376:

<sup>234</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 24, նույնի խոջայական կապիտալ, էջ 169:

<sup>235</sup> 1813 թ. Գյուլիսպանի դաշնագրից հետո, 1817 թ. Արցախում և շրջակայքում զինվորական նահանգապետ նշանակված ռուսական բանակի գեներալ Վալերիան Մադաթովը (Ռոստոմ Մադաթյան) Վարանդայում 15 գյուղ կալվածք ուներ, որոնց թվում և իր ծննդավայր Ավետարանոցը: Այստեղ էլ նա ապարանքներից մեկի վրա «կառոյց գիւրն պալապր շքեղ ձևակերպութեամբ, ըստ արևմտեան արտոժակաց» (Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., մասն Բ, էջ 246): Սակայն 1826 թվականին պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի գործերը, հանկարծակի Արցախ ներխուժելով և գրավելով Ավետարանոցը, ուր ռուսական զորաջոկապի հենակետն էր, ավերել են նաև Մադաթովի վերակառուցած պալապր և մյուս ապարանքները: (Տե՛ս Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 574-584): Ուշագրավ է նաև, որ Մ. Բարխուդարյանցի ու Ե. Լալայանի կարծիքով իշխան Մադաթովն իր բնակարանը կառուցել է

Սակայն պարսիկական չէ նաև, որ ինչպես երևում է, Մելիք-Շահնագարի օժանդակությամբ 1786 թ. կառուցված այս ապարանքը, այնուամենայնիվ, համեմատաբար քիչ է փուժել պարսիկների ավերմունքից և իր կիսավեր ու ամբողջական շինություններով հասել է մեր օրերը: Այս մասին է խոսում նաև Սյր. Լիսիցյանի նկարագրությունը, ըստ որի՝ հուշարձանի վիճակը մեր դարասկզբին այսպիսին էր. «Այս շարքի (Մելիք-Բաղու ապարանքի գլխավորների-Ա.Ղ.) հյուսիսային վերջավորությունում կանգուն է երեք դարաններից բաղկացած ևս մի խումբ՝ Մելիք-Բաղուց ուշ ապրած Մելիք-Մեիրիինը: Մենյակների այս շարքը հեյրևի (արևմտյան) պարով խորացած է ժայռալանջի թեթության մեջ, իսկ առջևինը (արևելյանը) ուղղված է դեպի սալարկված բակը: Յուրաքանչյուր դարադամ ելք ունի դեպի բակ»<sup>236</sup>: Երեք «դարադամ»- գլխավորներից այժմ պահպանվել են երկուսը. մեկը՝ ամբողջական, իսկ հյուսիսից սրան կից երկրորդը՝ կիսավեր վիճակում: Սյր. Լիսիցյանի մեկ այլ փորձությունը մի անգամ ևս հաստատում է երեք գլխավոր երբեմնի գոյությունը. ապարանքի հեղափոխական վերակառուցման առթիվ նա գրում է. «Այսպես մեկական սենյակ առջևից ուղղակի կցված են առաջին և երրորդ դարադամին (երեք դարադամների շարքից) և ծածկված են երկայնական թաղով, հողն հարակի մեծ մասը վեց վերշոկ (26,5 սմ Ա.Ղ.) բարձրացված է»<sup>237</sup>: Նարավային կանգուն գլխավոր ճակատապարհին այսօր էլ մնում է այս սենյակներից մեկի թաղի մնացորդը, իսկ դրա առջևի բակում, գլխավոր հարակից բարձր հողաշերտի վրա նկատելի են շարվածքի հետքեր:


Կանգուն գլխավոր հարավային կողմում պահպանված մեկ այլ շինության հիմնապատերը մնացել են մերօրյա կցակառուցից փակ և անմարչելի են, իսկ դրա հետ կապող մուտքը փակված է: Տեղացիների հավասարմամբ այստեղ եղել են նաև երկարավուն հարակազմով թաղածածկ դահլիճներ, որոնք, ըստ ամենայնի, իրենց ավանդական հորինվածքով կրկնվել են գլխավորների շարքի երկու կողմում:

Այսպիսով պարզվում է, որ մինչև այժմ հայրնի մեկ կամ երկու գլխավորավոր ապարանքների կողքին Ավետարանոցի այս մելիքական փունը յուրահատուկ է եղել իր երեք գլխավորումով, որոնցից մեզ հասած երկուսը, և հարակա-

Մելիք-Բաղու ապարանքի վրա, իսկ Բաֆֆին, Ս. Ջալալյանցն ու Սյր. Լիսիցյանը այդ վերակառուցումը վերագրում են Մելիք-Շահնագարի ապարանքին: Նկատի ունենալով վերջիններիս փոքր-ինչ ավելի առարկայական նկարագրությունները և հուշարձանի այժմյան վիճակը՝ կարելի է ենթադրել, որ, իրոք, հենց այս ապարանքն է վերակառուցվել: (Տե՛ս նաև «Մեղու Նայասարանի», 1873, N19, էջ 3):

<sup>236</sup> Ս. Լիսիցյան, «Карабахский карадам», с. 105-106.

<sup>237</sup> Նույն փորձում, էջ 107:



28. ԱՎԵՏԱՐԱՐՆՈՅԻ ԵՐՐՈՐԴ ԱՊԱՐԱՆՔ. Վերակազմություն

պես՝ միակ ամբողջականը, նույնպես խիստ ինքնաբերական է:

Դրանք ամենախոշորն են նմանօրինակների մեջ (հարակազմում ներքուստ՝ 7,65 x 7,65 մ), մեկական արտաքին մուտք ունեն արևելյան ճակարակապի միջին մասում և հաղորդակցվում են կամարակապ լայն դռան միջոցով: Գլխավորներից հարավայինը կանգուն է և ունի քարաշեն, գոցվող թաղերով կազմված երդիկավոր գմբեթածածկ, իսկ երկրորդի նույնպիսի ծածկը փլվել ու թափվել է ներս՝ մինչև թաղերից պահպանված սպորին շարքերը: Ապարանքի ներքին լուծումների յուրօրինակ ու գուսպ վայելչության մասին է վկայում կանգուն գլխատունը. մուտքի դիմացի լանջակից պարը ձեկավորված է երկու միաջափ, լայնաթռիչք ու կամարակապ որմնախորշերով, որոնց միջև մեկ այլ փոքր ու վերձիգ կամարախորշ կա, ձախակողմյան ողջ պարերեսը զբաղեցնում են կից դահլիճի հետ կապող կամարամուտքը և դրա կողքի երկու խոշոր ու կամարավարտ օջախ-կրակարանները, իսկ աջակողմյան պատում՝ երկրորդ գլխատանը հաղորդակից մուտքի երկու կողմում, նույնպես կամարախորշեր են՝ փոքր բովասարիով: Ընդ որում հարկանշական է, որ մուտքից դիմվող երեք պարերում այդպիսով սրբեղծված գրեթե անընդհատ կամարաշարքը ոչ միայն ներքին փարածքի ընդարձակության պարանք է սրբեղծում, այլև՝ երդիկալույսի ներքո խորն սրվերներ ձգելով, պա-

րերից ասես անջատում-թեթևացնում է գմբեթածածկի ցածրամած ու միապաղաղ գոցվող թաղերի փետողական ծանրությունը:

Սակայն գլխատան ամենաբնորոշ մասը աննախադեպ խոշոր չափերի՝ 2,1 մ բացվածքով ու 1,7 մ խորությամբ գույգ կից կրակարաններն են, որոնց ճակարակամարի թռիչքը էլ ավելի է մեծացված եզրամույթերի հաշվին, իսկ բրգաձև հորերի փեսքով ծխադարները փանիքում ավարտվում են ուղղանկյուն անցքերով:

Երկրորդ գլխատան որմնախորշերն ու երրորդի հետ կապող մուտքը այժմ հողածածկ են և դրանց ձևերը որոշակի կդառնան միայն պեղումներից հետո: Սակայն դժվար չէ կռահել, որ և՛ այս, և՛ չպահպանված երրորդ գլխատունը նույնպիսի հարուստ ներքին հարդարանք են ունեցել: Նախորդ գլխատանավոր ապարանքների ուսումնասիրման փորձը հուշում է նաև, որ այսպեղև ևս գլխատներն ու դահլիճները բակի կողմից ունեցել են թաղածածկ ու կամարակապ նախասրահներ: Ուշագրավ է, որ կանգուն գլխատան բակահայաց պարին պահպանված երկայնական թաղի հիշյալ մնացորդը օրգանապես կապված է պարի հետ և, հավանաբար, ի սկզբանե պարկանել է նախասրահին, իսկ վերջինս էլ հետագայում վերակառուցվելով՝ վեր է ածվել, Սպ. Լիսիցյանի բնորոշմամբ, «գեներալական» սենյակների:

Ակնհայտ է նաև, որ լանջին պահպանված պարսպապարը շարունակվել ու շրջապարել է մելիքական փան համակառույցը՝ ձորահայաց հենապարսպով ընդգրկելով ընդարձակ բակը: Այսինքն՝ մելիքանիստ ավանի բերդապարսպով պաշտպանված ապարանքը, այնուամենայնիվ, ինքնուրույն շրջապարհապ է ունեցել և եղել է բերդավանի յուրօրինակ փոքրիկ միջնաբերդերից մեկը, հիմնական միջնաբերդի՝ Կուսանաց վանք-ամրոցի կողքին:


Ապարանքը հիմնականում կառուցված է սպիտակավուն գույնի կոպրապաշ որձաքարից, սրբապաշ են միայն մուրքերի և խորշերի եզրամասերն ու կամարները: Կանգուն գլխապան ներսում պարերի ու գմբեթաթաղի քարերը ծխից խիստ սևացած են, երդիկանցքը փոքր-ինչ քանդվել-լայնացել է: Պարերի ու պարսպի հաստությունը 1,2 մ է, գույգ բուխարիների մասում՝ 2,2 մ: Պահպանված ներքին մուրքերը լուծված են դարաշրջանին հարուկ արվաքին շքամուրքերի ձևով. բացվածքը եզրային ելուստներ ունի, որոնք

կրում են պահունակավոր կամարավարդի մեջ առնված կիսակլոր բարավորաբարը: Բնորոշ են նաև գույգ կրակարանների ու խորքի պարի երկու որմնախորշերի լայնաթռիչք կամարների թույլ արտահայտված երկկենտրոնությունը, ինչպես նաև խորշերի երկշար կամարադեղերը:

Ավետարանոցի պալապական համալիրը բնագավառի պայմանության մեջ մեծ ճանաչողական արժեք է ոչ միայն երեք ապարանքներից բաղկացած իր եզակի կազմով, այլև դրանցից մեկի մեջ հազվագյուտ երկու, իսկ մյուսում՝ աննախադեպ երեք գլխապների առկայությամբ: Վերջինից կանգուն մնացած միակ գլխապունը, միաժամանակ, ուշ միջնադարյան նույնափայ հուշարձանների շարքում առանձնանում է ինքնափայ հորինվածքով և լավագույնս է մարմնավորում ընչավեպ մելիքական ընտանիքի կենցաղավարման առանձնահատկություններն ու քարակերպ ապարանքաշինության ասպարեզի ճարտարապետաշինարարական ձեռքբերումները:



## ՇՈՒՇԻ



Շուշիում պահպանվել են մի քանի ապարանքներ, որոնք գտնվում են քաղաքի հարավ-արևելյան մասում, մինչև 1934 թ. ոչ հեռու՝ այժմ արդեն մեծ մասամբ ավերված բնակելի տների կառուցապարման մեջ և ձորեզրին: Նուշարձանները ինչ-ինչ պարճառներով դուրս են մնացել հայ ուսումնասիրողների ուշադրությունից, և դրանց մասին որևէ գրավոր վկայություն հայտնի չէ: Օգտվելով այս բացից՝ ադրբեջանական ճարտարապետության ուսումնասիրողներ Ա. Ալիզադեն և Ա. Սարկիսովը ապարանքներից երկուսը ներկայացրել են որպես խանական դղյակներ, ենթադրաբար մեկը վերագրելով Իբրահիմ խանին, մյուսը՝ նրա դստերը՝ Մեծ Խանումին<sup>238</sup>: Ընդ որում, այս վերագրումը սկսելով «այսպես կոչված» վերապահումով, հեղինակները Իբրահիմին են համարում ձորեզրինը, իսկ Մեծ Խանումինը՝ դրանից «մի փոքր հեռու» գտնվողը:

Ներազայում հարցին անդրադարձել է Է. Ավալովը, նշելով, որ «Ղարաբաղի պարմագիր Միր Մեհրի Խազանիի մոտ գտնում ենք հիշարկություն այն մասին, որ Փանահ խանը իր համար Շուշիում կառուցել է «փոքր ամրոցի նմանվող պալատ՝ պարիսպներով ու բուրգերով», իսկ մյուս կողմի բլրի վրա՝ «գեղեցիկ պալատ»՝ ավագ որդի Իբրահիմ խանի համար»<sup>239</sup>: Այնուհետև նա գրում է. «Այժմ Շուշիում պահպանվել են միայն երկու դղյակներ, որոնք գտնվում են

քաղաքի հարավ-արևելյան մասում» և, հղելով Ա. Ալիզադեի ու Ա. Սարկիսովի հիշյալ հոդվածը, հաջորդ փողերում հակասում է ոչ միայն նրանց, այլև՝ Ս. Աշուրբեյլիի միջնորդությամբ վկայաբերված Մեհրի Խազանիի հիշարկությանը, շարունակելով. «Դրանցից մեկը կանգնած է բլրի վրա՝ դա Մեծ Խանումի դղյակն է, իսկ ավելի վաղ պահպանված երկրորդը՝ Փանահ խանինը՝ կանգնած է գառնափափ եզրին, խորը ձորի վերևում»<sup>240</sup>:

Այսբանից հետո, հավանաբար չկողմնորոշվելով իր և իր նախորդների ենթադրությունների խճողված շարքում՝ հեղինակը խուսափել է քաղաքի այդ հարավի գլխավոր հարակազմում ցույց տրված հուշարձանների պարկանելությունը ճշտելուց և բացառաբարում դրանք ընդհանրացրել է նույն թվահամարի փակ, նշելով «դղյակներ»<sup>241</sup>:

Նարկանշական է, որ հիշյալ ուսումնասիրողները խնդրին անդրադառնալիս «նրբանկատորեն» անուշադրության են մատնել 1797-1822 թթ. Շուշի խաների վեզիր, պարմագիր Միրզա Ջամալ Ջեվանշիրի «Ղարաբաղի պարմություն» երկի այն երկու փոքր գլուխները, որոնցում ականաբես-ժամանակակիցը մանրամասնորեն թվարկում է Փանահ խանի և նրա որդի Իբրահիմ խանի կառուցած շենքերն ու շինությունները Շուշիում ու նրանից դուրս, սակայն որևէ պալատ կամ դղյակ չի հիշարկում քաղաքում<sup>242</sup>: Շուշի խաները, իհարկե, քաղաքում ունեցել են իրենց պալատը, որը, ինչպես նաև խնդրո առարկա դղյակ-ապարանքները հարակորեն երևում են քաղաքի բազմիցս հրապարակված երկու (1820-

<sup>238</sup> А. Али-заде, А. Саркисов, О некоторых архитектурных памятниках Шуши, "Памятники архитектуры Азербайджана", сборник, т. 2, Баку, 1950, с. 120-122 и табл. 165-167.

<sup>239</sup> Э. Авалов, Архитектура города Шуши, Баку, 1977, с. 25 (հղվում է Мир Мехти Хазани, Китаб-и-тарихи Карабаг. Цит. По С. Ашурбейли. Архитектура Шуши и ближайших окрестностей (на основе экспедиции 1934 г.). Научн. архив Ин-та истории АН Азерб. ССР, инв. N359).

<sup>240</sup> Նույն փողում, էջ 25:

<sup>241</sup> Նույն փողում էջ 24:

<sup>242</sup> Мирза Джамал Деваншир, История Карабаха, Баку, 1959, с.59, 101. Տե՛ս նաև, "Кавказ", Тифлис, 1855, N 61, 62, 65, 67-69.

30-ական թթ. և 1853 թ.) գլխավոր հարակազմերում<sup>243</sup>: Մ. Սարգսյանն այսպեղ իրավագիտորեն խանական (Իբրահիմ խանի) պալատի տեղը նշում է քաղաքի արևելյան մասի հյուսիսային կողմի պարսպամերձ բարձունքին գտնվող ամրացված և ընդարձակ միջնաբերդում, սակայն Փանահ խանին է համարում Մեծ Խանումին վերագրվողը<sup>244</sup>, իսկ շարադրանքում «Շուշիի սարահարթի արևելյան շուրթին, ամենացածրադիր մասում կառուցվածը» (այսինքն, այլոց կողմից ենթադրաբար Իբրահիմին կամ Փանահին վերագրվողը), անմիջապես շարունակելով. «Մելիք-Շահնագարի դղյակը, ըստ նկարագրության, կառուցված է եղել սարահարթի կենտրոնում, բարձունքի վրա, 18-րդ դարից պահպանված հայկական գերեզմանոցի մոտ»: Նշվում է նաև, որ 19-րդ դարում այս ավերակները հայտնի էին «Մելիքին փներ» անունով<sup>245</sup>:

Քաղաքի վերոհիշյալ հարակազմերում նշված մելիքական փուն-ապարանքի հիմնապատերը այսօր էլ տեսանելի են և նորահայտ այլ նյութերի հետ<sup>246</sup> հնարավորություն են տալիս որոշակի հարակություն մտցնելու պահպանված ապարանքների կառուցապարաման, թվագրման ու վերագրման հարցերում:

Մասնավորապես Շուշիի կառուցապարաման ամենավաղ մասը կազմող արևելյան հարվածին վերաբերող հին ու նոր նյութերը համադիր դիտարկելով քաղաքի 18-րդ դարի պարամության ընդհանուր հուղվությունը պարզվում է, որ քաղաքի հայկական թաղամասը ապարանքներով սկզբնավորվել է դարասկզբին այս արևելյան հարվածի հարավային կեսում, մինչև ձորեզրը: Դարի կեսերին ձևավորվել է հյուսիսային կեսի պարսպապար «խանական թաղը» միջնաբերդ-ապարանքով, իսկ հայկականը փարածվել է «Մելիքին փների» ուղղությամբ՝ դեպի արևմուտք<sup>247</sup>: Ըստ ամենայնի, դարավերջին հայոց ապարանքների մի մասին բռնությամբ փրագել են մահմեդական իշխանավորները, ինչն էլ

հերազայում առիթ է տվել դրանց կառուցումը վերջիններիս վերագրելուն, սակայն, նույն պարամառով մինչ այդ չի արժանացել խանական պարամագրի հիշարարությանը:

Երկրամասի մելիքական ապարանքների հետ Շուշիում պահպանված հուշարձանների ակնհայտ ճարտարապետական ընդհանրությունները ևս կասկած չեն թողնում, որ դրանց կառուցումը ոչ մի առնչություն չունի 18-րդ դարի երկրորդ կեսում քաղաքում իշխած խաների հետ և անմիջական արդյունքն է դարաշրջանում հայ մելիքների ծավալած շինարարական գործունեության:

Նարցը դիտարկենք առանձին հուշարձանների օրինակով:

**Առաջին ապարանքը** գտնվում է քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում, ձորի վերին քարավի գրեթե եզրից մոտ 400 մ արևմուտք, հարավահայաց թեթությամբ բլրակի վրա: Քառաբուրգ, պարսպափակ ապարանքի շեշտված ամրոցակերպությունը հուշում է, որ այն ի սկզբանե կառուցվել ու գործել է որպես ինքնուրույն պաշտպանական կառույց, այսինքն՝ գոյություն է ունեցել նախքան քաղաքի բերդապարիսպների վերաշինությունը այսպեղ հասարակած Փանահ խանի օրոք (1750-52 թթ.)<sup>248</sup>, քանզի, հակառակ դեպքում, պարսպապարվելուց հետո գրեթե անմարչելի դարձած բերդաքաղաքում կառուցված ապարանքում նման պարփակվածության ու բարձրաբերձ բուրգերի կարիքը չէր գզացվի: Մյուս կողմից, ապարանքի կառուցման ժամանակի, հեղինակի ու հանգամանքների մասին ուղղակի վկայություններ կարելի է տեսնել Շուշիի հիմնադրման խնդրին նվիրված աշխատություններում և այդ առնչությամբ վկայաբերվող փաստաթղթերում:

Այսպես. 18-րդ դարի վավերագրերի հիման վրա հայ պարամագրության մեջ վաղուց ի վեր ապացուցված է, որ Շուշին որպես բերդ հիմնադրվել է Ղարաբաղի խանության կենտրոն դառնալուց շար ավելի վաղ: Մասնավորապես ակադ. Աշ. Նովիաննիսյանը իր իսկ հրատարակած փաստաթղթերի հիման վրա համոզված է, որ «...Փանահ խանի միջնաբերդն ու Ղարաբաղի խանության նստավայրը դարձած տեղում կառուցված բերդապարիսպների հիմնավորումը սկսել է Ավան յուզբաշին, դեռ 1724 թվականին, եթե ոչ ավելի վաղ: Այն մասին, որ Ավանը այսպեղ զբաղված է եղել բերդապարիսպ կառուցելով, 1725 թ. մի նամակում հայտնել է նաև գեներալ Մալուշկինը»<sup>249</sup>: Բերվում է նաև մեկ այլ վկայագիր. «1717 թ. ամրանալով Շոշվա քարում, Ավան յուզբաշին մեծ հոջակի տեր դարձավ»<sup>250</sup>: Ավան (Աս-

<sup>243</sup> **Ս. Գադալաև**, Градостроительство и архитектура Азербайджана XIX-начала XX века, Ленинград, 1968., с. 103, **Э. Авалов**, ук. соч., с. 24, **Ս. Մկրտչյան**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, с. 180-181, **Շ. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պարամագրարապետական հուշարձանները, էջ 218-219, **Մ. Տարկսյան**, Из истории градостроительства Шуши, Е., 1996, табл. 1-2, **Ս. Դավթյան**, **Ս. Մկրտչյան**, Шуши, Е., 1997. Алп ЦГВИА СССР, фонд ВУА, д. 22830, лист 1, фонд 349, оп. 44, дело 680, лист 1:

<sup>244</sup> **Մ. Տարկսյան**, ук. соч., табл. 1. Նեղիակը հավանաբար առաջնորդվել է ռուս ռազմական ինժեներների կազմած հարակազմի բացարարագրով, ինչը պետք է ընդունել վերապահությամբ. քանզի հասարարագրում է 19-րդ դարի վիճակը:

<sup>245</sup> Նույն տեղում, էջ 6 և աղ. 1: (Վկայաբերվող նկարագրության համար հղվում է ЦГИА Арм. ССР, фонд 227, оп. 1, ед. хр. 248):


<sup>246</sup> Այս նյութերի ձեռքբերմանը աջակցել են ազարագրված Շուշիի նոր գլխավոր հարակազմի հեղինակ, ճարտարապետ Սերգեյ Ամիրաղյանը և ճարտ. Արսեն Դավթյանը:

<sup>247</sup> Նման... **Ե. Լալայան**, «Վարանդա», էջ 24, **Մ. Տարկսյան**, ук. соч. с. 9: Նարցի համապարփակ քննությունը դուրս է մեր խնդրի շրջանակից:

<sup>248</sup> Ըստ խանական պարամագր Միրզա Ջամալի, Փանահի Շահրուպաղից Շուշի է տեղափոխվել 1756 թ. (տե՛ս **Միրզա Ժամալ Ժեվանշիր**, История Карабаха, с. 72):

<sup>249</sup> Армяно-русские отношения, т. II, ч. I, Историческое введение, с. XLI-XLII.

<sup>250</sup> Նույն տեղում, էջ XLIII: **Աշ. Նովիաննիսյան**, Դրվագներ..., գիրք Բ, էջ 609, **Պ. Չոբանյան**, Շոշ և Քարագուխ սղնախների նույնացման հարցի շուրջ, «ԴԲՏ», 1994, 1-2, էջ 184:



29. ՀՈՒՇԻԻ ԱՌԱՋԻՆ ԱՊԱՐԱՆՔ. Չափագրություն-վերակազմություն

նես, Նովիաննես) յուզբաշին կամ Ավան Սպարապետը 18-րդ դարի սկզբում ծավալված հակաթուրքական ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկներից մեկն էր, և որպես «Շոշի սղնախի» հրամանատար հիշվում է 1720-ական թվականների բազմաթիվ փաստաթղթերում<sup>251</sup>, որոնցից մեկը հավաստում է. «...գրվեցավ Քարայգլխի նոր շինած դալունն, 1724 թ.»<sup>252</sup>: «Քարայգլխի» նույն «Շոշի քարն» է կամ պարզապես «Քարը», այսինքն՝ «Շոշի սղնախ»-«Շոշի դալա»-Շուշի բերդը, մանավանդ որ «Քարագլուխ»-Շուշիի ժայռերի ստորոտում կա նաև «Քարինպակը»<sup>253</sup>: Նասրապետով, որ Շուշիի բերդի վերջին դարերի վերակառուցման առաջնությունը Ավան Սպարապետին է պատկանում, ուսումնասիրողները դժվարանում են մասնանշել, թե հարկապես ինչ և որտեղ է կառուցել Շոշի սղնախի մեծահամբավ գորահրամանատարը, և սա՛ նաև այն պարճառով, որ բերդաքաղաքը բազմիցս վերակառուցման է ենթարկվել: Այս առումով խիստ ուշագրավ է Լեռի մի հպանցիկ տեղեկությունը, որն այս հարցի պատասխանը անվիճելիորեն կապում է խնդրո առարկա ապարանքի հետ: Ավան Սպարապետի գործունեության առթիվ նա ծանոթագրում է. «Շուշին և սրա շրջակայքն էլ կազմում էին Ավան յուզբաշու կալվածը: Մինչև այժմ էլ Շուշու հարավ-արևելյան ձորի ժայռը կոչվում է «Անանայ քերծ»: Այդ ժայռի ստորոտում երևում են ավերակներ, որոնք կոչվում են «Ամարաթներ» (ապարանքներ), և ժողովուրդը պարմում է, թե այդտեղ էր բնակվում Ավան յուզբաշին»<sup>254</sup>: Նաև վայրը հիշարակում է նաև Մ. Բարխուդարյանը՝ «Անանայ կարան»-քարայր, «Անանայ քերծ» և «Ամարաթներ» անուններով<sup>255</sup>: Նույնպիսի կիրճի անմատչելի կրճքին այսօր էլ պահպանվում են մասամբ ժայռափոր շինությունների ավերակներ, որոնք, ըստ ավանդության, Ավանի կառուցած առաջին ամրոց-ապարանքից են մնացել<sup>256</sup>:

Եվ քանի որ ավանդաբար Ավան Սպարապետի առաջին «ամարաթ»-ապարանքների տեղը նշվում է քաղաքի հարավ-արևելյան մասում գտնվող «քերծ»-ժայռի լանջին, իսկ պահպանված ապարանքը նույն՝ հարավ-արևելյան կողմի ժայռի, կամ, որ նույնն է՝ «քերծ»-քարի գլխին է, ուստի կասկած չի մնում, որ հենց դա է 1724 թ. հիշված «Քարագլխի նոր շինած դալան», ասել է թե՛ բերդը, ամրոցը, ամրոցակերպ ապարանքը: Ավան

հայր է, քանզի ժայռի ստորոտում այդ ժամանակ արդեն կար Ավանի ավելի վաղ՝ ըստ ամենայնի հիշյալ 1717 թ. կառուցած ապարանքը (ուր նա «ամրացել էր սկզբնապես և հռչակի տեր դարձել»), ժամանակագիրը նաև այս պատճառով է շեշտել, թե «նոր շինած»-ը «Քարագլխին» է:

Ներաբրբրական է նաև, որ ապարանքից մոտ 500 մ դեպի հյուսիս-արևելք, անմիջապես ժայռերին, հետագայի պարսպապատերի մեջ պահպանվել են մեկ այլ քառաբուրգ շինության մնացորդները՝ ձորամերձ պարսպով ու երկու բուրգով: Քաղաքի վերոհիշյալ դարասկզբի և 1853 թ. գլխավոր հարակազմերում հարակորեն առանձնացված այս քառաբուրգ-ամրոցը հայտնի է նաև 1857 թ. մանրամասն չափագրությամբ<sup>257</sup>, և, չնայած այս շրջանում ավելացված լայն պարուհաններին ու երկլանջ փանիքներին, իր հարակազմային լուծման նախնականությամբ կասկած չի թողնում, որ ի սկզբանե նույնպես «Քարագլխին նոր շինած դալայի» մասն է կազմել:

Իսկ որ պահպանված ամրոց-ապարանքները ժամանակագրի գրչի փակ միանգամայն կարող էին «դալա» (բերդ, ամրոց) կոչվել, բացառվում է նաև այն պարզ իրողությամբ, որ հիմնականում հենց նույնափայ ապարանքներն էին ինչպես դարասկզբի մյուս արցախյան սղնախների հենակետերը (Ղոռեկավան, Տոդ, Ավերարանոց, Քաղաքապետ), այնպես էլ ազատագրական պայքարի նոր վերելքի օջախները դարավերջում<sup>258</sup>:

Բնական է նաև, որ խանական փիրապետության փակ անցած հետագայի Շուշիում քաղաքի հնագույն կառույցներից մեկի հիմնադրի անունը գրեթե մոռացվել է, կապված մնալով միայն քաղաքից դուրս՝ «Ավանա քերծում» ունեցած նրա առաջին ապարանքի հետ:

Շուշին Վարանդայի մելիքության փրկություն էր և, ամենայն հավանականությամբ, Ավան

<sup>257</sup> Ռուսական աղբյուրներում շինությունը նշվում է որպես «պարենային խանութ»:

<sup>258</sup> Ավան Սպարապետի անվան հետ են կապվում նաև Վարանդայի Շոշ և Ավերարանոց գյուղերի միջև գտնվող, այժմ չպահպանված ամրությունները Սղնախ գյուղի մոտ և նույն գավառի հարավային եզրին գտնվող «Վնեսա դալան»՝ «Նովիաննեսի բերդը», որն ըստ Մ. Բարխուդարյանի՝ «... Ունի քարուկիր շրջապարիսպ, ... երկու բարձր և ամուր բուրգ... իսկ վերնամասում շինուած իբրև միջնաբերդ՝ մի փոքրիկ դղեակ» (տե՛ս «Արցախ», էջ 83): Թե ինչ դեր են ունեցել սրանք Ավանի և նրա զինակիցների պայքարի ընթացքում, ըստ պարմական աղբյուրների՝ ստույգ ու միանշանակ հայտնի չէ, սակայն ակնհայտ է, որ երկու սղնախ-ամրոցներն էլ դարասկզբի ազատագրական մարտերի փողակն փոքր հենակետերից էին, որպիսիք բազմաթիվ էին Արցախի մյուս մելիքություններում ևս: Սղնախների հետ կապված հարցերի վերջին ուսումնասիրողներից ոմանք, օգտվելով դրանց մասին պահպանված բազմաքանակ փաստաթղթերից, վիճարկում են Լեռի, Աշոփանիսի, Ա. Գ. Աբրահամյանի, Պ. Նարությունյանի, Բ. Ուլուբաբյանի և այլոց ընդհանրացած փեսակետը Ավան Սպարապետի գործունեության մասին, կասկածի փակ առնելով «Շոշի սղնախ»-«Քարագլուխ»-«Շուշի» մնույնագումը (Նմտ. Զ. Արզումանյան, «Մեծ» և «Փոքր» սղնախների հարցի շուրջ, էջ 87-91, Պ. Չորանյան, «Շոշ և Քարագլուխ սղնախների նույնացման հարցի շուրջ», էջ 183-187):

<sup>251</sup> Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պարմությունից, վավերագրեր, էջ 147, 148, 157, 162, Ս. Արությունյան, Освободительное движение армянского народа, с. 207, 233, Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 56, 57.

<sup>252</sup> Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 188.

<sup>253</sup> Մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Ոսկե շրթա, Ե., 1979, էջ 359-362, Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի հուշարձանները, էջ 210, 212-213:

<sup>254</sup> Լեռ, հր. 3, գիրք Բ, էջ 140, ծան. 4, հր. 5, էջ 490:

<sup>255</sup> Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 134, 423: Տե՛ս նաև Շ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 210:

<sup>256</sup> Ներազայում, այս «ժայռակերպ ապարանքը» կրկին անրացվել է Իբրահիմ խանի օրոք և դարձել նրա գանձարանի թաքսիոցը (տե՛ս Мирза Джемал, ук. соч. с. 102):



*XIV. ՇՈՒՇԻ. Ալան Սպարապետի ապարանքը հր-արմ-ից (1980-ական թթ. և 1988 թ.)*

Սպարապետի մահից հետո (1736 թ.) ապարանքն անցել է Մելիք-Շահնագարյաններին, ապա, ինչպես կարելի է կռահել դարպասի բարավորի պարսկաբառ արձանագրությունից, վերդարպասյա սենյակի որոշ մանրամասերից<sup>259</sup> և 19-րդ դարում արված մի գրչանկարից<sup>260</sup>, 1770 թվական թվականներին ապարանքին փրացել են քաղաքի մահմեդական իշխանավորները և վերակառուցել՝ ավելացնելով բազմաթիվ նոր սենյակներ՝ նախնական հորինվածքին անհարիր ծածկաձևերով ու հարդարանքի փարրերով:

Այս առումով րեդին է հիշել, որ հեթազալուն Ռուսաստանի փրկապետությունը առերես ընդունած Իբրահիմ խանի և նրա ժառանգների միջավայրում սովորական էին դարձել կեղծիքն ու խարդավանքը՝ ոչ հեռու անցյալում բռնությամբ ձեռքբերածը նոր գերիշխանության օրոք պահպանելու նպատակով: Եվ բացառված չէ, որ ապարանքին փրկացած մահմեդականներն իրենց «սեփականության» արժանահավատությունը հաստատելու նպատակով այս շրջանում կեղծել են ապարանքի շինարարական վկայագիրը՝ գլխավոր մուրքի բարավորին ավելացնելով պարսկաբառ արձանագրություն՝ հիջրայի 1182 թվականով (մ. թ. 1768 թ.)<sup>261</sup>:

Ապարանքն ընդհանուր հարակազմում պարսպապարտերով կազմված քառակուսի է՝ չորս անկունում բոլորաձև, սնամեջ բուրգերով: Միակ մուրքը հյուսիսային կողմի միջին մասում է՝ անրացված պարսպից առաջացող ուղղանկյուն, թաղածածկ սենյակով, որի արևմտյան պարի պարզապակից եզրում մուրքի լայն, կամարակապ բացվածքն է, իսկ հյուսիսային պարտում՝ ավանդական բուխարին՝ գույգ որմնախորշերով:

Ըստ պահպանված հետքերի, ներքուստ պարսպակից շինություններ են եղել հարավային, արևելյան և արևմտյան կողմերում: Ընդ որում, հարավային շարքում պահպանվել են բուրգից-բուրգ ձգված մոտ 3,6 մ լայնությամբ բաժանմունքների պարտի և թաղածածկի հարվածներն ու բակահայաց բացվածքների հետքերը, արևելյան մասում՝ պարսպի գրեթե ողջ երկարությամբ ձգվող թաղածածկի սպորին շարքերը և սրանց տանիքից 1,5 մ բարձրությամբ, պարսպապարտում թողնված չորսական լայն դիփանցք-հրակնապններն ու որմնախորշերը:

Պարիսպներն ու բուրգերը պահպանվել են 6-7 մ բարձրությամբ: Բուրգերը դեպի վեր փոքր-ինչ նեղանում են և երկհարկանի են՝ գմբեթաձև ծածկերով, երկու հարկում էլ ունեն բուխարիներ ու որմնախորշեր, երկրորդ հարկերի մուրքերը

պարսպակից շինությունների տանիքից են: Տարկապես ուշագրավ է ապարանքի հարավ արևմտյան բուրգը, որն զգալի բարձրություն է ունեցել՝ մոտ 10 մ<sup>262</sup>: Ակնհայտ է, որ պարսպի դիփանցքերը և այս շեշտված բուրգը ուղղված են դեպի այսպետից բացվող ամենահեռահորիզոն տեսադաշտի կողմը: Իսկ սա մեկ անգամ ևս վկայում է, որ ապարանքը կառուցվել է ինքնուրույն պաշտպանական դեր է ունեցել քաղաքի բերդապարիսպների կառուցումից դեռ շաք ավելի վաղ: Այս տեսակետից հարկանշական է, որ ապարանքում պահպանված գծաշար սենյակները խստորեն փարանջարված և հարմարեցված չեն բնակության համար և, ըստ ամենայնի, ծառայել են որպես ամրացված ռազմական հենակետի գորանցներ: Տարակ է նաև, որ վերդարպասյա սենյակն իր վերձիգ գմբեթաթաղով, սքալակափազարդ որմնաքիվով և ցանցկեն փայտազարդով հարդարված լայն պարուհաններով հեթազայի հավելման արդյունք է, որին հավանաբար ժամանակակից են նաև ապարանքի մուրքին ներսից հանդիպակաց և երկրորդ հարկ տանող՝ մասամբ քարե աստիճանները: Իսկ բակի արևմտյան կեսում կառուցված երկշարք-երկհարկանի սենյակներն իրենց լայն բացվածքներով ու հարթ փայտածածկով, ակնհայտորեն 19-րդ դարի հավելման արդյունք են:

Ապարանքը կառուցված է բաց երանգով կոպրաբաշ որձաքարի փոքր-ինչ կանոնավոր շարքերով, 1-1,2 մ հաստությամբ պարտերով: Սրբաբաշ քարով է շարված միայն արքային մուրքն իր եզրամասերով, պարզ փրամափի պահունակներով ու երկաստիճան, կիսաշրջանաձային կամարներով:

**Երկրորդ ապարանքի** ավերակները գտնվում են քաղաքի հարավ-արևելյան ձորափնյա դարավանդահարթակի վրա, նախորդից մոտ 250 մ դեպի հարավ-արևելք: Ապարանքի կառուցման սրույգ ժամանակը հայտնի չէ, սակայն ճարտարապետական հորինվածքն ու շինելակերպը ակնհայտորեն վկայում են, որ այն 18-րդ դարի կառույց է, իսկ շեշտված ամրոցակերպությունը հուշում, որ, որպես ինքնուրույն պաշտպանական համակառույց, գոյություն է ունեցել դարի կեսից առաջ՝ նախքան քաղաքի բերդապարիսպների վերաշինությունը:


Շուշիի դժվարամատչելի սարահարթը մի բնական ամրություն էր Վարանդայի մելիքների փրկություն և դարասկզբում այսպետ հիմնավորված Ավան Սպարապետի կառուցումներով արդեն դարձել էր գավառի կարևոր ռազմական հենակետերից մեկը սղնախական ազաբամարտերի ընթացքում: Չնայած մելիքության կենտրոնն ու հիմնական ամրոցը Ավետարանոց բերդավանն էր, որպետ նույն շրջանում Մելիք-Շահնագարյաններն իրենց ապարանքներն էին կառուցել, այնուամենայնիվ, պետք է եկազարել, որ Շուշին ևս

<sup>259</sup> А. Али-заде, А. Саркисов, ук. соч., с. 122.

<sup>260</sup> Ш. Давтян, Ш. Мкртчян, Шуши.

<sup>261</sup> Э. Авалов, ук. соч. с. 25. Ուշագրավ է, որ այսպետ հեղինակը նկատելով արձանագրության թվականի՝ իր նախորդների վերձանության (հիջրայի 1121 թ.-մ. թ. 1710 թ.) անհեթեթությունը, ԼյափիՖ Քերիմովի օգնությամբ ուղղել է: (Նմմաբ. А. Али-заде, А. Саркисов, ук. соч., с. 122.) Ի դեպ, սա այն նույն ԼյափիՖ Քերիմովն է, որ հայտարարում է. «Շուշա դալա շաք ավելի ուշ վերաբնակեցված հայերը գորգագործություն են սովորել փեղի աղբբեջանցիներից» (պնն Азербайджанский ковер, Баку, 1985, с. 15):

<sup>262</sup> Բուրգը հիմնովին ավերվել է 1992 թ., հավանաբար ռմբակոծությունից:



30. ՇՈՒՇԻԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՐԱՆՔ. Զափագրություն-վերականգնություն

անմասն չի մնացել այս փոհմի մելիքների լայնա-  
 ծավալ շինարարական ձեռնարկումներից: Այս  
 առթիվ ուշագրավ է իր բնույթով հազվագյուտ  
 պարմական այն վկայագիրը, ըստ որի Մելիք-  
 Շահնազարի որդի Մելիք-Ջումշուդը, ի շարս  
 պարկառուի կայքի ու գույքի, 1780-ական թվա-  
 կաններին որպես հայրական ժառանգություն  
 ստացել է նաև «երկու քարաշեն փուն Շու-  
 շիում»<sup>263</sup>: Ընդ որում, փների քարաշեն լինելու  
 հանգամանքի շեշտումը գույքացուցակում վկա-  
 յում է, որ խոսքն այսպետ ընդհանրական հորին-  
 վածքով մեզ արդեն ծանոթ քարաշեն ապարանք-  
 ամրոցների մասին է, իսկ ապարանքի հորինված-  
 քի ու չափերի ակնհայտ մերձավորությունը նույն  
 դարի մելիքական փների հետ կասկած չի թող-  
 նում, որ հենց դա է հիշյալ երկու քարաշեն փուն-  
 ապարանքներից մեկը:

Ըստ այսմ, ապարանքի կառուցման ամե-  
 նահավանական ժամանակահատվածը պետք է  
 համարել 18-րդ դարի երկրորդ քառորդը, նկարի  
 առնելով, որ դարի կեսերից հետո հազիվ թե ի-  
 մասսա ունենար բերդապարիսպների շնորհիվ ան-  
 մաքսելի դարձած Շուշիում նման ամրոցակերպ  
 ապարանք կառուցելը: Ավաճի լավագույն ապա-  
 ցույցը Մելիք-Շահնազարյանների մյուս ապա-  
 րանքն է՝ Մ. Սարգսյանի հիշատակած «Մելիքին  
 փները», որը, ըստ քաղաքի հիշյալ հարակազմե-  
 րում ցույց փրված ուրվագծի և ըստ ճարպ. Ա.  
 Դավթյանի վերջերս հայտնաբերած հիմնապա-  
 րերի, չնայած դարձյալ ուղղանկյուն է ներքին  
 բակով, այնուամենայնիվ գերծ է ամրոց-ապա-  
 րանքներին բնորոշ անկյունային բուրգերից:  
 Ակնհայտ է նաև, որ «Մելիքին փներ» կոչված  
 ապարանքը Մելիք-Ջումշուդի հայրական ժառան-  
 գության գույքացուցակի վերոհիշյալ «երկու քա-  
 րաշեն» փներից երկրորդն է և կառուցվել է 18-րդ  
 դարի երկրորդ կեսում՝ պարսպապարված ու ամ-  
 րացված Շուշիում կրելով դարավերջի ճարպա-  
 րապետական նոր ուղղության՝ քաղաքային բնա-  
 կարանաշինության ազդեցությունը<sup>264</sup>:

Պետք է նշել նաև, որ այս և հետագա  
 շրջանում ամբողջովին հայաշեն ու հայահոծ  
 բնակչությամբ Շուշի բերդաքաղաքում մելիքա-  
 կան ապարանքների առկայությունը միանգա-  
 մայն բնական երևույթ էր, քանզի այսպետ  
 բռնությամբ ու դավադրաբար հասարակած խա-  
 նական իշխանությունը օտարամուտ ու ժամանա-  
 կավոր կազմավորում էր դիտվում, որի ոչնչացու-  
 մը դարձել էր դարավերջի հայ մելիքների ազա-  
 րագրական պայքարի կարևորագույն խնդիրը:

Ապարանքի հարակազմից արտաքին եզ-  
 րածնով գրեթե կրկնում է նախորդին. պարսպա-  
 պարերով կազմված ուղղանկյուն է՝ չորս անկ-  
 յունային, բլորաձև, սնամեջ բուրգերով և միակ  
 հյուսիսային մուրքի առջև ունի պարսպից դուրս  
 շեշտված ուղղանկյուն թաղամածկ սենյակ, որի  
 արևմտյան պարի պարսպակից եզրում արտա-

քին մուրքի բացվածքն է, հյուսիսայինում՝ բու-  
 խարին՝ գույզ որմնախորշերով:

Ներքուստ պարսպակից շինություններով  
 կառուցապարված են ապարանքի ներքին բակի  
 արևելյան և արևմտյան կողմերը: Առավել ամ-  
 բողջական է պահպանվել արևմտյան թևը: Վեր-  
 ջինս բաղկացած է պարսպի ողջ երկարությունը  
 բռնող երեք բաժանմունքներից, որոնցից կենտ-  
 րոնականը ամբողջ ճակատով երեսբաց է, իսկ  
 եզրայինները՝ այսպետից բացվող մուրքերով,  
 գրեթե միաչափ, ուղղանկյուն հարակազմով, թա-  
 դակապ ծածկերով և երկուական լայն, բակահա-  
 յաց պարուհաններով դահլիճներ են՝ անկյունա-  
 յին մուրքով կապված բուրգերի հետ:

Բակի հյուսիս-արևելյան անկյունում,  
 բուրգին կից պահպանվել է ևս մեկ նմանափայ  
 թաղամածկ դահլիճ, որի ճակատամասի կեսից  
 ավելին բռնում է երկարությամբ մինչև ապարան-  
 քի մուրքը ձգված մեկ այլ թաղամածկ սենյակ:  
 Բրգակից առաջին դահլիճի երկու կամարակապ  
 որմնախորշերի շարքը, հավասար քայլով դասա-  
 վորված ևս հինգ խորշով, շարունակվում է  
 արևելյան պարսպապարի երկարությամբ՝  
 վկայելով, որ այսպետ ևս շինություններ են եղել:  
 Ընդ որում, ակնհայտ է, որ հարավային կողմում  
 նույնպես եղել է բրգակից դահլիճ, իսկ երկուսի  
 միջև առաջացած կենտրոնական մասը ճակա-  
 րաբաց է եղել: Այդ են վկայում պահպանված  
 դահլիճի՝ սրան կից կանգուն պարետրն ու հարա-  
 վային մուրքը, ինչպես նաև նմանակերպ եռա-  
 դահլիճ հորինվածքի առկայությունը հանդիպա-  
 կաց շինությունների շարքում:

Ուշագրավ է, որ այսպետ ևս, ինչպես նույ-  
 նափայ սենյակաշարեր ունեցող Նոռեկավանի  
 երկրորդ և Մոխրաթաղի ապարանքներում,  
 կենտրոնական երեսբաց դահլիճի ծածկից ոչ մի  
 հետք չի մնացել, մինչդեռ եզրայինների թաղա-  
 մածկը որոշակի է: Ուստի ենթադրվում է, որ  
 դրանք փայտաշեն ծածկ են ունեցել՝ ճակատային  
 կողմում հենված նույնպես փայտե սյուների վրա  
 (ճակատային խորքի պատում որմնախորշերի  
 առկայությունը բացառում է դրանց ամբողջովին  
 բաց լինելը):

Ապարանքում աջքի է ընկնում հյուսիս-  
 արևելյան դահլիճի առջևից կցված սենյակը՝ պա-  
 րերի ողջ ներքին մակերեսը զբաղեցնող փարբեր  
 չափի որմնախորշերով, բուխարիով և բակահա-  
 յաց երկու լայն ու կամարակապ բացվածքներով:  
 Նամակառույցի ընդհանուր հարակազմային հո-  
 րինվածքից ելնելով կարելի է ենթադրել, որ այս  
 սենյակը ևս կրկնվել է բակի հարավային կող-  
 մում, մյուսների հետ համաչափորեն ընդգրկելով  
 բակը:

Ապարանքի պարիսպները, պարերն ու  
 բուրգերը պահպանվել են 3-5 մ բարձրությամբ,  
 թաղամածկերը մասամբ փլված են: Պարիսպնե-  
 րը 1,2 մ հաստություն ունեն, սենյակների պարե-  
 րը՝ 0,8-1,0 մ և կառուցված են կոպրապաշ ողձա-  
 քարով. շարվածքի անկյունամասերում ու կա-  
 մարնե բուն քարերը փոքր-ինչ հղկված են: Սրբա-  
 պաշով ու կառուցման խնամքով առանձնանում է

<sup>263</sup> Լեո. հր. 3, գիրք Բ, էջ 24, նույնի՝ հոջայական կապիտալ,  
 էջ 169:

<sup>264</sup> М. Саркисян, ук. соч. с. 9-11.



*XV. ՇՈՒՇԻ. Մեղք-Շահնազարյանների ապարանքը հր-արվ-ից և հս-արվ բակստայաց ճակատը*

ապարանքի մուտքը. միակտոր քարից տաշված խոշորաչափ բարավորաքարը (2,4 x 0,7 x 0,45 մ) դրված է 2,1 մ բարձրությամբ, դարձյալ միակտոր եզրաեղուսպների վրա և առնված է կիսաշրջանագծային կամարի մեջ:

Շուշիի մելիքական ապարանքները պարկերավորում են հայոց բերդաքաղաքի սկզբնա-

վորման շրջանի պատմությունը, վերահասարակում են ամրոցակերպ մելիքական քանդակա-նուցման փարածուն ավանդույթը ուշ միջնադարի արցախահայոց միջավայրում և իրենց հորինվածքային ձևերով հարստացնում են բնագավառի մասին առկա պատկերացումները:





## ԹՈՒԽՆԵԿԱԼ

Ապարանքի ավերակները գտնվում են ԼՂՏ Ասկերանի շրջանի Թուխնակալ գյուղատեղում, մեղմ թեթությամբ լեռնալանջի վրա<sup>265</sup>: Ավերաբանոց գյուղի և Ղևոնդանց անապատ կամ Ղոնդիկ անունով հայտնի ուշ միջնադարյան վանքի մերձակայքում փարածված Թուխնակալը Վարանդա գավառի լքված բնակավայրերից է<sup>266</sup>, սակայն նրա մասին որևէ գրավոր հիշատակություն մեզ հայտնի չէ: Ննավայրում պահպանված ապարանքը ևս երկրամասին վերաբերող փեղագրական երկերում չի հիշվում: Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների քաջագիտակ Ռ. Արզարյանի վկայությամբ, մերձակայքի բնակիչներն այն վերագրում են Մելիք-Դոլուխանյաններին: Մելիքական շրջանի պատմական աղբյուրներին հայտնի չէ նաև այս փոհմանունը, սակայն 19-րդ դարի երկու վիմագիր, ճիշտ է անուղղակի ձևով, այնուամենայնիվ հաստատում են Վարանդայում նրանց ունեցած երբեմնի բարձր դիրքի մասին:

Վկայագրերից մեկը նույն գավառի Խունըշինակ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունն է.

«Ի ՌՅԹ (1860)... կառուցաւ եկեղեցիս... արդեամբք և ծախիւք Շուշի քաղքցի բարեպաշտօն ազնուագզի աղա Նայրապետ բէկ Դօլուխանեանց ի յիշարակ հոգոյ իւրոյ և ամուսնոյն իւրոյ Բակունայ Մելիք Բէկլարեանց և... հօրն Բաղդասար բէկի...»<sup>267</sup>:

Երկրորդը նույն 1860 թվականին Գյուլիստան գավառի Վերիշեն գյուղում գտնված մի վկայական է, որը պատմում է այսպեղ հաստատու-

ված Մելիք-Շահնագարյան փոհմից մի ոմն «Բէկլար բէկ Մելիք Շահնագար Շահփուրեանցի» նախնիների երբեմնի իրավունքների մասին ստորագրված առաջինը. «Մուսայել Դօլուխանեանց»<sup>268</sup>: Ամենայն հավանականությամբ «Շուշի քաղքցի բարեպաշտն ու ազնվագզի» այս «բէկերի» նախնիները Վարանդայում մելիքական փիլոզոս ու փոքր իրավունքներ են ձեռք բերել 18-րդ դարի վերջերին, Մելիք-Շահնագար Բ-ի մահից (1792 թ.) հետո և ավանդական կարգով կառուցել իրենց ապարանքը նստավայր Թուխնակալում, որը, թերևս, նրանց միակ փիրույթն է եղել: Դժվար չէ կռահել, որ հզոր ու նշանավոր Մելիք-Շահնագարյանների ոստան Ավերարանցից ոչ հեռու գտնվող այս ապարանքի փերերը շար համեստ ու աննշան դեր են ունեցել գավառի վերջին դարերի կյանքում, քանզի Մելիք-Դոլուխանյան փոհմի հետ կապված որևէ հիշարժան դեմք ու դեպք փեղ չի գտել ապարանքների շինարարության ամենաբեղուն շրջանին՝ 18-րդ դարին վերաբերող հարուստ սկզբնաղբյուրներում և պատմական երկերում:

Այս մասին է վկայում նաև դարի վերջերին խիստ բնորոշ նկարագրով, սակայն համեմատաբար համեստ չափերով ու ճարտարապետությամբ առանձնացող ապարանքը:

Նարավ-արևելահայաց լանջի վրա կառուցված ապարանքի մեզ հասած շինությունները ընդհանուր հարակազմում հյուսիսից-հարավ ձգված մեկ ուղղանկյուն ամբողջություն են կազմում (11,3 x 17,4 մ) և երեսապատով հաված են լանջին, իսկ գլխավոր՝ հարավային ճակատով ուղղված են արևելք: Նորինվածքի կենտրոնում գլխատունն է՝ նախամուտք-պատշգամբով, երկու

<sup>265</sup> Շարադրանքը կազմված է ըստ Ռ. Արզարյանի փրամատրած նյութերի:

<sup>266</sup> Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի հուշարձանները, էջ 169:

<sup>267</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 118-119:

<sup>268</sup> Նույն փեղում, էջ 248:

կողքին՝ դրանց ընդհանուր երկարության չափով ձգված մեկական դահլիճ: Ընդ որում, գլխապուրնն ու հյուսիսակողմյան դահլիճը մի հարթության վրա են և մուտք ունեն նախասրահից, իսկ լանջի թեքության պարճառով ցածրադիր մյուս դահլիճի մուտքը բակից է:

Գլխապուրնը հարակազմում քառակուսի դահլիճ է (ներքուստ՝ 6,2 x 6,3 մ)՝ քարաշեն, երդիկակիր գոցվող թաղերով կազմված գմբեթածածկով:



Այսպեղ մեծ հեքաքրքրություն են ներկայացնում հարավային պապում թողնված երկու փոքրիկ պարուհանները, որոնց բացվածքները արտաքուստ բացվում են կից դահլիճի փանիքից վեր, իսկ ներքուստ շեշտակի լայնացված են և վերին մասով խորանում են թաղի զանգվածի մեջ:

Պարուհանների միջև օջախ-բուխարին է, իսկ մյուս կողմում՝ մեկական պահարանախորշեր, ինչպիսի երեքն էլ կան մուտքի դիմացի պապում: Գլխապան արևելյան պապին՝ նախասրահում պահպանված երկու խորշերն ու թաղի մնացորդը վկայում են, որ այն քարաշեն ծածկ է ունեցել և, ըստ այդմ, չպահպանված ճակատամասում ևս քարաշեն է եղել՝ հավանաբար երկկամար լուծումով:

Նախասրահի աջակողմյան ընդարձակ ու թաղածածկ դահլիճը (ներքուստ՝ 3,65 x 9,75 մ) այժմ կիսավեր է. բացակայում են հյուսիսային և արևմտյան պապերն ու ծածկի մեծ մասը: Այսպեղ, խորքի պապի մեջտեղում լայն բացվածքով բուխարին է՝ երկու կողմերի կամարախորշերով, իսկ գլխապան ու նախասրահի հեք ընդհանուր երկայնական պապում մուտքի շարունակությունը կազմող յոթ խորշերի շարքն է:

Ինչպես երևում է, նախասրահով կապված գլխապուրնն ու այս դահլիճը մեղիքական փան բնակելի մասն են կազմել, իսկ մյուս՝ ցածրադիր կողմի ավելի ընդարձակ (ներքուստ՝ 4,0 x 9,75 մ) դահլիճն իր փեղադիրքով, ցածրիկ թաղածածկով, մեկուսի մուտքով ու ներքին պահարանախորշերի և բուխարու բացակայությամբ, ըստ երևույթին օժանդակ-փնտեսական նշանակություն է ունեցել:

Շինությունների այս խմբից փոքր-ինչ հեռու, հյուսիսային կողմում սրանց զուգահեռ պահպանվել է մեկուսի կանգնած մի երկարավուն, թաղածածկ շենք, սակայն առկա նյութերը հնարավորություն չեն տալիս որոշակիորեն ասելու,



31. ԹՈՒՒՆԱԿԱԼԻ ԱՊԵՐՄԵՔ.  
Չափագրություն-վերակազմություն

թե դրանք ինչքանով և ինչպես են կապված եղել: Պարզ չէ նաև ապարանքի նախնական հարակազմային հորինվածքի ամբողջ պարկերը՝ մասնավորապես պարսպապարերի առկայությունն ու դրանց մոտավոր փեղը:


Ապարանքը կառուցված է հիմնականում կոպտաքարաշ ու ճեղքված քարից, բացվածքների եզրամասերն ու կամարները շարված են սրբափաշով:

Թուխնակալի մեղիքական փունը 18-րդ դարի պալատաշինության ևս մեկ օրինակ է և անպաճույճ ճարտարապետությամբ լրացնում-հարստացնում է բնագավառի պարմությունը:



*XVI. ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՄԵԼԻՔ-ԴՊՐՈՒԽԱՆՅԱՆՆԵՐԻ ԱՊԱՐԱՆՔՆԵՐ ԽԱՎՐԻԿ*

## ՏԵՂ



Ապարանքը գրնվում է ՏՏ Սյունիքի մարզի Տեղ գյուղի կենտրոնական մասում, Սբ. Գևորգ եկեղեցու հյուսիս-արևելյան կողմով անցնող ճանապարհների միջև, հարավահայաց լանջի վրա<sup>269</sup>: Ապարանքի կառուցման մասին շինարարական արձանագրություն կա զույգ գլխաքննչից արևմտյանի առջևից կցված սենյակի մուտքի հարթ ու երկարավուն բարավորասալի վրա.

«ԹՎ ՌՄԼԲ (1783) Ի ՎԱԵԼՈՒՄՆ ՄԵԼԻՔ ԲԱՐԵՈՒԴԱՐԻ ՈՐԹԻ ԴԱՎԻԹ ՊԵԿՍ ՇԻՆԵՑԻ ԱՅՍ ԱՄԱՐԱԹՍ ԻԲՐԱՑԻՄ ԽԱՆԻ ԺԱՄԱՆԱԿՕՎՆ»<sup>270</sup>:

Երկտող արձանագրության առաջին փողի «պէկս» բառի կիսված-անավարտ «Ս»-ն, երկրորդ փողի «ժամանակօվն»-ից հետո երևացող երկարված-անորոշ փառի մասնիկը, ինչպես նաև փողերը շրջանակող հորիզոնական գծերի ընդհատումն այդ մասում վկայում են, որ վիմագրի քարը շարունակություն է ունեցել, իսկ շրջանակագծերն ավարտվել են սկզբի ձևը կրկնող սրածայր աղեղներով: Բարավորասալի այլ փաշվածքներից ևս ակնհայտ է, որ այն իր նախնական փեղում չէ և կտրվել, փաշվել ու հարմարեցվել է այսփեղ, ապարանքի հեղազգա վերակառուցման ժամանակ:

Ուշագրավ է նաև այս սենյակի կողքի գլխաքանը կից երկրորդի շքամուտքի բարավորաքարի թերի արձանագրությունը: Քարի կիսաշրջանաձև ճակատին փորված ուղղանկյուն

շրջանակի վերին եզրի երկայնքով փորագրված է.

«Ի ՎԱԵԼՈՒՄՆ ՇԻՆԵՑԻ»<sup>271</sup>:

Ինչպես երևում է, նախապես փորված շրջանակի մեջ խիտ կցագրերով սկսելով շինարարական արձանագրությունը, գրիչն զգացել է, որ այն չի փեղավորվի շրջանակի մեջ և, անավարտ թողնելով գիրը, նույն բառերով սկսել ու ավարտել է նորը: Իսկ սա դարձյալ նշանակում է, որ Մելիք-Բարխուդարի որդի Դավիթ-Քեկի «ամարաթ»-ապարանքի 1783 թ. շինարարական վկայագիրը վերաբերում է համակառուցյի ամբողջովին քարաշեն գլխաքանավոր մասին և ժամանակագրական որևէ առնչություն չունի այն հարթածածկ շինության հետ, որում գրնվում է:

Ապարանքն իր թվակիր արձանագրությանը գյուղի վերջին դարերի պարամության կարևոր հուշարձաններից է, սակայն Տեղը Սյունիքի հնագույն բնակավայրերից է և հիշվում է 10-րդ դարից: Սյունյաց թագուհի Շահանդուխարը 988 թ. հիմնելով ու շենացնելով գյուղը, նվիրել է Տաթևի վանքին, որի հարկացուցակում խոշորներից էր 13-րդ դարում<sup>272</sup>: Գյուղի գերեզմանոցում պահպանված բազմաթիվ խաչքարերն ու փապանաքարերը 13-18-րդ դարերում Տեղի անընդհար գոյարևման վկաներն են<sup>273</sup>, իսկ Սբ. Գևորգ եկեղեցու հնագույն 4-5-րդ դարերին բնորոշ մասերը՝ նրա շար ավելի խորն անցյալի ապացույցը: Այս եկեղեցու հետ է կապված գյուղի վերջին իշխողների անվան առաջին հիշարակությունը: Ըստ հարավային մուտքի կամարակալ քարի արձա-

<sup>269</sup> Նկարագրությունը և չափագրությունը՝ ըստ 1982 թ. վիճակի: Այժմ հուշարձանը ամբողջովին նորոգված-վերակառուցված է:

<sup>270</sup> Տե՛ն նաև՝ «Դիվան հայ վիմագրության», պրակ 2, Ե., 1960, էջ 70, Ն. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 70, ծան. 30:

<sup>271</sup> Տե՛ն նաև՝ «Դիվան», 2, էջ 70:

<sup>272</sup> Սպ. Օրբելյան, Սյունիքի պարամություն, էջ 251-252, 399:

<sup>273</sup> «Դիվան հայ վիմագրության», 2, էջ 71-75:

նագրության՝ այն 1747 թ. «Նորէքեցան Բարխուտարն, իւր կողակից Թաճումն»<sup>274</sup>: Սա, անշուշտ, հաջորդ փարոս՝ 1748 թ. Խնձորեսկի անապատ եկեղեցու բակում գեղաքանդակ փապանաբարի փակ ամփոփված այն «ՄԵԾ ԻՇԽԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՆ Է, Ի ԳԵՂՋԷՆ ՏԵՂՈՒԷ»<sup>275</sup>, որ եղբոր հետ գեներով դուրս էր եկել Նախիջևանի խանի հերթական ասպարակության դեմ ու նահապակվել<sup>276</sup>: Մելիք-Բարխուտարի որդին էր 1783 թ. ապարանք կառուցող Դավիթ-Բեկը, որը նույն 1783 թ. մի փաստաթղթում հիշվում է հայոց ազգաբնակչության նոր վերելքը գլխավորողների շարքում, որպես «Ղափանու Դաւիթ մելիք Բարխուտարեան Տեղու»<sup>277</sup>, իսկ մեկ այլ փրեղեկությամբ հայրնի է որպես «ազնուագգի և խոհմամիւր Դաւիթ Բեկ, որ էլ գլխաւոր բնակչաց Տեղոյ յսկիզբն դարուս»<sup>278</sup>:

Ուրեմն Դավիթ-Բեկ Մելիք-Բարխուտարյանը 1748 թ. մելիքական աթոռին հաջորդել է հորը, 1783 թ. կառուցել իր նստոց-ապարանքը Տեղ գյուղում և այնպէս իշխել մինչև հաջորդ դարի սկզբները: Երևելի այս մելիքի երկարամյա կենսագրության ամենասակնառու վկան նրա ապարանքն է՝ կառուցված դարաշրջանի պալատաշինության լավագույն ավանդույթներով<sup>279</sup>:

Ապարանքը բաղկացած է արևելք-արևմուտք ուղղությամբ մի շարքով դասավորված երկու կից գլխապնից, դրանց երկու կողմի մեկական դահլիճից և շարքի հարավային, բակահայաց ճակատը բռնող միասնական սրահից, որը լայնական պատերով մասնատված ու մասամբ փակված է հեքազա վերակառուցումների հետևանքով: Ընդհանուր հարակազմում մեկ ուղղանկյան մեջ ամփոփված (արտաքուստ՝ 13,0 x 26,5 մ) այս շինությունները երևամասով խորացած են լանջի մեջ և, ըստ պահպանված մնացորդների, բակի հետ միասնական, պարսպապար համակառույց են կազմել: Անորոշ է միայն վերջինիս արևմտյան վերջավորության փեղը, որպէսզ Է՝ եկեղեցու ուղղությամբ, հավանաբար եղել է դարպասը:

Գլխապները միաչափ են ու միանման, քառակուսուց փոքր-ինչ շեղված հարակազմով (ներքուստ՝ 6,55 x 6,85 մ) և միջնապարի եզրերով կողք-կողքի բացվող մեկական մուտք ունեն սրա-

հից: Ծածկերն իրականացված են քառանիստ-բրգաձև գոցվող թաղերով, որոնցից արևմտյան կողմինը ամբողջովին կանգուն է և ավարտվում է բոլորաձև երդիկանցքով, իսկ արևելյանը մեծ մասամբ փլված է: Գլխապների պատերում միայն երկու հանդիպակաց, փոքր ու հարթածածկ խորշեր կան՝ լայնական առանցքի ուղղությամբ, իսկ կողքերից՝ ճակատապարի ներսի երեսով բացվող մուտքերով կապվում են երկու եզրային դահլիճի հետ:

Սրանք ուղղանկյուն հարակազմով ու թաղակապ ծածկով պարզ շինություններ են (արևելյանը ներքուստ՝ 3,7 x 6,8 մ, արևմտյանը՝ 4,1 x 6,9 մ), որոնց խորքի պատում ավանդական բուխարին է՝ գույգ փոքրիկ ու հարթածածկ խորշերի միջև, որպիսիք երկուական կան նաև երկայնական պատերում: Ուշագրավ է, որ դահլիճներից արևելյանը սրահի կողմից միայն նեղլիկ պատուհան ունի, իսկ արևմտյանի լայն պատուհանն ու մուտքը, ինչպես նաև դրանց առջևի կամարակապ նախամուտքը ակնհայտորեն հեքազա վերակառուցման արդյունք են և, ըստ ոճական ընդհանրության, ժամանակակից են նախամուտքին կից և 19-րդ դարին բնորոշ կրկնահարկ-հարթածածկ հորինվածքով սենյակին: Ն. Պապուխյանի չափագրության ժամանակ (1960-ական թթ.) նման մի սենյակ էլ եղել է վերջինիս արևելյան արձանագիր մուտքի դիմաց՝ գլխապների մուտքերի մյուս կողմում, իսկ դրանց միմյանց կապող կամարաթաղով կազմվել է գլխապների նախամուտքը, որն իր հերթին հեքազայում մեջփեղից պատով կիսվել է և մասամբ վերածվել սենյակի<sup>280</sup>: Չնայած Ն. Պապուխյանը ևս նկատել է ապարանքի վերակառուցումները, սակայն նրա կարծիքով՝ համակառույցի «հնագույն մասը երկու քարակերպ գլխապուն, մի թաղակապ սենյակ և մի թաղակապ նախամուտք է, (որից) աջ և ձախ շենքի ճակատն են բռնել այժմ ձևավորված, ըստ երևույթին նույնպես թաղակապ բաժանմունքներ, որոնց դռները բացվել են նախամուտքի մեջ: Ձախակողմյան բարավորի վրա գրվում է շինարարական արձանագրությունը: Նամակառույցի մյուս մասերը հեքազա հավելումներ են, որոնցից... է արևմտյան թաղակապ սենյակը»<sup>281</sup>: Դժվար է համաձայնել այս շերտագրությանը, քանզի պահպանված հեքաբերը, որոնք մասամբ միայն այժմ են բացվել և փեսանելի չեն եղել հեղինակին, հակառակն են ապացուցում:

<sup>274</sup> Նույն փեղում, էջ 70:

<sup>275</sup> Նույն փեղում, էջ 64:

<sup>276</sup> Սյր. Լիսիցյան, Ձանգեգուրի հայերը, էջ 36, ծան. 18:


<sup>277</sup> Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 222.

<sup>278</sup> Ղ. Ալիշան, Սիսական, էջ 264:


<sup>279</sup> Նուշարձանին բազմիցս անդրադարձել է Ն. Պապուխյանը: Տե՛ս նրա՝ Սիսիանի, Գորիսի ու Ղափանի շրջանների ժողովրդական ճարտարապետության հուշարձանները, «Տեղեկագիր հաս. գիյւթ.», 1963, 11, էջ 57, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 69-70, «Չայրվող ծածկերով բնակարանները», էջ 332 և պատկ. 102:

<sup>280</sup> Ն. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 69:

<sup>281</sup> Նույն փեղում, էջ 70:



32. ՏԵՂԻ ԱՊԱՐԱՆՔ. Չափագրություն





33. ՏԵՂԻ ԱՊԱՐԱՆՔ. Վերակազմություն

Մասնավորապես չի նկատվել, որ արևմտյան կողմի դահլիճը արևելյանի ձևերը կրկնող մուտք ունի գլխաբանից (որն, ի դեպ, այժմ էլ կիսով չափ փակված է), ուստի պարկանում է ապարանքի նախնական հորինվածքին, մանավանդ որ, ինչպես տեսանք, այդպիսի դահլիճները գլխաբանավոր մեխիզական փոխարեն փարածված են և կանոնիկ ձև ու տեղադրիք ունեն։ Ըստ հետքերի՝ ակնհայտ է նաև ապարանքի ճակատային մասի սկզբնական լուծումն ու վերակառուցման հետագա ընթացքը։ Այսպես, արևմտյան դահլիճի նախամուտքի արտաքին եզրապատի գույգ խորշերով խոշոր բուխարին, դրանցից վեր պահպանված երկայնական թաղի մնացորդը և գլխաբանների ճակատամասում գտնվող խորշերը (որոնցից մեկը մնացել է կրկնահարկ կցակառույցի առաջին հարկի առաստաղի մոտ, իսկ երկրորդը փակված է եղել մյուս կցակառույցի պարով) վկայում են, որ համակառույցի նախնական հորինվածքն ունեցել է բակահայաց սյունազարդ ու կամարակապ սրահ՝ ծածկված մեկ միասնական թաղով։ Հավանաբար վերջինիս փլուզման հետևանքով հետագայում, 19-րդ դարի ընթացքում, քառասյուն սրահի սյուների քայլին համապատասխան երկարությամբ և

սրահի լայնության չափով երկու կրկնահարկ ու գերանածածկ սենյակներ են կառուցվել, իսկ գլխաբանների շքամուտքերի և եզրային դահլիճների առջևում այդպիսով առաջացած նախամուտքերը ծածկվել են ճակատաբաց կամարաթաղերով։ Սակայն, քանի որ դահլիճները այդ նախասրահներից մուտքեր չունեին, դրանցից արևմտյանի ճակատապատում մուտք է բացվել և պարուհանը լայնացվել, իսկ արևելյան կողմի նախասրահը դարձյալ վեր է ածվել սենյակի<sup>282</sup>։ (Այս ժամանակաշրջանին են վերաբերում նաև ապարանքի արևելյան կողմից կցված սենյակներն ու պարզգամբները։)

Նուշարձանն այժմ ամբողջովին վերանորոգված է այս վերակառուցումներից պահպանված հետքերի հիման վրա, մերօրյա անհիմն հավելումներով ու աղավաղումներով, որի հետևանքով չնայած պահպանվում ու օգտագործվում է, սակայն խիստ խաթարված է նրա նախնական հորինվածքն ու արտաքին տեսքը։

<sup>282</sup> Այսպես 19-րդ դարին խիստ բնորոշ են հարկապես արևմտյան կցակառույցի երկրորդ հարկի մուտքն ու պարուհանը՝ շեղ մեքողական ցանցով պարված շրջանակներով, ինչպես նաև դրանց առջևի փայտաշեն պարզամբը, որի բարձակային գերանների խոռոչները պարի մեջ հստակ երևում են։



XVII. ՏԵՂ. Մելիք-Բարխուդարյանների ապարանըը հր-արմ-ից, ապարանի շինարարական արձանագրությունը և գլխավորների շքանույրերը (1980-ական թթ.)


Ապարանքը կառուցված է հիմնականում կոպրապաշ ու ճեղքված քարից, սրբապաշ են միայն մուրքերի և խորշերի եզրաքարերը: Պատերը հնագույն մասում 1,1-1,2 մ հասություն ունեն, հավելված սենյակում՝ 0,7-0,8 մ: Կանգուն գլխապան ներսում պատերը սվաղված են, իսկ ծածկը խիստ սևացած է հեպագայում ավելացված թոնրի ծխից: Կառուցման խնամքով ու միանման, կամարակապ, պարզ հորինվածքով առանձնանում են գլխապաների շքամուրքերը, որոնց ողջ ճակատամասը՝ մինչև սյունասարահի թաղածածկի հիմքը, սրբապաշ է: Մեծ վարպետությամբ է մշակված հարկապես արևմտյան կողմի դահլիճի բուխարու ճակարը. կիսաբոլորաձև օջախախոր-

շի բարձր ու գծագարդ եզրաքարերն ավարվում են երկաղեղ-սրագագաթ կամարաքարով, որի հետ մի կտոր քարից կերպված է նաև ոճավորված-սաղավարպաձև ծխանցքածածկ քարը:

Տեղի մելիքական ապարանքն իր նախաստեղծ ճարտարապետական հորինվածքի գույգ քարակերպ-գմբեթավոր գլխապաներով, թաղածածկ դահլիճներով, սյունագարդ կամարասահով ու պարսպափակ ամբողջականությամբ 18-րդ դարի վերջի պալապաշինության մեծարժեք հուշարձան է և այդ շրջանից մեզ հասած միակը լինելով Սյունիքում՝ կարևոր փեղ ունի բնագավառի պատմության մեջ:




ՂԱԻՆ ԵՐԿՐՈՒԴ



ՀԱՐԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

## ՏԵԼԻՔԻ ԵՎ ԿԱՌԻՑԱՊԵՏՈՒԿ



Մելիքանիստ կենտրոններում պահպանված ու միայն նկարագրությամբ հայտնի ապարանքները դիտարկելիս տեսանք, որ դրանք, գրեթե առանց բացառության, ամրացված ու պարփակ բնակելի-պալատական համակառույցներ են և, ըստ կառուցապատման միջավայրում ունեցած իրենց տեղադիրքի, փարբերակվում են երկու խմբի՝

- ա) ամրոցների ապարանքներ,
- բ) բնակավայրերի ապարանքներ:

Առաջին դեպքում դրանք կառուցվել են որպես մելիքանիստ ամրոցի պաշտպանական և այլ շինությունների շարունակական մաս կազմող միջնաբերդեր՝ դառնալով ճարտարապետական համալիրի հորինվածքային միջուկն ու գլխավոր շեշտը, միաժամանակ ենթարկվելով տեղանքի ու կառուցապատման պայմանների թելադրանքին: Այս խմբի ամենաբնութագրական ու համեմատաբար լավ պահպանված հուշարձանները՝ Գյուլիստանի բերդի և Ջրաբերդի միջնաբերդ-ապարանքները, տեղադրված են բնականից անառիկ ժայռազանգվածների վրա կառուցված ամրոցի բարձրադիր ու նպաստավոր մասում՝ արտաքին հարակաճելով գրեթե կրկնելով փարածքը սահմանափակող բնական պարսպների եզրագիծը: Ներգծված լինելով բերդամրոցի ընդհանուր պաշտպանական կառուցապատման համակարգում և ըստ այդմ լավագույնս օգտագործելով տեղանքի պայմանները՝ միջնաբերդ-ապարանքները միաժամանակ մարտելի կողմերից ամրացվել են կրկնապարիսպներով, բուրգերով և այլ կառույցներով, որոնք ապարանքի հետ մեկ միասնական ամբողջություն են կազմում: Այս է պարճառը, որ միջնաբերդ-ապարանքները խիստ որոշակի սահմաններով, ինքնուրույն ու ավարտուն ճարտարապետական հորինվածքով համակառույցներ չեն և, բնականաբար, միայն մելիքական ընտանիքի բնակարաններ չեն եղել, այլ, որոշ առումով նաև գորակայան-հենակետեր: Ուստի, հիշյալ պարճառներից բացի, այս հանգամանքով պետք է բացատրել նաև միջնաբերդ-ապարանքների խիստ պարզ ու գուսպ ճարտարապետական լուծումները. անկանոն ընդհանուր հարակաճելի մեջ առնված գրեթե միանման ու փոքրաչափ, հարթածածկ սենյակները պարսպակից շարքերով դասավորված են ներքին միջանցքի երկու կողմում՝ մեծ մասամբ գուրկ որևէ ներքին ու արտաքին վայելչությունից (շքամուտք, հարդարանք) կամ օժանդակ բարեհարմարությունից (նախաարահ, պարզգամբ, ներքին բակ):

Նախկանշական է, որ բարձր ու ապահով տեղադիրքի շնորհիվ ապարանքի գլխավոր մելիքական բնակելի հարկաբաժնի դահլիճները լայն պատուհաններ ունեն արտաքին ճակատներում՝ ուղղված շրջակա բնապարկերի լավագույն տեսարանների կողմը: Այս առումով դարձյալ ուշագրավ են հիշյալ երկու հուշարձանները. Գյուլիստանի բերդի կրկնահարկ մելիքական ընդունարան-գահասրահի հարավ-արևելահայաց լայն պատուհաններից բացվող տեսարանի հեռապարկերում ձորահովտի անբառածածկ լանջերին բազմաձև բարձրագագաթ Մռավ սարն է, իսկ Ջրաբերդի մելիքական դահլիճների արևմտահայաց նույնպիսի պատուհանները շրջանակում են Թարթառ ու Թրդի գետերի անբառտուր հովտահեռուները, դրանց մշուշված լեռնափեշերին ձերմակով ուրվագծված Երիցմանկանց վանքը: Ինչ խոսք, ճարտարապետության ու բնության փոխներթափանցված ու ներդաշնակ այս կապը հետևանքն ու անուղղակի արդյունքն է նաև ամրոցի՝ որպես պաշտպանական գլխավոր հենակետի և շրջակա փարածքների ու այլ ամրացված դիտարկելիքների տեսողական կապի անհրաժեշտության:

Բնական է, որ ամրոցների միջնաբերդապարանքները, որպես ավարաբեր-իշխողի բնակարաններ, ինչպես միջնադարում, այնպես էլ ծանր փորձություններով լի և համայն երկրի համար աղետաբեր ու անկումային ուշ միջնադարում, առավելապես հարմարեցված էին պաշտպանական կարիքներին և նվազագույն պայմաններ ունեին խաղաղ ժամանակներում առօրյա կենցաղավարման համար: Բացի այս, ամրոցների դժվարամարտի բարձունքներին կառուցված այս մելիքական փնտրված ու հեռու էին և՛ հպարակ ժողովրդի բնակարաններից, և՛ հոգևոր-պաշտամունքային օջախներից: Մինչդեռ մելիքները, որպես գավառային, երբեմն էլ՝ գյուղական մանր իշխողներ, առօրյայում խիստ կապված էին ժողովրդական լայն խավերի ու եկեղեցու հետ<sup>283</sup>, և այս պարճառով է նաև, որ իրենց բնակարան-ապարանքները գլխավորապես կառուցել են նստոց-բնակավայրերում:

Մելիքանիստ բնակավայրերը մեծ մասամբ հնուց հայտնի գյուղեր կամ ոչ մեծ գյուղական ավաններ էին. փարերայնորեն սփռված լեռնային ձորահովիտների թեքալիք լանջերին և հեռու լիներով բանուկ ճանապարհներից, դրանց ու միմյանց հետ կապված էին ճյուղավորված լեռնային ճանապարհներով: Այս բնակավայրերի ընդհանուր առանձնահատկություններից են փողոցների արևահայացությունը և քամիներից պաշտպանվածությունը, փեղում և շրջակայքում ջրառար աղբյուրների, գետերի, արոպավայրերի ու անտառների առկայությունը:

Սակայն, ինչպես Արցախի և Սյունիքի ուշ միջնադարյան գրեթե բոլոր լեռնային բնակավայրերի, այնպես էլ մելիքանիստ կենտրոնների փեղադարձային ամենակարևոր նախապայմանը պաշտպանվածությունն էր: Այս նկատառումով է, որ դրանք կառուցվել են կամ ամրոցների մերձակայքում (Տող, Գյուլիսարան, Քաղաքաբերդ), կամ թիկունքում ունեցել են բնական պարսպարաններ ու թաքսպոցներ՝ անտառներ, լեռնոտ ձորեր ու բարձունքներ, անձավներ (Քաշաթաղ, Խնածախ, Խնձորեն, Տեղ, Հոռեկավան, Մոխրաթաղ), կամ, լավագույն դեպքում, դրանց հետ մեկտեղ ունեցել են նաև բնակավայրը եզերող իրենց ուրույն պաշտպանական կառույցները (Ականաբերդ, Քաղաքաբերդ, Ավերարանոց):

17-18-րդ դարերում բնակավայրերի պաշտպանության գործում մեծ դեր են խաղացել նաև դրանց շրջակայքում լայնորեն փարածված լեռնային փոքր, ամրացված գորակայան-հենակետերը՝ բերդերի, վանք-ամրոցների ու բերդավանների հետ ընդհանրական անունով հայտնի «սղնախները»<sup>284</sup>:

Արցախ-Սյունիք լեռնաշխարհի այս հարմարավետ ու նպաստավոր միջավայրում են կառուցվել մելիքանիստ բնակավայրերի ապարանքները, որոնք, ինչպես տեսանք, մի-մի պաշտպանական կառույց են եղել:

Բնական է, որ ապարանքները, թե՛ որպես փեղի իշխողի բնական, թե՛ որպես փոքրիկ ամրոց, կառուցվել են բնակավայրերի կենտրոնական մասում, գլխավոր ճանապարհների մոտ, պաշտամունքային համալիրից կամ եկեղեցուց ոչ հեռու և ակնառու փեղադիրքով: Լեռնալանջերին փարերայնորեն ու խիտ կառուցապարված և մեծ մասամբ կիսագերանափող ու միահարկ գեղջկական բնակարանների միջավայրում ապարանքներն առանձնացել են իրենց դիրքով ու չափերով՝ շուրջն ունենալով բաց փարածքներ կամ օժանդակ կառույցներ (Հոռեկավանում՝ բաղնիք, Քաղաքաբերդում՝ բաղնիք, ձիթան, ձիանոց-ախոռ, պահակատուն):

Եկեղեցական շենքերին մոտ գտնվելով՝ ապարանքները մոտ են եղել նաև դրանց շուրջը փարածված մելիքական-տոհմական գերեզմանոցներին (Ավերարանոց, Գյուլիսարան, Հոռեկավան, Մոխրաթաղ), իսկ որոշ դեպքերում նույն ապարանքաբեր-մելիքներն ու նրանց տոհմակիցներն են կառուցել կամ վերանորոգել այդ եկեղեցիները (Ավերարանոց, Տեղ, Գյուլիսարան, Տող):


Ակնհայտ է, որ հենց ապարանք-եկեղեցի ճարտարապետական համադրության առանցքի շուրջն է կազմավորվել մելիքականի հասարակական կենտրոնը, որից հեռու չեն եղել աղբյուրը, բաղնիքը, հավանաբար նաև՝ առևտրական ու ժամանցի փոքր հրապարակները (առօրյա խոսքով հայտնի «գյուղամեջը» կամ «շենամեջը»)՝<sup>285</sup>: Այս պարճառով է, որ նույն բնակավայրում ապարանքները կառուցվել են իրար մոտ՝ շեշտելով հասարակական կենտրոնի կամ «մելիքական թաղի» կարևորությունը: Ավաճի լավագույն օրինակներ են Հոռեկավանում՝ Հոռեկա վանքի հարևանությամբ կառուցված երկու ապարանքները, Ավերարանոցում՝ Սբ. Աստվածածին եկեղեցու և Կուսանաց անապատի միջև գտնված երեք ապարանքները, Շուշիի ապարանքները: Նույն տոհմի մելիքագունների բնակարաններից բաղկացած այս պալատական համալիրները բնույթ էին խոշոր նստոց-բնակավայրերին (ինչպիսիք էին Հոռեկավանն ու Ավերարանոցը) և անշուշտ, դարձյալ թելադրված էին նաև՝ պաշտպանական նկատառումներով: Այս տեսակետից մելիքական ապարանքները մեծ մասամբ եղել են նստոց-կենտրոնի հիմնական պաշտպանական կետը, փյալ դեպքում՝ յուրօրինակ միջնաբերդը, ինչը որոշ դեպքերում շեշտված բնույթ է կրել (Քաշաթաղ, Քաղաքաբերդ, Մոխրաթաղ, Հոռեկավան, Գյուլաթաղ):

<sup>283</sup> Ե. Լալայան, «Գանձակի գավառ», էջ 247-249, Լեռ, հր. 3, գիրք Բ, էջ 23:

<sup>284</sup> Գյուլիսարան գյուղից ու բերդից վեր՝ Մռավ լեռան անտառոտ փեղերին պահպանված այսպիսի բնական ամրություններից մեկը մինչև այժմ էլ հայտնի է Սղնախաբերդ անունով:

<sup>285</sup> Նման հրապարակները իրենց նախնական դերն ու նշանակությունը պահպանել են նաև հերազայում, բնիկուպ մինչև մեր օրերը (օրինակ՝ Ավերարանոցում և Գյուլիսարանում):

## ՎՈՐԻՆԿԱՆՇՔԱՅԻՆ ԱՒԵՂՆԱՎԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Բոլոր մելիքական ապարանքները, որպես ամրացված բնակելի համակառույցներ, ինչպես քրեանք, կառուցվել են գրեթե միանման պարմաքաղաքական ու աշխարհագրական պայմաններում, նույնափայ բնական ու քաղաքաշինական միջավայրում: Այս հենքի վրա ունենալով և լուծելով նույնպես միանման ու նույնաբնույթ գործառնական, գեղարվեստական ու կառուցվածքային խնդիրներ, ապարանքներն ի հայտ են բերում ճարտարապետական-հորինվածքային ակնհայտ ընդհանրություններ:

Ապարանքների հորինվածքային կերպի և ծավալապարաձական լուծումների մեկնակետը առաջին հերթին կառուցապարվող փարածքի ընձեռած հնարավորություններն էին, իսկ ընդհանուր հարակազմային համադրվածքը հաճախ թելա-դրված էր կոնկրետ քրեղանքի պայմաններով: Բնակավայրերի արևահայաց-թեքադիր լանջերին կառուցված պարփակ համակառույցները, որպես կանոն, գլխավոր ճակատով ուղղվել են դեպի ձորակողմի քրեսարանները և երևամասով խորացել են լանջի մեջ, իսկ այդ կողմում գրավող սենյակների հիմնական խմբի առջևի փարածքը հարթեցվել ու դարավանդաձև ներքին բակի է վերածվել լանջի ցածրադիր մասում դրված հենապարսպի միջոցով: Գրեթե բոլոր խոշոր համակառույցներում կիրառված այս հարակազմային հնարքի շնորհիվ (որը բնորոշ է առհասարակ թեքադիր վայրերի գյուղական կառուցապարմանը) ապարանքի մուտքերը բացվել են լայնական մուտքերի և առանցքի ամենահարմար կողմերից, իսկ բարձր ու անմաքչելի գլխավոր ճակատապարսպում հնարավորություն է ստեղծվել երբեմն դեպի դուրս պարուհաններ բացելու համար (Քաղաքափեղ, Մոխրաթաղ):

Այս կերպ ստեղծված համակառույցների ընդհանուր հարակազմը պարփակվել է մեծ մասամբ ուղղանկյուն կազմող, կամ քրեղանքին հար-

մարեցված, բեկյալ կողմերով քառանկյուն հիմքով պարսպապարերի մեջ, որոնց հանգուցային անկյունները ուժեղացվել-ամրացվել են կիսակլոր խուլ ելուստներով կամ բոլորաձև ու սնամեջ բուրգերով: Տամակառույցներին բնորոշ է հարկապես պարագծային կառուցապարմւր. սենյակների կիսագերնափոր ու պարսպակից շարքերով կազմվել է ներքին բակը, որպեղից դրանց մուտքերը գլխավորապես բացվել են նախամուտք-պարզգամբների կամ սյունասարահների միջոցով: Ապարանքները հիմնականում միահարկ էին, որոշ դեպքերում՝ կրկնահարկ մասերով, սենյակները մեծ մասամբ լուսավորվում էին երդիկներով կամ բակահայաց փոքր պարուհաններով, ծածկերում գերիշխում էին քարաշեն ձևերը:

Մելիքական ապարանքների ճարտարապետության մեջ դիպվում են նաև այլ ընդհանրություններ ու նմանություններ՝ ինչպես ընդհանուր հարակազմային լուծումներում ու ծավալապարաձական ձևերում, այնպես էլ՝ առանձին բաժանմունքներում ու չափերում, ծածկաձևերում ու հարդարանքում:

Այլ խոսքով՝ այդ ընդհանրություններն ու նմանությունները արդյունք են ապարանքների հորինվածքային փարրերի (գլխաքներ, դահլիճներ, նախամուտքեր, սյունասարահներ, վերնասարահներ, երեսբաց դահլիճներ և այլն), դրանց համակցումներով ստեղծված հորինվածքային բջիջների և ողջ համակառույցի ճարտարապետական լուծումների կանոնիկության, ինչը նույնաբնույթ շինությունների ճարտարապետությանը և առհասարակ պարմական ընթացքի մեջ ձևավորված ճարտարապետաշինարարական երևույթներին ուղեկցող հարկանիշ է և կազմում է հուշարձանների համեմարական քննության կարևորագույն մեկնակետը:

Ապարանքների ճարտարապետության մեջ դիպվող ընդհանուր հորինվածքային հարկանիշ-

ները հնարավորություն են տալիս դրանք դասակարգել ըստ փիլաբանական փարբերակների: Այդ հարկանիշներից կարևորագույնը համարելով համակառույցների գործառնական ու հորինվածքային միջուկը կազմող գլխավոր դահլիճի փիլը և դրանով պայմանավորված ընդհանուր ճարտարապետական նկարագրի ուղղվածությունը՝ ապարանքները կարելի է բաժանել երեք խմբի.

- ա) կրկնահարկ դահլիճով ապարանքներ,
- բ) գլխավոր ապարանքներ,
- գ) այլ փիլի ապարանքներ:

Առաջին փիլին են պատկանում Քաշաթաղի, Խնածախի, Խնձորեսկի և Տողի ապարանքները, երկրորդ փիլը ներկայացնում են Ականաբերդի, Հոռեկավանի երկրորդ, Մոխրաթաղի, Գյուլիսարանի, Տեղի, Ավետարանոցի երկու և Թուխնակալի ապարանքները, իսկ երրորդ խումբը ներառում է Քաղաքաբերդի, Գյուլիսարանի բերդի, Ջրաբերդի, Հոռեկավանի առաջին, Շուշիի երկու և Գյուլաթաղի ապարանքները:

**Կրկնահարկ դահլիճով ապարանքներ:**

Այս փիլի հուշարձանների ընդհանրությունների և յուրահատկությունների կրողը դրանց գլխավոր ճարտարապետական փարբն է՝ երեսբայ վերնասրահ-ընդունարանով երկհարկանի, թաղածածկ ու ճակտոնագարդ դահլիճը:

Հուշարձաններից ամենաբնութագրականը, համեմատաբար ամբողջականն ու նաև վաղագույնը 15-րդ դարով թվագրվող Քաշաթաղի ապարանքն է, որին բնորոշ հիմնական փարբերը (միահարկ, սյունագարդ կամարասրահով ու փայրածածկ սենյակաշարը, կից քարաշեն-թաղակապ ծածկերով կրկնահարկ վերին հարկը ճակատաբաց սրահով շինությունը և դրանց առջև փարածված դարավանդային պարփակ բակը) այս կամ այն չափով կրկնվել կամ իրենց անդրադարձն են գրել այդ փիլի մյուս հուշարձաններում:

Նաջորդ՝ 16-րդ դարին պատկանող և մեկիքության մյուս կենտրոնի՝ Խնածախի ապարանքն իր պահպանված մասով և հարկապես կրկնահարկ դահլիճով գրեթե նույնությամբ կրկնում է նախորդին և այս պարագայում իրավացիորեն առիթ է տալիս կարծելու, որ երկու ապարանքն էլ կառուցվել են նույն վարպետների ձեռքով<sup>286</sup>: Այսպես կրկնահարկ ու թաղածածկ վերնասրահով շենքը առանձին է կանգնած, իսկ փայրածածկ սենյակները բակի խորքում գտնվող սովորական քառաչափով գլխավոր են, որոնք ևս չպահպանված կից սենյակների հետ ունեցել են սյունագարդ սրահ: (Գերանածածկ ու անսյուն գույգ գլխավոր կան Քաշաթաղի ապարանքում, սակայն բակի հարթության մեջ ամբողջովին գեղարարական լինելով՝ էական դեր չունեն ընդհանուր հորինվածքում):

Խնձորեսկի մեկիքական փան՝ առկա նյութերով հայրնի կառուցամասերը ևս, պատկանելով 17-18-րդ դարերին, իրենց ձևերով ու հա-

մաղրվածքով խիստ հարագապ են հարկապես Քաշաթաղի ապարանքին: Ակնհայտ է, որ և՛ այսպես վերնասրահով կրկնահարկ ու թաղածածկ դահլիճը, և՛ դրան արևելքից կից սյունագարդ կամարասրահով սենյակաշարը, և հենապարսպով ստեղծված դարավանդաձև բակը արդյունք են վաղորոք հայրնի նախորինակ ձևերի ուղղակի փոխառության: Այս ապարանքը նախորդներից փարբերվել է ժայռափոր-քարաշեն գլխավորի և դրանց թաղածածկ նախամուտքերի առկայությամբ. շինություններ, որոնք 18-րդ դարի գլխավորային համալիրներին են բնորոշ և այսպես հայրնի են միայն թռուցիկ հիշատակություններ:

Երեք հուշարձաններում էլ ճարտարապետական պարզ համաղրվածքը կազմված է կրկնահարկ-քարածածկ ու միահարկ-փայրածածկ շենքերի գուգակցմամբ, որոնց գլխավոր ճակատապարկերում ու ծավալային ուրվանկարում ընդգրծված կամարաշարքն ու վերնասրահի բարձրադիր, երեսբայ կամարաթաղն իրենց խորը լուսաստվերով փեսանելի են հեռվից՝ հենապարսպով բարձրացված դարավանդային բակի և դրա շուրջն այլ կառույցների բացակայության շնորհիվ:

Տիպական է հարկապես գրեթե նույն չափերով կրկնվող երկհարկ դահլիճը, որն առաջին հարկի մեկիքական բնակարանով և վերնահարկի ընդունարան-գահասրահով ապարանքի գլխավոր հարկապագային ու ծավալային շեշտն է ստեղծված բնական ու ճարտարապետական միջավայրին ներդաշնակ խարսպարգ դիմագծով:

Շեշտված հանդիսավորությամբ այս երեսբայ վերնասրահները լայն բացվածքներ ունեն նաև արևմտյան, երկայնական պարբերում՝ քարասալ ասփիճանների կողմից ուղղված դեպի ձորահովիտի խորքերը:

Նախկանչական է նաև, որ՝ որպես վաղագույններ նմանափայերի մեջ, այս հուշարձանները զգալի չափով կրում են երկրամասի գեղջակական բնակարանի հարուստ ավանդույթների անմիջական ազդեցությունը (գերանակապ ծածկեր, երկրորդ հարկ փանող քարե բաց սանդուղքներ, նուրբ սյունասրահներ) և ի հայտ են բերում դարաշրջանին բնորոշ պաշտպանական կառույցների պարզագույն գծեր:

Այս առումով ուշագրավ է, որ Սյունիքում փարածված այս փիլը իր ուրույն դրսևորումն է գրել և՛ Արցախում Տողի ապարանքում (1737 թ.) և՛ Մոխրաթաղի ապարանքի մի հարվածում (1771 թ.), երկու դեպքում էլ խարտեն արտահայրված պարփակ ու ամրոցակերպ ընդարձակ համակառույցներում: Սրանցից առավել բնորոշը Տողի մեկիքական փունն է, որպես մեկուսի կանգնած ընդունարանի երկհարկ շենքը դարձյալ գլխավոր գործառնական ու հորինվածքային առանցքն է ապարանքում, և, չունենալով հարակից շինություններ, հանդիպակաց սենյակաշարի ու դրան կապող պարսպի ծավալային դարպասամուտքի հետ եզերում է պալատական բակը: Տողի մեկիքական ընդունարանի վերնասրահը

<sup>286</sup> Մ. Ս. Նասրաթյան, նշվ. աշխ., էջ 158:

նախորդների պես ամբողջ խորքով երեսբայ չէ, այլ դահլիճի շքամուտքի առջև ունի խորն ու ճակատաբայ կամարաթաղով նախասրահ: Բացի այդ, երկրորդ հարկի դահլիճը գրեթե գեպնաթաղ ներքնահարկի պարճառով բակից քիչ է բարձր, իսկ ներքուստ հագեցած է ձմեռային բնակության համար նախատեսված բուխարիով: Այսինքն այսպեղ գործ ունենք վերնասրահ-ընդունարանով կրկնահարկ դահլիճ-շինության նոր փարբերակի հեպ, որում ակնհայտ է դարին բնորոշ նախասրահ-դահլիճ համադրվածքի զուգակցությունը հնավանդ ձևերի հեպ:

Տողի ապարանքի մյուս շինությունները ևս ամբողջովին բարաշեն են, և այս առումով փրպաբանական շար այլ ընդհանրություններ ունեն ինչպես գլխապնավոր, այնպես էլ այլ ամրոցակերպ համակառույցների հեպ:

Այս փրպի շրջանակներում մեծ հեպարբրություն է ներկայացնում նաև Մոխրաթաղի ապարանքի հարավային թևի սենյակաշարը՝ շարքի արևելյան եզրում գտնվող երեսբայ վերնասրահով կրկնահարկ շինության հեպ: Նախ, ուշագրավ է սենյակաշարի ակնառու դիրքը ընդարձակ մեղիքական փան հապակագծային համադրվածքում. այն գտնվում է գլխավոր մուտքի դիմաց՝ երկարավուն բակի հակառակ կարճ կողմում, և, ըստ այդմ, համակառույցի ընդհանուր հորինվածքում նույնպես առանցքային դեր ունի ինչպես նախորդներում: Բուն կրկնահարկ դահլիճի վերնահարկի ողջ խորությամբ ճակատաբայ սրահն այսպեղ ակնհայտորեն կրկնում է Մյունիքի հիշյալ մեղիքական ընդունարան-վերնասրահների ճակատավոր, կամարաթաղ լուծումը, իսկ գեպնաթաղ ու օժանդակ առաջին հարկով առավելապես մերձենում է Տողի ապարանքի ընդունարանի հեպ: Որպես կրկնահարկ դահլիճով կամ երեսբայ ընդունարան-վերնասրահով ապարանքների ընդհանուր հապականիշ պեպք է շեշտել դրանցում փեսանեղիորեն ընդգծված ողջ շինության հանդիսավոր-պալապական բնույթը: Եթե Քաշաթաղի ու Խնածախի 15-16-րդ դարերի մեղիքական ընդունարաններում այդ հապականիշը արդյունք էր նախորդ դարերի իշխանական դահլիճների վայելչագեղ հանդիսանքի որոշակի անդրադարձի, ապա Տողի և Մոխրաթաղի 18-րդ դարի համանման դահլիճներում այդ բնույթը պայմանավորված էր երկրի քաղաքական կյանքում դրանց փերերի ունեցած իրավական դիրքով: Ինչպես փեսանք, Տողի ապարանքն իր ընդունարանով 1737 թ. կառուցվել է որպես Արցախի հինգ մեղիքությունների դաշնակցային իշխանության՝ Խամսայի մեղիքության առաջին գահերեց Մելիք-Եզանի նստոց-պալապ, իսկ Մոխրաթաղի ապարանքը դարավերջին նույն իշխանական ավագությանը «Խամսայի երկրում» հանդես եկող Մելիք-Աղամի նստավայրերից էր:

Եվ այս հանգամանքի բացակայությամբ նաև պեպք է բացապրել, որ մեղիքական բնակարանների շինարարության ամենաբուռն շրջանում՝ 18-րդ դարի երկրորդ կեսում այս փրպի


դահլիճներով ապարանքների սակավաթիվ օրինակների կողքին լայն փարաճում են գտնում առավելապես բնակարանային բնույթի փարբերով հագեցած համակառույցները: Իսկ վերջիններիս ամենաավանդական և լեռնաշխարհի պայմաններին հարմարեցված փրպը գլխապնավոր ապարանքներն են՝ քարակերպ գլխապնահամակառույցները:

**Գլխապնավոր ապարանքներ:** Լայնորեն փարաճված այսօրինակ հուշարձանների ճարտարապետական-հորինվածքային առանցքը քարակերպ գլխապնուն է՝ քառակուսի հապակագծով, երդիկավոր, քարաշեն գմբեթաթաղով ծածկված կենտրոնական դահլիճը, որի երկու կողմում, որպես կանոն, երկարավուն ու թաղածածկ դահլիճներ են, իսկ առջևում՝ բակահայաց կամարասրահը: Նապակնշական է, որ մեկ գլխապնով ապարանքների կողքին (Մոխրաթաղ, Գյուլիսրան, Թուխնակալ) կառուցվել են նաև կից ու միանման զույգ գլխապներով ապարանքներ (Ականաբերդ, Նոռեկավանի երկրորդ, Տեղ, Ավետարանոցի առաջին): Կան հիշապակություններ նույնիսկ երեք կցաշար գլխապների մասին (Ավետարանոցի երրորդ): Ընդ որում, երկու և երեք գլխապնան դեպքում ևս պահպանվել է դրանց, կից թաղածածկ դահլիճների և առջևի կամարասրահի համադրությունը: Այսինքն գլխապնուն-դահլիճներ-սրահ պարզ ճարտարապետական հյուսվածքը դարձել է փրպային ու կանոնիկ՝ յուրաքանչյուր դեպքում յուրովի ենթարկվելով շինության կամ համակառույցի ընդհանուր հորինվածքին:


Մեկ, երկու և ավելի գլխապնուն ունեցող ապարանքները կառուցվել են նույն ժամանակաշրջանում՝ զուգահեռաբար, և իրարից ոչ շարհեռու մեղիքանիստ բնակավայրերում: Ուստի մեկը մյուսի գարգացման կամ պարգեցման արդյունք համարել չի կարելի, մանավանդ որ այս փրպի հնագույն հուշարձանում՝ 15-16-րդ դարերով թվագրվող Ականաբերդի ապարանքում արդեն առկա է զույգ գլխապներով սպեղծված ավարտուն հորինվածքը:

Գլխապների քանակը ապարանքում պայմանավորված էր միմիայն կառուցողի փրպեսական կարողությամբ, ընդամենի անդամների քանակով և նման այլ հանգամանքներով: Մակայն միշտ չէ, որ ապարանքի ընդարձակությունը անպայմանորեն ենթադրում էր գլխապների քանակի ավելացում: Մոխրաթաղի ապարանքը ամենախոշորն է պահպանվածների մեջ, սակայն ունի մեկ գլխապնուն, որին կից դահլիճներից մեկի մուտքը ոչ թե գլխապնան, այլ կողքի մյուս երկու դահլիճների հեպ ընդհանուր նախասրահից է: Իսկ սա արդյունք է գլխապնավոր-բնակելի կցաշար սենյակների ակնհայտ փարանջապման՝ առանձին նախասրահների շուրջը խմբավորելու նպատակով: Նանգամանք, որը դարձյալ պայմանավորված էր ապարանքի բնակելի մասը առանձին հարկաբաժիններով լուծելու զույգ գործառնական անհրաժեշտությամբ: Մրանով պեպք է


# ՀԱՐԵՐԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ




34. ԿՐԿՆԱՀԱՐԿ ԴՅՈՒՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ




35. ԳՆԻԱՆՆԱԿՈՐ ԱՊԱՐԱՆՔՆԵՐ



36. ՔԱՌԱՐՈՒՐԳ ԱՊԱՐԱՆՔՆԵՐ. ՄԻՋՆԱԲԵՐԴ ԱՊԱՐԱՆՔՆԵՐ



37. ԿՐԿՆԱՀԱՐԿ ԴԱՀՄԻՃՆԵՐ



38. ՔԱՐԱՇԵՆ ԾԱԾԿԱՎ ԳՒՆԱՅՆԵՐ

բացառել, որ Գյուլիսարանի, Ավերարանոցի և Նոռեկավանի ապարանքներում գլխապները հաղորդակցվում են թե՛ միմյանց և թե՛ կողքի դահլիճների հետ, իսկ Տեղի ու Թուխնակալի ապարանքներում դրանք մասամբ առանձնացված են: Այս առումով բնութագրական է նաև, որ մի դեպքում գլխապներն ու դահլիճները առանձին-առանձին նախասրահներ ունեն (Գյուլիսարան, Մոխրաթաղ, Թուխնակալ, Տեղ՝ վերակառուցված), իսկ մյուսում դրանց առջև մեկ միասնական կամարապահ է (Նոռեկավան, Ավերարանոց, Տեղ՝ նախնական):

Գլխապնավոր ապարանքների ամենահարկանշական առանձնահատկությունը շինությունների ամբողջովին քարաշեն ծածկերն են, որոնք երբեմն ունեն դարաշրջանում սակավ հանդիպող համարձակ ու ինքնաբերական լուծումներ: Այդպիսիք են, մասնավորապես, գլխապների ծածկաձևերը: Պահպանված բոլոր գլխապները հարկազրկում գրեթե նույն չափի են (հիմքի քառակուսու կողմը 7 մետրի սահմաններում է), իսկ բարձրությամբ չեն գերազանցում այս հիմնաչափով մրովի կազմված հավասարակողմ եռանկյան զագաթը (բացառությամբ Նոռեկավանի գլխապների, որոնց բարձրությունը հիմքի կողմի չափ է): Ավերարանոցում, Գյուլիսարանում, Տեղում և Թուխնակալում գլխապների ծածկերը լուծվում են բրգաձև զոցվող թաղերով կազմված գմբեթի տեսքով, իսկ Նոռեկավանում և Մոխրաթաղում (հավանաբար՝ նաև Ականաբերդում) կիրառված է գմբեթաձևիկի փրոմպավոր փարբերակը: Ընդ որում, եթե Մոխրաթաղում դրանցով անցում է կարարված ծածկի ութանիստ բրգաձևությանը, ապա Նոռեկավանի գույգ գլխապներում դրանց վրա բարձրացել են սրբափառ իրականացված կիսագնդաձև գմբեթաթաղեր, որոնք, ինչպես և փրոմպներն առհասարակ, հազվադեպ են հանդիպում ուշ միջնադարյան ճարտարապետության մեջ:

Գլխապան ծածկաձևերի բոլոր փարբերակներում առկա է երդիկը՝ ներքին փարածքի լուսավորության և օդափոխության միակ միջոցը, քանզի դրանք այլ բացվածքներ չեն ունեցել, բացի մուրքերից (եզակի են Թուխնակալի գլխապան երկու փոքր պատուհանները), որոնցից արքայինը սովորաբար ճակարակապի աջ կամ ձախ եզրում է:

Պետք է կարծել, որ մեյիքական գլխապները գահադահլիճի, պառասարահի կամ ընդունարանի դեր չեն ունեցել, այլ ծառայել են որպես բնակելի սենյակ: Այդ են վկայում նրա գրնվելը բնակելի և օժանդակ շինությունների շարքում, հագեցվածությունը առօրյա-կենցաղային բնույթի փարբերով (պահարանախորշեր, բուխարիներ) և այլն: Այս տեսակետից խիստ բնորոշ են գլխապնավոր համակառուցյունների մյուս կանոնիկ բաժանմունքները՝ գլխապների երկու կողմում գրնվող միանման դահլիճները: Սրանք հարկազրկում գլխապան հիմնակողմի չափ ձգված, թաղակապ ծածկերով պարզ շինություններ են, լանջամերձ խորքի լայնական պատում ունեն բու-

խարի՝ գույգ կամարակապ կամ հարթաձև խորշերով, որպիսիք սովորաբար կան նաև մյուս պատերում: Արարաբին մուրքերը սրահից են՝ մեծ մասամբ ճակարակապի կենտրոնում, մուրքից վեր ունեն նեղիկ պատուհան, իսկ կողային մուրքով հաղորդակցվում են գլխապան հետ (Նոռեկավան, Գյուլիսարան, Ավերարանոց, Տեղ): Մոխրաթաղում և Թուխնակալում այսօրինակ դահլիճները գլխապան ճակարակապից առաջ են դրված, որի պարճառով մուրքերը կողքից են դրանց խորքային փարբերության հաշվին առաջացած նախասրահից:

Այս կարգի ապարանքներում մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև գլխապան դահլիճ համադրության անբաժան մաս կազմող պարզամբ-նախասրահները, որոնք, ի փարբերություն նախորդ փիպի հուշարձաններում առկա սրահների, նույնպես քարաշեն ծածկեր ունեն: Սրանց պարզագույն լուծումը միակամար, երկկամար կամ եռակամար ճակարային հորինվածքն է (Գյուլիսարան, Մոխրաթաղ, Թուխնակալ), իսկ առավել հասուն փարբերակը՝ քառակող մույթերն իրար կապող հավասարաթիք կամարաշարը (Նոռեկավան, Տեղ, Ավերարանոց): Միահարկ շինություններին կից լինելով, կամարապահներն ունեն գածր թաղաձաձկեր, ինչի պարճառով ճակարային կամարները ևս ցածրանիստ ու գեպնամած էին:

Գլխապնավոր ապարանքների առանձնահատկություններից մեկն էլ հենց այս էր՝ ընդհանուր ծավալաձևերի գեպնամածությունը, ինչը, հարկայնությունից զատ, նաև շինությունների կիսագեպնավոր կամ պարսպակից լինելու հետևանք էր: Բացի այս, քարակերպ գլխապան համակառույցները բաժանմունքների ընդարձակ կազմ ունեին, իսկ դրանցով սրեղծված ներքին բակի կողմն ուղղված համեմատաբար աշխույժ ճակարները դրսից քողարկված էին բարձր ու խուլ արքայքին պատերով: Մեծ մասամբ անկյունային բուրգերով ամրացված այս պարփակ, ամրոցակերպ ու դոյակաձև հորինվածքային լուծումն է նաև գլխապնավոր ապարանքների հիմնական առանձնահատկություններից մեկը, որով և դրանք բնութագրվում են՝ որպես ուշ միջնադարյան պաշտպանական կառույցի այս յուրահատուկ փիպի առավել հասուն օրինակներ:

Գլխապնավոր ապարանքներից ամենաընդարձակ ու համեմատաբար ամբողջական պահպանված երկուսում՝ Նոռեկավանի երկրորդ և Մոխրաթաղի մեյիքական փներում առկա են նաև գործառնական բնույթով գույգ պալատական-հանդիսավոր շինություններ՝ երկայնական ճակարով երեսբայ սրահներ կամ դահլիճներ, ինչպիսիք կան նաև Շուշիի ապարանքներում և, ամենայն հավանականությամբ, եղել են նաև մասնակիորեն մեզ հասած մյուս նմանաբան խոշոր համակառույցներում (Ավերարանոց, Տեղ): Եվ Նոռեկավանում, և՛ Մոխրաթաղում դրանք առանձնացված ու կարևոր տեղ ունեն ապարանքի հորինվածքում. գրնվում են գլխապնավոր-բնակելի սենյակաշարի դիմաց և բաղկացած են բա-

կի նկատմամբ երկայնական կողմով դրված երեք դահլիճներից, որոնցից կենտրոնականի բակահայաց ճակատը բաց էր կամարաշարով կամ փայտաշեն, սյունազարդ պատշգամբի տեսքով: Այս ձևով սրեղծված ճակատաբաց դահլիճները ծառայել են հանդիսավոր արարողությունների ժամանակ՝ որպես յուրօրինակ բացօթյա մելիքական ընդունարան և սերտորեն կապված են եղել ընդարձակ բակի հետ:

Ներագայում նմանօրինակ հորինվածքները լայնորեն կիրառվել են գեղջկական ու քաղաքային մեկ-երկու հարկանի, հարթածածկ բնակարաններում, քանզի հնարավորություն էին սրեղծում երկայնական ճակատներն ուղղել դեպի բակ և այդ կողմից ունենալ լայն պատուհաններ:

**Այլ տիպի ապարանքներ:** Այս խմբի հուշարձաններն առանձնանում են խիստ ընդգծված պաշտպանական բնույթով, իսկ դրանց մի մասը՝ նաև փայտաշեն ծածկերի կիրառությամբ:

Սրանցից երկուսը, ամրոցների միջնաբերդ լինելով հանդերձ (Ջրաբերդ, Գյուլիստանի բերդ), ունեն դարի ապարանքաշինությանը բնորոշ կցաշար, միահարկ ու պարսպակից սենյակներ, որոնց ծածկերը մեծ մասամբ գերանակապ են եղել: Իր մեկուսի տեղադրությամբ ու երկհարկանի հորինվածքով հարկանշական է Գյուլիստանի ամրոցի միջնաբերդից դուրս՝ մուրքի մոտ կառուցված երկհարկանի դահլիճը, որը որոշակի ընդհանրություններ ունի հիշյալ կրկնահարկ դահլիճների հետ, սակայն նույնպես փայտածածկ է եղել: Այսպես մելիքական փան գլխավոր հարկաբաժինը կազմող կրկնահարկ շենքն ամփոփված է առանձնացված ծավալաձևի մեջ և ունի հանդիսանքի պարզագույն փարբեր, ձորահովիտ ուղղված լայն բացվածքներ ու երկրորդ հարկի սյունազարդ-բարձակային պատշգամբ և բաց, փայտաշեն սանդուղք՝ բակի կողմից:

Քաղաքատեղի ապարանքում ևս կարևորագույն տեղ է փրված պաշտպանական հարցերին, ևայն, ըստ էության, բերդավանի յուրօրինակ


միջնաբերդն էր: Սակայն այսպես հարակազմումը ենթարկված է որոշակի կանոնավորության, որի առանցքը ուղղանկյուն ներքին բակն է՝ երկու հանդիպակաց մուրքերով և վերդարպասյա աշտարակներով: Ինչպես Նոռեկավանում և Մոխրաթաղում, այսպես ևս լայնական կողմով բակահայաց, կիսագեղամափոր սենյակների հակադիր շարքը երկայնական ճակատով է դրված դեպի բակ և ավելի լուսառատ է ու հանդիսավոր, իսկ անմապչելի բարձրության շնորհիվ՝ նաև ունի ձորահայաց, սյունազարդ պատշգամբ, ինչպես Գյուլիստանի բերդում: Նախանդ քարաշեն ծածկերի կողքին նոր սենյակներում համարարած փայտածածկի կիրառությունը այսպես վկայում է, որ որոշակի հանգամանքներում փիպական են եղել նաև քարաշեն-թաղակապից համեմատաբար արագ իրականացվող ու թեթև այսօրինակ ծածկերը: Ինչպես երևում է, երեք դեպքերում էլ այդ հանգամանքներից առաջնայինը ողջ համակառուցյի պաշտպանական բնույթն էր:

Նոռեկավանի առաջին, Շուշիի, Գյուլաթաղի և Գյուլիստանի բերդի ստորոքի ապարանքները յուրահատուկ ենթափայ են կազմում, որին բնորոշ են և՛ շեշտված ամրոցակերպությունը, և՛ քարաշեն ծածկերով պարսպակից սենյակաշարքերը: Սրանք մեծ մասամբ աչքի են ընկնում սնամեջ ու խոշորաչափ անկյունային բուրգերով և միայն գլխատանի բացակայությամբ են տարբերվում գլխատանավոր համակառուցյներից:

Ընդհանուր գծերով այսպիսին են մելիքական ապարանքների առավել հարկանշական կողմերը: Պալատաշինության այս յուրօրինակ հուշարձանների ընդհանրական բնութագիրը առավել ամբողջական պատկերացնելու համար հարկ է անդրադառնալ նաև դրանց ճարտարապետական հարդարանքի միջոցներին, շինարվեստին, հորինվածքային ծագումնաբանությանը, գուգահեռներին և առնչություններին:



## ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՐԱՆԲ



Ապարանքների ճարտարապետական հարդարանքի միջոցները խիստ աղքատիկ են և, ըստ պահպանվածության, սահմանափակվել են առանձին մասերի կառուցման խնամքով ու պարզ փրամաքավորված փարբերով (կամարային պահունակներ, որմնագույրիներ, քիվեր): Այս պարճառով մեղիքական ապարանքների ճարտարապետական կերպարի արտահայտչականությունը չափազանց գուսպ է և հիմնականում սրեղծվել է ծավալարարածական հորինվածքների միասնականությամբ, թաղակապ ու գմբեթային ծածկաձևերին հատուկ որոշ կոթողային հանդիսավորությամբ, խուլ, կոպտաբաշ պատերի և սրբաբաշով ընդգծված կամարային բացվածքների հակադրությամբ, փարբեր չափի որմնախորշերի կանոնավոր ու ռիթմիկ շարքերով, շքամուրթերի պարզագույն ձևերի կիրառությամբ, միջավայրին ներդաշնակ ուրվանկարով և կառուցվածքային ու գործառնական անհրաժեշտությամբ թելադրված այլ միջոցներով:

Ճարտարապետական հարդարանքի գարդաքանդակային և պլաստիկ մշակմամբ այլ փարբերի խսպառ բացակայությունը ապարանքներում բացառիկ երևույթ չէ և բացառվում է մի շարք հանգամանքներով: Նախ, նման մոտեցումը ուշ միջնադարյան Հայաստանի քաղաքացիական ճարտարապետության գեղարվեստական ուղղվածության բնորոշ կողմերից մեկն է և, իր հերթին, բացառվում է ոչ միայն ծանր պարմաքաղաքական պայմաններում նախընթաց դարերի հարստագույն ավանդույթների կորստով ու մոռացությամբ, այլև նույն այդ պայմանների թելադրանքին հարմարեցված շենքերի հորինվածքային առանձնահատկությամբ: Երկրում

մշտապես պատերազմների և ասպարակությունների պարճառով բոլոր կարգի շինություններում առաջին հերթին կարևորվել են ամրության ու պաշտպանունակության խնդիրները, որոնք չէին կարող իրենց անբարենպաստ ազդեցությունը ջթողնել դրանց ճարտարապետական վայելչության վրա, մասնավորապես նույն պարճառով ապարանքները կառուցվել են համեմատաբար կարճ ժամկետներում և արագ իրականացվող շինարարական միջոցներով:

Բացի այս, Արցախի և Սյունիքի ոչ բոլոր շրջաններն են հարուստ հեշտ մշակվող որակյալ շինաքարով և այս պարճառով մասնավորապես Արցախում գարդաքանդակային հարդարանքի միջոցների և սրբաբաշ շարվածքի կիրառությունը ոչ միայն ուշ շրջանում, այլև ողջ միջնադարում սակավադեպ է:

Ալեհայր է նաև, որ մեղիքական ապարանքները պալատներ չէին՝ բառիս բուն իմաստով և, ամենասերտ աղերսն ունենալով ժողովրդական բնակելի փների հետ, կրում էին դրանց գուսպ ճարտարապետական դիմագծի անմիջական ազդեցությունը:

Այնուամենայնիվ, մեղիքների իրավաքաղաքական, հասարակական ու սոցիալական բարձր դիրքը շեշտելու նպատակով ապարանքները կառուցվել են նստոց-բնակավայրերի առավել աչքի ընկնող փեղերում, գյուղական փներից փարբերվել են խոշոր չափերով, սենյակների քանակով ու ընդարձակությամբ, հարակազմային լուծումների կանոնավորությամբ, ճակատների մշակվածությամբ: Այս առումով հարկանշական է, որ ապարանքների ճակատային լուծման բարեմասնությունները մոտակա դիփակետներից փեսանելի չեն եղել՝ դրանց բակահայացության և ամրոցակերպ

համակառույցներին հափուկ պարփակվածության պատճառով<sup>287</sup>: Ասվածն առավել բնութագրական է քարակերտ գլխափայտ համակառույցների և միահարկ կառուցապարամաբ այլ հուշարձանների համար (Նոռեկավան, Մոխրաթաղ, Ավերարանոց, Շուշի, Տոդ, Գյուլաթաղ), իսկ առանձին դեպքերում շեշտված ծավալայնությամբ կառուցամասերը (օրինակ՝ Քաշաթաղի, Խնածախի և Խնձորեսկի կրկնահարկ դահլիճները) արտահայտվել են նաև արտաքին ճակատի համայնապարկերում: Ծակաբային արտահայտչականություն են ունեցել նաև ընդգծված ամրոցակերպությամբ ապարանքները (Գյուլիսփանի և Ջրաբերդի միջնաբերդեր, Քաղաքաբերդ), ինչպես նաև գլխավոր ճակատների դիմաց այլ շինություններ կամ բարձր պարիսպներ չունեցող փոքր մելիքական փոքր (Գյուլիսփան, Թուխնակա): Գրեթե բոլոր դեպքերում ապարանքների բակահայաց ներքին ճակատների խորը կամարային բացվածքներով կամ սյունազարդ կամարաշարքերով լուծված նախասրահներն իրենց ցայտուն լուսաստվերներով դիտվել են նաև մտրակա բարձունքներից ու լանջերից՝ մեծ աշխուժություն հաղորդելով բնակավայրի համայնապարկերին:

Ապարանքների ներքին հարդարանքում մեծ կարևորություն է փոխել բուխարիների և պահարանախորշերի դասավորությանը, որոնց պարզ, գործնական անհրաժեշտությունը երբեմն շար արտահայտիչ գեղարվեստական հնչեղություն է ստացել: Լավագույն օրինակը Նոռեկավանի երկրորդ ապարանքի գույզ գլխափայտերի, երկու կից դահլիճների և հանդիպակաց եռադահլիճ շենքի խիստ կանոնավոր ռիթմով դրված և ադյունաշեն կամարներով շեշտված բազմաթիվ խորշերն են, որոնց շնորհիվ պատերի խուլ միապատկանությունը աշխույժ արտահայտչականություն է փոխում: Բնորոշ են նաև Գյուլիսփանի և Ավերարանոցի գլխափայտերը, որոնցից առաջինի գրավչությունը գմբեթափայտի «թարեք»-որմնագոյությունը ընդհանրացված փարաչափ կամարախորշերն են, իսկ երկրորդինը՝ պատերի գրեթե ողջ մակերեսը զբաղեցնող լայնաթրոփիք-կամարակապ խորշերն ու կրակարանները:

Առավել կարողունակ մելիքների գլխափայտերի ու դահլիճների ներքին հարդարանքում մեծ դեր են խաղացել նաև պատերը զարդարող արցախյան նշանավոր գորգերն ու կարպետները, խորշերում դրված կարպետագործ, երփներանգ անկողնակալներն ու շքեղորեն դրվագված սպասքը, ասեղնագործ, մեքաթսե, թավշե և այլ արևելյան թանկարժեք ծածկոցները, արծաթապար գեներն ու այլ պարագաներ<sup>288</sup>:

Մոխրաթաղի ապարանքի շինարարական արձանագրության մեջ ուշագրավ ու եզակի հի-

շարակություն է պահպանվել «գեղեցկանկար», այսինքն՝ որմնանկարազարդ փան կամ սրահի մասին, որը պեք է կարծել, միակ օրինակը չի եղել այդ փայի հուշարձաններում՝ հաշվի առնելով դրանց այլ ընդհանրությունները:


Ներքին ճարտարապետական հարդարանքի ուշագրավ նմուշ է Տեղի ապարանքի դահլիճներից մեկի բուխարու ծխանցքածածկ քարը, որը մշակված է այդ շրջանում լայնորեն փարածված գծագարող ու սրագագաթ սաղավարածակի մեջ:

Այսպիսով, ճարտարապետական կերպարի պարզ ու անպաճույճ դիմագծերով հանդերձ, մելիքական ապարանքներն ունեցել են իրենց դերին ու նշանակությանը համապատասխան գույնի հարդարանք և շահեկանորեն փարբերվել են շրջակա կառուցապարամիջ:

Տեղին է նշել, որ մելիքական բնակարանները գյուղական կառուցապարաման մեջ առանձնակի փոքր են ունեցել նաև 19-րդ դարում, չնայած երկրի միանգամայն նոր սոցիալ-քաղաքական պայմաններին: Դարի սկզբին Ռուսաստանին միանալուց հետո, երբ վերանում է երկրամասի ապարանքների պաշտպանական նշանակությունը և կանոնավոր գյուղացիական փոփոխություն վարելու հնարավորություն է ստեղծվում, մելիքների շինարարական գործունեությունը փոքրփոքրվում է նախալեռնային ու հարթավայրային գյուղերը՝ սրանալով նոր ուղղվածություն: Այս շրջանում կառուցված ու վերակառուցված մելիքական փոքր ունեցել են այսպես կոչված «քաղաքափայ» բազմաբաժին բնակարաններին բնորոշ հորինվածքներ՝ կազմված միաշար, հարթածածկ ու երկհարկանի սենյակներից, դրանց բակահայաց փայտաշեն ու սյունազարդ պարզ-գամբներից, լայն լուսամուկները կամարով եզերող փրամափայտ որմնագոյությունով ու փայտի դրվագումով հարդարված ճակատներով: Բնորոշ օրինակներ են Գեղաշենի Մելիք-Մնացականյանների փունը, Տոդի և Գյուլիսփանի ապարանքներին հավելված շինությունները: Գյուլիսփանի մելիքների Խրիստոփոր և Աղջկաբերդ գյուղերում ունեցած նմանափայ շենքերից մինչև 1992 թ. պահպանվում էին որոշ մնացորդներ, այդ թվում՝ վերջինի դարպասի բարավորաբարը մարտնչող առյուծների պարկերաքանդակով ու ՌՅԺԷ (1868 թ.) արձանագրությամբ: Անցյալ դարի վերջերին այսպեղ հյուրընկալված Բաֆֆու նկարագրությունից պարզվում է, որ այն նախորդ դարերի ապարանքների պես պարփակ ու դրսի հետ խոշոր դարպասով կապված ընդարձակ ներքին բակի շուրջը խմբավորված բազմաբնույթ սենյակներից կազմված համակառույց է եղել, այս անգամ՝ հարմարեցված գյուղական կալվածափրոք փոփոխության պահանջներին:

<sup>287</sup> Շուշիի ապարանքների շեշտված ամրոցակերպության – շրջակա կառուցապարաման նկարմամբ իշխող դիրքի մասին վկայում է 19-րդ դարի ակնապետը (Տե՛ս. “Кавказ”, Тифлис, 1857, N 58):

<sup>288</sup> Լեո, Խոջայական կապիտալ, էջ169:




XVIII. ԳԵՏԱՇԵՆ. Մելիք-Մեսցակյանյանների ապարանքը հր-արմ-ից  
ԱՂԶԿԱԲԵՐԴ. Մելիքական ապարանքի շքանուրթի բարավորարարը

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՎԵՄՍ

**Շինարարական աշխատանքների կազմակերպումը:** Մեկիքական ապարանքների կառուցման ժամանակ շինարարական աշխատանքների կազմակերպման դրվածքի մասին որևէ ուղղակի փեղեկություն հայտնի չէ: Մակայն, հաշվի առնելով ուշ միջնադարյան շինարվեստի ընդհանրությունը ինչպես Տայասարանի փարբեր երկրամասերում (մասնավորապես՝ Արցախում և Սյունիքում), այնպես էլ փարբեր բնույթի շենքերում (պաշտամունքային և աշխարհիկ), կարելի է այս հարցում որոշակի պարկերացում կազմել բնագավառին վերաբերող առկա փեղեկություններն ու դիտարկումները համադրելով խնդրո առարկա հուշարձանների ընձեռած փվյալների հետ<sup>289</sup>:

Ապարանքների շինարարության ծախսերը հոգացել են դրանց փեր մեկիքները, ինչի մասին են վկայում պահպանված շինարարական արձանագրությունները (Տող, Գյուլիսպան, Մոխրաթաղ, Տեղ, Ավերարանոց): Տարկանշական է վերջինիս ապարանքներից մեկի կառուցման վկայագիրը, որում, շինության պարկանելությունը նշելուց բացի, շեշտված է նաև, թե ում «շինել փված շենքն է»<sup>290</sup>: Տայտնի է, որ մեկիքի հպարակները պարտավոր էին ոչ միայն փարբերաբար հարկեր, փուրբեր ու փուգանքներ վճարել, այլև մի քանի օր ձրի աշխարել վարուցանքի, հնձի և այլ ծավալուն գործերի ժամանակ<sup>291</sup>: Ուս-



փի, նկարի ունենալով նաև մեկիքների գրեթե անսահմանափակ իրավունքները իրենց հպարակների նկարմամբ<sup>292</sup>, կարելի է ենթադրել, որ ապարանքները «շինելու» կամ «շինել փալու» վկայությունների փակ պեղք է հասկանալ ինչպես փորձված ճարտարապետների և քարգործվարպետների վճարովի աշխարանքը, այնպես էլ հպարակ ժողովրդի պարտադիր ու անվճար մասնակցությունը հարկապես մեծածավալ, ժամանակաբար ու առանձնակի հմտություն չպահանջող աշխարանքներին (փեղանքի նախապարտապում, շինանյութերի հայթայթում ու փեղափոխում և այլն)<sup>293</sup>:

Պեղք է ենթադրել նաև, որ մեկիքական փների կառուցման ժամանակ ևս, ինչպես ուշ միջնադարի պաշտամունքային համալիրներում ու շենքերում<sup>294</sup>, շինարարական գործը մասնագիպացված է եղել: Նույնաբնույթ աշխարանքները (հիմքերի ու պարերի, թաղերի, կամարների ու գմբեթների, փայտե մասերի կառուցում) կարարել են այդ գործում հմտացած առանձին խմբեր: Նման ենթադրության հիմք են փալիս ինչպես նույն ժամանակահարվածում կառուցված ապարանքների հորինվածքային ու կոնստրուկտիվ ընդհանրությունները, այնպես էլ այդ նույն հնարքների կիրառությունը դրանց ժամանակա-

<sup>289</sup> Տմնք. **Զարարիա Ագուլեցի**, Օրագրություն, Ե., 1938, էջ 63-96, **Մ. Տարարայան**, Սյունիքի 17-18-րդ դարերի ճարտարապետական համալիրները, Ե., 1973, էջ 144-147, նույնի՝ Տայասարանի ուշ միջնադարի շինարարական գործի կազմակերպումը, «Տայ արվեստին նվիրված հանրապետական ութերորդ գիտական կոնֆերանս», գեկուցումների թեգեր, Ե., 1997, էջ 23-24:

<sup>290</sup> «Դիվան հայ վիմագրության», 5, էջ 152:

<sup>291</sup> **Լեո**, Խոջայական կապիփալ, էջ 168:

<sup>292</sup> Նույն փեղում, էջ 165-167:

<sup>293</sup> Նմանափայ շենքերի կառուցման ժամանակ «հիմնադիր ճարտարապետի» մասին հեղաբրբիր վկայություն է պահպանվել Տակր սարկավազ Շուշեցու «Պարմութին գավառին Արցախու» անփիպ աշխարության մեջ: Տեն Մարենադարան, ձեռ. N 2734 (ըստ **Շ. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի հուշարձանները, էջ 214):

<sup>294</sup> **Մ. Մ. Տարարայան**, Սյունիքի ճարտարապետական համալիրները, էջ 145:

կից գեղջկական փնտրում, վանքապարկան բնակարաններում և քաղաքացիական այլ շենքերում:

Ապարանքների կառուցման փնտրությունը հայրնի չէ, սակայն դրանց պաշտպանական բնույթն ու երկրի անհանգիստ վիճակը ենթադրում են շինարարության արագ իրականացում, ինչը ևս բնորոշ էր ուշ միջնադարին<sup>295</sup>: Մրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ, ի տարբերություն նույն շրջանի որոշ եկեղեցական շենքերի, մեկիքական փնտրում իսպառ բացակայում են զարդաքանդակային, կամ այլ՝ երկարապարկ կապարում պահանջող հարդարանքի թեկուզև նվազագույն միջոցները:

Նուշարձանների չափագրությամբ սրացված չափերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասի հիմքում միջնադարից հայրնի և շինարարության մեջ լայնորեն տարածված երկարության միավորներ են՝ ներքանը (մոտ 20 սմ), թիզը (մոտ 23 սմ), միջին և մեծ ուրնաչափը (30,9 սմ, 35,6 սմ), փոքր, միջին և մեծ կանգունը (մոտ 46 սմ, 53 սմ, 70 սմ), փոքր, միջին, մեծ և երկրաչափական սովորական քայլը (մոտ 70,5 սմ, 80 սմ, 93 սմ, 105 սմ) և այլն<sup>296</sup>:

Բոլոր ապարանքներում չնչին տարբերությամբ կրկնվող պատերի հասարակությունները (80 սմ, 90 սմ, 100 սմ, 120 սմ), թաղերի թռիչքները (3,6 սմ, 3,9 սմ, 4,0-4,6 սմ), դահլիճների երկարություններն ու գլխաքանիների հիմնաչափերը (6,0 մ, 6,3 մ, 6,6 մ, 6,9 մ, 7,0 մ, 7,15 մ), ինչպես նաև մուտքերի, պատուհանների, խորշերի և այլ առանձին տարրերի ընդհանրական չափերը բազմապատիկ են հիշյալ մեծություններից որևէ մեկին, կամ մի քանիսին՝ միաժամանակ: Նաշվի առնելով, որ այս միավորների ստույգ չափը հաճախ թելադրվել է կառուցող քարգործ-վարպետի կազմվածքով<sup>297</sup>, իսկ հուշարձաններից սրացված չափերը վարպետականվածության կամ կոպրապաշ շարվածքի պարճառով խիստ ճշգրիտ չեն, կարելի է համոզված ասել, որ ապարանքների շինարարության ժամանակ որպես երկարության միավոր և կառուցվածքային մոդուլ կիրառվել են հենց այս մեծությունները: Ընդ որում, նկատելի է, որ կախված երկարության անհրաժեշտ չափից, միաժամանակ օգտագործվել են տարբեր միավորներ՝ տեղում նշահարումը առավել արագ ու հեշտ իրականացնելու նպատակով: Այս պարճառով, չնայած սրացված հորինվածքային ներդաշնակ համաչափություններին, կառույցներում մեկ միասնական մոդուլային միավորի կամ ցանցի կիրառություն չի նկատվում:

**Շինանյութերը:** Մեկիքական ապարանքների հիմնական շինանյութը քարն է. Արցախում՝

նստվածքային ծագումով որձաքարի տարբեր տեսակները, Սյունիքում՝ նաև բազալտը, հեղաքար փոքր-ինչ տարբեր է նաև քարի մշակման աստիճանը: Արցախի հուշարձաններում շարվածքը բացառապես կոպրապաշ քարից է, և միայն բացվածքների, խորշերի, բուխարիների, փրոմպների և անկյունաստերի քարերն են մաքուր տաշված, իսկ Սյունիքում սրբապաշը մասամբ կիրառվել է նաև ճակատապարտում (հնաձախ, Տեղ): Բացի այս, առանձին կառուցանստերը շեշտելու նպատակով երբեմն կիրառվել է քարի մաքուր տաշվածքը (օրինակ՝ Տողի ապարանքի դարպասում, Քաշաթաղի և Խնձորեսկի կամարապահներում): Ծածկերում մաքրապաշ շարվածքի օգտագործման եզակի օրինակներ են Նոռեկավանի գլխաքանիների գմբեթաթաղերն ու Տողի ընդունարանի թաղակիր որմնակամարը, մնացած դեպքերում ծածկերում օգտագործված քարը ճեղքված, մանրացված է:

Ապարանքների շինարարության ժամանակ լայնորեն օգտագործվել է նաև փայտը: Որոշ հուշարձաններում փայտից են շինությունների մի մասի ծածկերը (Քաշաթաղ, Խնաձախ), իսկ մի քանիսում՝ ծածկերի մեծ մասը (Ջրաբերդ, Քաղաքաբերդ, Գյուլիստանի բերդ): Վերջիններս, բացի գերանակապ ծածկերից, ունեցել են նաև փայտաշեն այլ մասեր՝ բարձր հարկերի ձորահայաց պահուսակային պարզամբներ և աստիճաններ, իսկ Քաղաքաբերդի ապարանքի պատերի շարվածքում կիրառվել են բացվածքների ու խորշերի փայտե բարավորահեծաններ և փայտե գոպիներից կազմված հորիզոնական կապեր: Բացի այս, բոլոր հուշարձաններում փայտանյութը օգտագործվել է շինարարական փայտակամանների և թաղերի ու կամարների կաղապարների համար: Նշենք, որ փայտը նման գործածություն է ունեցել նաև ուշ միջնադարյան պաշտամունքային շենքերի ու համալիրների կառուցման ժամանակ<sup>298</sup>:

Ապարանքների պատերում ու քարաշեն ծածկերում որպես շարվածքի կապակցող նյութ օգտագործվել է բարձրորակ կրաշաղախը: Շաղախի ամրությունը կարևորվել է հատկապես այն պարճառով, որ կոպրապաշ շարվածքով պատի կամ թաղի կրողունակությունն ապահովվել է հիմնականում բուրբեղաքանի հոծ միջուկի հաշվին, որը հաճախ քարերի արանքներից դուրս գալով՝ միաձուլվում գանգվածի է վերածել ողջ շարվածքը: Ասվածի վկայությունն են շատ հուշարձաններում պահպանված այն կառուցանստերը, որոնք այսօր էլ կիսականգուն են, չնայած շարվածքի արտաքին քարերը թափվել կամ պոկվել են:

<sup>295</sup> Նույն փնտրում, էջ 145-146:

<sup>296</sup> Տե՛ս Ռ. Վարդանյան, Նայաստանի չափերն ու կշիռները, Ե., 1989, էջ 133:

<sup>297</sup> Մ. Մ. Նաթրաթյան, նշվ. աշխ., էջ 147:

<sup>298</sup> Նույն փնտրում, էջ 148:

Արցախի և Սյունիքի ուշ միջնադարյան հուշարձաններում աղյուսը հազվադեպ է օգտագործվել: Եզակի օրինակներից է Նոռեկավանի երկրորդ ապարանքը, որի որոշ պատերի ստորին մասերում, բացվածքների ու որմնախորշերի եզրերում և փրոմպների կամարաքարակի շարվածքում մեծ մասամբ կիրառված է թրծված աղյուս: Նման առափությամբ աղյուսի կիրառությունը եզակի է, և պեղք է ենթադրել, որ այն այսպեղ է թափանցել ոչ շար հեռու գրնվող Գանձակի հայոց թաղամասի աղյուսաշեն փների ազդեցությամբ, մանավանդ որ այս դարերում փարածված էր նույնիսկ հեռավոր գավառներից հրավիրված շրջիկ արհեստավորական խմբերի մասնակցությունը երևելի կառույցների շինարարության ժամանակ<sup>299</sup>, իսկ բազմազան կապերը հարևան Գանձակի խանության հետ հաճախակի ու սովորական էին:

**Շինարարական կառուցվածքները:** Մեղիքական փների շինարարական կառուցվածքները ընդհանուր առմամբ չեն փարբերվում ուշ միջնադարի քաղաքացիական ճարտարապետության մեջ փարածված կառուցվածքային ձևերից և ավելի պարզեցված են նախորդ դարերում մշակված լուծումների համեմատ:

Պատերը շարված են ժապավենաձև հիմքերի վրա, որոնք մեծ մասամբ դրված են գեպինի մակերևույթից ոչ շար խորը գրնվող ժայռային գանգվածների վրա: Մեծ թեթություն ունեցող քեղանքում կառուցված ապարանքներում ձորամերձ պատերի հիմքերը հսկայածավալ հողային լիցքի պարճառով երբեմն մեծ խորության են հասնում: Քաղաքապեղի ապարանքում մինչև ժայռալանջի հատակը խորացած հիմքերի շնորհիվ արհեստականորեն սրեղծված դարավանդահարթակը այսօր էլ պահպանվում է, չնայած հողային լիցքի ճնշումից արտաքին հենապատները մասամբ փլվել է: Այսպեղ պարզորոշ երևում է նաև, որ հիմքերը շարվել են պատերի պես՝ կոպրապաշ քարով ու կրաշաղախով, սակայն՝ դրանցից մի փոքր ավելի հասպտությամբ:

Բուն պատերի շարվածքը կարարվել է ավանդական «Միդիսով»՝ արտաքուստ կանոնավոր քարաշարքեր՝ բուրբեբուրով լցված միջուկով: Մոտ 20-40 սմ բարձրությամբ կոպրապաշ քարաշարքերը ուղղվել են մանր ու փափակ քարակտորներով, իսկ մի քանի շարքը մեկ լարով ուղղվել ու հարթեցվել՝ շաղախով, որի վրա բարձրացել է հաջորդ մի քանի քարաշարքը: Այս պարճառով պատի հարթության վրա սովորական շարքերի արանքում սրանք ավելի ընդգծված են և համընկնում են բացվածքների, խորշերի, կամարների և այլ բաժանումների ստորին ու վե-

րին եզրերի հետ՝ յուրովի շեշտելով այսօրինակ «Միդիսի» կառուցելակերպը:

Պատերի հասպտությունը 0,8-1,2 մետրի սահմաններում է կախված ծածկաձևից, կառուցվածքային բեռից ու իրավիճակից և այլն: Քարաշեն ծածկով ամենաբարակ պատերը Ականաբերդում ու Տողում են (0,8-0,85-0,95 մ), ամենահասպր՝ Գյուլիսարանի բերդում (մինչև 1,4 մ), իսկ ամենապարածվածը 1-1,2 մ հասպտությունն է: Ավերարանոցում մեծ խորությամբ բուխարիների պարճառով գլխարան պատը լայնացվել է մինչև 2,2 մ:

Փայտածածկի համար, ինչպես և գյուղական բնակելի փներում, պատերի հասպտությունը 0,8-0,85 սմ է (Քաղաքապեղ, Ջրաբերդ), իսկ Գյուլիսարանի բերդում թե քարաշեն և թե փայտաշեն ծածկերով սենյակների պատերը նույն՝ 1-1,2 մ հասպտությունն ունեն:

Պատերի սրբապաշ քարերի և կամարաքարերի բարձրությունը փարանվում է 20-35 սմ-ի սահմաններում, այսինքն յուրաքանչյուր դեպքում համապատասխանում է ներբանի (մոտ 20 սմ), թիզի (մոտ 23 սմ), կամ մեծ ու փոքր ուրնաչափի (30,9 սմ, 35,6 սմ) ավանդական միջինացված չափին:

Քարի մշակման աստիճանն ու սրբապաշի որակը կախված են շինաքարի որակից և երբեմն շահեկանորեն առանձնանում են (Քաշաթաղ, Խնածախ, Տեղ, Խնձորեսկ, Մոխրաթաղ, Տող):

Մույթերը և սյուները մեղիքական փներում կիրառվել են բացառապես կամարաքարներում: Մույթերն ունեցել են քառակուսի կամ ուղղանկյուն հատվածք և շարվել են պատերի սկզբունքով, անկյունամասերը՝ սրբապաշ, սրանց միջև՝ կոպրապաշ շարվածք, միջուկը՝ բուրբեբուր: Նոռեկավանի երկրորդ ապարանքի սրահի յոթ մույթերը հավասարաչափ են (հիմքում՝ 0,95 x 0,95 մ) և այնքան ամուր ու միաձույլ են շարվել, որ նույնիսկ փապավելուց հետո պահպանվել են խոշոր, քառակող գանգվածներով: Բնորոշ են նաև Քաշաթաղի, Խնձորեսկի և Մոխրաթաղի ապարանքների կամարակիր քառակող սյուները, որոնք կերպված են եղել միակտոր քարից և փայտե սյուների պես անկյունների ողջ երկայնքով ունեցել են նուրբ փաշվածք: Նման փաշվածքներ ունի նաև Գյուլիսարանի ապարանքի սրահի մույթը, որն ըստ պահպանված բեկորների՝ քառակուսի հատվածք է ունեցել (0,9 x 0,9 մ) և ամբողջովին շարվել է սրբապաշ քարով:

Որմնամույթերը ապարանքներում կիրառվել են որպես կամարների եզրային-պարկից հենարան (Քաշաթաղի և Խնածախի վերնաքարանի, Նոռեկավանի կամարաքարի) և, առավել սակավ, որպես թաղակիր կամարի հենարան (Տողի ընդունարան):

<sup>299</sup> Մ. Մ. Նապրայան, «Նայասարանի ուշ միջնադարի շինարարական գործի կազմակերպումը», էջ 24:

Քացվածքները կառուցման խնամքով աչքի են ընկնում բոլոր հուշարձաններում, իրականացման միջոցներով որևէ փոփոխություն չեն կրել դարաշրջանում և, ըստ բարավորի ձևի, ունեն երկու լուծում՝ հորիզոնական ու կամարային վերնավարպով:

Նորիզոնական բարավորաքարով են ծածկված Քաշաթաղի, Խնածախի, Խնձորեսկի և Մոխրաթաղի երեսբայ վերնահարկերի կողային, մոտ 1 մ լայնությամբ պատուհանները, այլ դեպքերում քարե բարավորասալեր են կիրառվել նաև նեղ բացվածքով պատուհաններում (Տեղ, Մոխրաթաղ, Տոդ), ինչպես նաև հիշյալ հուշարձանների որմնախորշերում: Նորիզոնական փայտե բարավորահեծաններ ունեն փայտածածկ ապարանքների մուտքերն ու պատուհանները (Քաղաքապեղ, Ջրաբերդ, Գյուլիսարանի բերդ): Կամարածածկ մուտքային բացվածքները մեծ մասամբ 0,8-1,0 մ չափի են, երկու կողմում պարի հաստության կեսից առաջ դրված 20-30 սմ լայնության ելուստներ ունեն, որոնք շարված են 1-3 կտոր քարից և կրում են կիսաշրջանաձև բարավորաքարը, իսկ վերջինս ավարտվում է պահուսակավոր սրբապաշ կամարով: Այս պարզ լուծման շնորհիվ դռան փեղկերի տեղադրման համար ավելի հարմար ուղղանկյուն մուտքային բացվածքը ներգծվում է պարի արտաքին երեսից փոքր-ինչ հեռու ընկած ելուստների և բարավորաքարի հարթության մեջ, իսկ պարի ողջ հաստությունն ընդգրկող կամարավարպը իր վրա է վերցնում վերնամասի կամ վերին հարկի զանգվածի ծանրությունը՝ բեռնաթափելով բարավորաքարը: Այս առումով ուշագրավ է Տոդի ապարանքի դարպասը. մուտքային բացվածքի 1,85 մ թռիչքը ծածկված է մոտ 2,4 մ երկարությամբ և 56 սմ բարձրությամբ հորիզոնական բարավորաքարով, որը վերնամասի շարվածքի հեռու ընդգրկված է երկաստիճան-երկշար կամարի մեջ: Չնայած խոշոր բացվածքի համար կիրառված այս լուծմանը, հեռագայում կամարը գերբեռնվել է դարպասի վրա ավելացված երկրորդ հարկի ծանրությամբ, ինչի պարճառով խոշորաչափ բարավորաքարը ամբողջ բարձրությամբ ճաքել ու կոտրվել է և կանգնած է փլուզման եզրին: Գրեթե նույնաչափ բարավորաքար ունի նաև Շուշիի երկրորդ ապարանքի մուտքը (2,4 x 0,7 մ):

Նոռեկավանի երկրորդ ապարանքի բոլոր մուտքերն ու պատուհանները աղյուսաշեն կամարներ ունեն և չնայած բացակայում են մուտքերի բարավորակիր որմնաեկուստների ու բարավորների քարերը, այդ մասերում որևէ բնական փլվածք չի նկատվում:

Կիսաշրջանաձև կամարներ են ունեցել նաև ճակարաբաց սրահներն ու պուստապահները: Սրանցից պահպանվածները (Քաշաթաղի և Խնածախի վերնասրահներ, Գյուլիսարանի ապարանքի նախասրահ) համեմատաբար մեծաթռիչք

են (միջինը 3,8 մ կամարային բացվածքով), որի պարճառով (ինչպես նաև գեղարվեստական նկատառումներով) շարված են մոտ 25 սմ բարձրությամբ երկաստիճան, սրբապաշ կամարաղեղներով:

Դարաշրջանի այլ հուշարձաններից հայտնի է նաև, որ նման դեպքերում երկրորդ կամարաղեղը շարվել է կոպպապաշ, ճեղքված քարով, սրբապաշի հեռու նույն հարթության մեջ՝ կոնստրուկտիվ ու տեսողական առավել կայունության ապահովման նպատակով:

Թաղերը և գմբեթաթաղերը մեղիքական ապարանքների քարաշեն ծածկաձևերի միակ լուծումն են և, ըստ էության, կառուցված են նույն շինարարական տեխնիկայով:

Դահլիճներում թաղերի թռիչքը 3,6-4,6 մ-ի սահմաններում է. առավել փարածված է մոտ 4 մ թռիչքը: Թռիչքի, երկարության ու բարձրության փոքրության շնորհիվ (թաղերը մեծ մասամբ դրված են մոտ 2 մ բարձրությամբ պատերի վրա) թաղածածկ դահլիճներում չեն կիրառվել որմնամույթերի կամ պահուսակների վրա հենվող մաքրապաշ թաղակիր կամարներ (եզակի բացառություն է Տոդի ընդունարանը), և թաղերը բարձրանում են երկայնական պատերի վրա՝ կտրվածքում կիսաշրջանաձև, ձվածիր կամ երկաղեղ եզրագծով:

Թաղերը կառուցված են կոպպապաշ կամ ճեղքված երկարապոչ քարերի սեպածն տեղադրությամբ շարվածքով, առաջ կրաշաղախի կիրառությամբ, որը լցվելով քարաբանքները, մեկ միաձույլ զանգվածի է վերածել ողջ ծածկը: Թաղածածկն իրականացվել է փայտե կաղապարների և տախտակամածների միջոցով, որոնք հենվել են փայտե սյուների և մասամբ՝ երկայնական պատերի եզրերի վրա: Այս պարճառով թաղի կրունկը պարի ներքին երեսից մի փոքր՝ կաղապարա-տախտակի հաստության չափով հեռու է դրվել, ինչի շնորհիվ նաև կանխվել է հեղուկ կրաշաղախի արտահոսքը կաղապարի ու պատերի արանքով:

Գոցվող թաղերով կազմված գմբեթաթաղերը շինարարական տեխնիկայով չեն փարբերվում երկայնական թաղերից, սակայն, քանի որ համեմատաբար մեծ թռիչքներ են ծածկում, կառուցվել են առավել խնամքով: Միջինը մոտ 7,0 x 7,0 մ չափերով քառակուսի կազմող պատերի վրա դրված այս ծածկաձևի փարածական համասեռ կոշտության շնորհիվ հնարավոր է դարձել առանց ավելի կայուն շարվածքի՝ սրբապաշի կիրառության, դարաշրջանի համար խոշոր համարվող նման թռիչքով քարածածկ իրականացնել՝ չօգտագործելով միջանկյալ հենասյուներ: Գոցվող թաղերը ևս կառուցվել են կաղապարների միջոցով՝ դրանք հենելով պարից-պար ձգված գերանների վրա (Գյուլիսարանի գլխավոր պատերում թաղի անցման գոտում պահպանվել են այդ գերանների հենախորշերը):

Կոնստրուկտիվ ու գեղարվեստական առումներով շար ավելի հեղափոխություն են նույնաչափ հիմնաքառակուսու վրա կառուցված փրոմպավոր գմբեթաթաղերը: Տրոմպները, որպես գմբեթային փոխանցման համակարգ, լայն փարածում են ունեցել Նայասարանի վաղ միջնադարյան գմբեթաշինության մեջ: Ուշ միջնադարյան քարաշեն գլխավորներում այս հնարքը կիրառվել է առանձնահատուկ կերպով. պատերի ներքին անկյուններում դրված կամարային փրոմպների միջոցով հիմնաքառակուսուց անցում է կատարված ոչ թե թմբուկի ութանկյափին (ինչն այսպեղ առհասարակ բացակայում է), այլ՝ միանգամից գմբեթաթաղին: Ընդ որում փրոմպների կամարները անկյունապատերի հետ լծորդվում են կորագծային շարվածքով և փարբերվում են դասական կիսակոնային սրբափաշ լուծումներից: Մոխրաթաղի ապարանքում փրոմպներից անմիջապես վեր բարձրանում է գմբեթաթաղի ութանկյա քրզածածկը, որը մանր ճեղքված սեպանև քարաբեկորների ու կրաշաղախի համաձուլվածք է: Իսկ Նոռեկավանի գույգ գլխավորներում փրոմպներով սրացված ութանկյունը կոպտափաշ շարվածքի թանձրության հաշվին կատարված լծորդումներով վեր է ածված շրջանագծային հիմքի, որի վրա բարձրացող կիսագնդանև գմբեթաթաղը շարված է մաքուր փաշված, ծակոպկեն ու թեթև որձաքարի 20 սմ բարձրությամբ կանոնավոր քարաշարքերով: Տրոմպների երկկենարոն կամարաղեղները ևս շարված են նույն քարից, ներքին մակերևույթները՝ անկյունագծից ճառագայթաձև կորագծերով շարված աղյուսից, իսկ դրանց հետևում առաջացած պարի հոժ գանգվածը թեթևացնելու նպատակով՝ շարվածքի մեջ շրջված դիրքով դրված են կավե կճուճներ:

Կառուցվածքային լուծման և իրականացման եղանակներով փրոմպավոր գմբեթաթաղերը բավականին համարձակ են դարաշրջանի շինարվեստի համեմատ և մեղիքական ապարանքների կառուցողական կարևոր ձեռքբերումներից են:

Տանիքները մեղիքական փներում հիմնականում հարթ են՝ փոքր թեքությամբ, երբեմն՝ երկյանջ (Քաշաթաղի, Խնածախի, Խնձորեսկի, Տողի, Գյուլիսարանի բերդի և Մոխրաթաղի կրկնահարկ մասերում) կամ բրգաձև (գլխավորներում): Պահպանված փանիքները մեծ մասամբ ծածկված են հեղափայտում առաջացած հասարակ հողաշերտով ու բուսականությամբ, քարե ծածկասարների կամ կղմինդրի հեղքեր ու մնացորդներ չեն նկատվում: Հաշվի առնելով փանիքների մեծ մակերեսները և փարբեր նպատակներով (պաշտպանական, կենցաղային) դրանց օգտագործման հանգամանքը, պետք է ենթադրել, որ ծածկաթաղերի բուսաբուսական լիցքից հետո փանիքները փոփանվել, հարթեցվել են կավե շաղախով, մեղմ թեքություններով ապահովելով ջրահեռացումը դեպի բակ, իսկ պատերն ավարտվել են կանոնա-

վոր, մաքրափաշ քարաշարքով, կամ քարասալ, պարզ քիվով:

Համեմատական դիտարկումը ցույց է տալիս, որ մեղիքական փների լուծումներն ու կառուցվածքային հնարքները խիստ հարագատ են Արցախի և Մյունիքի ուշ միջնադարյան պաշտպանության ու քաղաքացիական շենքերում ընդհանրացած շինարարական արվեստին և դրանց համեմատ ունեցած առանձնահատկություններով լրացում ու հարըստացում են բնագավառի բնույթագիրը<sup>300</sup>:

**Համակառույցների սեյսմակայունությունը:** Արցախի և Մյունիքի լեռնափաները դարերի ընթացքում մեկ անգամ չէ, որ ցնցվել են երկրաշարժերից՝ ահեղ փորձության ենթարկելով փարաբնույթ շենքերի ու համակառույցների ամրությունն ու դիմակայությունը բնության այդ արհավիրքի ավերիչ ուժի առջև:

Նայ միջնադարյան ճարտարապետության զարգացման պայմաններում ցույց է տալիս, որ, սկսած վաղ շրջանից, ճարտարապետ-շինարարները մեծ կարևորություն են փվել շենքերի սեյսմակայունությանը, այդ մտահոգությամբ հարակազրծային ու ծավալափարածական հորինվածքներում նախընտրելով ավելի հավաք ու հավասարակշռված լուծումներ: Ներագայում՝ միջնադարի մեծապարփակ ճարտարապետական համալիրներում միայնց կից փարաբնույթ շենքերը մեծ մասամբ դարձյալ լուծվել են կենտրոնագմբեթ, կենտրոնակազմ կամ այլ հավաք ու հավասարակշիռ հորինվածքներով՝ ամբողջանալով միմիայն համադրվածքային լուծմամբ:

Ընդարձակ համակառույցները սեյսմիկ կարերով փարանջատելու սկզբունքը մասամբ կիրառվել է նաև ուշ միջնադարում, հիմնականում պաշտպանության համալիրներում: Մակայն, որպես կանոն, այս շրջանում կառուցված ընդարձակ վանական համակառույցների բնակելի ու քաղաքացիական այլ շենքերը ամբողջացվել են կանոնավոր քառանկյանը մոտ ընդհանուր հարակաձևով բրգավոր պարսպապատերի մեջ՝ ստեղծելով ամուր ժայռահիմքի վրա դրված մեկ միասնական, միաձույլ ու կոշտ կառուցվածքային համակարգ:

Մեղիքական փների համակառույցներում ևս (հարկապես գլխավորավոր և քարաշեն ծածկերով այլ ապարանքներում) կիրառվել է այս սկզբունքային լուծումը, սակայն, սրա հետ մեկտեղ, մեծ կարևորություն է փրվել փարբեր բաժանումների համակցումով ստեղծված շինվածքային խմբի կառուցվածքային միասնականությանն ու հավասարակշռվածությանը:

<sup>300</sup> Նման Բ. Մ. Նարայան, Մյունիքի ճարտարապետական համալիրները, էջ 148-155:

Այսպես, ինքնին կայուն կենտրոնակազմ հորինվածքով գլխապուրը կամ գույգ կից գլխապուրները երկու կողմից միաչափ դահլիճներ ունեն և ընդհանուր նախասարահների հետ մի հավաք ու կառուցիկ ամբողջություն են կազմում, այս և այլ կցաշար սենյակները սահմանափակվում են մի գծով դրված ընդհանուր ճակատապատով և չունեն ծավալային ամբողջականությունը խախտող ելուստներ, կամարասրահները լուծված են եզրապատերի և զանգվածեղ մույթերի միջոցով՝ հնարավորին չափ պահպանելով պարպային կրող համակարգի համասեռությունը, թաղակապ ծածկերը գրեթե նույն բարձրություն ունեն և միաձույլ կապված են միմյանց և այլն:

Բացի այս, փարբեր հարկայնության դեպքում երկհարկ շինությունները կամ առանձնացված են միահարկ սենյակաշարից (Խնածախ, Տող, Գյուլիստանի բերդ), կամ անջատված՝ կրկնակի պատերով սրեղծված կարով (Քաշաթաղ): Առանձնացված են նաև բաժանմունքների այլ երկայնական առանցքային համադրվածք ունեցող շինությունները (Մոխրաթաղ, Նռեկավան), որոնք դարձյալ լուծված են կենտրոնական երեսբաց դահլիճին սիմետրիկ:

Առանձին կառուցամասերի համաչափությունները և սեյսմիկ կայունության առումով

խիստ նպաստավոր են. գլխապուրը հարակազրծում բառակուսի են՝ հիմնաչափով մտովի կառուցված հավասարակողմ եռանկյան ոչ մեծ բարձրությամբ, սենյակների լայնության ու երկարության հարաբերությունը հիմնականում 1:1,5-1:1,7 է, իսկ բարձրությունը՝ մոտ լայնության չափ: Այսինքն թե հորիզոնական և թե ուղղահայաց ձգվածությամբ շինությունները աչքի չեն ընկնում, հակառակը՝ բավականին հավաք են ու գեղնամած: Բացառիկ դեպքերում, երբ երկարությունը գերազանցել է լայնության հետ հարաբերակցության հիշյալ սահմանները, կիրառվել է միջանկյալ թաղակիր կամար (Տողի ընդունարան, Նռեկավանի սյունասրահ): Բնութագրական է նաև, որ պատերի թանձր զանգվածեղության համեմատ ծածկերը բարակ են ու թեթև, հաճախ ծակոփկեն քարից, զուրկ ծանր քարասալ կամ կղմինդրե ծածկույթից, իսկ երբեմն էլ լուծված են առավել թեթև՝ փայտաշեն, գերանակապ:

Անշուշտ, մելիքական ապարանքների սեյսմակայունությունն ապահովող հիշյալ միջոցները արդյունք են ճարտարապետաշինարարական վաղեմի ավանդույթների իմացության վրա հիմնված հարակազմային ու ծավալապարսպական լուծումների և դարերի փորձություն բռնած շինարարական արվեստի:



## ՎՈՐԻՆԿԱԾՔԱՅԻՆ ԾԱՊՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Մեղիքական ապարանքների ճարտարապետությունն իր երկակի՝ բնակելի-պալատական և պաշտպանական բնույթով, բնականաբար, առաջին հերթին որոշ չափով խարսխվել է այդ բնագավառների նախընթաց ուղու ձեռքբերումների ու ավանդույթների վրա և կազմավորվել է դարաշրջանի քաղաքացիական ճարտարապետության ընդհանուր միավաճության և առանձնահատկությունների շրջանակներում՝ այդ ընթացքում առնչություններ ունենալով նաև նույն պատմաքաղաքական պայմաններում ապրող հարևան երկրների ճարտարվեստի հետ:

Բնակարանաշինությունը համարվում է միջնադարյան ճարտարապետության առավել ավանդապահ ասպարեզներից մեկը: Ավաճն ավելի քան հատկանշական է Արցախի և Սյունիքի լեռնագավառների պարսության ու միջնադարյան ժամանակահատվածի համար, քանզի նախորդ դարերի ծաղկուն մշակույթի նվաճումների որակն ու ճարտարապետական դպրոցներին ներհատուկ դիմագծերը մեծապես կորցրած այս շրջանում ճարտարապետաշինարարական գործունեությունը, այդ թվում՝ բնակարանաշինությունը, ընթանում էր ժողովրդական ճարտարապետության պարզագույն կառույցներում իրենց կենսունակությունը պահպանած ավանդական ձևերի յուրացման ու վերամարմնավորման ճանապարհով:

Մյուս կողմից հայրնի է, որ ապարանքավեր մեղիքները իրենց ընթանական կյանքով ու առօրյա կենցաղով շար մոտ ու նման էին հպարակ ժողովրդին, ուստի նաև այս պարճառով է, որ նրանց բնակարանների ճարտարապետական-հորինվածքային սկզբը առավելապես կապվում է գեղջկական բնակելի տան ճարտարապետության մեջ ավանդաբար ընդհանրացած ձևերի հետ:

Այսպես, բոլոր փիպի մեղիքական տներում առկա ձգված ուղղանկյուն հատակագծով սենյակները կառուցված են ժողովրդական բնակարաններում լայնորեն տարածված գոմի-օղաների կամ օղաների օրինակով. մեծ մասամբ ունեն խորքային տեղադիրք, ճակատային մուտք, երեսնապարուն գույգ «պարսիան»-խորշերի մեջ առնված բուխարի, երկայնական, բարձրացված ծածկաձև և այլն: Եվ եթե այս սենյակների փայտածածկ օրինակները (Քաշաթաղ, Գյուլիստանի բերդ, Ջրաբերդ, Քաղաքաբերդ) գրեթե չեն տարբերվում նախափայտից, ապա դրանց քարաշեն-թաղակապ տարբերակները աչքի են ընկնում հղկված ու կանոնավոր հատակաձևով և երբեմն ունեն դահլիճային շինությանը հատուկ ներքին ծավալաձևի որոշ հանդիսավորություն: Ապարանքներում կան նաև թաղածածկ սենյակների այլ տարբերակներ, սակայն դրանց նախօրինակ օղաները և ս միատեսակ չեն:

Գեղջկական տան ազդեցությունը առավել ցայտուն է տեսանելի մեղիքական գլխավորներում և հատկապես՝ դրանց ծածկաձևերում:

Նայրնի է, որ քառակուսուն մոտ հիմքով և երդիկավոր, բրգաձև փայտածածկով բնակարանի այս տիպը կիրառվել է շար հնուց, բնորոշ է լեռնային շրջաններին և տարածված է եղել բազմաթիվ երկրներում: Նայաստանում գլխավորն ունեցել է տարբեր անվանումներ («տուն», «գլխատուն», «մեծ տուն», «հացատուն», «թոնրատուն» և այլն) և գերանակապ ծածկի զանազան ձևեր՝ անսյուն կամ սյունավոր հիմքի վրա<sup>301</sup>: Գլխատունն իր ծածկաձևերի տարբերակներով մեծ տարածում է ունեցել հատկապես լեռնային

<sup>301</sup> Ս. Վարդանյան, Նայական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Ե., 1959, էջ 44, 115-121, նույնի՝ Նագարաշենը և նրա նշանակությունը հայկական ճարտարապետության մեջ, «Լրաբեր հաս. գիտ.», 6, 1967, էջ 78-88:

ու անտառաշատ Արցախ-Սյունիքում<sup>302</sup>, և բնական է, որ այն քարակերպ վերամարմնավորմամբ կարևորագույն տեղ ունի նաև մեկիբական բնակարաններում:

Չնայած առանց թմբուկի գմբեթաթաղի քարերը ձևերը միջնադարյան Նայասարանի քաղաքացիական ճարտարապետության մեջ շատ են պարածված (գավիթներ, գրապներ, սեղանապներ, բաղնիքներ և այլն), սակայն այդ քարաշեն ծածկաձևերի բոլոր քարբերակների ծագումնաբանությունը ևս ուսումնասիրողները բխեցնում են փայտածածկ գեղջկական գլխավորներից (Վ. Նարոյությունյան, Ն. Խալիպադյան):

Վաղագույն մեկիբական քարերում՝ Քաշաթաղի (15-րդ դ.) և Խնածախի (16-րդ դ.) ապարանքներում պահպանված գլխավորները ոչնչով չեն փարբերվում գեղջկական գլխավորներից և դեռևս փայտաշեն ծածկեր ունեն, իսկ քարակերպ գլխավորների համար նախապիպ են եղել գեղջկական գլխավոր ծածկի «սողոմաշեն» և «հագարաշեն» քարբերակները<sup>303</sup>:

«Սողոմաշեն» ծածկը կառուցվում է պարերի կամ դրանցից հեռացված սյուների հիմնաքառակուսու վրա կողմերից զուգահեռաբար առաջ դրված գերաններով, որոնք դեպի վեր նեղանալով քառանկիսր բուրգ են կազմում և ավարտվում են երդիկանցքով: Այս սկզբունքով, սակայն քարուկիր շարվածքով են իրականացված ապարանքների գլխավորներում ամենաարածված ծածկաձևերը՝ զոցվող թաղերով կազմված գմբեթները (Գյուլիսարան, Տեղ, Ավետարանոց, Թուխնակալ, Նոռեկավանի փոքր գլխավորներ): Սրանք ևս, փայտաշեն նախօրինակների պես, քառանկիսր և երդիկանցքի հարթությամբ հարված բուրգի տեսք ունեն, իսկ բրգաձև գմբեթաթաղի նիստերը թույլ արպահայտված կորեր են և ոչ թե քառորդ շրջանագծեր, ինչը ենթադրելի էր լիարժեք կիսագլանային թաղերի «զոցվելու» կամ փոխհարվելու դեպքում: (Այսպիսի ծածկեր ունեն նաև Քաղաքապետի ապարանքի գույգ խցերը, նույն բերդավանում պահպանված գլխավորներ և բաղնիքը, Գյուլիսարանի բերդի սպորոպում գրավող բաղնիքը և այլն):

«Սողոմաշենի» փոքր-ինչ քարբերակված ձևն է ութանկիսր «հագարաշենը», որում քառակուսի հիմքը նախ անկյունային գերանների միջոցով վերածվում է հավասարակողմ ութանկյան, ապա սրա վրա դարձյալ զուգահեռաբար առաջ դրված գերանաշար շրջանակներով կազմվում է երդիկով ավարտվող ութանկիսր ծածկը: «Նագարաշենի» այս պարզ քարբերակն է վերամարմնավորված Մոխրաթաղի ապարանքում, որտեղ գլխավոր քառակուսի հիմքից չորս անկյունային սյուների միջոցով անցում է կատարված բրգաձև գմբեթաթաղի հավասարակողմ ութանկյանը: «Նագարաշենի» ամենակարարյալ հաճա-

խակող բրգաձևակի քարաշեն քարբերակներ կարելի է համարել Նոռեկավանի գույգ գլխավորների սյուների գմբեթները, որոնց հիմքերը, ի քարբերություն նախորդների, երկաղեղ կամառային սյուներից հետո պարի առաջացող զանգվածեղության հաշվին վեր են ածված շրջանագծերի, իսկ սրանց վրա բարձրանում են կանոնավոր քարաշարքերով իրականացված և կիսագնդաձև, երդիկավոր գմբեթաթաղերը:

Ակնհայտ է, որ այսպեղ, ժողովրդական ճարտարապետությունից զար, առկա է ինչպես հայ եկեղեցական գմբեթաշինության, այնպես էլ նախորդ դարաշրջանների աշխարհիկ-պալատական կառույցներից հայտնի գմբեթաձևերի հեռավոր անդրադարձը:

Այս առումով խիստ ուշագրավ են Ականաբերդի ապարանքի գույգ գլխավորները, որոնք, ինչպես տեսանք, ըստ սկանապետի վկայության, նույնպես քարածածկ են եղել: Ապարանքի հարևանությամբ կանգուն միջնադարյան բաղնիքի և ոչ հեռու գրավող Դաղիվանքի մի քարաշեն գլխավոր (13-րդ դ.) կիսագնդաձև ու երդիկավոր գմբեթները հենց այսպիսի լուծում ունեն և, ըստ ամենայնի, նախապիպ են ոչ միայն գույգ միանման գլխավորների համար ընդհանրապես, այլև դրանցից ամենախեղաքրակաճի՝ Նոռեկավանի գույգ գլխավորների գմբեթածածկերի համար:

Խոշոր մեկիբական ապարանքներում մեկից ավելի կցաշար գլխավորների առկայությունը, պարզ գործնական անհրաժեշտություն լինելով, նույնպես ավանդված է հայ ժողովրդական բնակելի տան ճարտարապետության մեջ<sup>304</sup>: Այդպիսիք առիթ ենք ունեցել չափազերու Ջավախքի հայկական գյուղերում, որոնք, ինչպես և այլուստ քարայինները, ներքուստ բաժանված են ոչ թե պարով, այլ փայտե սյուներով: Փայտածածկ գույգ գլխավոր հնագույն նմուշներ են Քաշաթաղի ապարանքում պահպանվածները, որոնք սակայն անջարված են պարով:

Կարևոր է նշել նաև, որ գլխավոր փայտաշեն ծածկաձևերից անցումը քարաշեն ձևերին տեղի է ունեցել ոչ միայն մեկիբական ապարանքներում, այլև դրանց ժամանակակից գեղջկական քարերում: Արցախ-Ղարաբաղի ժողովրդական բնակելի տան ուսումնասիրողները, երբեմն նույնիսկ անձանոթ լինելով մեկիբական ապարանքների ճարտարապետությանը, առանձնացնում են «ղարաբաղյան քարե դարադանը» որպես դարադան-գլխավոր հասուն փայլ, վկայաբերելով Ննգի, Շահբույաղ<sup>305</sup> և Շուշիի մոտ գրավող Մեծ Ղալաղարասի<sup>306</sup> գյուղերում պահպանվածները: Ինչպես երևում է 19-րդ դարի մի ականապետի վկայությունից, քարաշեն ու կիսագնդաձևի

<sup>304</sup> Ս. Վարդանյան, Նայկական ժողովրդական բնակելի տան ճարտարապետությունը, էջ 121:

<sup>305</sup> С. Лисициан, "Карабахский карадам" с. 106.

<sup>306</sup> А. Али-заде, А. Саркисов, О некоторых архитектурных памятниках Шуши, с. 122-123, М. Усейнов, Л. Бреганицкий, А. Саламзаде. История архитектуры Азербайджана, Москва, 1963, с.342, Э. Авалов, Архитектура города Шуши, с. 40.

<sup>302</sup> Ե. Լալայան, «Գանձակի գավառ», էջ 334, Սոք. Լիսիցյան, «Լեռնային Ղարաբաղի հայերը», էջ 33-34, նույնի՝ Զանգեզուրի հայերը, էջ 101-104:

<sup>303</sup> Ս. Վարդանյան, «Նագարաշենը և նրա նշանակությունը», էջ 78:

գլխավորները Արցախի գյուղերում լայն փարածում են ունեցել և բնակելի փան հիմնական փոխերից են<sup>307</sup>: Ընդ որում, ուշագրավ է, որ ադրբեջանցի ուսումնասիրողները շահարկելով գլխավոր «ղարադան» անվանումը Արցախում, այսպիսի «ղարադանները» համարում են հայկական «գլխավոր» ու վրացական «ղարբագի» ադրբեջանական գուգահեռը և «բնակարանի հնագույն ու լայնորեն փարածված փոխը Ադրբեջանում»<sup>308</sup>, սակայն բուն ադրբեջանական գյուղերից որևէ գլխավոր օրինակ չեն բերում: Մինչդեռ Գանձակի գմբեթավոր փները ևս<sup>309</sup> վկայում են, որ քարակերպ գլխավորների ոգով սպեղծված այդ քաղաքային բնակարանները բնորոշ են դարձյալ հայահոծ բնակչությամբ բնակավայրին, և, ըստ ամենայնի, արհեստավորական ավանդույթներով հայրնի հայկական միջավայրի բնակարանաշինության անմիջական ազդեցության արդյունք են:

Ավելին, ինչպես վկայում է Սյր. Լիսիցյանը, քոչվորությունից նստակյաց կյանքի անցած ադրբեջանցիները Ղարաբաղում և Զանգեզուրում իրենց փները կառուցել են «հացարօնի ճարտարապետական ձևերով, հայ վարպետների ձեռքով»<sup>310</sup>:

Նայ գեղջկական բնակարաններում ընդհանրացած ավանդական ձևերի վերամարմնավորման ծնունդ են նաև ապարանքներում հանդիպող միակամար և կամարաշար նախարահները, որոնց բազմաթիվ փայտաշեն նախօրինակների կողքին երկրամասի ժողովրդական բնակարանաշինության մեջ առկա են նաև համանման քարակերպ գուգահեռները մի շարք գյուղերում:

Գեղջկական բնակարանների ազդեցությունը նկատելի է ոչ միայն մելիքական փների առանձին կառուցամասերում, այլև համակառույցների ընդհանուր հորինվածքում: Ապարանքների մեծ մասամբ միահարկ ու կիսագեղնավոր և հազվադեպ վերգեղնյա ու երկհարկանի շինությունները, դրանց պարագծային կառուցապատումը և պարփակ ներքին բակը, ինչպես նաև այլ հարկանշական կողմերը ևս ժողովրդական բնակելի փան ավանդույթներից բխող ծագումնաբանական սկիզբ ունեն և, ապարանքներից զատ, իրենց արտահայտությունն են գտել դրանց ժամանակակից վանական բնակարաններում:

Այս ընդհանուր նախասկիզբն է պարզաբար, որ քարակերպ մելիքական ապարանքների հետ ամենամերձավոր ու հարազատ գուգահեռները գրնում ենք հենց հին ու նոր վանքերում, ուշ միջնադարում կառուցված քարաշեն բնակարաններում ու քաղաքացիական այլ շենքերում: Պարահական չէ, որ Արցախի և Մյունիքի բազմաթիվ մեծ ու փոքր վանական համալիրների կազմում պահպանված նմանափայ շինությունները հորինվածքային ու համադրվածքային առումով մեծ

ընդհան-րություններ ունեն մելիքական համակառույցների հետ: Այս փեսակերպից բնորոշ են ոչ միայն ուշ միջնադարյան վանք-ամրոցներն ու անապարները (Գեղաշենի Եղնասար վանք, Գյուլիսարանի Ամենափրկիչ վանք, Երիցմանկանց վանք, Ամարասի վանք, Բաղիրխանի վանք, Տաթևի մեծ անապար և այլն), այլև այս շրջանում նոր շինություններով համալրված միջնադարյան վանքերը (Գանձասարի վանք, Դաղիվանք, Սր. Նակոբավանք, Զրվշրիկ կամ Եղիշե առաքյալի վանք, Տաթևի վանք, Գնդե-վանք և այլն):

Նույն դարերում մասամբ կամ լրիվ քարաշեն բնակարաններ են կառուցվել նաև Նայասարանի այլ վանքերում (Գեղարդ, Մուղնի, Խոր Վիրապ, Ուշի և այլն):

Քարաշեն ծածկերով վանական բնակարանները մելիքական փներից փարբերվում են նրանով, որ շինությունները վերգեղնյա են, համադրված են ավելի խոշոր բաժանմունքների հետ (սեղանափներ, խոհանոցներ և այլն), շատ դեպքերում երկայնական կողմով են դրված բակի նկատմամբ և այդ կողմից ունեն լայն պարտուհաններ, սակավ են նախասարահները և այլն: Սակայն այս համալիրներում առկա են ապարանքների հետ նույն սկզբունքով կառուցված բազմաթիվ թաղածածկ դահլիճներ ու սենյակներ, երբեմն՝ գմբեթավոր գլխավորներ ու կրկնահարկ դահլիճներ, կամա-րակապ սրահներ:

Այսպես. Զրվշրիկ վանքի հարավ-արևելյան անկյունամասում պահպանված վանահոր կրկնահարկ բնակարանը (1552 թ.) ակնհայտորեն գուգահեռվում է Քաշաթաղի և Խնածախի 15-16-րդ դարերի կրկնահարկ դահլիճների, ինչպես նաև Տողի և Մոխրաթաղի 18-րդ դարի նմանափայ շինությունների հետ: Նույն վանքի և Տաթևի վանքի գոցվող թաղերով ծածկված գլխավորները միայն փոքր չափերով ու ներքին խորշերի վայելչության պակասով են փարբերվում Գյուլիսարանի, Ավետարանոցի, Տեղի և Թուխնակալի գլխավորներից, իսկ Գանձասարի վանքի հարավային պարսպից դուրս կառուցված հյուրարանի քրոմպավոր գմբեթով գլխավորնը չափով և գմբեթաթաղում սրբափայլի բացակայությամբ է գիջում Նոռեկավանի գույգ գլխավորին: Տրոմպավոր-ութանիսպ և գոցվող թաղերով ծածկված մի քանի գլխավորներ կան Ամարասի վանական բնակարաններում (17-18-րդ դդ.), իսկ դրանց շարքում գրնվող եռակամար երեսբաց խոհանոցի երեք խորշերի կրակարանները գրեթե կրկնում են Ավետարանոցի ապարանքի գլխավոր կրակարանների ձևերը<sup>311</sup>:

Նոռեկավանի և Մոխրաթաղի գլխավորներ մասի դիմաց գրնվող երկայնադիր դահլիճները իրենց գուգոփնակներն ունեն ինչպես ժողովրդական բնակելի փներում, այնպես էլ մեծ մասամբ նմանափայ լուծված վանական բնակարաններում, իսկ այդ դահլիճների միջանկյալ ե-

<sup>307</sup> Обзорение Российских владений за Кавказом, СПб, 1836, ч. III, с. 308.

<sup>308</sup> М. Усейнов, А. Бреганицкий, А. Саламзаде, ук. соч., с. 329.

<sup>309</sup> Նույն փեղում, էջ 327, 329:

<sup>310</sup> Սյր. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 103-104:

<sup>311</sup> Մ. Մ. Նասրաթյան, Ամարասի ճարտարապետական համալիրը, «Լրաբեր հաս. գիտ.», 5, 1975, էջ 37-39:

րեսքաց սրահի սակավաթիվ տեղական զուգահեռներից են Ամարասի հիշյալ եռակամար սրահն ու Դադիվանքի հյուրապարան երկրորդ հարկը (17-րդ դ.):

Մելիքական ապարանքների հորինվածքային ծագումնաբանության մեջ կարևոր տեղ ունեն նաև երկրամասի միջնադարյան իշխանական ապարանքները, որոնք չնայած սակավաթիվ են և վաղ պահպանված, այնուամենայնիվ որոշ գծերով նախանշում են պալատաշինության տեղական ավանդույթների վաղեմի արմատներն ու դրանց ժառանգորդական կապը երնագույն շրջանի հետ: Այս առումով իր պահպանվածությամբ եզակի է Գանձասարի վանքի հանդիպակաց անպառապանջին կառուցված հոխանաբերդի իշխանական ապարանքը (13-րդ դ.):

Նոր բուրգերով ամրացված ուղղանկյուն, պարսպափակ ընդհանուր հորինվածքը, քարաշեն ծածկերով պարսպակից դահլիճներն ու ներքին բակը, պեք է ենթադրել, որ այն հարկանիշներն են, որոնք բնորոշ են եղել նաև հասուն միջնադարի իշխանական փոխանցվել են հաջորդ դարեր, նորովի մարմնավորվելով մելիքական փոքր ամրոցակերպ համակառույցներում:

Ուշագրավ է, որ իշխանական ապարանքներում և միջնադարի պալատական այլ շենքերում ևս զգալի է եղել գլխապան հորինվածքային ազդեցությունը: Վերին խաչենի Ծար իշխանանիստում կիսավեր պահպանված դահլիճը (13-րդ դ.), Դադիվանքում կանգուն առաջնորդարանի դահլիճը (1211 թ.) և Նորսի իշխանական ապարանքի ավերակված գահադահլիճը (14-րդ դ.) հիմնականում կրկնում են վանական գավիթ-ժամապներում ընդհանրացած քառասյուն-կենտրոնական կողմ-կողմ հորինվածքը, որի կենտրոնական երդիկակիր հարվածի բրգաձև քարածածկը նույնպես «հազարաշեն» ծածկով գլխապաների անդրադարձն է համարվում մարմնավորված դարին հատուկ կառուցողական հնարքներով<sup>312</sup>:

Ուստի կարելի է ասել, որ ամբողջովին քարակերպ գլխապան նախակիցը երկրամասում տեսանելի է առնվազն 13-14-րդ դարերում քառասյուն-կենտրոնական փայի դահլիճների կենտրոնական քառակուսու ծածկածներում: Ավաճի վկայությունն են նաև մելիքական գլխապաներում փարածված զոցվող թաղածածկի նմանօրինակները լեռնաշխարհի միջնադարյան քաղաքացիական ճարտարապետության մեջ (Խաթրավանքի սեղանապուրն, Նորավանքի գավիթ):

Ապարանքների պաշտպանական կառուցվածքները և այդ նպատակով կիրառված հորինվածքային հնարքները ևս բնագավառի տեղական ավանդույթների անդրադարձն են: Տեղանքի պայմաններին հարմարեցված բարձր պարսպապա-տերը, դրանց անկյունային հոծ ու սնամեջ, բոլորաձև բուրգերը, զանգվածեղ դարպասները և միահարկ շինությունների փանիքների օգրագոր-

ծումը այն հիմնական պաշտպանական միջոցներն են, որ հնուց ի վեր կիրառվել են ամրոցներով հարուստ երկրամասի բերդաշինության մեջ և դրսևորվել են նաև ապարանքներին ժամանակակից ուշ միջնադարյան բերդերում և վանք-ամրոցներում:

Արժանահիշատակ է, որ մելիքական ապարանքների ամենահասուն ու բնութագրական փայլ քարակերպ գլխապան համակառույցների հիմնական բաժանմունքներում (գլխապուրն, դահլիճ, կամարապահ, երեսքաց սրահ, պարսպափակ բակ) հորինվածքային, կառուցվածքային ու գործառնական խիստ որոշակի ընդհանրություններ են նկատվում նաև միջնադարյան Նայասարանի արքունական և իշխանական ապարանքների բաժանմունքների հետ (փաճար, դահլիճ, սրահ, հրապարակ և այլն), որոնց ընդհանրական առանձնահատկությունների մասին չափազանց ուշագրավ դիտարկումներ ու եզրահանգումներ է կատարել Թ. Թորամանյանը<sup>313</sup>: Շեշտելով, որ դրանք «առնվազն փասն և հինգ դար գրեթե նույնությամբ շարունակվել են հայոց մեջ շատ քիչ փոփոխություններով», նա գրում է. «...Ընդհանրապես մեծ բլուրներու գագաթներ կամ լանջեր կընարվելին ապարանքներու շինության համար... Որովհետև ի հնումն ապարանքները շատ անգամ իբրև ամրոց ալ կծառայեին, այդ պատճառով ամուր պարիսպներով կշրջապատեին»<sup>314</sup>: Միջնադարյան ապարանքների «ամենեն կարևոր և ամենեն ավելի շքեղ բաժանումի»՝ «փաճարի» մասին մեծ գիտնականը գրում է. «...Ամեն մի ապարանքի մեջ անհրաժեշտ էր փաճարի գոյությունը: Երբեմն գտնվել են երկու կից փաճարներ միմյանց հետ հաղորդակցվող: Տաճարի ձևը երկար կամ հավասարակողմ քառակուսի էր...: Եղած վկայությունները առհասարակ ցույց կուտան, որ փաճարներու լույսը սովորաբար վերևեն կտրացվել: Տեղեկություններ շատ կան փաճարներու քարաշեն լինելու մասին»<sup>315</sup>: (Թ. Թորամանյանը բացատրում է նաև մատենագրական աղբյուրներում որպես աշխարհիկ-պալատական գլխավոր դահլիճի հոմանիշ օգրագործվող «փաճար» բառի իմաստը, ինչը հետագայում հիմնավորվել ու հաստատվել է ուրիշ առիթներով, այլոց կողմից)<sup>316</sup>:

Խիստ հետաքրքրական է, որ այսօրինակ փաստորեն քարակերպ ու գլխապանակերպ «փաճարների» առկայությունը միջնադարյան ապարանքներում Թ. Թորամանյանը կանխագծել է տեղյակ չլինելով ուշ շրջանում Նայասարանի այլ

<sup>312</sup> Վ. Նարոթյունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992 թ., էջ 270, Տր. **Մնացականյան**, Архитектура армянских притворов, Е., 1952, с. 116:


<sup>313</sup> Թ. Թորամանյան, Նայասարանի արքունական և իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հր. 1, Ե., 1942, էջ 352:

<sup>314</sup> Նույն տեղում, էջ 353:


<sup>315</sup> Նույն տեղում, էջ 354-355:

<sup>316</sup> **И. Орбели**, Избранные труды в двух томах, т. I, Москва, 1968, с. 37. **Մ. Մ. Նասրաթյան**, Դադիվանքում խաչենի իշխանների պալատական դահլիճի ճարտարապետությունը, «Նայասարանի մշակույթի և արվեստի պորթլենդներին նվիրված հանրապետական ջորորդ գիտական կոնֆերանս», գեկուցումների թեզեր, Ե., 1979, էջ 68-69:






42. ԿՍՏՈՒՄԻ ԿԱՆԱԿԱՆ ՔՆԱԿԱՐԱՐԱՆՆԵՐ



41. ԵՂԵՑԻ ԱՐԱՔՅԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ ՔՆԱԿԱՐԱՐԱՆՆԵՐ



*XIX. ԵՂԻՇԵ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ. Վանք-ամրոցը արլ-ից և  
առաջնորդական ապարանքի կրկնահարկ դակիճը*



*XX. ՎԱՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ. Տաթևի վանք, Գյուլիստրանի Սբ. Աննապիրկիչ վանք, Երիցունակաց վանք, Սբ. Հակոբավանք, Անարատի վանք, Դադիվանք*

գավառներում կառուցված դրանց համեմատաբար փոքրաչափ ու անպաճույճ նմանօրինակների՝ մելիքական գլխավորների մասին: Մեծ գիտնականը հանգամանորեն բացատրում է նաև «տաճարների» կից կամ անջատ «դահլիճների», «ընդունելության սրահների», «ապարանքի շենքերով շրջապատված և բացօթյա հրապարակի», «կամարակապ սյունազարդ ճեմելիքների» և «երեք կողմեն փակ, մեկ կողմեն բացօթյա և կամարակապ սրահների»<sup>317</sup> տեղն ու նշանակությունը արքունական կամ իշխանական ապարանքներում, որոնք ևս, ինչպես տեսանք, գրեթե նույնությամբ առկա են մելիքական համակառույցներում:

Նարկ է նշել, որ միջնադարի հայ պալատաշինության անբավարար ուսումնասիրվածության պատճառով Թ. Թորամանյանի այս ծրագրային աշխատության մեջ տեղ գրած դիտարկումները մինչև այժմ արժանի ուշադրության չեն արժանացել, չնայած հեղափոխում պետություններով բացված պալատական շենքերի ճարտարապետական առանձնահատկությունները բազմիցս հաստատել են այդ դիտարկումների և բնութագրումների ճշմարտագիտությունը: Այս խնդրի հանգամանակից քննությունը դուրս հանարելով մեր ներկա ուսումնասիրության շրջանակներից՝ նշենք միայն, որ մելիքական ապարանքների ճարտարապետությունը ևս կարող է օգնել ողջ միջնադարի հայ ապարանքաշինության կազմավորման, զարգացման, դրսևորումների և ձեռքբերումների բացահայտման գործում, մանավանդ որ դրանց առանձին կառուցամասերում նկատվում է հայոց միջնադարյան պալատների (Դվին, Արուճ, Զվարթնոց, Անի, Աղթամար և այլն) հորինվածքային ձևերի ճիշտ է հեռավոր, սակայն ակնհայտ անդրադարձը:

Մելիքական ապարանքների ճարտարապետության հասունության ու կայուն ավանդույթների մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 18-րդ դարի կեսերին Արցախ-Ղարաբաղում բուն դրած մահմեդական խաների «իմարեթ»-ապարանքները մեծ մասամբ կառուցվել են հենց այդ ամրոցակերպ տներում ընդհանրացած հորինվածքային ձևերով և կառուցելակերպով:

Խոսքը Շահբուլաղի և Աղղամի խանական պալատների մասին է, որոնց մասին մեր դիտարկումները հիմնված են աղբյուրների և հրապարակումների վրա: Առաջինը գտնվում է ԼՂՏ արևելյան սահմանագլխին՝ վաղ միջնադարյան խաչածեղ-եռախորան փոքր եկեղեցով հայտնի Վանքասարի հարավ-արևելյան ստորոտում բխող վարար աղբյուրից Շահբուլաղ անունը սրացած հնավայրում, որը Խաչեն գավառում է և արցախյան Տիգրանակերպ քաղաքի ավերակների տեղն է<sup>318</sup>: Նայտնի է, որ Ղարաբաղի փափարակներում հայտնված քոչվոր ցեղա-

պետ Փանահը, նախքան Շուշիում հիմնավորվելը, 1748 թ. նախավայր է կառուցել Բայաթ վայրում, 1751-52 թթ.՝ Տարնակուր (Տիգրանակերպ)-Շահբուլաղում, որտեղից սապարակում էր Արցախի մելիքների տիրույթները<sup>319</sup>: Ինչպես վկայում է խանական պարսագիր Միրզա Ջամալը, Բայաթի ամրոցն ու մյուս շինությունները աղյուսաշեն էին, իսկ Շահբուլաղինը՝ քարուկիր<sup>320</sup>: Ընդ որում, ըստ մեկ այլ ակնասպետի<sup>321</sup>, վերջինիս շինարարությունը կարարել են շրջակայքից այստեղ բերված ճարտարապետ-շինարարները:

Պարզ է, որ խոսքը մերձակա գավառների հայ քարգործ-վարպետների մասին է, մանավանդ որ քոչվոր-ավարառու ցեղապետ Փանահն ու նրա ցեղակիցները եթե հնրացած էին որևէ արհեստում, ապա հասարակապես ոչ քարուկիր շենքերի կառուցման գործում<sup>322</sup>: Միանգամայն հասկանալի է, թե ինչու Շահբուլաղի ամրոցակերպ պալատն ունի մելիքական ապարանքներին բնորոշ ուղղանկյուն հարակազմով, պարսպափակ, բրգավոր հորինվածք՝ ներքուստ պարիսպներին կից միահարկ, թաղածածկ ու բակահայաց սենյակներով<sup>323</sup> և, ի տարբերություն նույն դարի այլ աղյուսաշեն, շքեղազարդ խանական պալատների, կառուցված է կոպտաբաշի ու սրբաբաշի համադրությամբ ստեղծված անպաճույճ ձևերով<sup>324</sup>:

Այստեղ ուշագրավ է հարկապես միջանկյալ երեսբաց դահլիճով սենյակաշարը, ինչպիսին առկա է Շուշիի երկրորդ, Նոռեկավանի երկրորդ և Մոխրաթաղի ապարանքներում: Զուտ պաշտոնական հանդիսակարգի համար նախատեսված այս շինությունների առկայությունը խաների և մեծահամբավ ու ազդեցիկ մելիքների ապարանքներում, ըստ ամենայնի, ուշ պարսկական պալատաշինության մեջ տարածված որոշ ձևերի և պարսից իշխանավարման կենցաղի որոշակի ազդեցության արդյունք է:

Նորինվածքային միանգամայն այլ լուծում ունի Աղղամի «իմարեթ»-ապարանքը, որը առանց հիմնավորման վերագրվում է Փանահ խանին և թվագրվում 18-րդ դարով<sup>325</sup>: Ի դեպ, խանական պարսագիր Միրզա Ջամալը մանրամաս-

<sup>317</sup> Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 356:

<sup>318</sup> Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 28, Լեռ, հր. 3, գիրք Բ, էջ 265, Ս. Կարապետյան, Նայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 223-227: Տե՛ս նաև Միրզա Ժամալ Ժեջանշիր, ր. Կ. Կ. 69, Յ. Ավալով, ր. Կ. Կ., 12.

<sup>319</sup> Мирза Джамал Джеваншир, ր. Կ. Կ., Баку, 1959, с. 68-70, Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, Баку, 1950, с. 55-56, Г. Абдуллаев, Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965, с. 94.

<sup>320</sup> Мирза Джамал, ր. Կ. Կ., с. 68, 101.

<sup>321</sup> Յ. Ավալով, ր. Կ. Կ., с. 38. Ներկայումս այստեղ մեջբերում է ակնասպետի՝ հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ Նովսեփ Էմինի վկայությունը:

<sup>322</sup> Ըստ արժանահավաք վկայության, հայ ճարտարապետ-վարպետների գլխավորությամբ և հայ արհեստավորների ձեռքով են կառուցվել նաև Շուշիի բերդապարիսպները նույն Փանահի օրոք: Տե՛ս Մաքսիմադարան, ձեռ. N2734, (ըստ Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի հուշարձանները, էջ 214):

<sup>323</sup> Յ. Ավալով, ր. Կ. Կ., с. 13.

<sup>324</sup> 1985 թ. մեր այցելության ժամանակ այս խանական դղյակը վերակառուցվում էր բարձր, պարսկական պարիսպներով ու բուրգերով, իսկ բակահայաց սենյակների ճակարկները երեսապարվում էին սրբաբաշ, սպիտակ քարասալերով:

<sup>325</sup> А.Саламзаде, Архитектура Азербайджана, XVI-XIX вв. Баку, 1964, с. 83-84, Յ.Ավալով, ր. Կ. Կ., с. 16.

նորեն թվարկում է Փանահի և նրա որդի Իբրահիմի շինարարական աշխարանքները (նաև Ադդամում), սակայն այս ապարանքը չի հիշարկում<sup>326</sup>: Խանական պալատը բաղկացած է միմյանցից անջատ և փոխադրահայաց երկու մասնաշենքից, որոնցից գլխավորը կազմված է երկու կողմից թաղածածկ սենյակների մեջ առնված քարագմբեթ գլխարնից և սրա սյունագարդ, եռակամար նախասրահից, իսկ մյուս շինությունը՝ երկու կցաշար ու թաղածածկ սենյակներից: Գլխարունը ծածկված է խոշոր փրոմպների վրա հենված ութանիստ, բրգաձև ու երդիկակիր գմբեթաթաղով և կառուցված է սրբափառ քարով, իսկ մի կտոր քարից կերտված զանաձև սյուները պսակող կամարներն ու թաղածածկերի եզրագիծը երկաղեղ-սրագագաթ են: Բոլոր շինությունները ներքուստ փարբեր չափի կամարակապ խորշեր ունեն, իսկ սենյակներից մի քանիսը՝ նաև բակահայաց լայն պարուհաններ: Ապարանքը կառուցված է հարթ տեղանքում, ամբողջովին


վերգեմբեյա ծավալներով և հավանաբար ունեցել է բակն ընդգրկող շրջապարիսպ ու այլ շինություններ:

Նալկանշական է, որ գլխարան չափերը (ներքուստ՝ 7,0 x 7,0 մ) կրկնում են մելիքական գլխարաններում փարածված միջին չափերը, իսկ փրոմպավոր, ութանիստ գմբեթը գրեթե նույնական է Մոխրաթաղի գլխարան գմբեթի հետ: Ինչպես երևում է նաև ընդհանուր հարակազմային համադրվածքից, այսպեղ ևս զգալի է մելիքական ապարանքներում ընդհանրացած ճարտարապետական-հորինվածքային լուծումների բացահայտ ազդեցությունը, այս անգամ՝ փոքր-ինչ տեղայնացված քարակերտ գլխարան համակառույցի տեսքով: Պարահական չէ, որ ինչպես այս, այնպես էլ նախորդ խանական ապարանքները իրենց փիպարանական և ճարտարապետական-ոճական զուգահեռը չունեն բուն Ադրբեջանում և հենց ադրբեջանցի ուսումնասիրողների կողմից եզակի են համարվում այդ երկրի ուշ միջնադարյան պալատաշինության մեջ:



<sup>326</sup> Мирза Джамал, ук. соч., с. 101-102.

## ՀԱՐՏԱՐԱՊԵՏԿԱՆ ԱՐԻՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Մելիքական ապարանքների ճարտարապետությունը ուշ միջնադարյան Արցախին և Սյունիքին խիստ ներհարուկ բնագավառ է և իր անմիջական գուգահեռը չունի ոչ միայն Հայաստանի այլ շրջաններում, այլև հարևան երկրներում: Մակայն որոշ հաբակագծային հնարքներով և հորինվածքային փարրերով այն մերձեցման եզրեր է ցուցաբերում նույն շրջանի պարսկական և վրացական պալատների, ինչպես նաև բարձրաշխարհիկ խավի այլ բնակարանների հետ:

Մրանց թվում մի չափազանց հեքաքրքրական խումբ են կազմում հայ մեծահարուստ խոջաների պալատակերպ փները Սպահանի Նոր Ջուղա հայկական թաղամասում, որոնք կառուցվել են 17-րդ դարի սկզբին Շահ-Աբբաս Ա-ի կազմակերպած հայոց մեծ գաղթից հետո, հայ վարպետների ձեռքով: Այս մասին պերճախոս վկայություններ ունի ժամանակակիցը՝ պարմագիր Առաքել Դավրիժեցին. «... Եւ բաժանեալ, փրոհեցին ի նոցանց զքարագործ արուեստարարսն զամենայն, և փարան ի քաղաքն Սպահան վասն արուեստին, որ պիտոյանայր անդ ի գործ շինութեանց փան թագաւորին և համօրեն ազգին Պարսից. և անդ ի Սպահան բնակեցուցին»<sup>327</sup>: Անշուշտ, հենց այս քարգործ վարպետների կառուցածն են հարուստ վերաբնակների այն պերճաշուք փները, որոնց մասին նույն պարմիչը գրում է. «... Շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր սպարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինութօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախարիղ փետողաց»<sup>328</sup>: Այս պալատանման փների ճարտարա-

րապետությունը ներկայացված է հանգամանակից աշխարհայամբ<sup>329</sup> և ցույց է փալիս, որ չնայած դրանք կառուցվել են փեղի քաղաքաշինական ու կլիմայական պայմաններին հարմարեցված հաբակագծային ու ծավալարարածական հորինվածքներով, ունեն աղյուսաշեն շենքերին հարուկ թանձր պատերի ու ծածկերի կառուցվածքային ձեւեր և արևելքի ճարտարապետությանը հարազատ շքեղ հարդարանք, այնուամենայնիվ, ունեն նաև կանոնիկ ու ներհարուկ կողմեր: Այս խնդրի առընչությամբ Ն. Պապուխյանը իրավացիորեն գրում է, որ դրանց հորինվածքային լուծումներում «ամենապարածվածը կենտրոնական գմբեթավոր սրահին երկու կողմից կցված սենյակներով փիպն է»<sup>330</sup>: Նման սկզբունքով ստեղծված հաբակագծային լուծումներ ունեն խոջաներ Պեքրոսի, Սուքիասի, Մինասի, Ոսկանի, Նովսեփի, Քարամի և Աբգարի փների հիմնական մասնաշենքերը, որոնք, որպես կանոն, ուղղված են դեպի հյուսիս՝ պարփակ բակի կողմը, իսկ կողային սենյակների վերին հարկերը ներքին պարզամբի միջոցով բացվում են կրկնահարկ բարձրությամբ կենտրոնական գմբեթավոր դահլիճի մեջ: Ընդ որում, մեծ մասամբ 5-6 մ թռիչքով սրալակփիպային գմբեթներով ծածկված դահլիճի ներքին փարածքը ընդարձակված է կողային սենյակների ուղղությամբ, իսկ երբեմն էլ՝ խորքի կողմից ստեղծված սրալակփիպաթաղ բաժանմունքներով, որոնք մեծ հանդիսավորություն ու ծավալարարածական թեթևություն են հաղորդում ողջ ներքին հորինվածքին:

Դժվար չէ փեսնել, որ ճարտարապետական և հորինվածքային միանգամայն նոր ու համեմա-

<sup>327</sup> Ա. Դավրիժեցի, Գիրք պարմութեանց, Ե., 1990, էջ 356:

<sup>328</sup> Նույն փեղում, էջ 93, 355:

<sup>329</sup> Karapet Karapetian, Istahan, New Julfa, Roma, 1974.

<sup>330</sup> Ն. Պապուխյան, «Չայրվող ծածկերով բնակարանները», էջ 337:

տաքար հարստորեն բարդացված մեկնաբանությամբ հանդերձ այսպեղև ևս հապրակաձևի հիմքում դրված է գլխարկավոր ապարանքներից հայտնի գմբեթավոր գլխարան և զույգ կից թաղածածկ դահլիճների համադրվածքը, որն, ինչպես Կեսանք, հայկական լեռնաշխարհում տարածված սկզբունքային լուծում է:

Դարելով դիտարկվող ընդհանրությունից՝ կարելի է ենթադրել, որ այս համադրվածքային լուծումը տարածված ու ծանոթ է եղել նաև Նոր Ջուղայի վերաբնակների հայրենիքում և այսպեղև է ներթափանցել հիշյալ հայ քարգործ-վարպետների միջոցով, որոնց մեջ, ի դեպ, հիշվում են նաև գաղթականներ Գանձակի մերձակա արցախյան գավառներից<sup>331</sup>: Նշենք նաև, որ թեև գմբեթավոր բաժանմունքները հանդիպում են նույն ժամանակաշրջանի պարսից փնթերում ևս<sup>332</sup>, սակայն՝ այլ հապրակազմային համադրվածքների մեջ և չունեն հայոց նորջուղայական բնակարանների դահլիճների կանոնիկ տեղադրիչը սենյակների գծային շարքում:

Անդրադառնալով մելիքական ապարանքների և նույն շրջանի պարսկական ու վրացական պալատների հորինվածքային աղերսների հարցին՝ պետք է նշել, որ դա նկատելի է միայն որոշ ապարանքների առանձին բաժանմունքներում: Նկարի ունենք Քաշաթաղի, Խնածախի, Խնածորեսկի, Տողի և Մոխրաթաղի կրկնահարկ դահլիճների վերնահարկերը, ինչպես նաև Հոռեկավանի, Մոխրաթաղի և Շուշիի ապարանքների երեսքաց սրահով շենքերը, որոնք հանդիսավոր-պաշտոնական բնույթով առանձնանում են բնակելի շինություններից:

Նախկանշական է, որ այսպիսի հանդիսավոր կառուցամասեր ունեցող ապարանքների տերերը ժամանակի առավել նշանավոր մելիքներն էին, երբեմն՝ Պարսից արքունիքում ճանաչված ու մեծ հեղինակություն վայելող դեմքեր (օրինակ՝ Քաշաթաղի Մելիք-Նայկազ Բ-ը՝ Շահ-Աբբաս Ա-ի, կամ Տողի Մելիք-Եգանը՝ Նադիր Շահի օրոք), որոնք, բնականաբար, քաջածանոթ էին շահական պալատների նիստուկացին և ճարտարապետությանը: (Նայքնի է, որ ընդհանրապես միջնադարի հայ իշխանական դասի կենցաղավարման մեջ հաճախ որոշակի ազդեցություն են թողել գերիշխան երկրի արքունական ու բարձրաշխարհիկ կյանքի ինչ-ինչ կողմեր, որոնք իրենց արտահայտությունն են գտել նույնիսկ տարագրում, հանդերձանքում, փոփոխությունում):

Թվում է հենց այս հանգամանքներով պետք է բացատրել մելիքական փնթերում ճակատաբաց վերնասրահ-ընդունարանների ի հայտ գալը, որոնց հովասուն խորքում բազմած մելիքը հանգստի ու վայելքի ժամեր էր անցկացնում,

կամ այդ բարձր ու հանդիսավոր պատշգամբից հաղորդակցվում ապարանքի բակում ժողովված հպարակների հետ: Ամբողջ խորքով երեսքաց, սակայն ավելի ճոխ ու շքեղ վերնասրահները (պարսկերեն՝ «բալխանա») տարածված էին շահական ու խանական պալատներում, որոնցից հանրահայտը Շահ-Աբբաս Ա-ի Ալի-Ղափու կոչված պալատն է Սպահանում: Ըստ Ն. Պապուխյանի, տեղի բնակիչները հենց «բալխանա» են կոչում Խնածախի ապարանքի վերնասրահը<sup>333</sup>, որպիսիք, ի դեպ, հետագայում տարածվել են Նախիջևանի կողմերի բնակելի փնթերում<sup>334</sup>:

Այլ հորինվածք ունեն նույն նպատակով կառուցված Հոռեկավանի, Մոխրաթաղի և Շուշիի ապարանքների եռադահլիճ շենքերը, որոնց ընդհանուր հապրակազմային համադրվածքի փոքր-ինչ տարբերակված ձևերն են կիրառված Շաքիի խանական (18-րդ դարի վերջ)<sup>335</sup> և Երևանի Փանահ խանի պալատներում, ինչպես նաև Մարդարի պալատի համակառույցի հարավ-արևմտյան թևում (1798 թ.)<sup>336</sup>: Սրանցում ևս հապրակազմային հորինվածքը կազմված է երեք դահլիճից, որոնցից կենտրոնականի (գահասրահի) երկայնական ճակատը բաց է (այունագարդ «այվանի» կամ ցանցկեն ու ապակեգարդ «շերեկեի» տեսքով), իսկ ներքուստ բուխարիով և որմնախորշերով հագեցված եզրային դահլիճները լայն պատուհաններ ունեն ճակատապատում: Տարբերությունը մանրամասների մեջ է, ինչը բխում է դրանց շինանյութից, ծածկաձևերից և ճարտարապետա-ոճական ուղղվածությունից: Դժվար չէ տեսնել, որ եթե հիշյալ խանական պալատները պարզապես կրկնում են բուն պարսկական նախօրինակներում կազմավորված ձևերը, ապա մելիքականներում նույն հապրակազմային հենքը մեկնաբանված է ժողովրդական բնակելի տան ավանդույթներին հարազատ ճարտարապետական միջոցներով:

Այս առումով հապրակազմային է, որ Վրաստանի ուշ միջնադարյան պալատական շենքերում ևս կիրառված նմանօրինակ հապրակազմային հորինվածքները, տեղական ճարտարապետությանը հարույժ գծերով հանդերձ, ամբողջովին ձերբազարված չեն իրենց պարսկական զուգահեռների ոճական ազդեցությունից (Նինոմմինդա, Չաղի-

<sup>331</sup> Ա. Դարիժեցի, էջ 355:


<sup>332</sup> Texier Ch., Description de l'Arménie, la Perse et la Mesopotamie, Paris, 1842.

<sup>333</sup> Ն. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 71:



<sup>334</sup> М. Усейнов, А. Бретаницкий, А. Саламзаде, История архитектуры Азербайджана, с. 343, Э. Авалов, ук. соч. с. 15.

<sup>335</sup> А. Бретаницкий. Дворец шекинских ханов. "Архитектура Азербайджана", очерки, Баку, 1952.

<sup>336</sup> В. Арутюнян, М. Асратян, А. Меликян, Ереван, М., 1968, с. 32-34.




44. ՄԱՐԿՐԻՄ ԵՎ ԿԱԿՈՒՆԱՆՆԻ ԿՈՒՆՈՒՄԵՆԻ ԿՈՒՆԱԿ



43. ԱՂՉԱՄԻՏԻ ԵՎ ՇԱՀԱՐՈՒՄԱՐԻ ԽՈՒՐԱՄԱՆԻՆ ԽՊՐՈՒՄԻՆԻՆԻ




ՀՈՒԵԿԱԿԱՆ (հատված)




ՄՈՒՐԱԶԱՂ (հատված)




ՇՈՒՇ (հատված)




ՆԻՆՈՍԻՆԴԱ (վրաստան)





ԶԱՂԱԶԱՏԵՂ (հատված)




ՇՈՒՇ (հատված)




ՉԱՂԻՆԱ (վրաստան)




ԵՐԵՎԱՆ: ՍԱՐԴԱՐԻ ՊԱԼԱՏ (հատված)




ՇՈՒՇ. ԽԱՆԱԿԱՆ ՊԱԼԱՏ



ՇԱԶԻ. ԽԱՆԱԿԱՆ ՊԱԼԱՏ



ԵՐԵՎԱՆ. ՕԱՆԱԳ ԽԱՆԻ ՊԱԼԱՏ



ՇԱԶԻ. ԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ



ՆՈՐ ԶՈՒՐԱ. ԽՈՑԱՅԱԿԱՆ ՏՈՒՆ (հատված)



45. ՀԱՅԿԱԿԱՆ, ՎՐԱՅԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱԼԱՏՆԵՐ

նա)<sup>337</sup>, ինչն առհասարակ բնորոշ է նույն շրջանի այլ վրացական պալատներին (Կորնիսի, Մձովրեթի, Թխինվալի)<sup>338</sup>: Նշենք նաև, որ չնայած ուշ միջնադարյան Վրաստանում կար հայ մելիքներից ոչ պակաս կարողունակ իշխանական դաս, իսկ նույն շրջանի ամրոցաշինությունը հարուստ ավանդույթներ ունի, այնուամենայնիվ այսպեղ չենք պետևում կանոնիկ ընդհանրությամբ

սրելով՝ պալատ ամրոցների օրինակներ, իսկ դարաշրջանի վրաց պալատաշինությունը ներկայացնող հիշյալ հուշարձանները գուրկ են հսպակ և ուրույն ճարտարապետական դիմագծից: Ուստի մելիքական ապարանքները փիպաբանական առումով խիստ ինքնատիպ ու եզակի են և միայն բնույթով կարող են համեմատվել այլ երկրների իշխանական դղյակների հետ:



<sup>337</sup> **Լ. Րչեულიшвили**, Дворец Саввы Тусисшвили в сел. Ниноцминда, *Arx Georgia*, т. 3, Тбилиси, 1950, с. 237-247, его же, Дворец XVII века в селении Дзагина, *Arx Georgia*, т. 5, Тбилиси, 1959, с. 221-231.

<sup>338</sup> **В. Беридзе**, Архитектура Грузии XVI-XVIII веков, т. I, Тбилиси, 1983 (на груз. языке), с. 236-242.


## ԷՉՐԱՓԼԿՈՒՄ

Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքների ուսումնասիրությունը ցույց է փայլա, որ դրանք Նայասարանի միայն այդ երկրամասերի ուշ միջնադարյան ճարտարապետությանը բնորոշ հուշարձաններ են և մեծ պատմական ու ճարտարապետական արժեք ունեն:

Մելիքական ապարանքներն ու դրանց շինարարական արձանագրությունները հայ մելիքությունների պատմության կարևոր վկաներ են. առարկայորեն հավասարում են մելիքությունների նստոց-կենտրոնների ստույգ վայրը և այդպիսի իշխողների պատմական ինքնությունը, արժանահավասար փրկելություններով հարստացնում են բնագավառի սակավ ուսումնասիրված ու դեռևս - չամբողջացված պատմությունը, նոր կողմով են ներկայացնում ժամանակի նշանավոր մելիքների գործունեությունը:

Ապարանքների կառուցման ժամանակագրական պատկերը դարաշրջանի պատմաբանական իրավիճակի անմիջական արձագանքն է: Ամրոցակերպ մելիքական բնակարանների շինարարությունը սկզբնավորվել է 15-16-րդ դարերում՝ քոչվոր ցեղերից նվաճված, մասնավորում ու պարսկա-թուրքական պատերազմների թափերաբեմ դարձած երկրի դժվարին պայմաններում, ապա նոր թափ ստացել 17-րդ դարում ու 18-րդ դարի առաջին երեսնամյակի արցախյան սղնախների և Սյունյաց ապստամբության ազգային-ազատագրական պայքարի փարիներին, լայնորեն ծավալվել նույն դարի երկրորդ կեսին՝ Շուշվա խանության դեմ պայքարի և ազատագրական շարժման նոր վերելքի շրջանում:

Մելիքական ապարանքները երկիրը նվաճողների դեմ պարբերաբար բորբոքվող ազատագրական մարտերի գործուն օջախներից էին և



բերդերի ու վանք-ամրոցների հետ մեծ դեր են խաղացել երկրամասի հայապահպանության, մելիքությունների գոյարևման ու Ռուսական կայսրությանը միավորվելու գործում:

Սրանով է պայմանավորված մելիքական փյունի հիմնական հորինվածքային առանձնահատկությունը՝ ամրոցակերպությունը և քարակուռ միասնականությունը, ինչի շնորհիվ էլ դրանք բնութագրվում են որպես ուշ միջնադարյան պաշտպանական համակառույցի նոր ու յուրօրինակ փիպ՝ բերդերի ու վանք-ամրոցների կողքին:

Այս ելակետային բնութագրով են մելիքական ապարանքները ներկայանում Արցախի և Սյունիքի ճարտարապետական դպրոցների ուշ միջնադարյան շրջափուլի պատմության մեջ, իրենց անպաճույճ հորինվածքային դիմագծերով պատկերավորելով դարաշրջանի աշխարհիկ վերնախավի ճարտարապետական միջավայրի ընդհանրական կերպարը:

Նստոց-կենտրոններում կառուցված մելիքական փյունը մոտակա պաշտամունքային կառույցների հետ ձևավորել են բնակավայրի հասարակական կենտրոնը, իսկ մելիքական ամրոցների ապարանքները ծառայել են որպես միջնաբերդ:

Առաջնորդվելով ներփակ, ամուր, պաշտպանված ու մելիքական ընդհանրիկ կենցաղավարման համար հարմարավետ բազմաբաժին բնակարան ունենալու անհրաժեշտությամբ, ապարանքների ճարտարապետական-հորինվածքային լուծումները հարմարեցվել են փրկանքին ու պայմանավորվել կառուցողի փնտրած կարողությամբ:

Ապարանքների որոշ մասը բնակելի ու պաշտպանական շինություններից զատ ունեցել է նաև պալատական ընդունելությունների և հանդիսությունների համար նախատեսված առանձին դահլիճներ, որոնք կարևոր տեղ են ունեցել համա-կառույցների ծավալապարածական հորինվածքում, իսկ հաճախ դարձել են գլխավոր շէջ-վրը:

Ամենաընդարձակ ու կանոնիկ հստակությամբ կազմավորված հորինվածքներով ապարանքները ստեղծվել են 18-րդ դարում, իսկ դարի երկրորդ կեսում լայնորեն փարածվել են քարաշեն գմբեթաձևով մեկ կամ երկու գլխապան հորինվածքային առանցքի շուրջն ստեղծված համակառույցները, որոնցում իրենց լավագույն արտահայտությունն են գտել բնագավառի ճարտարապետական ու շինարարական ձեռքբերումները:

Կանոնավոր հատակագծմամբ, ավարտուն ծավալաձևերով ու ամբողջովին թաղակապ ծածկերով քարակերտ գլխապան համակառույցները նշանակալի տեղ ունեն հայ միջնադարյան բնակարանաշինության պայմանության մեջ, իսկ գլխապաններն իրենց գմբեթաթաղերի ինքնատիպությամբ նորորակ ավանդ են բնակելի-պալատական դահլիճների ծածկաձևերի փայաբանական դրսևորումների շարքում:

Մելիքական ապարանքների բնական դիտարկումները ցույց են տալիս, որ դրանց հորինվածքային, գեղարվեստական ու կառուցվածքային լուծումների հիմնական ակունքը ժողովրդական բնակելի տան տեղական ավանդույթներն են և դարաշրջանի պաշտպանական ու քաղաքացիական ճարտարապետության մեջ ընդհանրացած փորձը, իսկ առանձին կառուցամասերում ակնհայտ է ժառանգորդական կապը նախորդ դարերի պալատաշինության հետ: Ուստի ապարանքների ճարտարապետական կերպարում միահյուսվել են գեղջկական տան ավանդական անպաճույճ դիմագծերը, լեռնային ամրության պարզությունն ու քարակերտ կառուցվածքաձևերի փոքր-ինչ հանդիսավորությունը՝ հմտորեն ներգծված ու ներդաշնակված միջավայրի բնական համայնապարկերին:

Ապարանքների առանձին բաժանումների ու դրանց համադրվածքների կանոնիկությունը և ճարտարապետական և կառուցվածքային հնարքների ընդհանրականությունը վկայում են, որ ուշ միջնադարի հայ պալատաշինության այս ուշագր թավ բնագավառը կազմավորվել ու զար-

գացել է ուրույն և օրինաչափ ստեղծագործական ավանդույթներով՝ հավաքարիմ լեռնաշխարհի ճարտարապետական դպրոցների միասնական դիմագծին:

Քարի ճարտարապետության վաղեմի փորձից սնված այս ավանդույթների տեղական խորը արմատների ու կենսունակության ապացույցներից մեկը Արցախ ներթափանցած մահմեդական ցեղերի խանական ապարանքներն են, որոնք կառուցվել են հայ վարպետների ձեռքով՝ մելիքական տների օրինակով և ազդեցությամբ:

Մելիքական բնակարանները կառուցվել են տեղական շինանյութերի գեղարվեստական և շինարարական հնարավորությունների քաջիմացությամբ ու խիստ նպաստակալին օգտագործմամբ, երկրամասի սեյսմիկ պայմանների հաշվառումով:

Պահպանված ավերակները, նկարագրություններն ու համեմատական դիտարկումները հնարավորություն են տալիս մասամբ կամ ամբողջովին վերականգնել հուշարձանների նախնական հորինվածքները, հեփնել հետազայում դրանց կրած փոփոխություններին:

Մելիքական ապարանքների ճարտարապետությունը վկայում է նաև, որ ուշ միջնադարում, սկսած 15-րդ դարից, չնայած անբարենպաստ պայմաններին, ճարտարապետաշինարարական գործունեությունը շարունակվել ու դարաշրջանի պահանջներին համապատասխան նոր դրսևորումներ է գտել՝ պահպանելով ու յուրովի որակներով ներկայացնելով հայ իշխանական դասի բնակարանաշինության նախընթաց ավանդույթները:

Իսկ 15-16-րդ դարերից պահպանված հուշարձանները մեկ անգամ ևս հավաստում են, որ այս դարերում շինարարական կյանքը Հայաստանում չի ընդհատվել, այլ շարունակվել ու զարգացել է նախորդ դարերի համեմատ նվազ չափով ու որակով՝ պայմանավորելով բնագավառի նոր վերելքը հաջորդ՝ 17-18-րդ դարերում:

Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները հայոց միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության մեջ մի ծավալուն ու բովանդակալից բնագավառ են կազմում և, որպես հայ մելիքությունների դարաշրջանի սեփարժեք հուշարձաններ, կարիք ունեն համընդհանուր ճանաչողության, հոգածության, պահպանության ու վերականգնման՝ վերջնական կորստից փրկելու համար:

## CASTLES (PALACES) OF MELIKS OF ARTSAKH AND SIUNIK

By Artak Ghulyan

Church architecture is the "halo" of acquisitions of Armenian medieval architecture, thanks to which the latter obtained world recognition, while the secular architecture also has its particular place beside it and the palace building is the one of its important spheres.

Investigators have touched upon mainly the palaces built only in central districts of Armenia from the earliest times up to the 14<sup>th</sup> cent. It is obvious that these investigations do not reflect the whole picture of the historical development of the sphere in regard to chronology and territory and they need to be enlarged and enriched on account of investigation of monuments built in other districts of Armenia in different centuries. Numerous monuments of this kind, i. e. the palaces (*aparank* in Armenian) of *meliks* (local Armenian mountain chieftains) built in the late Middle Ages have been maintained in Artsakh and Siunik and mainly have not been researched in the appropriate literature and there is no all embracing description of the time of their construction and of architectural value.

This investigation is devoted to *melikal* palace-fortresses preserved in their principal residences located in territories of provinces of Artsakh and Siunik of medieval Armenia. These palace-fortresses located now in the historical territories of the provinces of Artsakh and Siunik in the Republic of Armenia, Nagorno-Karabakh Republic (NKR) and neighboring regions, have been built in 15<sup>th</sup>-18<sup>th</sup> cent., when Armenian principalities of *meliks* were formed and survived.

